

ՄԱՀՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ս. Գ Ի Բ

№ 12 1898

ԴԵԿԵMBER

1898 № 12

Տ.Ա.Ս Ն Ե Ր Ա Ր Դ Տ Ա Ր Ի


	Եթես
1 ՀԱՅԹ	1641 «Դարձ» (վերջ).
2 ԹՈՅՀԱՎԵԱՆ, Ա.Ի.ՏԵՒՔ	1701 Еесо-հոմо (բան),
3 ՆՈՅՆԵ	1702 *** (բանասանեղծութ.),
4 ՄԱՆՈՒՔԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	1703 Խորտակւած կեանքը (վերջ).
5 ԳԵՐԵՎԵՐԵԱԿԱՆ, ԳԵՐԵՎԵԱԿԻ	1744 *** (բանասանեղծութիւններ).
6 ՄԱՐԴԱՆԵԱՆ, ՖՐԻԳՈՆ	1745 Խճչէ հաշւապահութիւնը.
7 ՅՈՒԹԵԱՆ, ՅՈՒԿՈՅ	1751 Գիւղական բալլադա (բան).
8 ԻԱԺԱԿԱՆԵԱՆՑ, ԳԱՐԵԳԻՆ	1752 Հարկիրի ծագումը.
9 Ա. Ա	1758 Երիցեանի «Պատմութ. 7 ձ-ամեալ զորովեան Ներս. Հալոց Դոլլ սցի»:
10 Ա.Ք.ԲԱԼԵԱՆ, Ն.	1771 Տիրուհի Առասանեանցի թարգմանած եօթ զրքովկները:
11 ՆՈՅՆԵ	1780 Մի նկատողութիւն.
12 ԱՐԱՄԽՈՆԵԱՆՑ, Ա.Ի.ՏԵՒՔ	1782 Ժամանակ. ահսութիւնն—Օտար կա պիտաների մուտքը Անդրեալիա- ուում II:
13 ԽՄԲ.	1792 Զանազան լուրեր.
14 ԽՄԲ.	1808 Բովանդ. «Մուրձ» 1898 թ. № 1—12:

Յայտարարութիւններ

ԹԻՏԻԿՈ

ՏԱՐԱՐ. Ա. Գ. Ա.ՕՏԵԽԱԱՅՑԻ

Տիգրաֆիա Մ. Դ. Ռոտինանա, Գօլ. որ., և. № 4 |



ՄԱԿՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 12 1898

ԴԵԿԵMBER

1898 № 12

ՀԱՍՏԵՐԱՐԴ ՀԱՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. Ո-ՅԾԻՆԵԱՆՑԻ

Տիպոգրիա M. D. Rotinianca Gor. pr., լ. № 41.

1898

СИМВОЛЫ

СОВЕТСКОГО СОЮЗА
ПОДДЕРЖАНИЯ

Дозволено цензурою. Тифлисъ, 18-го Декабря 1898 г.

ՄԱՐԴԻՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Բ Ը

մանելու է առաջիկայ 1899 թւականին իւր գոյութեան

ՏԱՍՆՈՒՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿԻԵԼՈՎ ՆՈՅՆ ԺՐԱԴՐՈՂ, ՈՐՊէս ՄԻՆՉԵՒ ԱՅԺՄ
ՀԱՐՍՏԱՅՆԵԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ, աւելի բազմակողմանի գարձնե-
լով ամսագրի բաժինները, և դորա համեմատ մնացնել
ՄՈՒՐԾԻ ծառալը—այդ ամենը կախւած է բաժանորդների
թւից:

ԱՇԽԱՏԱԿԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ բաղկացած է շուրջ երեսուն հոգուց, որոնք
ծանօթ են ամսագրիս մշտական լնթերցողներին:

ՔԱՆԻ ԽՈՍ ԵՆՔ հայ լնթերցող հասարակութիւնը որ պաշտպանի
Մուրճը բաժանորդագրութիւնով, որը միակ գրաւականը կա-
րող է լինել ամսագրի լարանկութեան, ճոխութեան և հրա-
տարակման կանոնաւորութեան:

Ի Ի Մ Ո Ւ Թ Ի Ե Ն Ե Ր են արւած քիչ ունեսրներին բաժանորդ զբւելու,
որպէս զի Մուրճը կարողանայ կարելիին չափ լայն խաւերը
թափանցել:

ԱՐԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ Նաև ներկաց համարի հետ զրկւում են
բոլոր բաժնորդներին ծրագրներ նաև ակներով:

ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐԻԵԼՈՒ ՀԱՄԱՐ դիմել խմբագրատու՝ Տիֆլիս, վեր-
դակցիո „ՄՈՐՉԵ“ արտասահմանից Tiflis. Rédaction de
Mourteh. Կարելի է դիմել նաև այն բոլոր անձերին, որոնց
խմբագրութիւնն հաւատացել է անդորրողիքերի բլանիներ խըմ-
բագիր հրատարակչի ստորագրութեամբ:

ԲԱԺՆԵԳԻՆԸ 10 պուրլի է, որ կարելի է վճարել կեսը ստորագրուե-
լիս, միւս կեսը մինչև յունիսի վերջը 1899 թ.

ԽՄԲԱԳԻՐԱՑՈՒՆԸ գտնւում է Թիֆլիս, Սերգիևսկայա փողոց, տուն
№ 6 և բաց է ամեն օր, ժամ 12—2, 5—7:

ՄՈՒՐՃԻ ՏԱՍԸ ՏԱՐԻԱՅ ՅՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՅՈՒՅԱԿԸ կազմւում է
և պիտի հրատարակի առանձին բրոշիւրով. 1899 ի բաժա-
նորդները այդ ցուցակը պիտի ստանան ձրի:

„Փ Ա Պ Զ“

Շ Ա Ն Թ Ի

(Շարունակութիւն և վերջ¹⁾)

Չ.

Գլխաւոր ճամբռն մօտիկ, խոշոր սալորենիի մը սուերին տակ,
թաւ խոտերուն մէջ, կանակին վրայ փուեր էր վարդապետացուն:
Երկու թեերը զլիսուն տակը, բարակ ու երկար ձողուն մը ակատ-
ներուն մէջ, ու աչքերը յառած դիմացը:

Դիմացը ձորի շեղ ելքին, ուր խիտ, չեչոտ ու փոքր ժայռե-
րու ամբողջ հօտ մը արևի բարկ ճառագայթներուն տակ, տոթա-
կէզ ոչխարներու նման, զլուխնին իրարու շուքին մէջ թաքցուցած՝
կարծես հիմա վար պիտի վազէին. վար դէսի զետակը իրենց տապն
ու ծարաւը մարելու:

Բայց բոլորովին ուրիշ պատկերներ էին երիտասարդի յառած
աչքերուն դէմ. ան իր մեղի ու ծոյլ դիրքի մէջ անշարժ՝ կը մնա-
ծէր: Երկար: Մինչև որ գանդաղ շարժումով մը հանեց գրկանէն
ժամացոյցը ու նաշեցաւ:

Շուտով կէսօր: Կամաց-կամաց երթալու էր վանք, պատառ մը
բան ուաելու և անկէ օրիորդ Մելինեանին: Այսօրւան պատյախն
տեղը արդէն շատոնց ընտրած էր տղան: Ընտրած էր ձորի ամենին

ժայռոտ ու ամենէն սեպ շաւիղներէն մէկը, որ վերը արտերը կը հանէր. պէտք էր, որ վերելքը դժւար լինէր. այդ անհրաժեշտ էր:

Ու երիտասարդը ժպտեցաւ ինչնաբաւական. ու ներքին յուզւած անհամբերութեան ալ չի դիմանալով՝ կոնակին վրացէն մէկ շարժումով զարձաւ գէմքին վրայ, և յինւեցաւ աջ արմուկին:

Նոյն վայրինանին էր, որ հեռուէն ճամբուն վրայ սմբակներու տրոփի մը լսւեցաւ. տղան մասցիր այն կողմ նայեցաւ մեքենաբար. բայց յանկարծ շտկւեցաւ, կնծրուտեցաւ ճակատը, ու գէմքին դըժւեցաւ մաղձոս դժկոնութիւն մը, անտխորժ անակընկալի մը ծամածութիւնը:

Իսկոն ճանչցեր էր իր երկու ընկերը:

Կամաց մը ելաւ ոտքի, ու ծաւերուն եռեէն զուրս եկաւ ճամբուն վրայ:

— Սրաւաշիս, պուացին երկուքը միաբերան, ձիերը խթեցին, ու ճիշտ անոր առջել թամբերէն թռան վար:

— Հը՞, ինչպէս ես. ինչ րրիր նայինք, այս շաբաթ մըն է:

— Աէքասնդրապոլ մերիններէն մարդ տեսաթր: Յադրատը ինչն միասին յատիր, չը որ Անի դալ կուզէր:

— Վահնամ մեղի շատ սպասեցիր:

— Ե՞ն, վանահայրը ինչ բանի է. հաս է, թէ... է, չխօսիս: Վրայ թափեցին Մինասն ու Սերոբ խասն ու արագ՝ երկու կողմէն տղու ձեռքերը պինդ թափ տալով:

— Վահնահայրը, այն, հաս է. այսինքն... չդիտեմ. այս առառքին մը ուշ եմ ելեր քնէս ու դեռ երեսը տեսած չեմ. կմկաց վերջապէս:

— Ա՛խ, զուն ծոյլ. բացականչոց Մինաս, իր բամբ ձայնովը:

Սա երկարահ սսակ, թիկնեղ, կարմիր ու այրած գէմքով, կոր ու ցանցառ մօրուքով, փոքր ու սուր աչքերով երիտասարդ մըն էր:

— Իսկ մենք ժամը հինգէն ի վեր ասպանդակներուն վրան ենք: Ա՛, ինչպէս հարւած եմ ձիէն, է.

Վրայ բերաւ Սերոբ, որ նախորդի հակասատիերն էր. փոքրահասակ, թաւ մօրուքով, աւելի նուրբ կազմով. ու տեսակ մը մեղմ; մելամաղձոս հայեացքով, որ ակնոյներու տապակիին եռեէն աւելի տխուր ու աւելի միազազաղ կը դառնար:

Եւ Արտաշէսը մէջերնին առած՝ ձիերու սահմարէն քաշելով՝
երկը միասին դէպի վանք դիմեցին:

— Ի՞նչ տեսակ մարդ է վանահայրը. հարցուց կարճահասակը:

— Ե՛ քիչ մը կծծի, քիչ սը շատախօս, քիչ մը խորամանկ, քիչ մը ալ յանդուզն. աւերակի մը վանահայր:

Տղու ճայնին մէջ արհամարանքի ու հեղնելու այն ասախման
պարզ շեշտ մը կար, որ երկու նորեկները անգամ մը ակամաչ
իրարու նաշեցան:

— Երեի, նեղացուցեր է քեզի. նկատեց երկարը:

— Ա՛ս. ընդհակառակը. մինչև անգամ ինձի սորվեցուց շու-
տով եպիսկոպոս գառնալու ամենախոր գաղտնիքը:

— Վայ, մը է տեսնենք այդ գտղոնիքը:

— Ե՛, շիտակը հիմա տրամադիր չեմ: Աւելի աղէկ է նորէն
իրեն կը հարցնէք. իրիկննը:

— Ինչու անպատճառ իրիկունը:

— Օ՛, ցորեկը սաստիկ զբաղւած է, երկար սկառմութիւննե-
րու զլուխ չունի. և լուրջ է զբաղւած. պէտք է վաղել արտէ արտ,
պէտք է զիւղացիները հսկել ու հաջոյել. պէտք է մառանը լիցը-
նել. մառանը, այդ կատակ չէ, վանքի մառանը:

— Այդ մարդը քեզի բան մը ըրեր է. այդ լինչ տարօրինակ
խօսելու եղանակ է. կրկնեց երկարահասակը խոժոսած դէմքով մը:

— Տարօրինամիկ. հարցուց Սիրաքեան անփոյթ:

— Հա, Սմբատը քեզի բարեւ ըրաւ. ընդհատեց յանկարծ ակ-
նոցաւրը:

— Սմբատը ով է:

— Քանի Սմբատ կայ մեր ընկերներուն մէջ. սկառասխանեց
նկերը տեսակ մը սրանեղած:

— Ա՛ս, մն. նորէն նոյն գաստարկախծն է:

— Գաստարկախծո. գաստարկախօսը զու ինքդ ես:

— Այդ արդեւք չէ որ ան ալ նոյն արհեստը ունենաց:

Եւ այս ըստ էր այնպէս լուրջ ու պարզ շեշտով մը, որ ըն-
կերները չի կրցան ծիծաղնին զսպեն:

— Երեւակայի՛, ան ալ վճռեր է շուտով սարկաւագ ձեռնաղրւի.
աւետեց Մինաս:

— Մի՛լէք: Զէ, ես այդ մե՛ծ զոհաբերութիւնը շնորակը անկէ բնաւ չէի սպասեր:

Ու ամե՛ծ զոհաբերութիւնը մասնաւոր կերպով շեշտած էր:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Զէ որ շարունակ կը կրկնէր, թէ ինքը վանական կիանքի յարմարութիւն չունի, թէ իր կոչումը մանկավարժութիւնն է, թէ...

— Զիտեմ. կարծեմ քննութեանը կը տրւեր է:

— Էհը. այդպէս ըսէք, է, Դէ, իհարկէ գիւղէ զիւղ աննշան ու անօթի թափառելէն աւելի աղէկ է դիւցազնական անձնազոհութիւն մը ընելը:

— Իրաւունք չունիս ուրիշները այդպէս հեգնելու. յանդիմանեց երկարահասակը տաքցած: Ան ինչնվ է մեզմէ պակաս. որ քիչը պարզ ու միամիտ բնաւորութիւն ունի. ուրիշ ոչինչ:

— Ուրիմն մինչև անգամ մեզմէ բանով մը աւելի է. կցեց Սիրաբեան հանդարտ:

Երկու ընկերները նորէն նայեցան իրարու. ու լռեցին:

Կէս ժաման չափ վերջը վանահայրը գարձաւ վանք:

Արտաշէս իր երկու ընկերները ներկայացուց. ու զարպասի սեմին վրայ կեցած խօսակցելու վրայ էին, որ անդին Քանեաններու սենեակին առջելը երեցաւ տիկինը դայեակին հետ:

Սիրաբեան բարեւց հեռուէն:

— Ա՞վ են. հարցուց Սերոբ:

— Քանեան Կարօյի հօրեղբացըն է հոս իր ընտանիքին հետ շատ համակրելի մարդիկ են. անկեղծ, հիւրասէր. իրիկունները թէլի հոն եմ սովորաբար. այս իրիկուն միասին կ'երթանք՝ շատ կուրախանան:

— Լաւ. իրիկունը ժամերգութենէն վերջը երթանք. համաձայնեցաւ Մինաս:

— Ի՞նչ ժամերգութիւն. հոս ամեն օր ժամերգութիւն չի կայ:

— Ինչու. պնդեց երկարահասակը: Եկեղեցի կայ, ահա հայրաւուրը հոս է, մենք ալ զպիրները: Կը տեսնէք, հայր.սուրբ, փառաւոր եկեղեցի մը ընենք. քանի օր է սիրոս կարօտցեր է:

— Ե՛, ինչ կարիք կայ ուրբաթ իրիկունով. մը մռաց Արտաշէս դժգոհ:

— Ալսորժակդ կիրակի առուան պահէ, որդիս. կցեց վարզապետը:

Ու արագ մէկ-երկու քայլ առաջ վազելով՝ վերցուց զետնէն քարի կատր մը ու վարժ թափով մը նետեց գիմացի կանանչեղէնի: ածուներուն մէջ, ուր հաւեր էին ներս մոեր:

— Քը՛ շշտ, անիծածներ:

— Եխոակ է, Մինաս. այսօր եկեղեցի ընելու ինչ կարիք կայ. միս-մինակ. մէջտեղ ոչ մարդ կայ, ոչ ժողովուրդ. աւելցուց իր կողմէն փոքր ակնոցաւորը ու նստեցաւ սեմին վրայ:

— Ճիշտ ացդ է ինձի զայրացնողը, ե. այդ վայրիվերոց վերաբերմունքը գէպի մեր պարտականութիւնը. կարծես եկեղեցական կարգերն ու պաշտամունքները ժողովուրդին ցոյց ընելու համար են նշանակւած:

— Ժողովուրդին ցոյց ընելու համար չէ, տիրացնւ չան, բայց իհարկէ միայն ժողովուրդին համար. ալ ինչ ժամերգութիւն, եթէ մէջտեղը ժողովուրդ չի կայ. վճռեց հայր-սուրբը հաւերու արշաւէն, ետ դաւանալով:

— Ի՞նչպէս թէ. աղօթքն ու ժամերգութիւնը Ասուած փառաբանելու համար է. եթէ...

— Ե՛, որդիս, Ասուած քու փառաբանութեան է կարօտ: Եւ վերջապէս մինչեւ հիմա արդէն ձանձրացած կը լինի ամէն օր միւնցն բանը լսելէն. կատակեց ծերուկը ճերմկած պեխիրուն ու մօրուքին մէջէն ժաղուելով:

Մինաս բոլորովին կընձըսեց ճակատն ու դէմքը:

— Ուրեմն, հայր-սուրբ, ինչպէս արտայայտենք մեր հաւատքը, մեր կրօնական սուրբ զգացումները. չէ որ ժամերգութիւնը մեր ներքին յուզումներու խոստովանութիւնն է տիրոջ խորանին առջև:

— Տիրացնւ, հաւատքը ուրիշ բան է, եկեղեցին ու ժամերգութիւնը ուրիշ բան: Ներքին հաւատքն ու զգացումները, ինչպէս որ կըսես, երկար-բարակ արտայացառութիւններու պէտք չունի. իսկ այդ եկեղեցական կարգն ու արարողութիւնները հնարւած են միայն ժողովուրդի սրտին համար. և սփոփիանս և ի միսիթարութիւն հաւատացելոցցի: Բայց այս բոլորէն զատ եթէ ուզեմ՝ ալ շուտ-շուտ ժամ կատարել չեմ կրնար. ժամանակ չի կայ, տիրացնւ, ժամանակ. պէտք է վազել ջաղացը, արտ. պէտք է նայել ախոռը, այս կողմ, այն

կողմէ Տես, այսօր ութը ժամ՝ է ոռքի վրայ եմ, հոգիս բերանս է եկեր,
դեռ շնորհքով բան ալ կերած չեմ. հա, իրաւ, է, երթամ տեսնեմ
մեզի հաց պատրաստեր են:

Ու վերարկուին թեւ ետ նետելով մտաւ վանքի բակը, սակայն
հոն հազիւ երկու քայլ ըրած՝ կեցաւ ակլնթարթ մը ու դարձաւ
վարդապետացուներուն.

— Բայց եթէ այդչափ կը ցանկաք՝ վազը ասուու համառօս
ժամ մը կընենք, միայն կարճ ու արագ. եղանակները այնպէս շատ
չի քաշքըշել:

Ու իր ամուր քայլւածքովը մտաւ քովի ցածլիկ գուռներէն մէկը:

— Այսպիս է որ բոլորի սիրու պաղեցուցեր են, և, մեր ասա-
քելական սքանչելի եկեղեցին. բացականչեց Մինաս՝ վարդապետի
հեռանալուն պէս՝ իր վրզովւած հոգիին բովանդակ մաղձովը: Արբա-
զան արարողութիւններն ու խորհուրդները վերածեր են ցոյցի ու
մեքենականութեան. և ահա գուք ալ իսկոյն կը համաձայնիք անոր
հետ, ոչ, մենք նորերս գոնէ պարտական ենք նորէն հոգի ու ոգե-
որութիւն մացընելու այդ սուրբ կարդերուն ու աղօթքներուն մէջ.
և բժախնդիր ճշութեամբ ու կանոնաւորութեամբ պարտական ենք
կատարելու մեր սրբակրօն պատերու մեզի աւանդ տւած ամէն մէջ-
ծէսն ու կարզը:

Սերոբ ձեռքով ու դէմքով տատամոտ ծամածութիւն մը
ըրաւ, ու կցեց խորհրդաւոր ցած ձայնով մը.

— Հկզրունքով, ի հարկէ, քեզի համաձայն եմ. սակայն միշտ
էականը պէտք է աչքի առաջ ունենալ. ժամասացութիւն մը աւելի
իամ պակաս, քիչ մը աւելի սրանց կամ երեսանց՝ առնէ ի՞նչ վնաս.
բաւական է, որ հասարակութեան աչքին չի զարնէ: Եիտակը եկե-
ղեցին ու դաւանանքը ինծի համար ամենէն առաջ ամուր վահան
մըն է մեր աղքանութեան պաշտպանումին ու յարաւեռութեանը.
և այդ վահանը ժողովուրդի կուրծքին առջև ամեն պատահակա-
նութեան գէմ միշտ պատրաստ ու ամուր պահել՝ այդ է ինծի հա-
մար հոգեորականներուս կոչումը:

— Ե՛, սիրելիս, քանի ստակ արժես զո՞ն քու այդ վահանովից
երբ ինքը ժողովուրդը հետղհետէ աւելի ստոն ու անտարբեր կը
դառնայ գեղի քեզի ու քու վահանդ, դէպի հոգեորականութիւնն

ու կրօնը: Եւ նոյն իսկ այդ ժողովուրդի զարգացած, այսինքն իբրև՝ թէ զարգացած, մեկ մասը չէ, որ եկեղեցին ու հաւատքը արդէն ծալլեր մեկ կողմէ է զրեր իր խելքովը, ու փրփուրը բերնին շարունակ կը յարձակէի մեր վրան. այս, ճիշտ առանց համար է լսա ած. «թնդ, հայր, թնդ գմեզս զոյս, զի ոչ զիտեն զինչ զարծենս:

— Յաւալի է, հոգիս, ցաւալի. բայց ի՞նչ կրնանք ըներ:

— Ե՞նչ, այս, ես քեզի ըսեմ: Եթէ կուզես, որ ժողովուրդի մէջ նորէն ազգեցութիւն ձեռք բերես, ժողովուրդը մեր պաշտպանութեան, մեր իշխանութեան տակ տանես, ովէտք է որ ամէնէն առաջ իր հաւատքը, իր կրօնական զզացումները արծարծես: Ե՛ւ որպէս զի իր այդ զզացումները բորբոքելու յաջողես՝ պէտք է որ ի՞նքը ամենէն առաջ այդ ջերմ հաւատքը քու մէջդ վսոես. միայն ճշմարիս ոգեսրութենէ ու անողայման համոզումէ բղխած խօսքը ժողովուրդի սրտին կազդէ:

— Բայց այդ համոզումը, այդ ողեսրութիւնը, սիրելիս, հ՛օ, չեմ կրնար ուժնվ զլիսուս մէջ մոցըներ:

— Պիտի ջանան, պիտի յաջողցընես. թէ չէ բոլոր քու այդ ձղուումներդ ու դիստուորութիւններդ ապարդիւն են: Հոգեորականներուս գոյութեան իմաստը, խորհուրդը, մեր ազգեցութեան աղքիւրը հաւատքն է միայն եղեր ու ի: Կիսատ ու թափթղիած կարկլատաններով ոչինչ չես յաջողցըներ. հոգեօրականութիւնը բարձրացընել կ'ու զես՝ պէտք է հարցի արմատին զիմես: Հաւատք, այդ է մեր ուժը. հաւատք քու պաշտօնիդ վրայ վերանստ նշանակրած լինելուդ, հաւատք մեր պապենական գողարիկ ծէսերուն ու աղօթքներուն, և առանք սուրբ հոգիին շնորհքովը կարգավրած լինելուն, հաւատք բարձրեալի ամենակարողութեան, հաւատք հանդերձեալի արդար հասուցման, յաւիտենական զեհնէնին ու մշալնջնական երշանկութեան, որուն դէմ ինչ է մեր երկրաւոր վաղանցիկ կեանքը. հաւատք քու մէջդ, հաւատք քու ժողովուրդիդ մէջ. թէ չէ ալ ինչի վրայ պիտի հաստատւի մաքրութիւնը, աղնւութիւնը, երկիւ զը, թշւարին մխիթարանքը, զոհաբերութիւնը, մարդասիրութիւնը, մեր ազգին յոյսը:

— Սնւտ ես. մեր անձնական ու հանրավին օգուտին ճիշտ զիտակցութեանը վրան. որիշ ոչինչ, բացականչեց յանկարծ Ոիրա-

քեան չոր ու կրքոս շեշտով մը՝ իր կուրծքը սեղմաղ լարումը պատուելով։

Այդ իմաստի ճառեր ան յաճախ էր լաած Մինասի բերնէն, բայց միշո մեծ կարևորութիւն չէր տւած՝ «մարդը հաւատք ունի, ինչ ընենք» մտածելով։ զեռ տեսակ մը պատկատանք ալ էր զգացած կարծեաւ հայց այսօր ինքն ալ չը զիտեր ինչպէս՝ քանի աչքերը ընկերոջը դէմքին զամած՝ անոր խօսքերուն ականջ կը զնէր, այն քան աւելի ու աւելի անախորժ ճմող բան մը ու վրդովմունք կ'ըղդար իր մէջը. ոչ մէկ կերպ ինքը զինքը չէր կրնար ազատեր այն զգացումէն, որ այդ ամբողջ ողեւորութիւնը շինծու, փքուն, փտառած վերարկու մըն էր միայն։

Եւ իր այդ տպաւորութիւնը ընկերոջը երեսին նետելը շուտով պահանջ զարձաւ իրին համար նախ իզն ինքը զինքը զապել ուղեց, վերջը չգիտէր ինչպէս արտայացաէ, մինչեւ որ յանկարժ արդէն ինքնին կրծքէն դուրս ցայտեց։

Մինաս առնըւած հայեացքով մը չափեց դիմացինը ոտքէն մինչև զլուի, և վերջը արհամարտ հանդարս ձայնով մը կըցեց.
— Ո՞ւր սորվեցար այդ. այդ ինչ տեսակ նոր խօսելու ձև է։
— Նոր...

Ու Սիրաքեան ուսերը ցընցեց դժգոհ։

— Այ, մարդիկ, մէկ սպասեցէք շնորհքով իրարու երիս տեսնենք, է. մէջ նետւեցաւ Սերոբ ծիծաղելով։ Դեռ հազիւ բարեաստծու բարին, և արդէն սկսեցիք նորէն վիճել։ Դուն հիմա ինձի այն ըսէ, Արտաշէս, արդէն չորս կողմին ծանօթացած կը լինիս, ուր պիտի երթանք հիմա հացէն եաքը։

— Հայէն թաքը.

Ու ցընցւեցաւ. այլ ևս չուրն էր ինկած Շու շիկի հետ պատյառ ողան աւելի կատղեցաւ։

— Հը, պատասխան չի տաս։

— Զըգիտեմ, տեսնենք. երեի տեղ մը կ'երթանք։

Պատասխանեց վերջապէս զժկամ։

Է.

Դուրսի նորածին լոյսը եկեղեցին նեղ ու երկար փոքրիկ պատուհաններէն հաղիւ ներս կը սպրդէր. և թանձր խաւար էր գիղւեր անկիւնները, սիւներուն եսմել ու գմբէթի վոսին մէջ:

Խորանին վրայի զոյդ մը մոմերու ուժասպառ լոյսերը վարդապեսի արտասանած իւրաքանչիւր բառէն կարծես կը սառսլռացին, տեսակ մը հիւանդոս գեղնութիւն թափելով իրենց անմիջական մօտիկ փոքր տարածութեան մը վրայ, որ հետզհետէ որքան հեռու անքան աւելի կը գունաթափէր, կը մարմըրէր մինչև որ մութի շերտերուն մէջ վերջնականապէս խեղդըւէր:

Վարդապետը սիւնին տակը արձանացած՝ իր աղօթքները կը ծամծըմէր իրարու ետեէ. դպիրը աղտոտ ու զորշ եկեղեցական շապիկը վրան, ժանդոտ ու զօղանջող բուրվառը ձեռքը սեղանին դէմ կեցած՝ վարդապետին արագութեանը հասնելու կը ջանար. մինչ տիրացուները՝ նոյնպէս մոմոտ ու զորշ շապիկներու մէջ՝ զըմբէթին ճիշտ տակը դիրք էին բռնած գրակալին առջելը. ու բարակ մոմերով շարականը լուսաւորած կ'երդէին իրենց կարգին՝ իրենց առաւելութեան ու արւեստին գիտակից հաստատ ու լեցուն շեշտերով:

Երկէն միայն Աիրաքեանն էր, որ կէս քայլի մը չափ ետքաշւած, ձեռքերը ծալլած կուրծքին, ու զլուխը քիչ մը աջ ծուած անշարժացեր էր:

—Տղայ, չերգեն, զարձաւ Աերոր յանկարծ ընկերոջը դադարի մը վայրկեանին:

—Գիտես որ ոչ ձայն ունիմ, ոչ ալ եղանակներէն բան կը հասկընամ. պատասխանեց տղան կարձ:

—Բայց վերջապէս ոլիսի սորւմս, թէ չէ. վրայ տւաւ երկարահասակը շատապ, ու մկաւ ալէլուխան:

«Աոր. Էլ...»:

Արտաշէս աչքերը խորանի մոմերէն մէկուն լոյսին յառած՝ կը մուածէր:

Ընկերը իրաւունք ունէր. այդ բոլոր երգերը, սաղմոսները, մաղթանքները, աղօթքները, չէ որ այդ իր տրհեստն էր դառնա-

լու շուտով. իր արհեստը, զիտնակ այդ ամենը և ամեն օր կրկնելու ուրիշ ոչինչ։ Յանկարծ սկսաւ հաշւել, թէ տարեկան ընդամենը քանի ժամ՝ է աց իր պարտականութիւնը. առատուները մօտ երկու, ժամ մը իրիկունը, տօն օրերն ու պատարազը միտսին առնելով միջին հաշիւ օրական չորս ժամ. այն ալ օրւան ու աշխատանքի ամենաթարմ ժամերէն. ու մոբով սկսաւ երկար-բարձր 4-ը 365-ով բազմապատկելու ելաւ 1460։

«Օրիորդ Մելինեանը գուցէ իրաւունք ունի. մեղք չէ ձևական պարտականութեան մը համար սպաննւած այսանի ժամնակին».

Տեսակ մը սրանեղութիւն եկաւ վրան, ու մուածութները ընդհատեց։

Մինաս անոր առջել կեցած՝ ազօթքի խօսքերուն հետեկով շուտ-շուտ կը ծռէր ու կը խաչակընքէր երեսը. խոշոր, վճառաւոր ու ծանր խաչեր ամբողջ կրծքին ու դէմքին վրայ։

Արտաշէս սկսաւ զիտել. նաև շրթունքը խածաւ միայն և ուղեց կարեւորութիւն չի տայ. բայց շուտով սկսաւ ջղուտ դառնալ ու զայրանալ։

Այդ միջոցին էր, որ ետեւէն եկեղեցին դասն թեթև ճոխնը լսւելու։

«Փանեաններն են անցաւ աղու զլիսէն, ամօթի սիս բան մը վազեց մէջէն ու առանց ետ դառնալ համարձակելու՝ ականջները սրեց։

Ներս մանող չի կար. գուցէ հովիլ էր, կամ դուռը ինքնին։ Միայն աղու մէջ ալ գամմած մնաց այն համզզումը, թէ ուրոր է հիմա Փանեանները ներս պիտի մանին։ Ընկերները նախորդ իրիկունը յայտնած էին անոնց այս աստու ժամասացութիւն լինելու մասին, և կինները շատ հաւանական է, որ հետաքրքրուէին։

Դուրսէն լսւող ամէն ծպառու աղու սիրու նետել կու տար, ու լսելիքը կը լարէր։

Անգամ մը նայեցաւ իր վրան. երկար շապիկը մնմու ու աղտոտ կախւած էր ուսերէն, կուրծքի բացւածքէն իր հագուստները կ'երեւացին. իւրաքանչիւր թէկին վրայ փեթլուտած ոսկեթելով բաւած նաև մը. նոյն փեթուտած բակեթելով նաև վարը շատլիին եղերքը, որուն տակէն տաբատին սոքերը շատ ծիծաղելի կերպով դուրս կը նետէին։ Նայեցաւ երկար իրեն, վերջը վորձի համար

նոյեցաւ իր ընկերներուն վրաց, և յանկարծ շնոր, շնոր տարօրինակ թւեցաւ իրեն այդ հազուսաները, այդ գիրքը:

«Ով զիսէ որչափ վրանիս խնդռն պիտի Քանեանները», ան ցաւ մոքէն, ու ամօթէն, զայտոցթէն կարմրեցաւ:

Ոչ, անկարեցի է. պէտք չէ, որ ինքը այդ գիրքին մէջ տեսնէին:

— Ես դուրս պիտի երթամ: շըշլնչեց կամաց մը ընկերներուն, և առանց անոնց շւարած դէմքերուն ուշ դարձլնելու՝ մոտաւ պահարան, հանեց շաղիկը ու պատերուն տակէն արագ դուրս սպրդեցաւ եկեղեցիէն:

Դուրսը պայծառ օր էր արդէն: Արեւ ձորի ձախ շրթունքին վրձինի մէկ շարժումով ոսկիի գոյնն էր քսեր, ու թարմ, զնվ լեռնական օդ մը:

Բոլոր կրծքովը խոր շունչ մը առաւ. վազեց իրենց սենեակէն վերցուց իր սրբիչը ու նետեցաւ վանքի դուռնէն դուրս, մինչ ձորի պատերուն մէջ վանքի զիլ փոքրիկ զանգակը սկսաւ կատակասէր արձականգներուն հետ խաղի ելնել ժամասացութեան մէկ նոր բաժնումը ազգարարելով:

Քանեաններու բնակառանին դուռը ու պատուհանները բաց էր, թէւ մշտեղ ոչ ոք չի կար:

Տղան հայեացք մը նետեց ու շտապ ձորէն վար վազել կ'ուղէր, որ եակէն իր անունը լսեցաւ:

— Պարհն Սիրաքեան:

Մելինեանն էր տան պատուհանէն:

— Ո՞ւր կ'ըշապէք այդպէս առանձին. պուաց աղջիկը:

Տղան զիմեց դէպի պատուհանը:

Օրիորդի քոյզն ալ եկաւ պատուհան:

— Բարի լոյս, պարմն:

— Բարի լոյս Կ'երթամ ձորը լողալու, օրինրդ. հիմա չուրը լու պազ է լինելու:

— Մինակ. մւր են ձեր ընկերները. հարցուց տիկինը:

— Անոնք եկեղեցին են:

— Եւ դուք մէ:

— Ես ալ հոն էի. ներսի օդը քիչ մը շատ ճնշւած էր. սիրոս

լողալ կ'ուզէ. պատասխանեց երիտասարդը անսովոր համարձակ շեշտով մը, ու տեսակ մը քապրիզով։

— Իսկ մեր միասին պտոյսները այլ ևս վերջացան ի հարկէ. վրայ բերաւ Շուշիկ ժապիտը շրթունքին։

— Դէ, ի հարկ է, պարոնը չի կրնար ընկերները ձգեր, պէտք է անոնց հետ երթայ, երեխ գործ ալ կ'ունենան միասին. աւելցուց քոյլը։

— Զէ, այդ չէ, բայց պարօն Սիրաբեանը ալ ինծմէ կը քաշւի, քանի ընկերները եկած են։

— Ինչու, օրինրդ։ *

Ու շփոթումէն ձեռքերը ուր զնելը չզիտէր։

— Նու, պարզ է. ձեր ընկերներէն կ'ակնածիք ի հարկ է։ Ես արդէն երէկ իրիկուն նկատեցի, ձեր վարմունքը բոլորովին ուրիշ կերպ էր, տեսակ մը պաշտօնական ու քաշւած։ Դէ՞ն, անշուշտ, ես ձեզի չեմ կրնար մեզազեր. կը հասկընամ, որ ինծի մօտիկ լինելը ձեր ցարդը պիտի ձգէ ձեր պաշտօնակից ընկերներու աչքին։

— Ձեր... բարեկամութիւնը իմ ցարդը պիտի ձգէ, ինչու. բացականչեց ազան. ու աչքերը վառեցան։ Եւ վերջապէս կը կարծէք ինծի համար հրաման է ընկերներուս այս կամ այն հայեացքը։ Կը սխալիք, օրինրդ, և որպէս զի ըստածիս անմիջապէս համոզւիք, կը խնդրեմ այսօր, և վազը, և միւս օր, քանի որ ես հոս եմ միշտ նորէն երթանք շրջելու, առանձին, առաջւան պէս. մւր որ կ'ուզէք, ինչպէս որ կ'ուզէք, երբ որ կ'ուզէք։

Այդ ոգևորութեան ու աղու աչքերուն այդ կայծկըլտումին դէմ՝ Շուշանիկի այսերը յանկարծ հուր առին ու կուրծքը սկսաւթեթեւ մը գողալ։

Տիկինը ճակտին տակէն երիտասարդին կը նայէր խորհրդաւոր ժողովով մը։

— Ենորհակալ եմ. ըստու վերջապէս աղջիկը գլխու թեթև շարժումով մը ձեռքը պատուհանէն դուրս պարզելով։

Տղան բռնեց ու թոթւեց։

— Ուրեմն նորէն ճաշէն վերջը ժամը երկուքին. այս, կը սպասեմ։

— Ժամը երկուքին, օրինրդ. ցտեսութիւն։

Ու գլխարկովը սնոնց վերջին բարե մըն ալ տալով՝ դէսի
ձորին էջքը վազեց:

Շուշիկ աչքերովը հետեցաւ աղուն, մինչև անոր ժայռերուն
ու ծառերուն ետել աներեսովթ լինելը. վերջը ծանր ու հանդարտ
քաշւեցաւ քիչ մը ետ, վերցուց իր պատուհանին մէջ ձգած կարը,
նստեցաւ ու սկսաւ արագ աշխատիլ. տեսակ մը ջղուտ, տենդոտ
արագ ձեռքով. հազիւ կարելի էր ասեղը նշմարելը:

—Մէջք այդ տղան. բացականչեց տիկինը սեղանին առջե
թէյի բաժակները սրբելով: Ամենեւին վանքի համար սուեղծւած
բնաւորութիւն չէ. ճշմարիստ խելքս չի հասնիր, ինչպէս է հոգևո-
րականութեան այգապէս սէր տւեր:

—Ա, ինչ սէր, ինչ բան. մէջ նետեցաւ սենեակի վերին ան-
կիւնէն Քանեան, որ գետինը փուած թաւ գորգի մը վրայ ամբողջ
հասակովը երկընցած՝ ձեռքը գիրք մը կը կարգար:

Իր առաւան սովորութիւնն էր այդ մինչեւ թէյ պատրաստիլը:

—Ի՞նչ սէր, տաք, երիտասարդ, յափշտակւող տղայ է. ամէն
բան տակին ու վրայ ընելու, անուն, աղմուկ հանելու պահանջը
մէջը կ'եռաց իր թարմ արիւնին հետ. ու գեռ չի գործածւած
ուժեր ունի ջեղերուն մէջ. ասոր կ'ըսեն պարզապէս գործունէու-
թեան ծարաւ: Վանքի մէջ ականջը լիցուցեր են, թէ դլխուն խոյր
կամ վեղար ունեցողն է ազգացին գլխաւոր գործիչը, և թէ տա-
րիներով գպրոցները քարշ եկող մարդոց կանակը փիլոն ձգելով՝ ալ
Ասուած գիտէ ինչ տեսակ բարիքներ կարելի է ընել ժողովուրդին.
և այդ խեղճ աղան ալ հաւատցեր է ու երիտասարդական ամբողջ
թափովը նետւեր է մէջը. վերջացաւ գնաց: Եւ զարմանալու ալ
ոչինչ չի կայ. միթէ վանքէն գուրս քիչ կան խելացի գլուխներ,
որոնք նոյն կերպ գատելու գերազանցութիւնը ունին: Արդէն լրա-
գրութեան ու հասարակութեան շրջաններուն մէջ այնքան է կրկըն-
ւեր մեր կղերը վերածնելու, մեր այդ հին ու փտաած տիկին մէջ
թարմ գինի չեցընելու աբուրդ միտքը, որ շատերուն համար
ինքնին հասկընալի բան մը գարձեր է. աքսիօմ մը, որուն ճշմար-
սութեան դէմ կասկածելն անգամ հակառակ է հիմա մեր մէջը մօ-
դա եղող կարճատես ազգասիրութեան: Դէ, եթէ տարիքը առած
ու բարձրագոյն ուսման տէր մարդիկ՝ քուլտուրական յառաջդիմու-

թեան երեսին թքնող այդ գաղափարով ոգևորւիլ կրնան, ալ ինչ մեղադրեմ այս միամիտ ու սեմինարի օգով անած աղաքը:

— Զգիտեմ. յամենայն դէպս խեղճ տղաք: Գոնէ այս բոլորէն վերջը յաջողէին էական օգուտ մը տալու. կցեց կինը ցաւակցաբար:

— Երբ իրենց հոգեւորական գառնալուն նսպատակն է պասակել, թաղել, ժամապատարագ ընել և այդ բոլորի փոխարէն ժողովուրդի տուրքովը ապրել՝ ըսելիք չունիմ. հացի ու ճաշակի խնդիր է. վերջապէս զեռ գոյութիւն ունեցող արհեստ մըն ալ այդ է, որ իր կատարողը կուզէ: Խոկ ատկէ անդին դատարկ աղմուկ է միան, կամ, ինչպէս ըսի, երիտասարդական յախուռն լաւատեսութիւնն առւսաւորւած կզեր: Միթէ մե՛ր հոգեւորականութիւնը միայն պիտի լինի մարդկացին զարգացման մէջ միակ բացառութիւն կազմողը. ժողովուրդի մտաւոր ազատութեան ճամբան կզերի աւերականերուն վրայէն կ'երթաց, ոչ թէ հակառակը: Այդ տղոց ու իրենց համախոհներու իդէալներն ու երազները ինչ ալ որ լինին, անոնց գործունէութեան անխուսափելի իրական հետևանքը ուշ կամ կանուխ միայն մէկ բան կրնայ լինիր. ոչ թէ հոգեւորականութեան բարձրացնեմը, այլ հոգեւորականներու մտաւոր նրբացնեմը ու յետադիմական ոգով գիտակցաբար զինւիլը, որը ինքնին շատ աւելի մեծ չարիք է ժողովուրդի լուսաւորութեան գործին մէջ, քան անոնց ամենախորին տգիտութիւնը. ահա քեզի օգուտ է՛, զուն շուտով թէյդ վերջացուր. ժամանակ է:

Ու դառնալով միւս կողքին վրայ՝ շարունակեց ընդհատած ընթերցումը:

Մինչ Սիրաքեան նոյն թափովը կ'ըշտապէր ոտքի նեղ շատիլէն վար, որ նեղ ու երկար ժապաւէնի մը պէս ձիգ փուեր էր ժայռերուն մէջ ծուռ ու մուռ: Խիճ ու աւազ վար կը դլուրէին անոր արագ քայլերուն տակէն. և հնա ու հնն այդ աղմուկէն խրոնած մէկ-երկու խլէղ ժայռերուն մէջ ծերազ մը կ'աճապարէին իրենց երկար սուզերը ետևնուն քարշ տալով:

Ժամաւէնը կ'երկարէր ու միւս եղերքը անցնելու համար կը մտնէր նոյն իսկ գետակին մէջ, ուր ջուրէն գուրս ցըցւած քարերու շարք մը բզըկաած ժապաւէնին փեռթերը կը ներկայացընէին: Զուրին վրայ տղան թողուց ժապաւէնը. ու քարէ քար ցատ-

կերպ՝ իջաւ հնն, ուր սովորաբար լողալու կու գար: Ահագին ապառաժներուն գրիին մէջ սեղմըւած գետակի ամէնէն խորունկ ու ամէնէն լնդարձակ տարածութիւնն էր այդ. ուր մէկ կողմէն ջուրը բիւրեղ շրվէժով ներս կը խուժէր յանձնապաստան աղմուկով մը, միւս միւս կողմէն իր նախորդ ալիքներուն նման Բնքն ալ հանգարած ու հիասթափ ճամբան կը շարունակէր տժգոհութեան մըրմունջը շրթունքներուն վրայ:

Երիտասարդի հանւիլն ու ջուրը նետւիլը ակընթարթի մը գործը եղաւ, վերին աստիճանի զւարթ ու կայտառ տրամադրութեամբ մը: Ջուրը սաւն էր ու գանակի պէս կը կորէր. և տղան կը պուար ցաւէն ու հաճոյքէն՝ այդ յատակ ու հեղուկ մկաններուն մէջ ձուկի մը պէս գալարելով:

Երբ վանք գարձաւ՝ լնկերները եկեղեցիէն նոր ելած նստեր էին իրենց սենեակը նախածաշի տեսակ մը լուրջ ու մուխոհ զէմքերով: Սենեակի դուռը կռնակի վրայ բաց էր:

Սիրաքեան մէկ սատումով ցատկեց ներս՝ թեթև ու աշխուժ:

— Բարի լոյս ձեզի:

— Ասածու բարին:

— Ո՞ւր էիր. հարցուց երկարահասակը կարճ ու չոր:

— Լողալու ա, այնովէս հիանալի զով է ջուրը:

Թոթւեց երեսրբիչը, ու փաեց սենեակի դռան, մօտ մամռոտքարի մը վրայ:

— Առող համար եկեղեցիէն ելար. հարցուց նոյն հանդարա ու չոր ձայնը, որուն տակէն գալիք փոթորիկը իր գլուխը ցոյց կու տար:

— Դրեթէ. քիչ մը անհանգիստ էի ներսը:

— ՚իս, այդպէս չըսես, մարդ Աստծու. մէջ նետւեցաւ Սերոբ՝ ուրախ խնդիրի այց հաշտարար ձեւը առնելէն: Երեթ, ստամոքսի ցաւ, հէ. հոս սենեակները քիչ մը խոնաւ են:

— Իմ ո՛չ մէկ տեղս չի ցաւեր. ես հիւանդ չեմ. պատասխանեց Սիրաքեան այս անգամ ինքն ալ գրգռւած:

— Այն ատե՞ն. շեշտեց Մինաս խիստ:

— Այն ատեն անպատճառ իմանալ կուզես, թէ ինչու դուրս եկայ, հմ. զէ, լսէ. որմարզապէս ինծի անտանելի էր քու անվերջ

խոշոր խաչերդ, ու ձեր խոժոր երգերուն յաւիտենական կրկնութիւնը. գ՞հն ես հիմա:

—Եւ դժուն քանի մը շաբաթէն սարկաւագ պիտի ձեռնադըրքիս, համ:

—Սարկաւագ...

Կարծես այդ բառը կեանքին մէջ առաջին անգամը կը լսէր: Ու ակընթարթ մը վերջը կոտրած շեշտով մը ու ելցուց.

—Յամենայն դէպս ոչ տարին 1460 ժամ այդ մուայլ պատերուն տակ աղօթք մը մընջելու համար:

—Երանի մեզի:

Ու գլուխնին կախած լուռ սկսան ուտել:

—Այսօր, ի՞նչ և է, նորէն քիչ մը ամնկոտ է. Ընդհատեց Սերոբ վերջապէս լուռթիւնը՝ այդ անախորժ միջադէպը կերպ մը մոռցընել տալու ջանքով: Թէ չէ երէկ իսերս անիծեց այդ տաքցած ժայռերու այրեցեալ-գոտիին մէջէն բարձրանալը:

—Ա՛խ, հա. աղէկ միտքս ձգեցիր. ընդհատեց Սիրաքեան անտարբեր շեշտով մը ներքին անհանգստութիւնը հնար եղածին չափ քողարկել ջանալով: Ե՛ս այսօր ձեզի հետ պտոյտի գալու չեմ կրնար. նախ վերը Սգարակի կողմէրը ես արդէն իջած եմ երկու անգամ, և երկրորդ՝ օրիորդին խոստացեր եմ միասին Տեկոր երթալու:

—Որո՞ւն. հարցուց Մինաս կարծես ականջին չի հաւտալով:

—Օրիորդին, օրիորդ Մելինեանին:

Երկար ու կարճ ընկերները ակընթարթ մը շեշտ իրարուերես նայեցան:

Եւ ոչ ոք ոչինչ չպատասխանեց:

Հ.

Արեւ արևմուտքի ատամնաւոր լեռներէն մէկու ուսին յենած՝ խոշոր դէմքովը կը ծիծաղէր ընդարձակ լեռնադաշտի լայն մէջքին վրայ, որուն մէկ կողմը ինկած էր Խծկուքի ձորի երկար ու խոր ճեղքը. ճեղք մը կարծես նժղակով բացւած ծերուկ բարձրաւանդակի թիկունքին՝ վիթխարի վերաբուժի մը հսկայ ձեռքին տակ որուն արդիւնքն էր բացւածքի ծուռ ու մուռ շրթունքը:

Երթունքի այն մասին, որուն տակ ձորին պատը սեալ վար կը սահեր դէպի անդունղը, վերը ճեղքի ճիշտ եզերքին, գետինը չորսած խոռոքուն վրայ ինկեր էին երկու վարդապետացուներ:

Առաջն անոնք Արտաշէսի վարմունքին վրդովեած ու զայրացկոտ՝ նոյն իսկ պայտի տրամադրութիւնը կորսընցուցեր էին: Իրիկան դէմ միայն՝ քիչ մը բացւելու համար՝ բարձրացեր էին ձորէն դուրս լեռնազաշտը: Ազդ ելքը փոխեր էր արդէն անոնց տրամադրութիւնը, և Արտաշէսն ու իր ցիմարութիւնները՝ վերջապէս մէկ կողմ թողած՝ սկսեր էին կրկին իրենց սովորական խօսակցութիւններն ու ողեորութիւնը, մինչեւ որ յոգնած նետէր էին հոտպահ մը հանգստանալու:

Մինաս ամբողջ երկայնքովը փուած կոնակին վրայ, աչքերը երկինքի մաքուր կապոյտին յառած՝ կը մտածէր:

Կը մտածէր և Սերոր նստած, ոտքին մէկը դէպի կուրծքը ծալած, դէմքը վրած ծունկին ու հայեացքը վարը ձորի մէջէն վեր սլաքող գմբէթներու կոյանին դամած:

Յանկարծ կէս մը ընկերոջը զառնալով՝ բացականչեց.

—Ամէն, ամէն լեռան կողքին, ամէն ձորի մէջ հետք մը կայ. կայ մետացորդ մը աւերակ կամ շէն, որ կողմ ալ որ նացիս: Թագաւորի մը ցիշատակը, իշխանի մը նւերը իր ժողովրդին: Մարդ ամէն վայրիեան ակամաց ազդ նագրատունիներու ստերը իր շուրջը կըզգայ. ազդ խելացի, խորամանկ ու հայրենասէր թագաւորնախարարներու: Եւ զիամս, տարօրինակ զգացում մըն է այս. կարծես հիւր լինիմ եկած այդ իշխաններուն հողը. ամէն աւերակ քար, քերդ կամ եկեղեցի ամբողջ պատմութիւններ կը բանաց ինձի: Այս, ինչնի, ինչնի պահած չեն այդ թափթփած սիներուն ու քարերուն տակ, անոնց արձանադրութիւններուն մէջ: Եթէ այդ բոլորը փորւէր, հետախուզւէր, որչափ թանկագին հնութիւններ զուրու պիտի էինէին, թնէ պատմական զանձ:

Ու ողեորւած աչքերը հպարտութեամբ փալեցան: Ակընթարթ մը մտածեց, ու կրկին վրայ տւաւ.

— Ե՛, արդէն ինչ բանի վրայ ուշք ե՞ն գարձուցեր մեր հոգեորականները մինչի հիմա: Յողորը ծայրէն սկսելու է, ժողովը մեր էին դրականո թեան փշրանքները, անել մեր իշխաններու ու կա-

թուղիկոսներու պատմութիւնը այդ հողոտած արձանագրութիւններէն, հետզհետէ հաւաքել այդ հախօսական բեկորները, ձեռագիրները. Եջմիածինը կարելի է առաջնակարգ կեդրն մը գարձնել այդ ժողովածուներուն. ու մեր պարծանքը: Բայց նվէ ջանք ըրեր մեր ողորմելինքը. փուհ. միայն կողոստել են նայած իրենց ու իրենց ազգականներու կոկորդը լեցընելու համար Սակայն թնչ մեղադրեմ. տղիտութիւն: Լոյս, լոյս մոցընելու է մեր եկեղեցականութեան քառօսին մէջ:

—Կը լինի, սիրելիս, կը լինի. պատասխանեց Մինաս վտաճ ու հաւատքի խորին շեշտով մը, կոնակի վրայէն քիչ մը կողքին դառնալով: Տես, արդէն սկսած է այդ լոյսի արշալոյսը փալիլ մեր կաթողիկէ ամոռի միաբանութեան վրայ: Կարգապահ, խիստ, կեդրոնացած, սրբակինցազ հոգեռական միութիւն մը, ուխտ մը. բոլոր միաբան նւիր ած մեր լոյս հաւատքին, սրբութիւններուն, դարեւոր աւանդութիւններուն ու պատմական բեկորներուն նախանձախնդիր պաշտպանութեանը:

—Այօ, անշնուշտ, անշնուշտ: Միաբանութիւն մը շնոր աւելի ազգային, քան այդ են Վիէննան ու Վիեննատիկը. և այն ալ մեր բուն ժողովուրդին մէջ, մեր բուն հոգին վրայ:

—Եւ մանաւանդ մեր բուն առաքելական. Կաթողիկէ սուրբ եկեղեցիին ծոցը:

Ակնթարթ մը լուսութիւն տիրեց:
Մինաս յանկարծ ելաւ նատեցաւ. ու մատը թափ տալով լնիկ.
բոջը վրան՝ բաղականչեց.

—Պէտք է, պէտք է հասկըցնել այդ կաթողիկներուն, բողքականներուն, որ մեր եկեղեցին քրիստոնէական առաջն դարերու կազմակերպութեան ամենէն անաղարտ մէկ նմուշն է. հիմնած երկու առաքեալներու ձևով. ամենազուտ, հերետիկոսութիւններէ զերծ մնացած ամենահին եկեղեցին Մինչեւ հիմա ծոեր, խեղաթիւ բեր են փաստերը, պատմութիւնը. աշխատեր են մուտք գործել մեր փարախը ու միամիտնուրը դացթակեցընել. իրենք խօսեր են շարունակ աստւածաբանական գիտութիւններու, ուսումնասիրութիւններու անունով, իսկ մերոնք երեխացական բաներ են միայն պատասխաներ. բայց հիմա. է, հոգիս, չդիտես թնչողէս սիրտս կ'եռաց-

անհամբերու թենէն. վայրկեան մը առաջ երբ պիտի լինի ինքը զինք-նիս Գերմանիա նետենք. աստւածաբանութիւնը հիմնապէս իւրացուցած դասնանք ետ, ու իրենց գէնքերը իրենց դէմ:

—Ինձի ճշմարիտ կատակ կը թւի, որ քանի մը ամիսէն արդէն հեռու, հեռու պիտի լինինք մեր հայրենիքէն, մեր այս հողէն ու ջուրէն: Յատարութեան մէջ. ճիշտ Սահակ-Մեսրոբի ժամանակները, Ճիշտ. որ կը մտածեմ: Եփրայեցերէնի, տսորերէնի, յունարէնի խորերը թաղւած...

—Եւ մանաւանդ Աստւածաշունչի աղքիւրներու համեմատութեան. էականը չի մոռնանք: Երբեմն պարզ «և» մը կամ ուստի մը ամբողջ դաւանաբանական փաստ մը կրնայ դառնար, և կրնայ յամառ վիճաբանութիւններու բովանդակ դէզ մը ջաղջաղեր: Կեցիր զուն. այս երեք-չորս տարին ալ անշուշտ կ'անցնի. ու մենք նորէն հռա ենք՝ այս հողին վրայ՝ զինւած ու պատրաստ մեր հաւատքի ու ազգի զարգացմանն ու բարգաւաճմանը համար կուելու: Կիր, ելիր:

Ու ինքը ոտքի ցատկած՝ սկսաւ ոտքովը ընկերը հրել:

Ելաւ Սերոբ ալ, և ուղղւեցան դէպի ձոր:

Արևը արդէն իր «զիշեր—բարին» լսեր էր շատոնց, ու մութը խոտանալու վրայ էր, որ հասան իրենց սենեակը:

—Արտաշէսը դեռ չէ եկած. նկատեց Սերոբ:

—Եւ զուրսը արդէն մ' ութ է դրեթէ. շեշտեց ընկերը:

Ու վայրկեան մը վերջը աւելցուց.

—Ո՛չ, այս իրիկուն հետը լուրջ խօսելու է, և այս անհամութիւններուն վերջ դնելու. ամէն բան իր չափը ունի վերջապէս ու իր սահմանը:

—Է՛, եղբայր, ացդչափ ալ ետեէն մի՛ իննար. դիտես, որ բնաւորութիւնը քիչ մը յամառ է. քիչ մըն ալ իր խելքովը ազատամութիւն ծախսել կ'ուզէ. այսինքն թէ ինչո՞ւ օրիորդի մը հետ շրջելու պիտի չերթայ, ինչ վնաս, միթէ վարդապետը մարդ չէ. հազար անգամ խօսած ենք այդ բոլորի մասին, հիմա ալ զործնականապէս ցոյց տալ կ'ուզէ. դէ, զիտես, որ քիչ մը պէտք եղածէն աւելի աղատ մտածող է:

—Ազատ մտածող. ա, ինչ չիզերուս դիտչող պարապ խօսք է

այդ. մենք շղթալւած մտածող ենք, ի՞նչ է. անոր ըրածը ոչ թէ ազատ մտահում է, ալ պարզապէս սխալ մտածում:

— Իհարկէ ես քեզի համաձայն եմ: Թէ մարդու իր ներքին սեփական համոզումները որոնք են՝ այդ վերջապէս իր գիտնալիք բանն է. միայն պէտք է զգուշ լինել ուրիշներու առջև գալթակելի երեւալէ: Յիմարութիւն չէ անխօրհուրդ տեղը իր վրայ ամէն տեսակ բաներ խօսեցընել տալը. ըստ խնդրեմ ի՞նչ ըսես չեն մտածեր, եթէ յանկարծ լուրը էջմիածին հասնի, թէ հս ձորերուն մէջ առանձին օրերով աղջկան մը հետ կը թափառի. հիմա եկուր ուրիշները համողէ, որ այդ բոլորը մաքուր է ու թթու. ազատամտութեան հետևանք: Կարելի չէ այդ արագին ձևականութիւնները արհամարել ոչ, եթէ վարկերնիս բարձր պահել կ'ուզենք: Ի՞նչ լինենք, սիրելիս, եթէ ժողովուրդի համար չորեքշաբթի օրը հաւկիթ ուտելլը աւելի մեծ յանցանք է, քան ծածուկ ամէն տեսակ անբարոյականութիւններ կատարելլը. պէտք է յարմարւել թէ չէ ժողովուրդի հաշեացքներուն. ընդհանուրի ըմբռնումներուն բացարձակ դէմ գացողը դործի գլուխ բարձրանալ չի կրնար:

— Կասկած չի կայ: Զէ, այդ տղան փչացընողը իր կարդացած գրքերն են. բոյսերու, տխմար անասուններու ու մեր ներքին աղտոտ գործարաններու նկարագրութիւնները, և այդ բոլոր անձունիութիւններուն վրայ հիմնւած տափակ բնագէտներու իմաստակ ու անձաշակ թէորիաները. Փուլյ: Եթոակիլ ես Արտաշէսէն շատոնց ձեռք վերցուցած կը լինէի, բայց խելացի ու ազնիւ տղայ է, վերջի վերջոց խելքի կու գայ. թող անգամ մը սարկաւագ դառնայ, քիչ ի՞ր տարիքն ալ լենայ. մանաւանդ երբ նւրութա սկսի աստւածաբանական գիտութիւններուն ծանօթանալու...

Դուրսը ոտքի ձայներ լսեցան. Սերոր ձեռքով նշան մը ըրաւընկերոջը. երկարահասակը խօսքը կտրեց:

Ներս մտաւ. Սիրաքեան հանգարառ քայլերով, ու անտարբեր լինել ուզող տոնով մը բարեւեց ընկերները:

— Ի՞նչ բանի էք այս նեղ սենեակին անկիւնը:

— Տնտեսուհիին կ'ըսպասենք, որ սամաւարը ստանանք:

Պատասխանողը Սերոբն էր:

— Այս բայց չէ որ Քանեաններուն երթանք պիտի. երեկ գիշեր մարդիկը կրկնեցին նորէն մասնաւորապէս:

— Ե՛, թնչ կարեւորութիւն կայ ամեն իրիկուն. երեկ գիշեր հոն էինք՝ այդ ալ հերիք է. հակառակեցաւ Մինաս: Պարոն Քանեան կը հրաւիրէ ի հարկէ, իր հաշիւները ունի, իր փառած փիլիսոփայութիւնները դուրս տալու, ու մասներուն մէջէն մեզի հեգնելու համար: Այդ մարդիկը այդպէս են արդէն. իրենք պատկւեր, կնիկնին առեր նստեր են ու իրենց փորէն անդին չեն մտածեր. իսկ ով ալ որ քիչ մը ուրիշ կերպ մտածելու ու գործ տեսնելու միտք ունի՝ ան ալ կը ծաղրեն: Խեղճուկներ, ծաղրել գիտեն միայն:

— Բայց վիրաւորւիլդ, շխտակը, բաւական անտեղի է. նկատեց Սիրաքեան չոր: Ամէն մարդ իր սեփական համոզումը ունի. և ով իր համոզումը չի կեղծեր ամենաբարձր մարդն է ինձի համար: Իսկ մասնաւորապէս Քանեանի մասին աղէկ կը լինի բոլորովին լոես. երանի ամենքը անոր կէսին շափ սրուաբաց ու հասկըցող լինէին. քեզի ով ըստ, որ ան գործ չի տեսներ. իսկ իր կին ունենալու մասին այդպէս արհամարանքով խօսելդ ուղակի տգեղ է:

— Գուն սիրահարեր ես երեսի ացդ ընտանիքին վրայ:

— Ես սրտանց ուրախ եմ այդ ընտանիքին ծանօթացած լինելուս: Դուն ալ որ քիչ մը մօտենաս՝ դուն ալ կը համակրես. անոնց պարզ խօսելէն պէտք չէ որ խրանես. մի՞թէ քեզի համար ցանկալի է կեղծաւոր ու խորամանկ մարդոց հետ գործ ունենալը: Դէ, դատարկ խօսքերը մէկոր. ելէք, երթանք. հիմա մեզի կը ըսպասեն:

— Ո՞չ:

Արտաշէս կրթլնեցաւ դռան սեմի շրջանակին ու աչքերը մուժին մէջէն ընկերոջը գէմքին շեշտեց:

— Ինձի նայէ, Արտաշէս. դուն գեռ շատ պարզսիրտ ու միամիտ ես և ըրածդ ինքդ ալ չես հասկընար. ես քեզի խորհուրդ կու տայի քիչ մը աւելի զգուշ լինէիր. առառուն շուզեցի խօսիմ՝ զրգուած էիր. հիմա կրնաս աւելի պաղ մտածեր:

— Եւ այդ թնչ է տեսնենք պաղ մտածելիքս. հարցուց տղան ծաղրածու շեշտով մը՝ երկու ձեռքերը երկու կողմէն զրաբանները դնելով:

—Երեխայ չես վերջապէս. պէտք է հասկընաս, որ կրնան վրադ խօսիլ:

—Ի՞նչ կրնան վրաս խօսիլ:

—Դէ, սիրելիս, միթէ մյզ աստիճան միամիտ ես. վարդապետացու երիտասարդ տղայ մը ու սիրուն աղջկէ մը շարունակ առանձին ձորի ժայռերուն մէջ:

—Է՛ք. հարցուց տղան հազիւ իր ուռած գայրոյթը զսպելով:

—Դէ, ամէն բան կրնան եզրակացըներ վերջապէս:

—Եւ այդ կրցողը, այդ եզրակացընողը ով է. կրկնեց տղան սեղմըւած ակռանիրուն մէջէն գոզացող ձայնով մը:

—Վերջապէս. վանքի մարդիկը:

—Վանքի. հահահահահա. հայր-սուրբիկս ու տնտեսուհին. իհարկէ, իհարկէ. վանքի:

—Հոս խնդալու բան չի կայ: Տնտեսուհին բաւական ակնարկութիւններ ըրտւ արդէն այսօր. երևսի ծամածոռութիւնները տեսնելու էիր. առոտուն ալ հայր-սուրբը բաներ մը հասկըցուց, որ քեզի քանի մը անգտուր աղջկան հետ տեսեր է, մանաւանդ մեր գալէն առաջ:

Տղան սկսաւ մնածել կարծես. և վերջը վերին աստիճանի լրջութեամբ ըստաւ:

—Աւրեմն Քրիստոսուր հայր-սուրբը և Եղօս տնտեսուհին չեն բարեհանձիր, որ ես ալ իբրև մարդ իմ բարեկամներս ունենամ, տեսնեիմ, խօսիմ: Եւ, երեխ, Եղօս տնտեսուհին այդ հայեացքներու փաստաբանութիւնը դուն ես վրադ առեր. ոչինչ. սրտանց կը շնորհաւորեմ պաշտօնդ:

—Ե՛, Արտաշէս, հոգիս, այգողէս թեթև կարելի չէ վերաբերւել. մէջ նետւեցաւ վերջապէս Սերոբ, որ մինչեւ հիմա լուս մտիկ կընէր միայն: Զէ որ այդ բոլորը էջմիածին կը հասնի. և հոն արդէն առիթ կը փընալուեն վրանիս յարձակւերու. համար. այդ արտաքին ձևականութիւններուն պէտք է հպատակիլ:

—Չեականութիւն ու ձևականութիւն: Չեականութեան համար առառու-իրիկուն ժամ երթամ, ձեմ համար երգեմ, աղօթեմ, խարեմ, ձեմ համար զդում-զլուխ եպիսկոպոսի մը տոջեւ խոնարհիմ, իմ կարծիքներս ծածկեմ, իմ համոզումներս ծռեմ՝ ու կեզ-

Ճեմ, ձեմի համար յարաբերութիւնս կտրես՝ մարդկութեան կէսին հետ. ձեմի համար... չէ, ինծի նայէ, ես շնորհակալ եմ քու այդ ձեականութենէդ:

Եւ ընդուած շարժումով մը դարձաւ իր առանցքին վրայ, ու ցատկեց սեմէն դուրս:

— Ուր կ'երթաս. պոռաց ետևէն Մինաս:

— Հմն, ուր ձեականութիւններ ընելու պէտք չունիմ:

Ու վանքի դարպասէն դուրս՝ ուղղւեցաւ շխտակ Քանեաններու բնակարանը:

Թ.

Ամենի ժայռը իր լերկ կռնակը արեին տւած՝ նառեր էր գետի տաշտին մէջ լայն ու ծալլապատիկ: Փօթորիկներէն խորշամած ճակատը իր սեփական ստերին մէջը կախած՝ թագեր էր խոր մըսմըսուքի մէջ ժայռերուն այդ վիթխարի ճգնաւորը:

Եւ գետակին կենսուրախ կոհակները զւարթ ու կայտառ երբ աղմուկով իրենք իրենց ու իրարու վրայ զլոտորելով այդ խոժոռ փիլխոփային առջեւը կը հասնէին՝ ակընթարթ մը կանգ կ'առնէին զարմանքնուն. սակայն իսկըն այդ խոր լրջութեան դիմաց ծիծաղնին զսպելու այլ ևս անկարող՝ անոր երկու կողմէն վար կը ցատկէին որքան կարելի է շուտ. և իրենց շարամիտ ու հնչիւն քրքիւը կը լսւէր գեռ երկար, նոյն իսկ վարը՝ հեռուէն:

— Նստե՞նք հոս:

Ու շրջազգեստը քիչ մը ժողւելով՝ ինկաւ աղջիկը քարի մը վրայ, փիլխոփայութեան ստերին տակ, ջուրին ճիշտ եղերը:

Արտաշէս լուռ՝ նստեցաւ անկէ քիչ մը վար, ուրիշ քարի մը վրայ, հանեց զլխարկը ու նետեց քովը:

Երեկոյեանալու մօտ էր. յոգնածութենէն շիկնած արևը տեսակ մը նարնջի ճառագայթներ միայն կը թափէր շեղակի ձորի բերնէն վար:

Յոգնած էր զոյզն ալ երկար քալելէն ու խօսելէն. յոգնած ու հրահրած:

— Օ՛խ, ինչպէս զնվ է հոս, և ինչպէս սիրուն. նայեցէք տնգամ մը վեր, սարսն Ոիրաքեան. չէ:

Պատասխանը ու շացաւ:
 — Զէք պատասխաներ:
 — Ե՛, օրինրդ, ի՞նչ պատասխանեմ. այս ձորին մէջ ինծի համար ամէն բան գեղեցիկ է:
 Աւ գաւազանը ջուրին մէջ կոխած սկսու խառնել:
 — Խեղճ բարեկամն, երեխ զժգոհ էք ձեր վանքի կեանքէն:
 — Դէհ, ամէն բան վարժութիւն է վերջապէս. միայն, դիմէք,
 շարունակ որոշեալ շրջանի մէջ, որոշեալ պայմաններով, որոշեալ
 շարժում ու զբաղում, որոշեալ դէմքի ու հայեացքներու մարդոց
 հետ. քիչ մը շատ միակերպ է ու չոր:
 — Բայց չէ որ այդ մարդիկը ձեր սրտակից ընկերներն են:
 — Նու, այն. այսինքն դոնէ մէկ-երկուքը. այն ալ իհարկէ մէկ
 որոշեալ ասուիճանի:
 — Ուրիշ խօսքով՝ ձեր շրջապատը բոլորովին նեղ ու գոց կու
 գայ ձեզի, ինչպէս կը տեսնեմ:
 — Գոյ, զո՞ց, այն, բառի ձիշտ զլիսուն զարկիք. զո՞ց: Այդ զզաց
 ցումը ես առաջ ալ տարտամ կերպով միշտ մէջս ունեցած եմ; բայց
 այս քանի որ է տեսակ մը որու կը զիտակցեմ արդէն:
 — Այս քանի օրը. ինչո՞ւ ուղղակի այս քանի օրը:
 Աւ ճակարին թափած կարձ մազերուն տակէն՝ խորամանկ հայեացքը դամեց խօսակցի դէմքին:
 — Դէ, օրինրդ, այս ձորին մէջ, ինչպէս ըսի, ամէն բան այն-
 պէս սիրուն է ու այնպէս մարդը մասածելու կը դրամադրէ. եղաւ
 խուսափող ու ժայռուն պատասխանը:
 — Այն, ձեր մասածկոա լինելը ես ալ նկատած եմ. մանաւանդ
 ձեր ընկերներու գալէն ի վեր. երեխ որ և է սկսոմառով զայրա-
 ցուցեր են ձեզի:
 — Ո՞չ:
 — Ի զէս. ինչո՞ւ երէկ իրիկուն անոնք մեզի չեկան:
 — Արդէն ըսի, օրիորդ. յոդնած էին քիչ մը:
 — Ե՛, այդ քաղաքավարութեան պատասխանն է. ինծի ճշմա-
 րիս պատասխանը ունէք գուք:
 Տղան լուս գլուխը կախեց:
 — Կուզելք ես ձեզի լուեմ:

—Հապաւ:

—Որովհետև ձեր ընկերները զայրացած էին, որ երեկ ամբողջ ժամերով ինձի հետ էիք առանձին:

Տղան նորէն չի պատասխանեց:

—Զէ. պիտեց աղջիկը ինքնավտահ ժպիտով մը:

—Ենթադրե՞նք թէ:

—Եւ այդ բոլորէն վերջը այսօր դուք նորէն ինձի հետ էք:

—Ինչպէս որ կը տեսնէք:

—Եւ այդ է որ ինձի կը զարմացընէ:

—Ինչո՞ւ:

—Զէ որ այս իրիկուն ձեր վերագարձին նոյն անհաճոյ տեսարանները պիտի ունենաք կրկին ձեր ընկերներուն հետ:

—Չեմ կարծեր. բայց և դիցնք. ես ձեզի անցած օր թնչ լսի, օրինրդ. իմ գլխուս տէրը ես եմ:

—Իրաւ որ չափազանց բարի էք, սկարմն Սիրաքեան. այդ բոլոր գլխու ցաւը ու տհաճութիւնները միայն ինձի համար, ինձի ողնած լինելու համար. չգիտեմ, ճշմարիտ, ինչպէս շնորհակալ լինեմ ձեզի:

Եւ այս լսւած էր, գրգռող ու զուտ կանացի կեղծ համեստութեամբ մը, որ անհամբեր իր սուսնալիք պատասխանին կ'ըսպասէ:

—Եթէ գիտեացիք, օրինրդ, թէ դուք և թէ ընդհանրապէս ձեր ընտանիքը իմ վրաս ինչ ապաւորութիւն կ'ընէ, այն առեն այդ շնորհակալութիւնները յայտնելու բնու պէտք չէիք չգար:

—Ի՞նչ տպաւորութիւն:

—Ե՛, ինչ կարիք կաց պատէ պատ իյնալու. բացականչեց տղան յանկարծ ջերմ ու կտրուկ շեշտով մը: Իմ մինչև հիմո ճանչցած մարդիկներէս ոչ ոք վրաս այն տաք ու յափշտակող ազգեցութիւնը ըրած չէ, ինչպէս ձեր քեռայրն ու դուք: Պարոն Քանեանի ամբողջ խօսւածքին մէջ արդէն այնպէս վստահութիւն, ուժ ու անկեղծութիւն մը կայ, որուն անկարելի է չի համակրել:

—Քեռայրս ալ ձեզի շատ է համակրած. ձեր ամէն մեղմէ մեկնելուն նոյնը կը կրկնէ, թէ դուք խելացի, մաքուր և ուժեղ բնաւորութեան տէր տղայ էք:

—Ախ, որ ուժեղ բնաւորութեան տէր եմ, այդ առաջին ան-

գամ ձեր բերնէն կը լսեմ. և Ասուած գիտէ, թէ որքան ճիշտ է այդ. միայն ճշմարիտ է, որ ուժեղ բնաւորութիւնները շատ կը սիրեմ: Ա՛, եթէ գիտնաք ինչպէս թոյլ մարդիկ են սովորաբար ինձի շրջապատողները, իմ պաշտօնակից ընկերներս. իրաւ, բարի ու ազնիւ, նոյն իսկ գուցէ չափազանց բարի, բայց կակուզ, յարմարւող, տեսակ մը կրաւորական, անգործնական: Եւ ինչու պէտք է ձեզմէ պահեմ, օրիորդ. ես իմ ընկերներուս մէջ միշտ մասնաւոր դիրք մը ունեցած եմ, և այդ ինձի շողոքորթածէ. ուրիշ բան է զգալը, որ շրջապատողներուդ վրայ ազդեցութիւն մը ունիս. մարդ կարծես ուժ կ'ըզգայ իր մէջը. և հիմա կը գիտակցեմ, որ իմ վարդապետանալու որոշմանս շատ նպաստած է այդ զգացումը: Ի հարիէ տղայտական է այդ փոքրիկ մնափառութիւնը, գուցէ և ծիծաղելի, չգիտեմ, բայց այդ այդպէս է:

Ազգիկը գլուխը քիչ աշ ծուած անթարթ երիտասարդին կը նայէր՝ առանց ընդհատելու:

—Կը տեսնէք, օրիորդ, ինքս վարդապետացու մարդ նստեր եմ ձեր զէմ խոստովանանքի:

—Բայց ինձի համար ամէնաէականը չի խոստովանեցաք դեռ:

—Այսինքն:

—Թէ ես ինչով ձեր այս վստահութեանն ու համակրանքին արժանացաց:

—Դուք, դուք... կմկնաց տղան գլուխը նորէն կախելովի: Եիտակը ինձի համար ալ այդ բոլորովին որոշ չէ. շատ բաներ կան հոտ իրարու խառնըւած:

—Օրինակի՞ համար:

—Օրինակի, ձեր տեսակ մը բնական հպարտութիւնը ինձի շատ գրաւած է, միևնոյն ժամանակ և պարզութիւնը. վերջապէս ձեր մտածումներն ու հայե ացքները կեանքի մասին, ձեր անկախութեան ձգումը, և այն որ ձեր մօրն ու փոքր եղբայրներուն համար աշխատել կ'ուզէք. ձեր... դէ, և այլն. այսչափը հերիք չէ: Ընդհատեց, նայեցաւ անոր, ու ժապտեցաւ:

—Աւրախ եմ չափազանց, որ մեր միասին անցուցած ժամերը ձեր վրայ անհանոյ տպաւորութիւն չեն թողած:

—Մեր միասին անցուցած ժամերը, օրիորդ Մելինեան, ես

իմ ամբողջ կեանքիս մէջ ալ չեմ մոռնալու. ոչ այս ձորը, ոչ մեր թափառութնիրը, ոչ խօսածնիս, ոչ իսկ ձեր ձայնն ու շարժումները:

Այս անգամ Շուշիկն էր զլուխը վար կախողը:

Մինչ տղան կը շարունակէր նոցն տաք ու բաց շեշտովը.

—Ե՛, անտարակնցս ինքներդ ալ այդ շատ աղէկ գիտէք. բայց կէտ մը, որ չգիտէք և գուցէ չէք ալ կրնար հասկընար, այդ այն է, թէ ինչ աստիճան ինձի համար հիմա անհրաժեշտութիւն ու դարձած է ձեր բարեկամութիւնը, ձեզի հետ խօսիլը, ձեր առջե իմ մոռածութներս ու տպաւորութիւններս յայտնելը: Սակայն հաւանօրէն ձեզի ծիծաղելի կը հնչէ այս բոլորը:

—Կը կարծէք:

—Իհարկէ, որովհետեւ դուք իմ զգացութներս ալ ձեր զգացումներուն վրայ պիտի չափէք. իսկ իմ բարեկամութիւնս թինչ մասնաւոր տպաւորութիւն մը լրած պիտի լինի ձեր վրան. պատահական բան մը, որ վազը մոռցած էք արդէն: Նանա, իզուր մի՞ քողարկէք, ես դիտեմ:

—Գիտէք:

Աղջկան կուրծքը բարձրացաւ. աչքերը յամառ յառեց երիտասարդի աչքերուն. ու ջզուտ շարժումնի մը սկսաւ աջ ծունկին նետած ձախ ոտքը ճօմել, մինչև որ իր ներքին հետզհետէ աճող թափը ալ զսպելու անկարող՝ վրայ տւալ:

—Աւրեմն կը կարծէք, որ առանց ձեր մաերմութիւնը մասնաւորապէս գնահատելու, առանց ձեր կեանքով ու մոռածութներովը հետաքրքրւած լինելու, առանց գէսպի ձեր լնկերութիւնը մասնաւոր հակում մը ունենալու, ես այսպէս ժամերով ու օրերով կը թափառեմ ձեզի հետ առանձին այս ձորերուն մէջ, ու այսպէս սրտանց կը լսեմ ու կը խօսեմ ձեզի, և կը պատմեմ ամէն բան: Չէ, ճշմարիտ ինձի շատ աղէկ ճանչցեր էք. ու քիչ մը առաջ կ'լսէիք, որ իմ հպարտութիւնս է ձեզի մանաւանդ դուր եկած:

Տղան կարծես երազի մէջ էր. շրջապատը մոռցած, մոռցած ինքը ամբողջ յափշտակութեամբը կը նայէր Շուշիկի բոցոտ, բարեկացայտ ու մագնիսացընող աչքերուն:

Աղջիկը լնդհատեց, ու կարծես առարկութեան կ'լսպասէք:

— Նարունակեցէք, օրիորդ, շարունակեցէք ձեր այդ յանդիմանութիւնը. կ'աղաւնման

Եւ այնպէս անքօղ ու բախութիւն մը գրոշմէեցաւ դէմքին, այնպէս հմայւած շեշտ մը կը դոզար իր ձայնին մէջ, որ աղջիկը ակամաց թեթև մը ցընցւեցաւ, ստիպւեցաւ ժարտելու ու ձեռքը տղուն մեկնեց.

— Եկէք, մնանք նորէն հին բարեկամներ. այս Երիտասարդը յափշտակեց այդ ձեռքը:

— Միայն այն պայմանով, որ այլ ևս յիմարութիւններ չխօսիք. առ ելցուց աղջիկը, ու նստած տեղէն ելաւ ուաքի:

Ճամբայ ինկան նորէն գետակին քովին դէսլի ձորէն վեր:

Նախ երկուքն ալ տեսակ մը լարւած էին ու լուս. ոչ մէկը խօսելու տրամադիր չէր, երկուքի մէջն ալ յուզում մը հար, ու իրարու նոյնելէ կը խուսափէին:

Վերջը սկսան խօսիլ իրենց այդ անյարմար դիրքը կերպ մը սքօղելու ջանքով, ու հնար եղածին չափ անտարբեր նիւթերու վրաց:

Նուշիկ իր հիւանդանոցի կեանքէն բան մը պատմելու վրայ էր, որ յանկարծ կանգ առաւ, ու հագուստին փէշերը ժողւեց:

Չորի պատի ժայռերուն ծերպերէն հինգ-վեց տեղ ջուր վար կը ծորէր հանդարատ՝ մամոռու կանանչութեան մը մէջէն. և ձորի պատէն մինչև գետը եղած տարածութիւնը, որուն վրացէն զոյզը կը քալէր, քանի մը կանգուն երկարութեամբ բոլորովին թաց էր:

Սիրաքեան նախ փայտը այդ թացութեան մէջը խրեց, վերջը փորձեց մէկ ոոքովը. ցեխ չէր:

— Ոչինչ չի կաց, օրիորդ. հողը պինդ է ու քարոս. քիչ մը պէտք է կօշիկները թրչի, ուրիշ ոչինչ:

— Դէ, իհարկէ, եթէ ես ալ ձեր հաստ կաշիէ կօշիկները ունենալիի: Իմս քիչ մը որ թրչի, ալ ամբողջ օրը ոտքս թաց է. իսկ երբ իմ ոտքս թաց է ես ուղղակի գժբաղդ եմ:

— Այն ատեն պէտք է վեր ելնենք, ու սովորական ճանապարհով ես գաւնանք:

— Ախ, ոչ. ձորի մէջէն անհամեմատ գեղեցիկ է. ձորի այս մասը մանաւանդ գեռ շնորհքով չեմ եղած:

— Ուրեմն պէտք է ոռքերնիդ թրչելը յանձն առնեք:

— Ուհ, չե, չե:

— Այն ատեն, օրիորդ...

Տղան ժպտեցաւ, ու խօսքը կտրեց:

— Այն ատեն թնչ:

— Այն ատեն... այն ատեն կը մնայ, որ ևս ձեզի այդ կտորի

պրայէն անցընեմ:

— Ի՞նչպէս կրնաք դուք ինձի անցընել. հարցուց աղջիկը զարմացած դէմք մը շինելով:

— Ինչու չեմ կրնար. կը կարծէք ձեզի բարձրացնելուանելու չափ ուժ չունիմ:

— Ինձի գրկէք-տանիք. դուք, վարդապետ մարդ. Ե, դուք դժոխք երթալէ չք վախնար. բացականչեց աղջիկը վերին աստիճանի գէմքի քոմիկ արտայացութեամբ մը:

— Հապա թնչ ընեմ, քանի որ ոռքերնիդ թրչել չէք ուզեր. կմկմաց տղան կէս մը կոտրըւած, կէս մը վարանոտ:

Ու միւնոցն ժամանակ անոր աչքերուն մէջ այնպէս պարզ կը վառէր ինդիրք մը, աղաւննք մը իրեն չի հակառակելու:

Աղջիկը ակընթարթ մը շունչը բոնեց, յանկարծ քայլ մը ըրաւ գէպի տղան, ու վեր բարձրացուց թեւերը՝ հծծելով.

— Հապա, փորձեցէք տեսնեմ, քանի որ այդչափ ձեր ուժովը կը հպարտանաք:

Վարդապետացուն երկրորդել չի տւառ. ծռեցաւ, վալժթւեցաւ աղջկայ ազդրներուն ու մէկ թափով բարձրացուց:

— Ան, պոռաց աղջիկը վախցած, երբ յանկարծ ոռքը գետնէն կտրըւեցաւ:

Ու երկու թեւերը տղուն վիզը ձգեց:

Արտաշէս իր աջ այսին ու ձակոտին տակ աղջկան գողացող ու ամուր կուրծքը զգաց միայն, ու անոր բազուկներուն մէջ իր գըլ-խուն օղակւիլը:

Սիրութ թվաբառաց, ու ալ կորալնցուց ինքըզինքը:

Խենթի պէս սեղմեց աղջիկը թեւերուն մէջ ու սկսաւ քալել:

Ուր, մը կողմ, թնչպէս: Ոչինչ չէր տեսներ: Ոռքին տակ թաց

քարերը կը գլուռէին, ջուրը կը ցայտէր, թրչած խոտերը կը ճող-
րէին՝ ան ոչինչ չէր զգար:

Ու ջուրին մէջէն դուրս էին եկած արդէն, բայց ան կը շա-
րունակէր զեռ. և գուցէ զեռ շատ երկար, եթէ աղջկան հնչիւն-
ծիծաղը չըսթափեցընէր:

Կանգ առաւ, ու աղջկան ոտքը դրաւ գետին:

—Տեսէք, թաց տեղը ուր է մնացեր. ժապտեցաւ աղջիկը իր
այլայլած դէմքովը, երկու քայլ անդին մատնանիշ ընելով:

—Ե՛, ի՞նչ ընենք, ի՞նչ վնաս. պատասխանեց տղան անսովոր
համարձակ շեշտով մը:

—Դէ, շատ շնորհակալ եմ. երկեր յոգնեցաք. ես բաւական
ծանր եմ. ըստաւ աղջիկը խօսակցութեան լուրջ ձեւ տալով:

—Յոգնիլ. ա, օրինրդ, ես ձեզի այսպէս կրնամ տաներ ամ-
բողջ ժամերով մինչև... մինչև ձորին ծայրը, զեռ աւելի վեր, զեռ
շատ աւելի վեր:

Ու դէմքը նորէն հրահրեցաւ:

—Եթէ կրնայլիք՝ ինչու չի տարիք. հարցուց Շուշիկ յանկարծ:
Տղան չգիտցաւ ինչ պատասխանէ. և չհասկըցաւ ալ իսկապէս,
թէ աղջիկը ինչ ըսել կ'ուզէր:

—Նու, բարեկամն, երբ նորէն ձեր վանքը դառնաք, երբ առ-
տուն կանուխ ժամերգութեան ատեն մուժ կամարներուն տակ ու
ձեր սև զգեստներուն մէջ վարդապեսներու շարքին մէջը կեցած՝
երբ սիրտերնիդ նեղանալու սկսի, այն ատեն մտածեցէք այս հար-
ցիս վրայ. իսկ հիմա տուն երթանք, շուտով թէյի ատեն է:

Տղան բոլորովին լրջացաւ:

—Բայց ի՞նչ ըսել կ'ուզէք, օրինրդ:

—Ա, ի՞նչ:

Ժ.

Աղջիկը հաղիւ տուն ձգած՝ Արտաշէս ծանր քայլերով ու տե-
սակ մը ակամաց ուղղւեցաւ ընկերներուն քովը:

Վանքի բակը քարի մը վրայ նստեր էին երկուքն ալ քով քովի,
լուս ու լուրջ. ըստ երկովթին իրեն կ'ըսպասէին:

Մօտենալուն պէս՝ ելան ոտքի:

—Քալէ, միասին քիչ մը դէպի վար երթանք. եթէ շատ յոգ-նած չես. ըստ Մինաս վերջին նախաղասութեան երգիծանքի շեշտ մը տալով:

—Երթանք. եղաւ կարձ սրատասխանը:

Գուրս ելան բակէն, լուս ու հանդիսաւոր առաջ շարժը ւեցան: Ընդէ՛, ճիշտ նուշիկի ըստածին պէս: մտածեց Սիրաքեան ու կամաց մը ժպտեցաւ քիթին տակէն:

Երբ դարպասէն բաւական հեռացեր էին, վերջապէս նորէն Մինաս խղեց լուսթիւնը.

—Գիտես, Արտաշէս, մենք որոշեր ենք վաղը առառու մութին ճամբայ ելնենք դէպի Անի:

—Վաղը առառու. ինչմւ այդչափի կ'ըշտապէք. չէ՞ որ գոնէ շարաթ մը Խծկոնք նստել էինք մտաղիր:

—Այն, բայց... է, որչափ մնացինք այն ալ հերիք է. եթէ ուզենք քանի մը օր ալ Հառիճ կանգ կ'առնենք. այդպէս աւելի աղէկ է:

—Ա'խ, պարապ խօսք. սպասեցէք շարաթը լրանայ, քանի եկեր էք:

—Ո'չ: Ինչպէս ըսի՝ արդէն որոշած ենք. վաղը առառու կանուխ ճամբայ ելնենք:

Ու բոլոր բառերը հասիկ-հատիկ շեշտած էին:

Սիրաքեան շրթունքը խսծաւ, քիչ մը մտածեց, և իր անսարբեր շեշտը պահել ջանալով՝ պատասխանեց.

—Աղէկ, եթէ այդչափի կ'ըշտապէք, և եթէ այդպէս հաստատ որոշած էք՝ բարի ճանապարհ կը ցանկամ. երկի ութը-ինը օրէն ես ալ ձեր ետևէն կը հասնիմ:

—Ի՞նչ. բացականչեց Սերոր դող ելած:

—Ո'չ. զձւն ալ հիմա մեզի հետ պիտի գաս. շեշտեց Մինաս պաշտօնական խօսւածքով մը:

—Միթէ:

Ու Սիրաքեան ժպտեցաւ հեղնօրէն:

—Այ՞ո. ես այդ կը պահանջեմ քեզմէ:

—Կը պահանջեմ. պահանջէ:

—Եւ այն իրաւունքով, որ քու վարմունքդ ու յիմարութիւն-

ներդ ոչ միայն քեզի, այլ մեզի ալ հաւասարապէս անսկատւութիւն կը բերէ. դուն քու անունիդ հետ մեր անունն ալ կը կոտրես: Գիտմբս այս իրիկուն հայր-սուրբը բնչ ըստ: Նոր տիրացուները մեր ժամանական աշքը գոյց ոչխարները չեն, կ'ըսէ, դեռ վարդապետ կամ եղիսկոպոս դառնալու ալ չեն սպասեր. միայն ինձի կը թւի, որ գործը քիչ մը շատ բաց կը բռնեն, կ'ըսէ: Հիմա կը հասկընան, թէ ինչ իրաւունքով քեզմէ կը պահանջեմ. դուն իրաւունք չունիս մեր վարկը, մեր զիբքը կօտրելու:

Սիրաքեան յանկարծ կանգ առաւ, դարձաւ խօսողին, ու զըսպւած ձայնով մը կցեց.

—Ինձի նացէ. ինձմէ ոչ ոք ոչինչ պահանջելու իրաւունք չունի. իսկ ով կը կարծէ, թէ իմ մերձաւորութիւնը իրեն անպատճութիւն կը բերէ՝ կրնայ անմիջապէս հեռանար. բարի ճանապարհ:

—Վայ, ուրեմն մայդպէս. աղեկ, միայն գիտցիր, որ այդ հեռացողները պարտական են բոլոր եղելութիւնը հանգամանօրէն պատմելու ուր որ հարկ է:

—Եցդ ինձի համար քիչ հետաքրքրութիւն ունի. իմ գործերուս դատաւորը ես ինքս եմ. պատմեցէք, խօսեցէք ինչ և ուր որ կ'ուզէք:

—Յայց հետևմնքը:

—Ի՞նչ հետևանք:

—Այն, որ գուցէ կը հարկադրւին քեզի ձեռնադրւողներուն ցանկէն դուրս ձգելու:

Սիրաքեան ամբողջ մարմնով ցընցւեցաւ. գէմքին վրայէն բան մը անցաւ. արագ. և երկար, լուս, թանձրացող մութին մէջէն ընկերոջը հայեացքին մէջը նայելէն վերջը՝ պատասխանեց յատուկ զարկով մը.

—Եւ շատ ալ խելացի բան կ'ընեն:

—Ախ. բացականչեց Սերոբ ապշած, ու նայեցաւ երկար հասակին:

—Ուրեմն խնդիրը այս աստիճան հեռուները դացած է արդէն. մըմնջեց վերջինս ակռաններուն մէջէն, զլուխով ցաւակցաբար շարժելով:

— Այս, այս վայրինիս ես պարզ, շատ պարզ կը տես-
նեմ, որ իրաւունք ունիք. ոչ, իմ բանս չէ, իմ բնաւորութեանս
բանը չէ այդ շղթայւած, չափւած-ձեւած կեանքը. այդ ձեւականու-
թիւններու ու կեղծիքի յաւիտենական կրկնութիւնը, այդ իր ներ-
քին համոզումներու, իր բնածին զգացումներու դաւաճանութիւնը.
գործունէութեան այդ մանւածալատ ճամբան, ոչ, ինծի համար
չէ. շատ խելացի բան կ'ընէք, շատ, նետեցէք ինծի ձեր ցանկէն
զուրու:

— Զի՞, բարեկամ, ընդմիջեց Մինաս: Իմ կարծածէս շատ աւելի
խորն է. թափանցեր մեջդ թոյնը, այլ ևս քեզի բան հասկըցընելը
զժւար է: Միայն անփեղծ խօսելով՝ ես քու բնաւորութեանդ մա-
սին շատ աւելի բարձր ու վստահ գաղափար ունեի, քան էսպէս
եղեր ես: Աս ի հարկէ բնաւ չէի կրնար երեւակացեր, որ որևէ աղջկան
մը կտոր քեզի ացդողէս անմիջապէս խելքէ հանել կրնայ, ացդողէս
բոլոր սրբութիւնները ոտքի տակ տալ, տւած խոստումդ արհա-
մարել, մինչև հիմա փայտացած ծրագիրներդ ուրանալ, ու մեր
բարձր նպաստակները պատռել ու անդին նետել ացդողէս: Վայ ասովի-
ճանի ողորմելի, թոյլ ու զգացարանքներուդ գերի չէի երեւակացեր ևս
քեզի:

— Տղայ ի՞նչ լսել կ'ուզես. հարցուց Սիրաքեան խոժոռած ու
մտացիր, այդ բոլորի իմաստը խսկոյն չըմբռանելով:

— Լսածս շնոր պարզ է. այն, որ քու բոլոր խոշոր-խոշոր
բառերդ, գծգոհութիւններդ, բնաւորութիւնդ և այլն բոլորը գա-
տարկ խօսքեր են. և փաստը այն է, որ ապուշի պէս սիրահարե-
ցար առաջին հոնդիսած աղջիկանդ. նա, այդ մանկաբարձուհի է,
ի՞նչ է. արհեստն ալ իրեն ովհս հիանալի. շնորհէն յայտնի է ի՞նչ
լինելը. խօսածքը, քալածքը, մանչու մազերը. ոչ համեստու-
թիւն, ոչ պարկիշտութիւն:

Սիրաքեան վերջին խօսքերը չի լսեց անդամ:

«Սիրահարամձ» կը մտածէր. և ակամայ զլուխը քի: մը վար
թեքւեցաւ. սիրահարամձ, իրաւու:

Տղու աց կոտրած զիբքը ընկերներուն սիրտ տւաւ. ու Մի-
նաս ձայնը վախեց.

— Կը ուսումնս, սիրելիս, որ նորէն քու ընկերներդ քեզի ձեռք

կու տան սատանացի փորձութեան վայրկեանին. նորէն քու ընկերներդ: Այդ տեսակ փորձութեան ենթարկը իլլը իհարկէ յանցանք չէ, ոչ ալ մեղք, բայց էականը յաղթեն է, տակէն յաղթական ելնելը. այդ քեզի աւելի պատիւ կը բերէ վերջը: Դուն սիրելիս, ընկերներուդ ականջ դիր միայն, չես զզար: Ուրեմն վաղը առառ կանուխ կը մեկնինք, չէ. տեւր ձեռքդ:

Ու ձեռքը մտերմօրէն տղու դաստակին դպցուց:

Արտաշէս թոթւըւցաւ, թելը ետ քաշեց արագ ու գլուխը հպարտ վեր բարձրացընելով՝ ըսաւ արհամարուտ.

— Իմ ընկերս ան է, ով ինծի կը հասկընայ: Վաղը առառ կրնաս երթար ուր որ կուզես. ինծի հետ գործ չունիս:

Եւ առանց ընկերներու քարացած դիրքին ուշք դարձընելու արագ հեռացաւ ու աներեւցիթ եղաւ մօտակայ ծառերուն ետևը:

Այս վերջին օրերը տղու մոքէն արդէն քանի մը անգամ անցեր էր թեթև, թէ ինքը իր ընտրած կոչումին յարմար չէ կարծես, թէ ինքը իր ամանին մէջը չէ ինկած, թէ իր հակումները կրօնաւորի պարտականութիւններուն հետ զոչգ չեն երթար: Բայց այդ տարտամ զգացում մըն էր եղած միայն. իր ձեռնադրութեան վրայ կը նայէր իբրև կատարւած որոշ իրողութեան վրայ. արդէն խօսք տւած վերջացած բան էր, որու մասին նյս կամ նյն պատճառով գուցէ կարելի էր քիչ մը ցաւիլ, բայց միայն այդչափ. ետ դառնալու գաղափարը անգամ գլուխը եկած չէր: Բայց գաղափարի փոխարէն ետ դառնալու ցանկութիւնը, առանց իր գիտակցութեան, այն աստիճան գօրեղացած ու հող էր գրաւած իր մէջը, որ ընկերոջ կողմէն թեթև ակնարկ մը ետ դառնալու հնարաւորութեան մասին, ու իր վարդապետանալու ամբողջ շէնքը փլած էր մէկ անգամէն: Եթնք մը, որուն հիմքերը առաջւընէ խախտեր էին արդէն վերջին օրերու խօսակցութիւնները, դէպքերը ու մանաւանդ իր անվերջ առանձին մտածումները:

Ժայռի լերկ գանդ մը հողի ներքին շերտերէն հետաքրքրութեամբ դուրս էր երկընցուցեր իր վիզը մութին մէջ, ձորի դատարկութեան վրայ. կարծես իր խաւարի վարժւած տեսողութեամբը դիտելու համար վարն ու շորջը ու տեսնելու, թէ գոնէ համայրերկի ծոցին վրայ՝ գոյութիւնը որ և է խորհուրդ մը ունի,

թէ հոտ ալ նոյն դարաւոր օրէնքներու միակերպ, անիմաստ ու դանդաղաշարժ կրկնութիւնն է, ինչ որ խորը՝ մայրերկի ծոցին մէջ։ Եւ ճիշտ այդ դուրս երկընցած լայն վիզի արմատին մօտիկ՝ վեր կը սլանալին երկու քոյր, նրբամէջ բարդի։

Հնա, ձորի ելքին, այդ զոյզ բարդիներուն տակ Սիրաքեան նեաւեցաւ գետին՝ ժայռի լերկ վիզին վրայ ՚ իր ներքին գրգռումն ու ուռած արհամարանքը մինակ մնալուն պէս սկսել էր իջնել, թուլնալ, ու հալեր էր բոլորովին։ հիմա յաջորդեր էր գժգոհ ու նեղսիրտ տխրութիւն մը։ Ընկերներուն հետ ունեցած այդ առաջին որոշ ընդհարումը անախորժ, ճնշող ապաւորութիւն մը թողեր էր իր վրայ։ որուն կը միանար խառնակ, իրար հակասող զգացումներու պատճառած անհնանդսութիւնը։

Երկար մնաց ան նստած՝ այդպէս խոնդու ու անշարժ։ մինչեւ որ սրտին մօտերը ուղղակի ֆիզիքական ճմյում մը ստիպեց զուխը բարձրացընելու։ խոր շունչ մը առաւ, ու հայեացքը ինկաւ զիմացը, վեր։ Հնա, ձորին բերանը դոգաւոր ժայռի մը եզերքին լոյսի բարակ երիզ մը կը ցոլար. երիզը քիչ-քիչ լայնցաւ, պայծառացաւ. ու անոր եռևէն հանդարտ դուրս սահեցաւ լրիւ լուսինը ու ակընթարժ մը կանգ առաւ կարծես ժայռի այդ դոգաւոր շրթունքին վրայ՝ սկիհին վրայ բոնւած նշխարհքի մը պէս։

Եւ տղան յանկարծ մտաբերեց, որ ինքը այլ ևս հոգեռբական չէր. վեղաբաւոր ապագան, խուցի չոր կեանքը միայնակ ու միակերպ, եկիզեցական պաշտամունքները իրենց խունկերովն ու սաղմոսներովը, այդ բոլորը ալ երազ մըն էր իրեն համար. անցած երազ մը, ուրկէ հիմա կ'արթլնար։

Եւ այդ մտածումը նախ ախորժ թեթևութիւն մը թափեց իր զգացումներուն վրայ. մէկ ալ՝ սիրոը ուժգին զարկաւ ու վայրի ուրախութիւն մը խուժեց իր կուրծքը. չէ որ ալ ազատ էր ինքը. ազնութ՝ իր յանձն առած պաշտօնի անհամոյ սրարտականութիւններէն ու անիմաստութիւններէն. ազատ՝ վանքի դոց ու ճնշող կեանքէն. ազնութ՝ իր զգացումն ու հայեացքները վարագուրելու անհրաժեշտութենէն. ազատ ինչպէս դուրսի բնական մարդիկն էին։ Դուրս շնուր դուրսի աշխարը, դուրսի կոխներուն ու աղմուկին մէջ, դուրսի կեանքովն ու աշխատանքովը, դուրսիներուն հետ...

Եւ յուզման ներքին թափէն ցատկեց ուռքի. նայեցաւ շուրջը
Մուժը փարաաած էր: Լուսնի գունաթափ լոյսին տակ ձորին
բերնէն ապաւաժները մրցումի էին եկեր, թէ ոչ իրենցմէ իր շուրջը
ամենէն աւելի հեռուն, ամենէն աւելի վար նետել կրնաց. վար,
մինչև հնն, ուր գետակը արտարալով փէշերը ժողւած կը վագեր.
փէշերը իր արծաթթել ծածկոյթին, որ միացն լուսնի ացելու-
թեանը պահեստի սնդուկէն կը հանէր:

Աչքերը այդ փալլիբլուկին՝ տղան ալ սկսաւ դետակին հետ
վար վաղել վերի ճամբուն վրայէն: «Գուրսիններու մասին կը մտա-
ծէր, իր սրտին ամենէն մօտիկ գուրսիններու, գուրսի աղջկան:

«Արեմն ինքը կը սիրէր այդ աղջիկը». իրեն այզաքէս էին ըսեր:
Ինքը մինչև հիմա յարած այն գաղափարին, թէ կուսակրօն մընէ,
առանց որոշ ոչինչ խորհելու՝ իր բոլոր զգացումներուն վրայ կը նա-
յեր, իբրև ուարզ բարեկամութեան, մտերմութեան վրայ. թէն
կ'ըզգար, որ շատ տարօրինակ ու խոտիս տւող թելեր կացին բարե-
կամութեան այդ հիւսւածքին մէջ. բայց չէ որ արդէն ինքնին բա-
ցաւիկ բան մըն էր այդ մտերմութիւնը. մտերմութիւնը դերատի
աղջկան մը հիմա: Եւ հիմա մէկ անդամէն իր երեսին կ'ըսէին, թէ
ինքը կը սիրէր, թէ իր վարմունքը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ պարզ
սեռական սէր, որու մասին այնչափ լսած էր ու կարդացած. սէր
դէսի հակասեռ մը: Եւ այդ նորութիւնը խսկաղէս քիչ զարմանք
կը պատճառէր հիմա իրեն. չէ որ իրողութիւնը նոյնն էր, ինչ որ
առաջ. անունն էին փոխէր միացն. ձգտում մը դէսի աղջիկը, յա-
փըշտակութիւն մը, ոգևորութիւն մը անոր մօտիկութենէն, պա-
հանչ մը ըսելու խօսելու, իր մտածումներն ու տպաւորութիւն-
ները անոր յայնելու. և այդ բոլորի գումարը, որ մինչև հիմա
առարօրինակ բարեկամութիւն» էր, ուրիշները անւաներ էին սէր.
դիցուք. ինքը համաձայն էր և այդ նոր անւանակոչութեան:

«Անւանակոչութիւն». իր մտածած բասը իրեն ալ տարօրինակ
եկաւ. ինդաց: Ու մէկէն բուռն պէտք մը զգաց յանկարծ խօսելու,
երգելուս աղմկելու: Ի՞նչ այդպէս միսոմինակ կը թափառէր լուսնին
տակ. միշտ մինակ. հերիք չէր: Եւ յիշեց, որ Քանեանները հիմա
թէյի վրայ էին և անշուշտ կը զարմանացին իր ուշանալուն:

Աւժդին թափով մը դարձաւ կրունկին վրայ, ու երգ մը սուլով ետ շտապեց:

Ինքը կորաւ շուտով ձորի պատին ձգած թանձր սուերին մէջ, բայց իր սուր ու զւարթ սոյլը կը հնչէր զեռ երկար. և բարձր քարանձաւներու խաւար խոռոչներէն արձագանգները քնկոտ ձայնով մը իրենց նինջը խանգարողի սուր շեշտերը կը կրկնէին. մէկը չարացած, միւսը հեգնելով, ու բոլորն ալ դժգոհ:

ՀԱ.

ԵՐԲ Սիրաքեան աչքը բացաւ՝ պայծառ օր էր. սենեակը մարդ չի կար: Սեմի վրայ գէպի դուրս նստած էր Սերոր և գլուխը դռան շրջանակին յենած կը նայէր հեռուն իր մոքերուն մէջ թաղւած:

Երբ ներսը շարժում լսեց՝ իսկոյն դարձաւ ետ:

—Արթընցար, ծննդ Մարտիրոս. ըստ մեզմ ու կատակող շեշտով մը:

—Ի՞նչ կ'լնես հոռ. հարցուց տղու քնկոտ ձայնը:

—Ա լսպասեմ քեզի, որ ելնես, երթանը միասին լողալու:

—Մինասը ձւր է:

—Զգիտեմ: դժւրս ելաւ:

Արտոշէս ցատկեց անկողնէն, արագ հագւեցաւ, զարկաւ սրբիչը ուսը. և սկսան ձոր իջնել:

—Հապա այս առոտու մեկնէիք պիտի. ի՞նչ եղաւ. հարցուց յանկարծ:

—Ե՛, անխելք. քու լսածիդ ինքդ կը հաւտամ. առանց քեզի մոր կրնանք մեկնիր: Այդ տեսակ խօսքեր տաքցած առեն կ'ըսւի, բայց միթէ հնար է իրադործել:

—Ինչու նչ:

—Կարծես չես հասկընար. վիճել, քիչ մը կրքոտիլ, հակածառիլ՝ այդ իհարիէ հասկընալի է. բայց խալապէս կռւիլ, ձգել հեռանալ՝ այդ միթէ կը վայլէ պաշտօնակից, սրտակից ու նպատակակից ընկերներու:

—Բայց այդ մակդիրներէդ երբ ոչ մէկ հատը այլ ես ինձի վերաբերմամբ ճիշտ չէ:

—Ինչպէս թէ:

—Զէ որ ալ ցուցակէ դուրս նետւած մարդ եմ ես:

—Կդում. կարծես Մինասի՛ չափազանցութիւնները սիրող բնաւորութիւնը չես գիտիր. ան ըսաւ, դուն ալ սրտիդ առիր երեխ, համ:

—Ամենելին, ընդհակառակը. ես ուրախ եմ; որ իրենք իրենց կամքով ինձի դուրս նետեն ու աւելորդ զլիսու ցաւերէ ազատեն ինձի: Այս կամ այն կերպով լինելու է վերջապէս. աղեկ է իրենք իրենց կողմէ ընեն:

—Ե՛, վերջ տուր, Արտաշէս, այդ անհամ կատակին. ըրու Սերոբ տեսակ մը դժկամած:

—Հոս կատակ չի կայ. ես լուրջ կը խօսիմ. իմ վարդապետութիւնս այլ ևս ծալլւած ու դարակը դրւած խնդիր է: .

Սերոբ կանգ առաւ դէպի ձորը վազող նեղ արահետին վրայ, ու կծկրւած դիմագծերով՝ շեշտ ընկերոջը երեսը նայեցաւ: Ու ակընթարթ մը լուրթենէ վերջ՝ հպարտ ու յառակ շեշտով մը կցեց.

—Եթէ քու անձնական երջանկութիւնդ մոռնալու չափ բարձր չէիր կրնար մնար, եթէ մէջդ այդ մարդկացին գերազոյն զոհաբերութիւնը լինելու չափ ուժ չէիր զգար, ինչո՞ւ խօսք տւիր կուսակրծնութեան:

—Զոհաբերութիւն. այդ էր, Էհ, ինձի հրապուրող դրդիչներէն ամենէն մեծը: Մտածել, որ քու ժողովուրդիդ քու ազգիդ համար զոհեր ես քու սեփական անձդ, երջանկութիւնդ. գէհ, շողքորթիչ է, իհարկէ, և մարդու զգացումներուն թեւ տուղ. մարդ կրնայ միշտ վերէն նայիլ վարի սովորական մահկանացուներուն վրայ, ու կրնայ արհամարել անոնց քննադատութիւնն ալ հեգնութիւնն ալ. այդպէս չէ: Միայն հնն է ցաւը, որ այդ վսեմութեան եօթներորդ երկինքը կ'ըսկըսի ոտքերուդ տակէն փախչիլ, երբ քիչիկ մը լրջօրէն այդ գերազոյն անձնազոհութիւնը վերլուծելու սկսիս: Ընտանեկան կեանքէն ձեռք վերցնել՝ այդ չէ բոլորը. ամենամեծ ազուշութիւն մը, կասկած չի կայ. բայց մւր է հոտ քաջութիւնը. կարծես դուրսը քի՞չ կան այրիներ ու ամուրիներ: Է՛, սիրելիս, չսափենը ինքը պինքնիս. հիմա սկսած է ալ ամէն բան ինձի ուրիշ գոյնով երեալ. այդ անձնազոհութիւն ըսածնիս պարզապէս խուսափում մըն է դուրսի կեանքի դժւարութիւններէն ու նիւթական մաքառամներէն, ուրիշ ոչի՞նչ:

— Բայց սուտ կը խօսիս:

— Դժբաղղաբար, ոչ. աչքիդ առջև բեր մէյ մը, թէ ինչ թոյլ
ու անճարակ տղաք են սովորաբար մեր ընկերները. ով գիտէ ինչ
ողորմելի բաներ պիտի դառնային գուրսի կեանքին մէջ. իսկ հի-
ման. գիր վեղարը, ինքըզինքդ համարէ ժողովուրդի համար զոհւած
մը, կեր պատրաստ ու ձրի, առանց գոլութեան կուի, առանց
մրցման, և նոյն իսկ գուցէ առանց աշխատանքի:

— Զրի՞, առանց աշխատանքի՞, մենք որ...

— Այո՞ւ, այո՞ւ. միայն աւելցներ այդ բոլորի վրայ և փառասի-
րութիւնը. բայց աժան փառասիրութիւնը. առանց քու ուժերուդ
առաւելութենէն, առանց քու սեփական արժանիքէդ մասնաւորա-
պէս կախում՝ մը ունենալու՝ օր մը կը դառնաս եպիսկոպոս, գուցէ
և աւելի. ստորին պաշտօնեաները խունկ կը ծխեն փիլոնիդ շուրջը,
քեզմէ կախւած կը լինի կարգ մը հարցերու վճիռը. կը վայլես մե-
ծաւորի անուն ու փառք. կը դառնաս հրամայող տիրող մը. մե՛ծ մարդ:

— Բայց, Արտաշէս, լոէ. ամօթ է, ամօթ:

— Մի վրդովկիր, սիրելիս. ի հարկէ այս բոլորը այդպէս պարզ
ու մերկ կերպով ոչ դուն մոտածած ես, ոչ ես. բայց կրնաս ձեռքդ
խղճիդ վրայ ըսեր, որ այդ ամէնը, անշուշտ աւելի անորոշ կերպով
ու աւելի բանաստեղծական անուններու տակ, քեզի համար հրա-
պուրիչ չէ եղեր ու քու վարդապետանալուդ վրայ չէ ազգեր: Վեր-
ջին օրերս այս հարցերուն վրայ ես շատ եմ խորհեր, խորհէ և դուն:
Սերոր խոժոռ ու անթարթ ընկերոջը կը նայեր:

Երկուքն ալ կեցէր էին դէմզէմի երկու ժայռերու մէջ ինկած
նեղ անցքին մէջ. Սերոր ժեթև մը ժայռի մամառո կողին յենած.
Արտաշէս արահետին ճիշտ մէջտեղը՝ տաք ու կը բոտ խօսւածքով մը
անդադար ձեռքի սրբիչը օդին մէջ շարժելով:

— Հիմա իմ տենչանքս է կռիւնք, կեանքի մէջ, իմ սեփակամն
ուժերովս ինծի համար ճամբազ բանամ: Կուսակրօնի այդ պատ-
րասո, լսին ու հանգիստ ճամբէն քալելը քաջութիւն չէ: Դուն
ինչ կուզես ըսէ. ես մէջս ուժ կըզգամ, և ալ պատւաբեր չեմ
համարեր վեղարի հովանիին տակ մոնելը:

— Սակայն կը մոռնաս այդ վեղարի տւած բացառիկ առաւե-
լութիւնները, գիրքը, ասուարէզը:

— Ե՛, բերան լրած նախաղասութիւններ, որ ևս ալ քեզի պէս հազար անգամ կրկներ եմ ։ Եացառիկ առաւելութիւններ։ քիչ մը փորփըրք ու կը տեսնես, որ ատոնք մեծ մասով միայն մեր ցանկութիւններուն մէջ գոյութիւն ունին։ Դալով վեղարի ասդարեա զի՞ն՝ հնն, ուր բարձր հոգեորականութեան հետ որևէ քաղաքական ազդեցութիւն է կապւած, ինչովէս որ այդ մահմեդական տիրապետութեան տակ է, նորէն խօրհուրդ մը ունի զուցէ, երբ մարդ վեղարի դիրքովը ոգեորւի ու ձգափի. զոնէ ոգեորւի ու ձգափի. ուրիշ բան է, թէ ինչ կրնաց ըներ իրապէս ։ Բայց քաղաքակրթւած պետութեան մը մէջ, ուր կրօնաւորը բոլորովին բաժանած է քաղաքական ու տնտեսական ազդեցութենէ, ինչ կայ վեղարաւորի մը ձեռքը զուտ կրօնական-վարչական խնդիրներէ զատ։

— Ալ հոտ կը ներեմ, ինծի նացէ. բացականչեց ընկերը ձեռքի հպարտ ու հրամացող շարժումնի մը։

— Աչ հոտ կը ներեմ, ոչ ուրիշ տեղ. ներելն ալ պէտք է մէկ կողմ՝ զնել կրօնաւորութեան հետ։

— Վայ։

Ու Սերոբի դէմքը կարեկցոս արտայայտութիւն մը հազար։

— Աւրեմն քեզի համար ալ գոյութիւն չունին հոգեորականութեան ձեռքը եզող այնչափ կինսական խնդիրները։

— Ինքան լրած նախաղասութիւն մըն ալ այդու Մէկ կը ցանկայի գիտնամ ինչ կինսական խնդիրներ են ատոնք։ Կը ցի շեմ, մեր վերջնական խօսք տալու ատեններն էր, թէ ինչովէս ուղեցոս կը չարչըրկէի իրօք կինսական բաներ մը գտնելու համար, որոնք իմ հոգեորական դառնալս աչքիս անհրաժեշտ դարձնէին։ պէտք էր անպատճառ ինքըզինքս համոզէի, և ձարեցի ի հարկէ թուքով փակցուցած քանի մը բաներ, որոնք ահա թուքի չորնալուն պէս սկսան վար թափիլ ։ Իրականութիւնը կուղես։ Հոգեորականներու ձեռքքը հիմա շատ քիչ բան կայ կինսական, այսինքն ժողովուրդի կեանքին անհրաժեշտ։ իզուր տեղը երևակացական զերերով աչքերնիս չիշլացընենք։ Եւ զիսես, մեզմէ կախւած խնդիրներու ալ մէկ շատ խոշոր մասը միայն մենք ժողովուրդի համար կինսական կը կարծենք, որովհետեւ մեր զլուխը լիցեր են հին հասկացողութիւններով, մինչդեռ զնուրացն մէջ, ինչպէս կ'երեի, ատոնց կարեւորութիւն ու ող չի կայ։

—Եղաւ գնաց. բացականչեց Սերոբ հեգնօրէն. ու աւելի ամուր ժակաւ ժայռին:

—Իսկ ինչ կը վերաբերի մեր ծրագիրներու մնացած մասին, եկուր քեզի հետ անկեզծ խոսուլ անինք, որ միայն մե՛ր դիւրութեան համար է, մե՛ր օգտին, վեղարաւորներուս. աւելորդ տեղը ժողովուրդի հաշւին չի գրենք: Կալւածական բարեփոխումներ, արևատեսական կանոնաւորութիւն, վարչական խիստ կարգ, ու ժերու կեղծոնացում, և ամուր ձուլած միաբանութեան մը հիմնարկումը. ասոնք չե՞ն:

—Ե՛, այդ բոլորը ժողովուրդի համար չէ. այդ կանոնաւորութիւնը, այդ ամրացնմբ:

—Բաւական ժամանակ կայ՝ մեր թերթերէն մէկուն մէջ յօդւած մը կարգացեր եմ: ուր սա միտքը արծարծւած էր, թէ կեղծոնացումն ու խիստ կազմակերպութիւնը արագ քայլերով դէպի քարացած կաստայականութիւնը կը տանի, թէ բոլոր կաստաներն ալ մեզի պէս մի՛շտ ժողովուրդի անունով են ուժովնալու սկսեր, շատ շանցած նոյն ժողովուրդի կռնակը հեծնելու համար բոլորովին: Այն առեն այդ յօդւածը ինձի չափազանց վշտացուց ու չարչարեց. և անկէ ի վեր մի՛շտ քանի մեր միաբանութեան ուժեղացման մասին խօսք դառնաց՝ ես ակամաց կաստայի մասին կը մտածեմ:

—Դէ՞ն, եթէ մինչեւ անգամ՝ մեր ողորմելի լրագիրներու տիմարութիւններն ալ քեզի զբաղեցրնել է սկսեր, ալ իհարկէ, ըսելիք չի մնար:

Երկուքն ալ պահ մը լուս էին:

Սիրաբեան հանեց զլխարկը, մասներովը մէկ-երկու անգամ անզրեց մաղերը, ծածկեց նորէն գլուխը ու շարունակեց.

—Զէ, ժողովուրդը մեզմէ խեր չունի. մենք կարլւած ու կզիացած մարմին մըն ենք հասարակութենէն գուրու: Այս կողմէն նայած քահանան մեզմէ ահագին առաւելութիւն ունի՝ մինչև վերջը իր ժողովուրդին մէջը. անոր նեղ ու լայն օրերուն, խինթ ու վլշտին մասնակից: Խսկ մենք, տես, քահանացութիւնը չենք ընտրած:

—Ամէն մարդ իր տեղը. ահագին կը թութիւն ու համալսարանական սպատրաստութիւն ստունալէ վերջը խելացիութիւն չէ զիւզի մը անկիւնը քաշւել ու մէկ-երկու տասնեակ մարդոց մասին միայն

մոտածել. շատ ստացողէն շատ կը պահանջւիր Վերջապէս այդ բալրը, սիրելին, քու կողմէն դատարկ պատճառաբանութիւն է. աղեկ, եթէ ինքդ քու ըստածներուդ համոզւած եօ՛ եղիր տէրտէր
— Խ'նչ. ոչ:

Ու Սիրաքեան ծիծաղեցաւ դառն ու հեգնոտ ծիծաղով մը:
— Լսէ. եթէ իմ մէջս ճշմարիտ ժողովուրդին համար աշխատելու իդձը կ'յ, և ոչ թէ այդ անունին տակ տարբեր եսական զգացումներ են ինծի դրդողը, այն ատեն ես քու քահանայութեանդ ալ պէտք չունիմ: Տէրտէրի ամենամեծ առաւելութիւնը ժողովուրդին մէջ խրած լինելը չէ. աղեկ. աշխատելու է որ և է ուրիշ միջոցով, ուրիշ աւելի ազատ գործով մը հասարակութեան վարի խաւերուն մէջ մտնելու: Ատով նախ ազատ կը լին իմ քահանայի խեղճուկ, ճնշող, ուժն ու ձգտումները ջլատող նիւթականի մուրացկան կեանքին. անկախ կը լինիմ շրջապատողներէս, և մտնաւանդ պաշտօնակիցներուս ու մեծաւորներուս ինտրիգներէն, քմայքներէն, ու ներքին հազար մանր-մունր ազատութիւններէն. ամէն ըրած քայլիս խոչընդուռ չեն հաներ դէմս գարերէ իվեր փիլոնի փէշերուն պինդ փաթթւած հայեացքներն ու սովորութիւնները. և վերջապէս, ամենաէկականը, ստիպւած չեմ լինիր ինքըինքը բռնադիմատելու հոգեւոր կոչումի առատ անբնականութիւններուն, ձեւականութիւններուն, կեղծիքներուն. որոնցմէ ամենասոսկալին է սեփական համոզումներուդ հակառակ անթիւ ծէսեր, կարգեր, դաւանանքներ ու աղօթքներ ըսելու և ընելու անխուսափելիութիւնը. այդ յարատե՛ ու հանդիսաւոր խարէութիւնը ժողովուրդիս դէմ, որը ինծի կը հաւտայ և որը լուսաւորելու կ'երթամ՝ ինլքովս: Սոքեզի լուսաւորութիւն. իր նախապաշարումները սրբագործել, խարել ու ստել:

Սերոր ձեռքի կատաղի շարժումով մը առաջ նետւեցաւ զարացկոս.

— Խ'նչ բառի մը պոչէն բռներ կ'երթաս. խարէութիւն ու խարէութիւն: Հոս ոչ խաբել կայ, ոչ կեղծիք. մեր ըրածին կ'ըսեն պարզապէս ժողովուրդի ըմբռնումներուն յարմարում. կարելի չէ ամբոխին ամէն կարգի ճշմարտութիւններ ըսել. և վերջապէս անքու ճշմարտութիւններուդ պէտք ալ չունի:

Սիրաբեան ակընթարթ մը լուռ կանգ առաւ, աչքերը շեշտ ընկերոջը դէմքին յառած: Ու մատներու ջղաձգական անընդհատ կծկումէն, որով սրբիչը կը ճըմըռթքէր, պարզ էր, որ ներսը վայրի իրարանցում մը բարձրացած էր:

Վերջապէս ձայն հանեց. միայն անսպասելի կերպով հանգիստ ու մեղմ ձայն մը.

—Այսպէս ուրեմն, ան պէտք չունի իմ ճշմարտութիւններուս. ուրեմն միշտ պէտք է պատրանքներով օրօրել, լոել ու իր նախապաշարութիւնը ցանցին մէջ պինդ սեղմած պահել. չէ որ Աստծու կամքով այդ այգովէս եկեր է ու այգովէս ալ պիտի երթայ. իհարկէ, ինչ ամբոխի բանն է գիտութիւնն ու ճշմարտութիւնը, որը միայն մենք հասկընալ կրնանք: Այդ է, է. մեր բոլոր ժողովուրդի ուժեղութեան ու անունով ոգեսորւիլը, անոր յառաջադիմութեան համար մեր իրարու գլուխ ուռեցընելը արտաքին ծածկոցն է միայն. գարուս պահանջած վերաբիւն որ ամէն խօսող իր ուսերուն պիտի նետէ յարգանք ու անձնական յաջողութիւն վաստկելու համար. բայց ներքուստ մեզի համար ան միշտ նոյն ամբոխն է, որ ոչ բան հասկընալ կրնայ, ոչ ալ հասկընալու պէտք ունի:

—Ինձի սխալ հասկըցար. սրբագրեց Սերոր իր ըսածը: Ես միայն լսել ուզեցի, որ մասսան կամաց-կամաց ու աստիճան-աստիճան պէտք է իր հասկացողութիւններէն դուրս քաշել. իսկ մինչ այդ՝ ստիպւած ենք յարմարւելու ու քօղարկելու:

—Այդ տեսակ սպարապ խօսքեր ալ զլուխս չի մտներ. բացականչեց Արտաշէս տաքցած: Ես հիմա բոլորովին ուրիշ կերպ կը մոտածեմ. ճշմարտութիւնը որքան պարզ ու բաց ըսւի, այնքան աւելի աղէկ. այս սերունդը չի հասկըցաւ կը հասկընայ յաջորդը. իսկ այդ լուելու ու ստելու ծայրը նոր պիտի երթայ: Ոչ. ես այլ ևս ճակատու բաց կ'ուզեմ, կ'ուզեմ անկաշկանդ իմ համոզումներս ամենքին ըսեմ: Այդ յաւիտենական յարմարւելու ու քօղարկելու սկըզբունքը վախկուներու, զառամածներու և ետ մնացողներու քաղաքանութիւնն է: Բաց է. ով կ'ուզէ թող երթայ այդ ճամբէն. իսկ ես այլ ևս ոչ վեղարին երկար ծածկոյթը կ'ուզեմ մտածումներուս վրայ, ոչ ալ փիլօնին կաշկանդող փէշերը քայլերուս շուրջը:

Եւ ուժով մը քաշեց որբիչը ձախ ուսէն ու զարկաւ աջ ուսուր:

Կարկամ արտայացութիւն մը դրոշմլուած էր Սերոբի դէմքին ու քարացած կեցեր էր քարին տակ:

— Դէ, Սերոբ, ես իմ խոստըւանութիւնս ու ապաշխարանքս վերջացուցի. քալէ, երթանք մկրտւինք:

Աւ թեթեցած աշխուժով մը արագ առաջ շարժւեցաւ:

Բաւական ցատկեր էր արդէն քարէ քար, երբ նոր նշմարեց, որ ետևէն եկող չի կար: Նայեցաւ ետ. ընկերը ծանր. ծանր կը քարձրանար վեր, նոյն արահետովը դէպի վանք:

«Ի՞սարիէ, հեթանոսին հետ միմնոյն աւազանը չի կրնար լւացւիր». մտածեց ինքնին՝ ժպտիլ ուղելով: Բայց ժպտուը ստուեցաւ շրթունքին վրայ, ու սուր խայթ մը զգաց կրծքին տակ ընկերոջը այդ լուս յանդիմանութենէն:

Սերոբ երբ սենեակ մտաւ՝ ճակատի գտնւեցաւ Մինասի հետ, որ անհամբեր կ'երթեսկէր:

— Ե՛, բան դուրս եկաւ. եղաւ առաջին հարցը:

— Խնչպէս չէ. և տեսնէիր ինչ բաներ դուրս եկան:

— Խօսքը ետ առնելու մասին նորէն ակնարկութիւն ըրան:

— Ակնարկութիւն. լմնցածքերջացած խնդիր է այդ անոր համար: Ախ, Աստւած իմ, ինչ խայտառակութիւն. ինչ տպառորութիւն պիտի ընէ այս բոլորը վանքի ու միւսներուն վրայ. առաջին քայլին այսպէս թեթե վերաբերմունք ու խօսքի զրժում: մարդիկ հիմա ինչ ըսես վրանիս մնու ծելու իրաւունք չունին:

— Այս այդ անկարելի է. պարզապէս չնոք թողներ: Միայն ինչ գնով ալ որ լինի այդ տղան հոսկէ հեռացընելու է. անմիջապէս:

— Ախ, կը կարծես պիտի օգնէ. մէկ լսելու էիր, թէ ինչեր կը խօսէր. ալ զնոր բան է:

— Կարծես անոր յիմար-յիմար խօսելը առաջին անդամը լինի. թնդ անգամ մը նորէն վանք տանինք՝ ես ան խելքի կը բերեմ:

— Մի յուսար: Եւ վերջապէս հոսկէ հեռացընելն ալ դիւրին լոնդիր չէ. քանի որ աղջիկը հոս է, ան հոսկէ չի հեռանար: Ի՞նչ խայտառակութիւն, Աստւած իմ, ինչ խայտառակութիւն:

— Կը տեսնենք. միայն պէտք է քազաքականութեամբ վարւիլ:

Ու այդ բառերուն մէջ վճիռը տւած մարդու մը ինքնագիտակից շեշտը կար:

Սերոբ ակամայ ընկերոջը երեսը նայեցաւ:

ԺԲ.

Մինաս ձեռքովը ուսի փոշին թափ տալով՝ վանքի դուռնէն
զուրս ելաւ, գէպի Քանեաններուն կողմը:

Նախ ծանր կը քալէր՝ գլխուն մէջ բոլոր հնարաւորութիւնն
ները տակնուվը ընելով, թէ ինչ միջոցով աղջկան հետ վայր-
կեան մը առանձին մնալու յաջողի. վերջը քայլերը արագացուց,
մոտածելով որ հոգին սուրբ անշուշտ կերպ մը կը ներշընչէ յարմար
վայրկեանին յարմար ընկիքը:

Տանը քանի մը քայլ էր մնացեր, որ քիչ մը անդին, ծառի մը
շուքին տակ նշմարեց օրինորդ Մելինեանը: Կտրած կոճղի մը վրայ
նստած, յենած ծառի բունին, գլուխը կախ կը կարդար, թիկունքը
գէպի տղան:

Մինաս ուրախութենէն խոր շունչ մը առաւ. «Աստած հետա-
է, մրմնջեց. ու շուապեց գէպի աղջիկը:

Մօտեցող ուոքի ձայնը Նուշիկի ընթերցումը ընդհատեց. և ան-
թեթև մը դարձաւ ետին:

— Բարե՛ ձեզի, օրինորդ Մելինեան:

— Ո՛, բարե՛, պարնի... պարմն... ինչ կ'ընէք, բնաւ մէջտեղ
մի կաք. պարոն Միրաքեանը ըսաւ, որ շարունակ կը շրջեք. հիմա
ալ երեխ նորէն շրջելու կ'երթաք:

Վրայ տւաւ աղջիկը աշխուժ, տղու անունը կուլ տալով, որը
չէր միշեր:

— Ո՛չ, օրինորդ, շրջելու չեմ ելած. եկած եմ մասնաւորապէս
ձեզի հետ խօսելու, և բարեբազմաբար ձեզի ալ հոս առանձին
կը գտնեմ:

Աղջկան առաջին զգացումը վախի սկս բան մը եղաւ. անա-
կընկալի մը անորոշ վախը: Բայց խկոյն գուշակեց, որ խնդիրը իր
ու Արտաշէսի յարաքերութեան շուրջն էր դառնալու, ու բուռն
հետաքրքրութիւն մը յաջորդեց նախորդ տարտամ վախին:

— Ինծի, մասնաւոր ըսելիք մը, և այն ալ առանձին. հար-
ցուց իրարու ետևէ խորին զարմանքի շեշտով մը:

— Այն, օրինորդ:

— Հասպա՛, խնդրեմ:

Վարդապետացուն զիտէր ինչպէս սկսի Մարմնին ծանրութիւնը մէկ ոտքէն միւսի վրայ անցուց, վերջը նորէն աջ ոտքին տւառ գերակշռութիւնը, և յանկարծ ըստ.

—Գիտէք, օրիորդ, վաղը Խծկոնքէն մեկնիլ կ'ուզենք:

—Միթէ, երեխ արդէն կշտացած. լսենք իրաւունք ալ ունիք, մարդ եթէ քանի մը օր այս ձորին մէջ կինայ ալ տեսնելու բան չի մնար. հաւանական է, որ մենք ալ շաբաթէ մը մեկնինք:

Տղան նորէն կանգ առաւ. աղջիկը խօսակցութիւնը գիծէն հաներ էր: Ակլնթարթ մը խառնեց մօրուքը, ու աւելցուց.

—Զնորը ոչին, բայց մենք ստիպւած ենք վերադառնալու:

—Անշուշա գործեր ունիք վանքը: Է՛, պարզն, այդամի մի շտապէք, քիչ մը ազատ օդ չնչեցէք, երբ լինի պիտի վերադառնաք նորէն ձեր բանդը. գործերնիդ օր մը ուշ, կամ կանուխ, ինչ զնաս ունի:

Եու շիկ խօսակցութիւնը կարծես դիտմամբ կը շեղէր, կարծես հաճոյք զգալով զիմացինը նեղ դրութեան մէջ դնելէն:

—Այդ Բնչ բանդի մասին է ձեր խօսքը. Աստծու աշխարհին վրայ ինձի համար օդը ամէն տեղ ազատ է շնչելու:

—Իրամւ. ժալուցաւ աղջիկը տեսակ մը նուրբ երգիծանքով: Դէն, այն ատեն բարի ճանապարհ կը ցանկամ ձեղի, և յաջողութիւն ձեր զործերուն:

—Նորհակալ եմ: Միայն կէտ մը կայ, և այդ կէտի համար է, որ եկած եմ ձեզի հետ խօսելու:

—Եւ այդ կէտն է:

—Որ մեզի օգնէք հոսկէ հեռանալու:

—Ձեզի օդնիմ. չեմ հասկլնար:

—Այս վարկեանիս: Մեր գարձը իսկո՞ն անհրաժեշտ է, լսի. բայց խնդիրը այն է, որ Արտաշէսը համոզել չենք կրնար. ան անպատճառ զեռ մնալ կ'ուզէ. մտածեցի դիմեմ ձեղի. ան, ըստ երեւոյթին, ձեղի կը յարգէ ու ձեր խօսքին կարևորութիւն կու տայն նթէ դուք անգամ մը անոր ըսէիք, որ անիմաստ յամառութիւն չընէ, հաւանական է որ համոզի:

Պարզ էր այդ բառերուն տակի իմաստը:

Յուշիկ ոչինչ չի հասկընալ ձեացուց, ու ջանաց իր վրդումը զապելու:

— Կը ներէք սակայն, պարո՞ն. ինծի ինչ կը վերաբերի ուրիշի գործերուն մէջ խառնւիլ: Պարոն Սիրաքեանը երեխայ չէ. եթէ երթալ չուզիր՝ երևի իր պատճառներն ոնենալու է: Եւ վերջապէս եթէ իր մտերիմ ընկերներուն կը հակառակի, ինչ ըսելով օտար աղջկան մը խօսքին կարեւորութիւն պիտի տայ:

— Դուք անոր վրայ ազգեցութիւն ունիք. հնչեց տղու չոր ու կտրուկ պատասխանը:

Եու շիկ բռնազբօսիկ ծիծաղով մը սկսաւ ինդալ բարձրաձայն:

— Ինչու կը խնդաք, օրիո՞րդ. այդ ինքներդ ալ շատ լաւ գիտէք, անշուշտ:

Այս արդէն շատ նման էր յանդիմանութեան, ու աղջիկը տաքցաւ.

— Ես ոչինչ չգիտեմ, և ոչինչ ալ զիտնալ չեմ ուզեր ձեզմէ. ուրիշ գործերուն մէջ խառնւիլ չեմ սիրեր ես. վերջ տանք այս անհամ խօսակցութեան:

Ու նեղսրտած վերցուց գիրքը ծունկներուն վրայէն ու նեանց քովի քարին վրայ:

Վարդապետացուն մտածեց վայրկեան մը. և իր պարտականութիւնը կատարողի մը անողոք շեշտովը ըսաւ հատիկ-հատիկ.

— Այո՞. գործի մէջ չէք խառնւիր երբ կատարւած սխալ քայլը կերպ մը ուզզել պէտք է. իսկ երբ այդ սխալ քայլը պիտի կատարւի, այն ատեն գործի մէջ կը խառնւիք, չէ, օրիո՞րդ:

Յուշիկ զայրոյթէն ցատկեց ոոքի:

— Ի՞նչ ըսել կուզէք, պարո՞ն. և ով էք դուք. ինչպէս կը համարձակիք երեսիս գայլի աւետարան կարդալու:

— Ե՞ս Արտաշէսի պաշտօնակիցն եմ ու ընկերը. եղաւ սառն ու հանդարտ պատասխանը:

Աղջիկը կարծես տեսակ մը սթափեցաւ. ու հպարտ արհամարնքով մը աւելցուց.

— Այդ չի հետաքրքրեր ինծի:

— Սակայն պէտք է, որ հետաքրքրէ: Միթէ իրմաւ չէք հասկընար, որ ընկերս ձեր պատճառով միայն հոսկէ հեռանալ չուզեր:

—Կը հասկընամ, թէ ո՛չ, այդ ձեր գիտնալու բանը չէ:
—Ի՞նչպէս թէ. երբ ատկէ մեր ընկերներուն մէջ անցարմա-
րութիւններ կը ծագին:

—Ե՛, այդ ալ իմ գիտնալու բանը չէ:

—Զեր գիտնալու բանը չէ, համ. երբ ընկերս ձեր պատճառով
ամեն սրբութիւն ուսքի տակ տալ կ'ուզէ, իր տւած խօսքը, իր
ապագան, իր ծրագիրները, իր կոչումը, իր ընկերները:

—Ախ. թռաւ յանկարծ ակամայ աղջկան դողդոջ շրթոնքներէն
Քայլ մը եա գնաց, ու կանգ առաւ քարացած՝ ձեռքը ծառի
բունին. և խոշոր աչքերը լաջն բացւած զամեւր էին խօսակցի դէմքին
Սն ամենելին չէր երեակայած, որ ինդիրը արդէն այդ ասախ-
ճանի հեռուները հասնել կրնար:

Վարդապետացուն սիրո առաւ. ու մեղմացած ձայնով մը շա-
րունակեց.

—Կը տեսնէք, օրիո՛րդ, վախցաք. և այդ պատիւ կը բերէ
ձեզին նս արդէն կ'ըզգացի կարծես, որ այս բոլորի մէջ դուք գի-
տակցաբար չէ որ մեղմակից էք. ևս արդէն կը գուշակէի կարծես,
որ դուք ոչինչէ տեղեակ չէք շնորհքով: Թէ չէ դուք այնչափ խե-
ցացի էք վերջադիս հասկընալու համար, որ ձեր ու ընկերոջս մէջ
ո՛չ մէկ կապ լինել չի կրնար լրջօրէն: Արտաշէսը քիչ մը դիւրո-
գըրգիւռ ու շուշ գրաւեռդ տղայ է. այսօր այս բանով, վազը մէկ
ուրիշով. հանդիպեցաւ ձեզի. կրթւած, պարկեշտ, համեստ աղջիկ
մը, ու իսկոյն յափշտակւեցաւ. ոլէտք է հեռացընել միայն, ու ան-
միջապէս խելքը գլուխը կու գայ: Բայց ցաւը հոն է, որ մենք
հիմա անոր աչքին իր թշնամիներն ենք դարձեր. ինչ որ ըսենք՝
կը հակառակի, կ'ընդդիմախօսէ. սակայն ձեզի, ձեր խօսքին պիտի
լսէ անպատճառ: Ահա, հիանալի առիթ մը, օրիո՛րդ, դէհ, ցոյց
տւէք, թէ ի՞նչպէս կը վարւի պարկեշտասուն հայ օրիորդը:

Իսկ պարկեշտասուն հայ օրիորդը հայեացքը ծառերուն մէջէն
հեռուն փայլիցը կէտի մը յառած՝ թաղւեր էր ինքն իր մէջ.
ոչինչ չէր տեսներ, չէր ալ լսեր ոչինչ. մինչ կրծքին տակ կ'եռար
հաճոցքն ու. հապարտութիւնը. ու այդ գրկախառնւած դոյց գդաց-
ման թափէն իր թեթև հագուստներուն մէջ ամբողջ լանչովը
կը դողար:

Հազմբա էր. բարձր կ'ըզգար ինքըզինքը, շատ բարձր այդ գիւմացը կեցած Փիսեղմուկը մարդէն. այդ խոշոր, հակայ մարդը իր ցանցաւ մօրուքին ու պիսերուն մշջէն եկած էր անկէ իր ընկերը մուրալու: Մուրալու. իսկ ի՞նքը, աղջիկը. ուժի անհուն գիտակցութիւն մը ողողեր էր իր կազմին մէջ. գիտակցութիւն մը, թէ իր զգացումներուն ու ազգեցութեանը տակ աղան արդէն մէկդի նետել կ'ուղէր վրայէն այդ վարդապետութիւնը, որ այնքան անախորժ էր աղջկան: Եռչիկին կը թւէր այդ վայրկեանին, թէ ի՞նքը մէջ կոչում մըն էր կատարած, թէ փրկիչ մըն էր ինքը ու հողի մը աղատած. աղատած «այդ կեղծիքի ու միջնադարեան շրջանէն», աղատած «այդ խելացի, աղնիւ ու ձեռներէց տղան», Արտաշէսը. ու միմիայն ի՞ր հմացքովը, իր ուժովը, ի՞ր, ի՞ր...

Հաճոյքը վառ կը ցոլար իր աչքերէն, ու կարմրալկած այտին անգիտակից ժպիտ մը ծլեր էր:

Յանկարծ իր այդ ներքին յուզման տակ ալ հանգիստ կենալու անկարող սկսաւ արագ երթևեկել վարդապետացուին դիմաց, որ իր խոսքը վերցացուցած անհամբեր ուստասխանի կ'ըսպասէր, և աղջրկան դէմքի փոփոխութիւններն ու յուզումը որոշ էր գիտեր ի՞նչ բանի վերագրէ:

Քիչ մը առեն երկուքն ալ լուս էին:

— Աւրեմն, օրիո՛րդ, կրնամ ձեր օգնութեան վրայ յոյս գնել:

Աղջիկը կարծես նոր արթընցաւ, ձեռքերը ետեւէն խաչաձեւեց մէջքին, ու կուրծքը դուրս՝ կանգ առաւ տղուն դէմ:

— Հիմա դուք ի՞նչ կը համենաք ինձմէ, պարո՛ն:

— Կը խնդրեմ, աշխատիք Արտաշէսը համոգելու, որ հնար եղածին չափ շուտ հոսկէ մեխնիլ կարողանանք:

— Ա՞զչափ:

— Այո՛, օրիո՛րդ, խնդրեմ:

Եռչիկ ակընթարթ մը շեշտ նայեցաւ տղուն. ու յստակ ձայն մը ուստասխանեց հաստատ.

— Վաղը առառ ձեր ընկերը ձեզի հետ միասին հոսկէ կը մեկնի. գո՞հ էք:

— Աւրեմն կը խոստանաք հասկըցնելու որ իր ըրածը անխելքութիւնն է, ու համոզելու...

—Վաղը առառու ձեր լնկերը ձեզի հետ հոսկէ կը մեկնի. կրկնեց
աղջիկը հրամայական ու հառու շեշտով մը:

Տեսակ մը յարգանք ու ակնածում սպրդեցաւ տղուն մէջ դի-
մացինի այդ խրոխսու ու ինքնագիտակից խօսւածքին ու դիրքին դէմ:

—Սրաագին շնորհակալութիւնս, օրիո՛րդ Մելինեան. ես ձեր
այդ ազնիւ վարմունքը երբէք...

—Ա՛խ, թողէք, խնդրեմ: Ուրիշ ըսելիք մը ունիք:

—Ո՛չ, օրիո՛րդ:

—Այն առեն... ներեցէք:

Ու վերցուց դիրքը քովի քարին վրայէն:

—Հա, ի հարկէ, Արտաշէսին ոչինչ չէք ըսեր մեր այս տեսակ-
ցութեան մասին. թէ չէ զործը բոլորովին կը ծռի:

—Ապահով եղէք:

Ու սկսաւ արագ զիրքը թերթել:

Վարդապետացուն ձեռք տալ կ'ուղէր, բայց տեսնելով որ աղ-
ջիկը իր կողմն անդամ չէր նացեր, գլխարկով թեթի մը բարեկց
ու հեռացաւ:

«Ձէ, ալ չեմ գարմանար — կը մտածէր ճամբան — թէ ինչպէս
Արտաշէսը իսկոյն խելքէ ելու. այդ աղջիկը ամեն քան կրնայ ըներ.
ու կայ այդ աղջկան մէջ: Բայց... բայց իմ առջևս, արդարամտու-
թեան և ճշմարտութեան առջև ան ալ ացդպէս կը խոնարհի»:

Մինչ Եռշիկ նորէն իր նախորդ կոճղին վրայ նստած, թի-
կունքն ու դլուխը յինած ծառին, աչքերը գոց կը մտածէր...

Ծունկերուն վրայ ինկած էր բաց գիրքը, որուն մէկ թուղթը
առարկան թնթե. հովին ու իր սեփական առանձգականութեան
տակ գրքի երկու բաժանմունքին մէջ կօրօրւէր, մէկ մաս ու մէկ
այն կողմը հակելով:

Ճիշտ այդպէս ալ աղջկան մտածումները, որոնք շարունակ կը
տարութերէին՝ մե՛րթ կեդրոնանալով ւիր ներքին ուժի գիտակցու-
թեանց ախորժ զգացումին վրայ, մե՛րթ ալ Արտաշէսի վսելացի ու
վճռական գիմագծերու մտապատկերին վրայ:

ԺԳ.

— Ախալ էք, պարո՞ն, հազար անգամ՝ սիսակ կրօնական զգացումը բնածին է ամեն մարդու սրտին մէջ։ Եկեղեցին ու հոգևորականը անհրաժեշտ պէտք մը եղած է բոլոր ազգերու ու բոլոր ժամանակներու համար եղած է, և ու պիտի լինի. լսէք, ինչ որ կ'ուզէք։

Եւ այնպէս ուժով մը աթոռը ետ հրեց Մինաս սեղանէն, որ սեղանին վրայի լամպը, սամաւարն ու թէյի բաժակները բոլորը միասին դողդըղացին։

Քանեան, որ ճիշտ անոր գիմացը նստած էր սեղանին մի սկզբմը, սկսաւ հանդարա երկու ձեռքով պեխերը ոլորել՝ զէմքին ելած հեգնական ժպիտը հնար եղածին չափ սքողելու համար։

— Այս, այդ թողնենք հիմա. մէջ նետւեցաւ Սերոբ՝ ձեռքով բացասական շարժում մը լնելով քովը նստած լնկերոջը։

Ու դարձաւ Քանեանին։

— Ինչու օդին մէջ կը խօսինք։ Իրողութիւնը այն է, որ այժմ հոգեորական դասակարգը գոյութիւն ունի, որ շատ բարդ ու խոր կերպով կապւած է ժողովուրդի կեանքին հետ. և շնորհիւ իր մէջը տիրող տպիտութեան ու ողորմելիութեան տպրուկի պէս կը ծծէ ժողովուրդին արիւնը։ Հիմա ինչ է ձեր ըստածը. թող տանք, որ ծծէ։

— Ե՛, բարեկամ, մեր արդի հասարակական կազմութեան մէջ այդ տեսակ տպրուկին շատ կան ժողովուրդի մարմին վակած։ Իմ եղբակացութիւնս լսել կ'ուզէք. թողէք հոգեորականութիւնը իր հալին, ու ձեռք վերցուցէք տպրուկը ժողովուրդի համար կաթնտու կովի մը վերածելու ծիծագելի միահմութենէն։ Եւ եթէ, իրաւ, անկեղծ կերպով ժողովուրդի մասին մտածող էք, ու այդ բոլոր տպրուկներէն անոր կաշին ազատել կ'ուզէք, համոզւեցէք վերջապէս, որ այդ հսկայ գործը միայն ինքը ժողովուրդը կրնայ գլուխ բերեր. որով ժողովուրդի բարեկամին գործունէութեանը շիտակ ու իսկական ճամբան մէկ հատ է. սրել ամբոխի ինքնազիտակցութիւնն ու ինքնապաշտպանութիւնը. բոլո՞ր կարելի միջոցներով և որքան կարելի է շուտ բանալ անոր աչքերը, որ ան ինքը տեսնէ, զայրանայ ու թափ տայ իր վրայէն լր պարազիտները։ Իսկ ձեր ձդտածը,

բարեկանման, երկրորդական ու կարկըտան բան է: Կիցո՛ւք. եղանք հոգևորական, ու այդ ամբողջ տղրուկ գասակարգին մէջ միշտ գոցութիւն ունեցող մէկ երկու պիտանիներու թւին վրայ հաստ մըն ալ դուք աւելցուցիք. է, ինչ օգուտ. տղրուկ մը պակաս թէ աւելի ամբողջ հոսանքին մէջ:

— Գիտէք, այդ բոլորը վերացական ընդհանուր խօսքեր են միայն: Ես ժողովուրդի մէջ մեծցած տղայ եմ: ու մօտէն զիտեմ, որ գործը լոմբընող քահանան իր զիւղին մէջ, պարտաճանաչ ու խելցի կուսակչօնը իր պաշտօնին վրայ մէծ օգուտ է մեզի համար, ու ահազին ալ գործ կրնայ տեսներ:

— Գործ: Ընդունեմ, որ այդ բացառիկ պարոնը որեւէ կերպով ծակ մը կարկըտեց, բայց չէ որ վաղը իր յաջորդը ու պաշտօնակիցները պիտի գան կրկնակի ուժով նորէն քանդելու: Այդ բոլոր չանքը հոսանքին զէմ բահ մը հող լեցընելու կը նմանի: ակընթարթ մը հո՞ն է զուցէ, բայց յաջորդ վայրկեանին արդէն ջուրը քշեց տարաւ: Պէտք է, պարո՞ն, չարիքի աղբիւրը չորցընել. այդ է գործը, տեսակնարդիւնաւետ գործը, որը սակայն, ի հարկէ, երկար ու յամառ աշխատանք կուզէ: հաւանօրէն սերունդներու աշխատանք, ինչպէս ամեն քաղաքակրթական լուրջ քայլ:

Այս անդամ Մինասի զէմքին էր ելեր հեղնութեան ժպիտը:

— Դէ, չորցուցէք տեսնենք հոսանքներն ու աղբիւրները. Աստած կարողութիւն տաց. խօսքի մէջ նետւեցաւ ինքնազոհ արհամարանքով մը:

Բայց իսկոյն լուրջ շեշտով մը աւելցուց.

— Ո՛չ, պարոն: Բարեբազարքար այն աստիճան առողջ է մեր ժողովուրդի հոգին, որ այդ տեսակտակնուվրայ ու վտանգաւոր գաղափարներու համար տեղ չի կաց հնին: Հաւացէք ինձի, ժողովուրդի գլուխը այդ տեսակ անհեթեթ դատողութիւններ չեն մններ:

Ամբողջ խօսակցութեան մասնակից չէր միայն Արտաշէս:

Սեղանին մէկ անկիւնը քաշւած, զլուխը կախ, ու մպումպիր թէյը կը խմէր, նոյն իսկ առանց վէճին հետեւելու: Տեսակ մը ցրւած էր, ու նեղսիրու չղայնոտութեամբ անդադար ուռքը կը շարժէր:

Արդէն ամբողջ օրը անսովոր տրամադրութեան մը մէջ էր եղած: Ցորեկը դացեր էր նուշիկը պտոյտի տանելու, բայց վոխա-

նակ սովորականին պէս գլխարկին ասեղը անցընելով աղջիկը իր դէմը շուապելու, դուռը եւեր էր տիկինը երեխան գրկած ու տարօրինակ ժայիտ մը շրթունքին յայսներ էր, թէ քոյը այսօր քիչ մը անհանգիստ է ու պատկեր է կազզուրւելու։ Տղան գլխահակ դարձեր էր ետ, ու ձորի մէկ խուլ անկիւնը նետւեր էր գետին։ Ալ ինչեր ըսես չէր անցեր մոքէն. ենթագրութիւն ենթադրութեան վրայ. արդեօք աղջիկը վշտացած էր իրմէն. ինչով կրնար վիրաւորած լիներ. զոցէ երէկւան իր վարմունքը ձորին մէջ. բայց չէ որ այնպէս զւարթ ու կատակով բաժնւեր էին նախորդ գիշերը իրարմէ։ Իրիկւան դէմ հազիւ մութը գետինն առած կիզիչ անհամբերութեամբ Քանեաններուն երթալու կը պատրաստւէր, երբ Մինաս յայտնեց, թէ այս իրիկուն իրենք ալ միասին գալ կ'ուզեն, թէ ինքն ու Սերոր վճռեր են արդէն յաջորդ առառւ անպատճառ Խծկոնքէն մեկնելու, որով քիչ մը անքաղաքավարի կը լինէր առանց Թաք-բարովի հեռանալը։ Արտաշէս զժզոհութենէն ակռանները սեղմած, առանց ոչինչ առարկելու, միացաւ լնկերներուն։

Եւ ահա կէս ժամկէն աւելի էր նստած էին հոն ու կը խօսակցէին. և Սրտաշէս իզնւր ամէն դուռը շարժըւելուն այն կողմ՝ կը նայէր. Շուշիկ ներս չէր գար։

Սրբ անգամ մը նորէն, իր սպասածին հակառակ, փոխանակ աղջկան կրկին տիկինը սենեակ մտաւ, տղան ալ համբերել չի կրցաւ ու հարցուց։

—Օրիորդի անհանգստութիւնը գեռ չանցաւ, տիկին։

—Ա՞հ, իհարկէ։

—Երաւ, Շուշիկը մւր է, մէջտեղ չի կայ. հարցուց Քանեան իր կողմէն։

—Ներսը նստեր կը կարդայ. սպասախանեց կինը։

—Ե՞ն, ինչ կարգալու ատեն է հիմա. ըսէ թող գայլ թէյը խմէ։

—Կարծես անոր բնաւորութիւնը չդիտես։ Լսի՞ չեկաւ. ախորժակ չունիմ, կը լսէ։ Պեղելը աւելորդ է. ան որ չէ ըստւ, չէ պիտի լինի։

Այ Քանեան զժզոհ զէմքով մը դարձաւ նորէն Սերորին։

—Բայց ներեցէք, ձեր խօսքը լնդհատեցի։

—Ա՛լո, ոչինչ։

—Կարծեմ՝ կ'ըսէիք թէ...

—Այն. ես կը զարմանամ՝ ձեզի, Մարդ որպէս զի մեր եկեղեցին դէմ՝ յարձակւելու չափ հեռու գնայ, պէտք է որ բացարձակապէս ոչ մեր ազգի անցեալին ծանօթ լինի, ոչ ալ մեր արդի պատմական պայմաններուն Հազարաւոր տարիներու ընթացքին մէջ մեր ազգի գոյութեանը դէմ եղած անվերջ սպառնալիքներուն հանդէպ միակ պահապան հրեշտակը մեր եկեղեցին է եղեր, մեր ազգային հարազատ եկեղեցին. եղեր է և է; Եւ վերջապէս ան չէ նորէն մեր արդի ամէն կողմ ու ամէն տեղ ցրւած հայերու միակ զօդող կապը:

Քանեան ձեռքի հասու շարժումով մը անոր խօսքը կարեց:

—Անցեալը թողէք պատմութեան քննադատութեանը: Իսկ ներկայի վերաբերմամբ այդ պարզապէս սուտ է. մեր ցրւած ու փոււած հայերու միանկ կապը եկեղեցին չէ. նոյն իսկ էական պայմաններէն մէկը այլ ևս եկեղեցին չէ. այդ զօդող կապը բոլորովին ուրիշ տեղ պիտի փընտընել. ով աչք ունի կը տեսնէ: Զեր դատողութեամբ ուրեմն բողոքական, կաթոլիկ կամ անդաւանանք. հայր ալ դադրած է իսկական հայ լինելէ. հասու անգամ մըն ալ անմնց հարցուցէք, անգամ մըն ալ մեր վերջին քառորդ դարու պատմութեանը հարցուցէք: Աչ, բարեկամ, այդ տեսակ կղերական նեղ մասծումը ոչ միայն մեր ազգի կապը լինել չի կրնար, այլ ուղղակի անոր պառակաիչն է:

—Դէ, ալ ըսելիք չի մնար. ուրեմն հիմա մենք պառակտիչ ենք. բացականչեց Ծինաս երկու ձեռքը կուրծքին վրայ զետեղելով:

—Անկէ վերջը՝ կ'ըսէք թէ մեր եկեղեցին է մեր ազգայնութեան միակ պահապան հրեշտակը: Իբրև ճարտասանական դարձըւած, գուցէ, գէշ չէ. բայց ատփէ անդի՞ն: Ե՛ս գոնէ ոչ մի կերպ չեմ կրնար լմբըներ, թէ Բնէ կրնայ ըներ ձեր այդ եկեղեցին իր բոլոր զանգակատուններուն ու վիզարաւորներուն հետ միասին արդի տնտեսական ու քաղաքական պայմաններուն անողոք ուժին գէմ: Փողովուրդ մը լինքը իր մկաններուն մէջ պիտի ունենայ պէտք եղած առանձգականութիւնը ամէն փշող հովէ չի կոտրըւելու համար: Եթէ այդ չունի, կամ ալ սպառած է, վերջացաւ. այլ ևս քովէն ոչ մէկ պահապան հրեշտակ չի փրկեր անոր ինքնուրոցնութիւնը, և եթէ շիտակը կ'ուզէք այլ ևս արժանի ալ չէ ուրոյն ազգ կազմելու:

—Եւ այս բոլորը կ'ըսէք դուք այդպէս սրտի կատարեալ հանգըստութեամբ. բացականչեց Սերոբ՝ զարմանքէն աչքերը խոշոր բացած:

—Ինչպէս որ կը տեսնէք:

Տիկինը բացաւ սենեակին դուռը ու գլուխը ներս երկընցուց.

—Պարհն Սիրակեան, վայրկեան մը դուրս կու գաք:

Տղուն սիրտը նետեց. արագ վար դրաւ ձեռքէն դգալը, որով թէյին երեսի երկու երեք փրփուրի հատիկներուն հետ կը խաղար, ու խկոյն ցատկեց դուրս:

—Ինչու այդպէս խոժոռ նստած էք, և ոչինչ չէք խօսիր. հարցուց տիկինը սենեակին դուռը կրկին գոցելէն վերջը:

—Այսօր խօսողներ շատ կան, խօսակցութեան նիւթն ալ շատ մաշւած է: Իսկ օրիորդը գետ կը կարդաց. կցեց յանկարծւ:

—Ո՛չ. մեծապատիւ օրիորդը կը բարեհաճի դուրսը Մջելու, և կը ցանկայ որ դուք ալ իրեն ընկերանալու երթաք:

—Գո՞ւրս. բացականչեց տղան մատովը տան դուռը մատնանիշ ընելով:

—Այս:

Արտաշէս երկու սստիւնով սեմին դուրս նետւեցաւ, ու թափով կանգ առաւ խկոյն:

Գիշերւան թարմ զովութեան մէջ, լեցուն լուսնի ողողուն լոյսին տակ կեցած էր աղջիկը, ժաքէթը ուսերուն, թևերը ծալ-լած կրծքին, գլխաբաց, ու աչքերը տղու դէմքին, արձանի դիրքով մը, ուրկէ թունդ-սև սուեր մը ընկեր էր դեռին՝ լուսնի թափած ճերմակութեան վրայ:

Մանր քաղցրով մօտեցան իրարու, ու ձեռք տւին:

—Այսօր հիւանդ էիք. առաջինը տղան խզեց լուսթիւնը ցած ու վախուս ձայնով մը:

—Այս. է, թողնենք այդ. ոչինչ բան. դուք ինչ ըրիք:

—Ոչինչ. ձանձրացայ. ուրիշ ինչ պիտի ընեմ միս-մինակ:

—Մինակ, ինչու. ձեր ընկերները հոս չէին:

—Ընկեր... ես ընկեր չունիմ այլ ես, ոչ ընկեր, ոչ բարեկամ, ես մինակ եմ, ալ բոլորովին մինակ: Երէկ գոնէ կը կարծէի, թէ բարեկամուհի մը ունիմ, բայց այսօր համոզւեցայ որ չարաչար

սխալած եմ. այդ միակ բարեկամուհիս ալ սուտհիւանդ կը դառնայ ու ինձմէ խոյս կու տայ:

Ու այս ըստած էր այնպիսի ուռած, կապրիզոս ու տրատնչի տոնով մը, որ Նուշիկ չի կրցաւ ինքը զի՞նքը զապէ ու ինդալով մը նորէն բանեց տղու ձեռքը: Եւ առանց բաց թողնելու՝ ըստ տեսակ մը մայրական խօսա ածքով.

—Ինձի նայեցէք, պարո՞ն Ոիրաքեան. որ այսօր սուտ հիւանդ ձեւացայ՝ այդ շիտակ է. դուք իմ կարծածէս աւելի սրատես էք եղած. և ասկէ վերջն ալ շարունակ նոյն սուտ հիւանդը պիտի ձեւանամի Արդէն այդ մասին խօսելու համար ձեզի դուրս կանչեցի: Մէկ խօսքով՝ մեր յարաբերութեան պէտք է վերջ գնել. կարճ ու կտրուկ:

—Ի՞նչ...

Ու անդամալոյց շարժումով մը ձեռքը աղջկան ձեռքէն ետքաշեց:

— Նու. ինչո՞ւ զարմացաք. չէ՞ որ այդ յարաբերութիւնը կտրուի պիտի երկու օր ուշ կամ կանուխ: Վաղը կամ միւս օրը դուք պիտի երթաք աջ, ես՝ ձախ. որքան շուտ կտրենք, այնքան լաւ վերջապէս մտածեցէք անգամ մը ի՞նչ տեսական կապ կրնայ գոյութիւն ունենար մեր մէջը. վարդապետի մը ու մանկաբարձուհիի մը մէջ:

Ու վերջին երկու բառերը շեշտուեցան մասնաւորապէս պարզ:

—Ա՛խ, եթէ այդ է բոլորը. բացականչեց Արտաշէս զւարթ զարկով մը: Իմ վարդապետութիւնս, օրիո՞րդ, Խծկոնք ուոք դրած օրս մեռաւ, ու երէկ թաղեցի. մնացեր է հոգեհանգիստը միայն:

—Ի՞նչ ըսել կուզէք:

Աղջիկը ոչինչ չի հասկըցող դարձաւ:

—Զեր ցանկութիւնը կատարեցաւ, օրիո՞րդ: Այլ ևս ես ինքս ալ կրօնաւոր լինելու մէջ հրապոյց չեմ գաներ: Այդ իմ կազմիս ու հակումներուս բանը չէ. վճռած եմ թողնել:

—Ա՛խ, ատոնք սիրուն խօսքեր են, որոնք չեն իրազործւիր:

—Ինչո՞ւ ոչ:

—Չէ որ դուք խօսք եք տւած վանքը. պէտք է խօսքերնիդ պահէք. այլ և ունիք ընկերներ, որոնք ձեզի նորէն կը համոզին

անշուշտ ազնիւ լինել ու ձեր սկզբունքները չի դաւաճանել։ Իւ
կատակեցք։

— Ամենելին, ես լուրջ կը խօսիմ։

— Չեմ հաւարա, ի՞նչպէս կարելի է, ձեր իդէմլը, ժողովուրդին
ծառայելու ձեր նպատակները։ Եխոակը ես ձեր մասին այնչափ
քարձր կարձիք ունիմ, որ չեմ կրնար ելեակացեր, թէ դուք ժո-
ղովուրդին ծառայելու գաղափարէն ձեռք վերցընել կրնաք։

— Ինչու պիտի ձեռք վերցընեմ. ընդհակառակը. ժողովուրդին
համար աշխատելու ճամբաներ շատ։

Աղջիկը ժպտեցաւ։

— Ժամանակ մը ես ձեզի կ'ըսէի այդ բոլորը, սակայն դուք
ինձի կը հակառակէիք՝ պնդելով թէ շխտակ ճամբան կրօնաւո-
րինն է։

— Աի, մարդ միշտ իր ըրածը կերպ մը պէտք է փաստաբանէ
ու արդարացընէ։ Թէ մրգան ես իմ ըսածիս համոզւած էի այդ
Սառած գիտէ, միայն հաւացած էի, որ իմ ըսածս շխտակ էր։
Հաւացայնծ, ոչ համոզւած։ Երեի, այդ ալ կրօնի հետ կապուած
բան է։ Բայց ինչ և է. հիմա ալ փոխւած են աեսզութեանս պայ-
մանները։

— Ուրեմն լուրջ է ձեր նոր քայլը։

— Այն, բացարձակապէս։

— Ե՛, աղէկ. ի՞նչ ընել է հիմա ձեր նպատակը. ի՞նչ գործի
կուզէք ձեռնարկէք։ Դուրսը ամէն բան պատրաստ չէք դոներ։
Դուրսը պէտք է հոգ տանիլ ու մաածել, բարեկամու։

Ես մտածած եմ արդէն, դուք հոգերնիդ մի՛ ընէք. ծրա-
գիրս պատրաստ է։ Հոսկէ երբ մեկնինք՝ կ'երթամ էջմիածին։ Հնար
եղածին չափ շուտով վերջնականապէս կը մաքրեմ հաշիւներս, ու
կըշտապեմ շխտակ թիֆլիս։

— Ինչու անպատճառ Թիֆլիս. ընդհատեց աղջիկը խորամանկ
նայւածքով մը։

— Նախ կը կարծեմ հոն ինձի համար աւելի գիւրին կը լինի
հսմալսարանի համար պատրաստընիլ, ու կերպ մը նիւթական օդ-
նութիւն ճարել Ռուսաստան անցնելու. և վերջապէս...

— Նո՞ւ.

—Եւ վերջառիկս գոնէ մօտիկ կը լինիմ ձեզի, իմ սուտ հիւանդ
եղող միտկ բարեկամուհիիս:

Նուշիկ ժպտեցաւ:

—Խնդացէք զուք: Իհարկէ հիմա իրաւունք ունիք վրաս ար-
համարանքով նայելու . տղայ մը, որ այսօրւան պաշտպանածը վաղը
կը հերքէ, երէկւան տած խօսքը այսօր ոոքի տակ կու տայ. ես
հիմա թեթևամիտ ու անպէտք մէկն եմ ձեր աչքին, չէ: Աղէկ. իսկ
ես կըսեմ ձեզի, որ ես երբէք այս աստիճանի վստահութիւն զգա-
ցած չեի իմ մէջս իմ սեփական ուժերուս վրայ. ես հաստատ գի-
տեմ այս վայրկեանիս ու կրնամ ձեզի խօսք տար, որ ինծմէ բան
մը դուրս պիտի դայ: Եթէ կ'ուզէք նորէն խնդացէք զուք, բայց
ես ձեզի պարզապէս կը յայտնեմ, թէ ալ տարակոյս անգամ չունիմ,
որ շատ շանցած ձեր սրտի յարգանքն ու մօերմութիւնը խլեմ
պիտի ամբողջովին: Ես երբ տարի մը վերջը նորէն այսպէս իրի-
կուն մը գամ ձեզի վերջնականապէս յայտնելու, որ յաջորդ առառ
արդէն կը մեկնիմ Մոսկւա բժշկական ֆաքիւլտէն մտնելու, դոք
այլ ևս առանց վարանելու ձեր ձեռքը պիտի մեկնէք ինծի՝ ձեր
ամենամուերիմ բարեկամին սրտանց յաջորդութիւն ցանկալով:

—Ճիշտ, ինչպէս այս վայրկեանիս. կցեց աղջիկը ջերմ ու
ուժգին շեշտով մը՝ երկու ձեռքը տղուն մեկնելով:

Տղու թափը բեկաւ իսկոյն. ակլնթարթ մը վարանոտ նայե-
ցաւ շեշտ աղջկայ աչքերուն. և յանկարծ անզուսպ ուրախութեամբ
մը խլեց անոր պարզած ձեռքերը, ու սկսաւ խենթի պէս սեղմել:
Վայրկեան մը միայն:

Վերջը երկուքն ալ իրենց հայեացքը ձգեցին գետին. ու գլուխ-
ները թեթև մը վար խոնարհեցան. բայց ձեռքերը դեռ բռնած
էին իրար:

Առաջին սթափողը աղջիկը եղաւ. կամաց մը ազատեց ձեռքը,
ու մեղմ ձայնով մը հարցուց.

—Ուրեմն վաղը առտու կը մեկնիք էջմիածին:

—Վաղը. երբէք: Փանի դուք հոս էք, հոս եմ և ես:

—Բայց չը որ հիմա որքան շուտ վակք վերադառնաք, այնքան
աւելի շուտ կը լինիք Թիֆլիս, ձեր միակ բարեկամուհիին մօտ. լսաւ
աղջիկը ժպտուն՝ վերջի բառերը տղու արտասանելու ձեւին նման-
ցընելով:

Ժակտեցաւ Արտաշէս ալ. մինչ աղջիկը ձայնի շարաճճի խաղով մը աւելցուց.

— Հնն, զնոք ձեր համալսարանի պատրաստութեան, ես ալ իմ աշխատութիւններուս մէջ. վերջապէս իրարու օգնել ալ կրնանք, հիմա մեր մասնաճիւղերը իրարմէ այնպէս հետու չեն, ինչպէս առաջ:

— Ես կը մեկնիմ՝ հիմա. հիմա, այս վայրկեանիս կը մեկնիմ ես. բացականչեց աղան ձեռքի ուժգին ու աշխուժ շարժումով մը:

— Հիմա. չե՞. մինչև վաղը առառւ կարելի է սպասել. հեգնեց աղջիկը կատակելով: Բայց վաղը առառւ անպատճառ, ձեր ընկերներուն հետ միասին: Եւ մէնք՝ ալ իրարու չենք յանդիպիր, քանի որ դուք վարդապետացու էք. լսեցիք. աւելք ձեռքերնիդ. ուրիմն ցույտութիւն. Թիֆլիս:

Նորէն սեղմեցին իրարու ձեռք. աղջիկը գլխով ըրաւ. և լուսնի առատ լոյսին մէջէն իր սեփակ սուերին հետ միասին մտաւ տուն:

Սիրաքեան դեռ վայրկեան մը քարացած մնաց իր կեցած տեղը, աչքերը յառած դռան, ուրկէ նուշիկ ներս էր սահեր:

Յանկարծ արթընցաւ, ու խայ ույցող անհամբերութեանը մը մտաւ սենեակ, ուր գեռ կը վիճաբանէին. ու դարձաւ ընկերներուն:

— Բայց, տղաք, ալ հերիք է. ժամանակին ալ ուշ. երթանք քիչ մը հանգստանալու. վաղը առառւ կանուխ ճամբազ ելնելու է:

— Ուրիմն հաստատ կը մեկնիք վաղը. հարցուց Քանեան միւս երկուքին դիմելով:

— Անպատճառ. առառուն կանուխ. մութին. պատասխանեց Արտաշէս արագ:

Երկու վարդապետացուները իրարու նայեցան:

Երկարահասակի զէմքին գոհունակութեան ժպիտ մը կը խաղար:

Եւ աչքովը թեթև կծկում մը րրաւ ընկերոջը.

«Տեսամր», ըսել կ'ուզէր կարձես:

Ելան ոսքի ու հրաժեշտ առնելու սկսան:

Քանեան ընկերացաւ մինչև տան դուռը. հրաւիրեց սրարոնները անպատճառ. իր տունը այցելել, երբ Ալեքսանդրապոլ լինին:

Տղաք վերջին անգամ մը ձեռք տւին, օրիորդին իրենց բարել առաջ լինդրեցին, և ուղղւեցան դէպի իրենց սենեակը:

Երբ առանձին էին մնացեր, Մինաս տեսակ մը քնքշութեամբ դարձաւ ընկերոջը:

—Դէ, Արտաշէս, ես զիտէի, որ լնկերներուդ սիրալ պիտի չկոտրես ու միասին դաս. ես զիտէի, որ պիտի մտածես, որ գուն ազնիւ ու խելացի տղայ ես: Ալ օդին տանք մեր մէջ եղած բոլոր լիմար խօսակցութիւնները: Աւրեմն վազը առառւ կ'իջնենք Տեկոր, կը վերցընենք ձիերը ու անմիջապէս ճամբաց կ'ելնենք, համ:

—Այն, ըրաւ տղան կարճ:

—Չեզի բան մը ըսիմ; ես այլ ես յոդնեցայ այս թափառելէն. մանաւանդ Անին ու շրջակացքը աւելի երկար ժամանակ կը պահանջէ. յառաջիկաց զարնան կու գանք. իսկ հիմն շխտակ երթանք էջմիածին: Հէ, ինչ կըսես, Արտաշէս. հարցուց Սերոբ՝ Մինասի հետ կանխապէս պատրաստած զերը վարպետութեամբ կրկնելով:

—Այն, շխտակ:

Սերոբ յաջողութենէն շլացած՝ գողտուկ մը Մինասի ձեռքը սեղմեց քովին:

Երեքը միասին մտան վանք:

Արտաշէս առջևէն մտածկու ու արագ քայլերով, զոյդն ալ անոր ետևէն:

Եւ երբ իրենց սենեակի սեմէն ներս պիտի մտնէին՝ Մինաս ծուեցաւ կամաց մը ընկերոջը ականջին.

«Ազատեցինք»:

ECCO-HOMO

Ահետիք ի ՍԱՀԱԿԵԱՆԻ

Եւ այս մթին, խօլ-աշխարհում
Այս քար ու սուր ճամփէքով
Դէպի արևն եմ ես վազում,—
Վառ-արևը—լոյսի ծով:

Եւ ստեղս ծանր ու թանձը
Գիտեմ, կը գայ իմ յետքից,
Իմ ստերը—մարդ-ամբոխը
Պիտ' հետեւէ անշու շո ինձ:

* *

ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Կոռունկները շարան-շուրան
— Կիլ'ռռ, կը'ռռ՝ կանչին ու եկան.
— «Գարունն եկաւ, կը'ռռ, կը'ռռ»
Անուշ կանչին ու անցան:

— Զան, ջան մեռնիմ ես ձեր ձէնին,
Այ կռունկներ, նշխուններ,
Եարաբ տեսմք իմ բալիկին,
Եարաբ խաբար չճք բերեր...
Բալիս կապին, բանտը դրին,
Տարին եկաւ, բոլորաւ,
Խաբար չունիմ, դադար չունիմ,
Աչքս ճամփին ծով կտրաւ.
Գարունն եկաւ, — արևերես
Ելան ծիլ ու ծաղիկներ,
Այս, եարաբ թրք ազիզ բալէս
Կելլնի բանտէն, կռունկներ...
Գարունն եկաւ, ինձ բնչ գարուն,
Սիրաս լցւաւ սև-արուն... .

ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

Վ. Է. Պ.

Լեհոն ՄԱՆՈՒԻԼԵԼԱՆՑԻ

ՄԵՍՆ ԵՐՐՈՐԴ
ԿԵԱՆՔԻ ՈՅԺԸ

(Վ. Է. Պ. 1)

I

Թիֆլիսի երկնակամարը ծածկւած էր ամպերով, որոնք, սկզբումը թանձր, մռայլ և կոհակների պէս, գնալով հաւասարում են միապաղաղ-մոխրագոյն կերպարանք էին ստանում: Գրեթէ անընդհատ կայծակները ցաջորդւում էին նմանապէս անընդհատ որոտումնով: Փողոցներում երթևեկողների մէջ մի առանձին իրարանցում էր նկատում: Կառապանները իջնում էին և կառքերի հովանիները վեր քաշում: Ծաերը սրնթաց կտրում էին օղը և աչքից անհետանում: Իւրաքանչիւր ոք շտապում էր փոթորկից պատսպարւելու:

Օրը մթին էր, և երեկոն վրայ էր հասել վազաժամ:

Մի այսպիսի եղանակին Պրոսպեկտի վրայ ծանրաքայլ շարժւում էր մի պատկեր, որը հեռակա նայողին կարող էր թւալ, իբրև թափառաշրջիկ և անապատան մէկը: Ոչ մի առարկայ չէր գրաւում

նորա ուշադրութիւնը՝ Գլխակախ, հայեացքը զեանին, նա քայլում էր մի այնպիսի անտարբերութեամք, կարծես փոթորիկը նորա համար չէր: Երեռում էր, որ ինքնապաշապանութեան զգացմունքը բժացած պիտի լինէր այդ անձի մէջ:

Նեշտ բան չէր որոշել նորա տարիքը: Մազերին նայես, երիտասարդ էր, բայց աչքերը այն աստիճան յոդնած և մարած էին, այնքան անհաստատ և դանդաղիոտ էր քայլափոխը, և մէջքը, գետնին նայելու սովորութիւնից, այնչափ կորացած, որ նա ծանր կեանքի շատ տասնեակ տարիներ զլորած ձերունու էր ցիշեցնում:

Հագուստը խզածալի էր: Մոխրագոյն գլխարկը, իւղուած և տեղ տեղ պատած խոշոր բծերով, ծածկել էր մի գլուխ, որը մի եօթ տարի առաջ զարդարւած էր սիրուն գանգուրներով: Նաւմաշ պիշակի վեր քաշած օձիքի արանքից երեռում էր, շապկի փոխարէն, մերկ մարմինը: Նարվարը մի ոոին աւելի երկար էր, միւսինը կարճ, երկու կողմն էլ հաւասարապէս ծղողւած: Կօշիկն էր միայն, որ բանի նման էր, այն էլ, իհարկէ, մի բարի մարդու նւէր կը լինէր:

Այն բոսեին, երբ նա, ծոելով ճանապարհը, անցնում էր Կովկասեան թանգարանի մօտով, հակառակ մաշթի վրայ երևացին երկու ջահէլ երիտասարդներ, որոնք, նորան տեսնելուն պէս՝ կանգ առան, և մէկը, մատով ցոյց տալով, ասաց.

— Նայիր, նայիր, Գէորգ, օս նա է, որին ու զում էիր տեսնել:
— Ուրեմն սա է... Ես անպատճառ պիտի ծանօթանամ հեալ:

Բայց անձրեւ յորդ թափւում էր, և էլ ժամանակ չէր ծանօթանալու: Երիտասարդները մօտակոյ կաթնասունը զնացին և, մի մի բուժակ թէյ պահանջելով, սկսեցին զրոյց անել այնտեղ նորա մասին:

Զահէլ երիտասարդներից մէկը մի 18 տարեկան պատանի էր, մաքուր և կոկ հազնւած, կրակոս աչքերով, զիւրաշարժ և անհանգիսու: Թատրոնի սէրը, որ ծագել էր նորա մէջ զեռ ևս մանուկ հասակից, այն աստիճան կլանել էր նորա ուշ ու միտքը, որ նա երրորդ դասատան նստարանի վրայից ոոը զրել էր բեմի վրայի ձգել ուսումը և այժմ՝ գերասանական խմբի հետ ներկայացումներ էր տալիս:

Խսկ միւսը, Գէորգ Սաղաթեանը, որը ներկայ պատմութեան

մէջ դեր պիտի խաղաց, հասակով փոքր ինչ աւելի մեծ էր առաջինից, աւելի ծանրաշարժ, խոշորագէմ և հողարտ, երկայն գանգրահեր մազերով, կապոյտ ակնոցներով և կարճ, բայց թաւ մօրուքով:

Սա նոր էր աւարտել հոգեոր գաղրանոցը, նոր էր հրատարակել Փոքրիկ պատմութիւններին ժողովածուն, որի մասին մի շատ նպաստաւոր գրախօսութիւն երեաց Թօսոք և Գործա պարբերական հրատարակութեան մէջ: Այժմ նա այս օրգանի աշխատակիցն էր, և նորա առաջիկաց միակ հոգան էր զոնել մի բարերար, որը համաձայնէր միջոց տալ նորան բարձրագոյն ուսումն ստանալու արտասահմանում:

—Ես լսեցի—խօսեց Ասպաթեանը—որ այսօրւաց մի լրագրում լուր է եղել տպւած նորա մասին:

—Այն, կար, մի՞թէ չես կարդացել: Այս բոպէիս:

Եւ Սեղրակը (Ասպաթեանի խօսակից ընկերը), սեղանների վրայ թափթփւած լրագիրների միջից ընտրելով իւր ուզածը, կրկին տեղը եկաւ, նստեց և, ոոլ սահ վրաց դնելով, սկսեց կարդալ հետեւալը. «Ա, երջին օրերս Պրոսպեկտի վրաց կարելի է հանդիսել մի երիտասարդ հայի, որի հիւ անդուս, խղճալի գէմքը և աղքատիկ, դժուծ հազուսոր ակամաց զրաւում են անցորդների ուշագրութիւնը: Նորա անունն և ազգանունն է Արտաշէս Ասկերչեան: Տարիններ առաջ նա մեր գերասանական խմբի անդամներից մէկն էր և մասնակցում էր ներկայացումներին: Նա ունի հրատարակած նոսե. Բանաստեղծութիւններին ժողովածու: Սուում են, պարապել է և ուսուցչութեամբ հայոց գարցոցներում Մի աշխարհի անցիւալի տէր մարդը ստիպւած է այժմ ձեսքը մեկնել և ողորմութիւն խնդրել անցւորներից: Ամօթ կ'լինի գերասանների համար, եթէ օգնութեան ձեռք չկարկառեն իրանց նախկին արւեստակից ընկերոջը և չժեթեացնեն նորա վիճակը»:

Ասպաթեանը, ընթերցումը լսելուց յետոյ, քմծիծաղ տեց և զուխր թափահարելով ասաց.

—Ես զարմանում եմ, ճշմարիտ, և չեմ հասկանում, թէ ինչու անսպատճառ զերասանները պիտի օգնեն այս մարդուն Խոկ իրանք, զրագետները և լրագրական աշխատակիցները, ետ պիտի քաշ են նոյնային և ուսուցիչները: Աւրեմն սրանք ևս ազատ են բարոյական

պարտականութիւնից? Զէ որ Ոսկերչեանը նոյնքան է գերասան, որքան գրադէտ է և ուսուցիչ?

—Ես քեզ հետ բոլորովին համաձայն եմ; Գէորգ: Առաջինը, հէնց մենք ինքներս կարօտ ենք ուրիշների օգնութեան, էլ ուր մնաց, որ...

—Ո՞չ, —վրայ բերեց խօսակիցը, —ասենք, այդ էլ ճիշտ չէ: Դուք, եթէ ուզենաք, կարող էք...

—Բայց ինչպէս կարող ենք, որ ասում ես? Ինչքան է լինում մեր ներկայացման եկամուտը? Դու գիտես, թէ քանի մաս ենք անում մի հասովթը, և որքան է ընկնում ամեն մէկիս? Մի չնչին, մի ողորմելի գումար! Հաւատո՞ւ ինձ, որ մենք պարագերով ենք ապրում: Ֆայր ծայրի չի հասնում երբէք! Խաչը վկայ!

—Եստ կարելի է: Բայց իմ խօսքը ձեր մասին չէ միայն: Իմ ասածն էլ հէնց այն է, որ մարդասիրական գործը այս կամ այն դասակարգի յատուկ պարտականութիւնը չէ, այլ նա վերաբերում է ամբողջ հասարակութեան: Մանաւանդ ներկայ գէպքում եթէ Ոսկերչեանը գոյտ թիւն ունի մեր մշշ, նշանակում է, որ մեր կեանքի պայմանները այնքան էլ նախանձելի չեն: Եթէ ճիշդ է, որ այդ երիտասարդը եղած է խելք, ազնիւ և ընդունակ, և այնուամենացնիւ այնպիսի թշւառ զրութեան է հասել, անշուշտ պէտք է եզրակացնել, որ մեր կեանքը իւր զոհերը ընտրում է ազնիմների միջից: Այս, մեր հասարակութեան պարոքն է ընկածներին բարձրացնելը քանի որ այդ ընկածները ևազնիւներին միջից են ընտրւած:

Այսպէս էր դատում Սաղաթեանը, և ինչպէս նորա արտաքինը, նոյնպէս և լրջամտութիւնը ցոյց էին տալիս, որ այդ երիտասարդը շատ կարգացել է, շատ խորհել է և իւր հասակից շատ առաջ է գնացել, մի երիտասարդ, որը միանդամայն արժանի էր բարձրացոյն կրթութեան:

Նրբ դուրս եկան կաթնատնից, զով քամի վշեց երեսներին: Արդէն մթնել էր: Սնձրե չկար այլ ևս, թէև երկինքը զեռ ամպամած էր: Լապտերները վառւած էին փողոցում, և ճառագայթները խաղում էին լճացած ջրերի և կառքերի անիւների տակից ցատկող կաթիլների վրայ: Զահէլ երիտասարդները զնում էին զբոյց անելով և նոցա խօսքը կրկին նորա մասին էր:

II

Հետևեալ օրը, իրիկնադէմին, Ոսկերչեանը նստած էր Փառաց տաճարի առջե նստարանի վրայ; Գլուխը կախ էր ընկել մի ուսի վրայ, կիսախուփ, սառած հայեացքը, գրեթէ առանց թարթելու, յառած էր մայթի սալայատակին: Մարմինը անշարժ էր անզգացութեան չափ:

Մի ձայն, որ նորա անունը արտասանեց, սոտիպեց նորան գլուխը բարձրացնել և սթափել քնչած գրութիւնից:

Նորա առջե կանգնած էր մի թիսադէմ երիտասարդ, լայնեզր գլխարկով, գանգուր մազերով, կապոյտ ակնոցներով, ձեռքին մի չեռտ և գաւազան:

—Կըներէք համարձակութեանս համար,—խօսեց անծանօթը. գուք չէք պարոն Ոսկերչեանը?

Դրական պատասխանը լսելուց յետոյ, երիտասարդը շարունակեց.

—Թոյլ կըտաք ինձ ձեզ ծանօթեանալ?

—Խնդրեմ, իննդրեմ,—պատասխանեց Ոսկերչեանը հեզահամբոյր ձայնով, քաղաքավարութեամբ վեր կենալով տեղիցը և մեկնելով իւր դողդոջուն ձեռքը, որի վրայ մատները ծառի չորացած ճիւղերի էին նմանում:

—Եատ ուրախ եմ: Սաղաթեան: Գէորգ Սաղաթեան: Իմ աղգանունը գուցէ ձեզ յայտնի է?

—Ներեցէք, ինչպէս ասացիք?

—Գէորգ Սաղաթեան:

—Սաղաթեան?... Սաղաթեան?... Այո, կարծեմ, ես ձեզ մի տեղ... Բայց ոչ, նո չէր կարող լինել... Ես մոռացել եմ, ճշմարիտ, գուցէ և...

Զեռքը ճակատի վրայ շփելով, Ոսկերչեանը, ըստ երևութին, կամք և ոյժ էր գործ դնում լսած անունը մոռաքերել և կրկնում ու երեքինում էր կամացուկ. «Սաղաթեան, Սաղաթեան!... Երիտասարդը, կամենալով աղատել նորան մի աւելորդ աշխատանքից, ասաց.

—Է՛ն, այդ միևնոցնն է: Զարժէ դորա համար գլուխ կոտրել: Բան է, ասացի: Վալրկենական լուսութիւնից յետոյ, Սաղաթեանը

խնդրեց նորան գնալ իւր մօտ: Անսապասելի էր այս հրաւերը, և Ասկերչեանը չգիտէր, ինչ պատասխանել, ու լուռ մնաց:

— Կուու թիւնը համաձայնութեան նշան է, գնանք ուրեմն:

Այս առաջարկի, նոյն իսկ այս ձայնի մէջ, բնաւորութեան մի այնպիսի վճռականութիւն էր զգացում, որ Ասկերչեանը կամաց ակամաց հպատակւեց: Բայց միենոյն ժամանակ մոռածում էր. «Ով է այս պարոնը? Ինչու ծանօթացաւ ինձ հետ? Ինչով արժանացաց մի անցորդի ուշադրութեանը? Ուր է ինձ տանում և ինչի համար?

Կէս ժամ անցաւ, մինչև որ տեղ հասան: Այնքան դանդաղ էր քայլում Ասկերչեանը:

Սաղաթեանը հանեց սլիջակը և, ներողութիւն խնդրելով, որ ժիլետով է, նստեց սեղանի մօտ հիւրի գիմաց: Վերջինս համարեա բոլոր ժամանակ ձեռքը օձիքի մօուից չէր հեռացնում: Բայց ինչքան էլ աշխատէր նա ծածկել իւր ողբալի մերկութիւնը, տանտէրը վերջ ի վերջոյ տեսաւ:

Տեսաւ, և մի այնպիսի խզմահարութեամբ լցւեց, որ հարկադրուած էր շրթունքը կրծել, յուզումի թագցնելու համար: Նա տեսել էր կանանց, որոնք, ցնցուիներ՝ մէջ կորած, ձևեռւաց սառնամանիքին, ձիւնի տակ, մի ձեռքով կաթնակերին էին կերակրում, միւսը պարզել էին ողորմութիւն խնդրելու: Տեսել էր անդամալոյներ, որոնք, մարդկացին կերպարանքի տեղ, մնելէն զանգւածի նմանութիւն ունեին, և մարդկի փոււած թաշկինակի վրայ ձգում էին իրանց լումանները, որպէս զի գունդ միսը ապրի: Տեսել էր անտիրական մանուկներ, որոնք համարեա մերկանդամ, գայլի պէս քաղցած, վերցնում էին գետնից կերւած ու ձգւած խնձորի մնացորդը և լափում իսկական գաղանի ախորժանքով: Բայց երբէք մարդկակի անկումը այնքան ողբալի չէր երեացել նորան, որքան այժմ

Թէյ արդէն պատիրած էր:

Որուս աղախինը, մատուցարանը ձեռքին, ներս եկաւ, բայց հէնց որ նկատեց իւր պարոնի մօտ նստած օտարուի հիւրին, իսկոյն ծիծաղը բռնեց: Ծիծաղում էր անձայն, սրտումը, ցնցումը էր մարմնով, գողում էր ձեռքը և մատուցարանը: Զարմանքով նայեց նա գիշերօթիկի աշքերին, կարծես կամենում էր հարցնել, թէ որտեղից է ճարել այս հազւագիւտ արարածին և ինչի համար է

բերել իւր մօս: Սադաթեանի խէթ հայեացքը չազգեց: Դրան մօտից նա կրկին զննեց այցելուին, շրթունքը ծռացրեց, թափահարեց ուսերը, և, երբ դուրս եկաւ, փրթկողի ձայնը բարձրացաւ: Պարոնը, բարկութիւնից կարմրած, ակոաները կրճատցնելով, անմիջապէս վաղեց ետևիցը:

Ոսկերչեանը մնաց մենակ, արմունկը սեղանին, գլուխը ձեռքի վրաց, աչքերը խփած: Նա լաւ հասկացաւ իւր ներկայութեամբ կառարած մնջախաղի բոլոր նշանակութիւնը, բայց դա առաջին և վերջին անգամը չէր, որ իրան ծազր ու ծանակի տուարկաց էին շինում:

Քիչ յետոց Սադաթեանը եկաւ:

— Զեր թէյը կըսառչի, պարոն Ոսկերչեան,—ասաց նա, նառելով տեղը:

Ոսկերչեանը մի երկու կռւմ խմեց և ասպա սկսեց աչքերը դէս ու դէն պտուեցնել, կարծես մի ինչ որ բան էր որոնում:

— Դուք սովորութիւն չունիք թէյի հետ հաց զործ ածել? Դիմեց նա բարի երիտասարդին, երկարատե սովածութիւնից վերջնականապէս յաղթահարւած:

— Ո՛չ, — պատասխանեց Սադաթեանը: Բայց այս բուլէիս աղախնին կ'ուղարկեմ...

— Ո՛չ, ո՛չ, հարկաւոր չէ, խնդրեմ չանհանգստանաք, — շուտափովթ վրաց բերեց հիւրը, երկիւղ կրելով, որ մի՛ գուցէ անհամեստ ազջիկը կրկին երեւաց իւր աչքին:

— Այն, ևս էլ կարծում եմ, աւելի լաւ է ախորժակ պահէք: Այս երեկոյ մենք միասին ընթրիք կ'անենք:

— Դուք տանն էք ճաշում? հարցրեց Ոսկերչեանը, որպէս զիւտ այնմ իւր համաձայնութիւնը տայ կամ չտայ:

— Ո՛չ, շատ թանկ են վերցնում ճաշարանը էժան է նատում: Այդ խօսքի վրաց հիւրը միամսւեց և սրտումը ուրախացաւ:

Սադաթեանը մաքումը դրել էր մօտիմոտոց ծանօթանալ այս խորտակւած մարդու անցնալին և աշխատում էր նոյն այդ ուղղութեամբ: Վարել խօսակցութիւնը Բայց Ոսկերչեանի միավանկ պատասխանները նորան չէին դոհացնում: Հգիտէր, ինչ միջոց պէտք է դործ դնել, որ նա թողնի իւր ծածկամտութիւնը և սիրտը բաց անի վերջապէս, ինչպէս բարեկամը բարեկամի առաջ:

— Քուք, կարծեմ, դերասան եղած էք, չէ, պարոն Ռոկերչեան? կրկին սկսեց նա իւր հարց ու փորձը, ցանկանալով նորան խօսեցնել:

— Այո՞ւ, — պատասխանեց թատրոնի նախկին սիրահարը, և նորա հայեացքը, մտամոլոր մարդու աչքերի պէս, կանգ առաւ անորոշ կէտի վրայ:

— Բայց, ասացէք, ինդրեմ; ինչու ձգեցիք բեմը?

Հարցումը մնաց անպատասխան:

— Ինձ յայտնի չէ, թէ որքան մեծ է եղել ձեր արտիստական ձիրքը, բայց ես ափսոսում եմ, որ դուք հեռացել էք գրականական ասպարիզից: Ես պատահմամբ գտայ իմ մի ծանօթի գրքերի մէջ ձեր քանաստեղծութիւնները: Կարդացի: Մի քանիսը ինձ այնքան դուր եկան, որ անգիր եմ արել:

Մի զոհ ժպիս խաղաց նախկին բանաստեղծի դէմքին և էլ իսկոյն անցաւ:

— Մանաւանդ յաջողւած է այն մէկը, որը այժմ երգւում է ժողովրդի մէջ:

— Երգում է՞ Զգիտէի...

— Միթէ? Այդ զարմանալի է: Կուզէք, երգեմ, լսեցէք:

Պատասխանի փոխարէն, Ռոկերչեանը ժպտաց:

Սադաթեանը սկսեց եղանակել: Զայնը այնքան լաւ չէր, բայց երգում էր զգացմունքով:

Հեղինակը ձեռքով ծածկեց աչքերը, այտերի ծալծլւած կաշին աւելի ևս կծկեց, բայց նորա արտասուքը երգիչը չտեսաւ: Թէ ինչ աշխարհ բացւեց Ռոկերչեանի առջև, այդ գիտէր միայն ինքը:

Վաղուց, շատ վաղուց է, որ նա լաց չէր եղել:

— Բայց դուք կը հաւատասաք, պարոն Ռոկերչեան? Ես կարծում էի, թէ այս երգի հեղինակը կենդանի չէ և...

— Եւ չէք սխալւել...

— Ինչպէս?

— Ես — մի կիսակենդան զիակ եմ և մեռելից զանազանութեմ նորանով, որ գեռ շնչում եմ և թաղւած չեմ:

— Երեսում է, դուք շատ յուսահատւած էք?

Ռոկերչեանը ոչին: Հպատասխանեց:

— Բայց դուք դեռ կարող էք վերակենդանալ...

Ոսկերչեանը գլուխը թափահարեց:

—Այ՞օ, այ՞օ, ևս համոզւած եմ, որ դուք կարող եք հոգով վերածնւել:

—Ո՞չ, ոչ, —պատասխանեց թշւառ մարդը, գլուխը թափահարելով:

—Այնուամենայիւ ես կրկնում եմ: այ՞օ, կարող եք:

Ոսկերչեանը այլ ևս չհակառակեց:

—Աշխարհում կը գտնեն բարի մարդիկ, որոնք չեն թողնիլ, որ դուք կորչեք: —Դուք չեք հաւատում, որ կան բարի մարդիկ? Գուցէ դուք նոյն իսկ ասում եք մարդկանց?... Այո?

—Ամենից շատ ես ինձ հմ ասում:

—Իզուր, իզուր: Եթէ ձեր կեանքի պաշմանները փոխւեն, դուք կը լաւանաք, բոլորովին ուրիշ մարդ կը գառնաք: Զախորդութիւնները անցողական բաներ են: Կեանքի կուի մէջ... Սակաթեանը դեռ երկար կը շարունակէր այս ոգով, եթէ ունկնդիրը բացէիրաց ցոյց շտար իւր անհանգստութիւնը: Աս հոգոց էր քաշում, ինչպէս մի մարդ, որի սիրու հատնում է վշտից կամ անհամբերութիւնից. ձեռքով բռնում էր գլուխը, ճակատը և էլ իսկոյն թողնում. կորացնում էր մէջքը և էլ կրկին ուղղում ծանը շլնշարգելութեամբ: Նա նման էր հիւանդի, որը նեղանում է մարմնի վրայ անյարմար տեղում բացւած վէրքից:

Սադաթեանը ընդհատեց խօսքը, նայեց ժամացոյցին և ասաց.

—Մի քիչ վաղ է, բայց ոչինչ, կարող ենք գնալ: Կը նատենք ճաշարանում, առաջներս կը դնենք գինի կամ գարեջուր և կը շարունակենք մեր խօսք ու զրոյցը:

Ու գնացին:

Սադաթեանը ընտրեց ճաշարանի մեկուսացած սենեակը և, կանչելով ծառային, պատւիրեց, ինչ հարին էր: Յետոյ հանեց վերաբուն, կախ արաւ, գլխարկը նետեց աթոռի վրայ և, ձեռքերը ետևին, կամացուկ սուլելով սկսեց նայել դատից քաշ արած նկարը, որը այնքան էլ համեստ բովանդակութիւն չունէր:

Քիչ յետոյ պատւիրւած կերակուրները բերին մի շիշ գինու հետ: Ոսկերչեանի բաժինը արագութեամբ կլանւեց: Շինչողիս երեսում է, այս թշւառականը գայլի պէս քաղցած է, անցաւ հիւ-

բասիրողի մոքով, սա անմիջապէս սլահանջեց երկրորդ բաժինը, և հիւրը չընդգիմացաւ:

Սագաթեանը ածեց զինին, ձեռքն առաւ իւր բաժակը և, մտաբերելով Ոսկերչեանի ուսանաւորներից մի հատած, արտասանեց.

Ել ճար չկայ. արի, ընկեր,

Մէջ տեղ գընենք լաւ զինի.

Խըմենք, երգենք և պար բըռնենք—

Ինչ լինում է, թող լինի!...

Այս հարազատ հնչիւնները Ոսկերչեանին անցեալը միտը բերին, այն անցեալը, երբ նա գեռ ևս յոցերի զիւթական աշխարհումն էր, երբ նա զիտէր զգալ, սիրել, ոգևորւել...

Նորա զլուխը ինքն իրան թեքւեց ուսի վրայ, և աչքերը հեռու հեռու նայեցին:

Բայց սեղանակիցը իսկոյն նորան սթափեցրեց, ստիպելով բաժակը զարկել բաժակին և խմել:

Դինու երկրորդ բաժակից յետոյ, Ոսկերչեանի զէմքի մոայլ արտայացառ թիւնը մեջմացաւ, թոյլ ժայխո խաղաց շրթունքի անկիւններում, և նա իւր պատասխանների նկատմամբ առաջւաց պէս անմատչելի չէր երեւոմ Սաղաթեանին Եւ սա այս պատեհ հանգամանքը ձեռքից չտւեց:

Ու տեղացին հարցերը. ռորտեղ է սոացել նա իւր կրթութիւնը, ինչն ուսումը կիսատ է թողել, ինչ յաջողութիւններ կամ ինչ ձախորդութիւններ է կրել նա իւր կիանքումը, ինչն է նորան հասցրել ներկայ դրութեան, ովքեր են եղել ընկերները և այն:

Ոսկերչեանը խօսում էր շատ զանդազ և ցածր ձայնով: Յիշողութիւնը սասաիկ թուլացել էր: Նատ անգամ զէմ էր առնում առօրիայ ամենաղործական բառերին, այնպէս որ խօսակիցն էր շտապում վրայ զցել, երբեմն նախագատութիւնը յանկարծակի լնդհատում էր, և նա, մոռանալով, թէ ինչ էր ասում և ինչ պիտի ասէր, լոռում էր և, ոչխարի նման, ասլու շ կորած՝ նայում անշարժ մի կէտի վրայ:

Բայց նորա հաղորդած կցկառութիւններից Ոսկաթեանը այնուամենայնի կարողացաւ մի յացոնի գաղափար կազմել և կիսակենդան դիակից անցեալի մասին: Երբեմն մի սուր միտք, մի

առողջ գաղափար, մի երգիծական դիտողութիւն, ինչպէս կայծեր, ցատկում էին այս ծեր երիտասարդի պատմութիւնից և նորա երեսը վայրկենաբար լուսաւորում։ Նեորհիւ թշւառութեանց և քաշած դառը նեղութիւնների, ամեն բան կիանքի մէջ նորա աշքում մասը գոյն էր ստացել, և շրջադատող մթնոլորտը թում էր աւելի անտանելի, քան թէ խսկապէս նա էր։ Բայց և այնպէս, չնայած միակողմանիութեան, որքան ճշմարտութիւն կար այս անյաջողակի դժնեաց քննադառութեան մէջ!»

—Ինձ խեղանեց այն մթնոլորտը, որի օդը ես ծծում՝ էի, — այսպէս վերջացրեց նա իւր պատմութիւնը։

Երկրորդ բաժին կերակուրը Ասկերչեանը կերաւ այնպիսի ախորժակով, կարծես նոր էր նստել սեղանի։ Մինչդեռ Սադաթեանը գէմ էր առել նոյն իսկ առաջի բաժնին, նա պատրաստ էր երրորդ ափսէն էլ մաքուր սրբել, եթէ միայն չամաչէր իւր ծանօթից։

Եւ, իհարկէ, այս զարմանալի չէ։ Երկու օրւաց քաղցածութիւնից յետոյ, ով կարող է իրան աւելի քաղաքավարի պահել? Սադաթեանը առաջարկեց դարձեալ մի բաժակ զինի։ Ասկերչեանը ասաց, թէ ոգելից ըմակելիքը իրան վեստում՝ է, և աւելի չէ կարող։

—Մի շիշը երկու հոգու, —ինչ պիտի անի? Համոզում՝ էր առաջինը։ Դեռ կիսից աւելին ես եմ՝ խմել։ Վերջին բաժակն է, խմենք ընկերաբար!

Եւ լնկերը այլ ևս չնակառակեց։

Բայց մի բոսէ անցաւ չանցաւ, գոյնը զցեց, ինչպէս դաճ։ Ոտու ձեռքը թուլացաւ, և դլուխը, ինչպէս մեռելի գլուխ, ինքն իրան կախ լնկաւ ուսի վրայ։

—Ինչ պատահեց, պարոն Ասկերչեան? զոչեց Սադաթեանը՝ գունաթափ և, մօտ գնալով, բարձրացրեց նորա դլուխը և նայեց ուղիղ աչքերի մէջ։

—Աչինչ, սիրոս է միայն... Սիրաս...

—Երեխ, զինին ազդեց?

—Գուցէ...

—Աիս, ինչ յիմարութիւն էր իմ կողմից! Բացականչեց նա վախեցած ձայնով և, ձեռքը գնելով նորա կրծքի ձախ կողմի վրայ,

զգաց սրտի անսախորժ թրթռոցը՝ կարծես կեանքը բաղխում՝ էր կուրծքը, որ տեղ բացւի, և կարողանայ դուրս գալ ու ազատւել փլատակւած մարմնից:

— Չանցաւ? հիմա չանցաւ? անհանգստութեամբ հարցնում էր Սաղաթեանը:

Զուր խմեցնելլ չօգնեց, պիջակը ետ արաւ, և այժմ, եթէ կասկած ունէր, իւր աչքովը տեսաւ, որ իւղձի հազին շապիկ չկար: Մերկ մարմնի վրայ բաճկոնակն էր:

Երբ Ասկերչեանը մի քիչ հանգստացաւ, Սաղաթեանը նկատեց:

— Չեզ անհրաժեշտ է հիմնաւոր կերպով բժշկւել: Ինչպէս երեւում է, ձեր կազմւածքը սաստիկ թուլացել է:

— Ես կամենում եմ գնալ... Շնորհակալ եմ: — Խօսեց հիւանդը, վեր կենալով տեղիցը և ձեռքը մեկնելով իւր բարեսիրո ծառօթին:

— Այս, գնանք: Ես էլ կը գամ ձեզ հեա: Ես կ'ուզէի տեսնել ձեր կացած տեղը: Կարելի է?

Սորա այս դիտաւորութիւնը կարծես զուր չեկաւ Ասկերչեանին, և սա գժկամակութեամբ պատասխանեց:

— Նեղութիւն մի' քաշէք, խնդրեմ: Ես կ'երթամ:

Սաղաթեանը այնուամենայնիւ գնաց նորա հետ՝ թշւառ մարդու օթեանը անձին տեսնելու:

Դա մի նկուզ էր մի կիսաւեր տնակի մէջ և աւելի նման էր հաւաքնի, քան թէ սենեակի, մութ, նեղլիկ, ցածր և կեղոսոց օդը խոնաւ էր այնտեղ և բորբոսի հոտ էր փչում:

— Դուք այստեղ էք բնակւում? հարցրեց երիտասարդը, որութելով աչքերը ակնոցի տակից:

— Այս:

— Այսաեղ առողջը կարող է հիւանդանալ, իսկ հիւանդը... իսկ ուր է ձեր անկողինը?

— Զկայ:

— Ուրեմն գետնին էք պատկում?

— Այս խսիրի վրայ:

— Ուր է այսաեղ խսիրը?... Հա, այդ?... Բայց վերմակ չունիք?

— Մի վերաբկու ունիմ, այն եմ զցում վրաս:

—Հըմ, —արտասանեց Սադաթեանը, մեծախորհուրդ կերպով
թափահարելով գլուխը:

«Յա ուրեմն այն մարդկանցից է, որոնք տնալին կենդանիների
ապրուստին ամենայն իրաւամբ կարող են նախանձել», մոտածում
էր նա: «Անպիտաներից ամենաանպիտանը լինեմ ես, եթէ չաշ-
խատիմ սորան օգնելի»:

Այսպիսի ուխտ արաւ ազնւասիրա երիտասարդը և դուրս եկաւ
Պակերչեանի մօտից:

III

Սա վճռեց դիմել ամենից առաջ Գարեգին Զառիկեանի օգնու-
թեանը, որովհեաւ. Ռսկերչեանը իւր անցեալի մասին խօսելիս,
երտիտագիտութեամբ և ցարգանքով էր ցիշում այդ մարդու անունը:

Զառիկեանը այժմ կատարելապէս առնակունն էր,
երեք, մէկը միւսից սիրուն, երեխաների հայր, բայց, չնայած իւր
առարիքին, զեռ նոր էր յայտնուում գրականութեան մէջ: Նորա
առաջին փորձը, որը մի վէպ էր ուսուցչական կեանքից, յաջողու-
թիւն շունեցաւ և հետք ու ցիշատակ չթողեց իւր ետևից: Յետոյ
նա ինքն էլ տեսաւ, որ իւր գրւածքը աւելի լաւ վիճակի արժանի
չէր: Այն ինչ նորա մէջ ոչ միայն չէին նւազում գրականական հա-
կումները, այլ, ընդհակառակը, աճում զարգանում էին: Իսկ երբ
նա գտաւ իւր իսկական կոչումը, խորապէս զգաց, որ իրան շատ
բան է պակասում: Միջնակարգ ուսումը բաւական չէ, որ մարդ
քննադատ գառնայ. անհրաժեշտ էր հիմնաւոր գիտութիւն ձեռք
բերել: Ահա այդ պահանջն էր, որ զրդեց նորան դէպի բարձրագոյն
կրթութիւն: Եւ իրօք, թեմական գպրոցի վերջին դէպքից յետոյ,
որի մասին խօսք եղաւ ներկայ պատմութեան մէջ, առանց տա-
տանումների, իւր կնոջ և նորածնի հետ ճանապարհ ընկաւ դէպի
արտասահման—Գերմանիա: Չորս տարուց յետոյ նա վերադարձաւ
կովկաս: Երկու տեղից նորան հրաւիրեցին տեսչի պաշտօնով—նա
չընդունեց և գերազանց լինել ուսուցիչ ներսիսեան դպրանոցում,
քան թէ տեսուչ երևանում կամ Շուշւայ մէջ: Նոյն այդ միջոցին
հիմնել էր մի նոր օրդան, որի մօտ աշխատակիցներից մէկը դար-
ձաւ նա: Այս պարբերական հրատարակութեան անունն էր—«Խօսք
և գործ»:

Զառիկեանին տեսնելու համար, հետեւալ օրը Սաղաթեանը դնաց Ներսիսիան դպրանոցը Մեծ դասամիջոց էր, աշակերտները վազվզում, խաղում, ազմուկ էին անում փոքրիկ բակի մէջ և պատըշ գասթների վրաց:

Սաղաթեանը մտաւ ուսուցանոցը և տեսնեցաւ Զառիկեանի հետ:

— Եսոք գիտէք նորա տեղը? հարցրեց վերջինս, երբ իմացաւ, որ խօսքը Ռակեչեանի մասին է:

Յետոյ աւ ելացրեց.

— Երազրից ես տեղեկացայ, որ նա այստեղ է և շատ խղճաշի դրութեան մէջ է, բայց, զժբախտաբար, ոչ ինձ է յաջողւում՝ նորան տեսնել, ոչ նա ինքն է գալիս ինձ մօտ:

— Նա ինձ տասց, որ իրը զուք նորան լաւ ճանաչում էք և մի ժամանակ մօտ ընկերներ էք եղած:

— Այն, այն, այդ ճշմարիտ է:

— Բայց գիտէք, պարսն Գարեգին, նա կարօտ է շուտափոյթ օգնութեան, ասկա թէ ոչ — կորած է:

— Իմ բարոյական պարոքս կլինի հոգ տանել նորա մտան:

— Ես ևս պիտի աշխատեմ...

— Եթէ այդպիս է, ուրեմն ահա ինչ: Այս երեկոյ զուք կարող էք գալ ինձ մօտ, իմ բնակարանը? Միասին կը գնանք նորան տեսնելու:

— Որ ժամին?

Զառիկեանը նշանակեց ժամը, և Սաղաթեանը անմիջապէս հեռացաւ:

Երեկոյեան նոքա գնացին:

Երբ Գարեգինը, իւր նախկին բարեկամի, իւր Արտաշէսի փոխանակ, տեսաւ իւր առջեւ մի ընկճւած, փոքրացած և հիւանդոս մարմին, աղքատոի շորի մէջ փաթաթւած, նա անկարող եղաւ այլ ևս իւր յուզմունքը պահել, կսկիծ լ այրեց աչքերը, և թերթերունքի վրայ մայլեց արտասուքը: Նորան թւաց, որ այս մութ և խոնա նկուղը մի գերեզման է, որանեղ կենդանի թաղւած է իւր ընկերը նա, որ երբեմն խելօք գլուխ ունէր, ազնիւ սիրու և հարուստ ընդունակութիւններ, որը իւր անզուսպ երեակայութեամբ մենու-

թիւն էր երազում և այսօրւայ օրը բնաւ մտքով էլ չէր անց-
կացնում:

—Արտաշէս! Դոյլց նա, դրկաբաց մօտենալով Ոսկերչեանին,
բայց սորա թեթև ժպիտը եղաւ միայն եղբացրական ողջագուրան-
քի պատասխանը:

Միւնոյնն է թէ Գարեգինը մի մանեկէն դրկած լինէր:

—Ես էլ չեմ հարցնում, թէ ինչպէս է առողջութիւնդ, որով-
հետև աչքովս տեսնում եմ... Բայց դու այն ասն, Արտաշէս, ին-
չու չես եկել ինձ մօտ?

—Անյարմար էր, —պատասխանեց Ոսկերչեանը, ակնարկելով
իւր գծուծ հագուստի վրայ:

—Այս շորերով, երեխ, ամաչել է, —նկատեց Սադաթեանը:

—Այդ դատարկ բան է, վրայ բերեց Գարեգինը: Վաղը քեզ
համար շորեր կ'առնենք, կ'զուգենք ոտից մինչև գլուխ, և դու
կ'դառնաս էլի մեր առաջւայ Արտաշէսը:

Այդ ասելով, նա բարեկամաբար մի քանի անգամ բաղսեց
նորա ուսերը:

—Ես կուզէի, որ այս տեղս նորոգւէր և ահա այս տեղս, —
խօսեց Ոսկերչեանը, բազիսելով կուրծքը և ճակատը:

—Այդ էլ կ'անենք: Փառք Ասոծու, բժիշկների պակասութիւն
չկայ այս քաղաքում... Բայց ի սէր քո բարեկամի, մի ուրախ ծի-
ծաղիր, տեսնենք: Միթէ ծիծաղելու ընդուն սկութիւնդ էլ կորց-
քել ես?

Իզուր էր Գարեգինը, իւր սրտի մէջ կուտակւած դառնութեան
հակառակ, ուրախ ծիծաղում և կատակներ անում: Հազիւ մի թոյլ
ժպիտ մեղմացնում էր նորա դէմքի մռացլը, էլ իսկոյն անցնում
էր, և ճակատի կնճիռները իրանց նախկին տեղն էին բռնում:

Զառիկեանը առաջարկեց նորան մի առժամանակ տեղափոխւել
իւր մօտ: Ոսկերչեանը ոչ մի կերպ չէր համաձայնում: Գարեգինը
մտածեց, որ, եթէ շորը փոխի, նա այնքան չի ամաչիլ և կ'ըն-
դունի իւր առաջարկութիւնը:

—Էլ ինչու վաղը ասոց նա. հէսց այս բոպէիս գնանք միա-
սին խանութ և քեզ համար շոր առնենք: Լաւ չեմ ասում, պա-
րոն Սադաթեան?

— Ես ինքս կամենում էի այդ առաջարկել, բայց մօտս փող!...
— Ինձ մօտ էլ ասենք քիչ է: Բայց ես ծանօթ խանութպան-
ունիմ, որ ինձ կ'հաւատաց: Գնանք:

Ոսկերչեանը, անհասկանալի պատճառով, կամակորութիւն էր
անում: Նորան համարեա զօռով տարան: Խանութումն էլ նա ոչ մի
կերպ չհամաձայնեց հանել հին շորը և նորը չափել իւր վրայ:

— Վրաս կ'գայ, — կրկնում էր նա այնտեղ, չափել հարկաւոր չէ:
Բայց նոր հանդերձն էլ չօդնեց: Եղբ խանութից գուրս եկան,
Զառիկեանը ասաց.

— Դէ այժմ դնանք մեր տուն:
Բայց Ոսկերչեանը, չնորհակալ լինելու փոխանակ, դժգոհու-
թեամբ ասաց.

— Ինձ հանգիստ թողեք, գլուխս տրաքում է ցաւից!...
Եւ, առանց ձեռք տալու, ճանապարհը ծուեց դէպի իւր բնա-
կարանը:

— Ի՞նչքան վայրենացել է, — բացականչեց Գարեգինը նորա
ետևից:

— Միթէ նա այսպէս էր և առաջ? Հարցրեց Ասկաթեանը:
— Մի եօթութ տարի առաջ սա բոլորովին ուրիշ մարդ էր!
պատասխանեց Զառիկեանը:

IV

Կիւրակէ օրը նա պատահեց Ոսկերչեանին վանքի գաւթումը
և տարաւ իւր մօտ ճաշի: Գարեգինը ինքն էլ զարմացաւ, որ նա
յօժար կամքով եկաւ և չսպասեց, որ իրան խնդրեն:

— Ահա, մացրիկ, մի թանկագին հիւր եմ բերել: Ճանաչեցիր?
Այսպէս ներկայացրեց նա վաղեմի օարեկամին իւր մօրը:

— Սա մեր Արտաշէսը չէ? Հարցրեց վերջինս տարակուսանքով:

— Այն, մացրիկ, սա մեր Արտաշէսն է, — պատասխանեց Գա-
րեգինը, գլուխը խորհրդաւոր կերպով թափահարելով:

— Տէր Ասուած! Բացականչեց մացրիկը, մօտ գնալով դէպի
հիւրը: — Գու այդ ինչ օրն ես ընկել, որդիս? Ակզբումը քեզ չճա-
նաչեցի: Բարով, բարով ես եկել մեզ մօտ: Ինչու ես կանգնած?
Նստիր, որդիս, նստիր:

Ոսկերչեանը նստեց պատի մօռ աթոռի ծայրին։ Նա, ըստ երեսյթին, սաստիկ ամաշում էր մայրիկից, ուղիղ նորա երեսին նայել չէր համարձակում և միշտ իւր աչքերը փախցնում էր նորա հայեացքից։

—Երբ ես եկել? Որո՞նց էիր աչքան տարի? Ինչով էիր պարապում? Հարցնում էր մայրիկը։

Այդ միջոցին սենեկի զուռը կամացուկ բացւեց, շէմքումը երեաց երկու տարեկան մի հրեշտակ-աղջկաց պատկեր, որը, նկատելով անսովոր հիւրին և աչքերը նորա դէմքին յառած, կտկտալով մօռեցաւ իւր հօրը։

Գարեգինը վերցրեց երեխային, դրեց ծնկան վրայ, համբուրեց երեսը և ապրեշում-մազերը, գլուխը կրծքին սեղմեց և ասաց։

—Դու այս պարոնին ճանաչում ես?

Երեխան, առանց պատասխանելու, զլուխը դարձրեց և սկսեց հետաքրքրութեամբ նայել պարոնին։

—Զեր աղջիկն է? Հարցրեց Ոսկերչեանը, սիրալիր հայեացք ձգելով փոքրիկի վրայ։

—Այն, և ինչպիսի աղջիկ, —պատասխանեց հայրը հիացքով և երեխայի մազերը քնքշաբար շոյելով։

—Խօսում է?

—Այն, կարգին դրականական լեզով։ Ապա մի ասա, աղջիկս, հայրիկին սիրում ես?

—Սիլում եմ, —թոթովեց երեխան։

—Մայրիկին էլ սիրում ես?

—Սիլում եմ։

—Խսկ տառին չես սիրում?

—Սիլում եմ, —պատասխանեց աղջիկը և ժպիտով նայեց իւր տառին։

Քիչ յետոց ազմուկով ներս եկան Գարեգինի միւս երկու որդիքը, մեծը եօթամեայ, միջնակը չորս տարեկան, երկուսն էլ մէկը միւսից առողջ և ժիր մանուկներ։

—Հը, ինչ կայ, ինչ կայ, չարաճճիներս?

Անդրանիկը մօռեցաւ և մի ինչ որ բան շշնջաց հօր ականջին։

—Աղքատ է եկել? Հարցրեց Գարեգինը։ Ե՞հ, ինչ անենք եկել է։

—Փող տուր տանենք տանք:

Երբ հայրը կամենում էր փող տալ մեծին, միջնակը, ձեռքը բարձրացրած, ոտի մասների վրայ թռչոտելով, առում էր.

—Հայրիկ, ինձ տուր, հայրիկ, ինձ տուր...

—Այս, այս անդամ հերթը քոնն է: Առ տար:

Երեխան առաւ փողը և մի ակնթարթում սնդիկ պէս անհետացաւ:

Գարեգինը սկզբունք էր դարձրել իւր տանը—ազքաներին փող և հաց տալ երեխաների ձեռքով: Նա այն կարծէքի էր, որ մանուկ հասակից պէտք է մարդու ձեռքը վարժեցնել բարեգործութեան:

Նուտով երեաց և տիկին Մարիամը, որը, չնորհիւ իւր պողապատի առողջութեան, երեք անդամ ծննդաբերութեան երկունք կրելուց յետոց, այնուամենացնիւ պահապանել էր իւր նախկին թարմութիւնը, տեսքը և հրապոյը: Դա այն կանանցից էր, որոնց խնայում է ծերութիւնը և թողնում է դեռ երկար տարիներ ծաղկել ու փթթել:

Սորան տեսնելուն պէս, Ասկերչեանը ոտի կանգնեց և գլխի խոնարհ շարժումով ողջունեց, առանց համարձակւելուառաջին մեկնել ձեռքը:

Տիկինը ձեռք տւեց նորան, առողջութիւնը հարցրեց և նստեց ամուսնու կողքին:

—Որքան փոխւել է! շշնջաց նա գերմաներէն:

—Խսկ եթէ մի երկու օր առաջ տեսնէիր, —նկատեց Գարեգինը նոյնալիս գերմաներէն:

Տիկինոց ներկայութեամբ Արտաշէսը աւելի ևս ամաչոտ դարձաւ, սկսեց աւելի յաճախ շփոթւել և աւելի աշկարա երկունք բառամոռացութեան ախտը, որովհետև ամենասոսկ բառերը մասրերելու համար՝ նա կանգ էր առնում, ապուշ կտրում և խիստ անյարմար դրութեան մէջ թողնում լսողներին:

Բայց մայրիկը և Մարիամը շուտով հեռացան, և Արտաշէսն ու Գարեգինը մնացին մենակ:

—Դէհ, այժմ մենք առանձին ենք, և ես կարող եմ լսել քո խոսառվանանքը, —խօսեց վերջինը, ձեռքերը իրար շփելով:

— Ես չգիտեմ, ճշմարիտ, ինչ ես կամենում, որ պատմեմ:

—Պատմի՞ր կեանքդ:

—Միթէ դա հետաքրքրական է?

—Այն, այն, Արտաշես, դա ինձ հետաքրքրում է: Կան որոշ սկսակի մարդիկ, որոնց կեանքը ոչ պակաս հետաքրքրական է, քան թէ իսկսկան հերոսներինը: Ներոսը միակ է, իսկ ինձ ու քեզ նման հասարակ մահկանացուները — բազմաթիւ: Արդեօք շատերին գիտես մեր գործիչներից, որոնք քո քաշած օրերը տեսած չլինին իրանց կեանքում? Տարրերութիւնը այն է, որ դու այդ թշւառներից ամենասանրախուը և ամենաանյաջողակն ես եղել: Դու ինձ հասկանում ես? Վերջապէս, դու իմ պատանեկութեան բարեկամը և ընկերն ես եղած. կարծեմ, իրաւոնք ունիմ մի այսպիսի պահանջ անելու: Վերջին տիսուր գէպքից յետոյ, երբ մենք իրար հրաժեշտ տւինք, ես զնացի արտասահմանի, չորս տարի օտարութիւն քաշեցի, վերադարձայ, ահա շուտով երրորդ տարին կ'լինի, որ ուսուցիչ եմ այսուղ, և այսքան միջոցում ոչ մի տեղեկութիւն չունեի քո մասին:

Ոսկերչանը սկսեց: Բացց նա խօսում էր ակամայ: Կարծես ցաւուր եր, որ ստիպւած էր կրկին մոտաբերել իւր կեանքի տիսուր էջերը, այն էջերը, որ նա ուրախութեամբ կ'մոռանար, եթէ մի հնար լինէր: Պատմելիս նա յաճախ դադար էր առնում, բանում էր գլուխը և մոտամոլոր խորասուցւում անցած գնացած օրերի հին լիշողութիւնների մէջ: Խօսում էր ցածր ձայնով, դանդաղ, ինչպէս անկողնում նատած հիւանդը, որի գէմքը տանջանք է արտացայտում, և գլուխը թոյլ պարանոցի վրայ այս ու կողմն է թեքւում:

Ըհաւասիկ այն տեղեկութիւնները, որ Գարեգինը կարողացաւ կորդել իւր ծածկամիտ խօսակցից, պակասը լրացնելով իւր երեակայութեամբ:

Զառիկեանին ճանապարհ դնելուց յետոյ, Ոսկերչանը մնացել էր նոյն այն քաղաքում և չդիտէր, ուր գնայ և ինչի համար գնայ: Անցաւ երկու ամիս, և թեմական կոնսիստորիացից նորան տւաջարեցին գրագրի պաշտօն, որ մինչեւ այդ ժամանակ վարում էր մի ծեր մարդ և նոր էր վախճանւել: Ծայրացեղ կարիքից հարկադրւած՝ նա ընդունեց այդ պաշտօնը: Ուոճիկը մի չնչին բան էր. ծայր ծայրի հասցնելու համար մեծ հունար էր հարկաւոր: Նորանով չէր կարելի

հոգալ ոչ միայն վայելուչ հագուստը, այլ նոյն իսկ համեստ ճաշը: Բայց Ոսկերչեանը յոյս ունէր, որ մասնաւոր դասեր էլ կ'պատահէին: Եւ բացի այդ, այնոտեղի ծխական դպրոցի աւագ ուսուցիչը յուսադրել էր նորան, որ առաջին յարմար գէպքում տեղ կ'ուաց իրան յանձնւած ուսումնարանի մէջ: Նա վարում էր իւր ձանձրալի, անշնորհակալ պաշտօնը ամենայն բարեխղճութեամբ, չնայած, որ յաճախ տկարանում էր: Սեպտեմբերին աւագ ուսուցիչը իւր խօսքը կառարեց և նորան առաջարկեց դասեր: Բայց այդ չցաջողւեց, որովհետեւ եղան մարզիկ, որոնք Ոսկերչեանին անցարմար համարեցին այդ պաշտօնի համար, քանի որ նա Շահնարաթեանի ըլմբոստ խմբիցն էր: Նա մնաց իւր նախկին պաշտօնի մէջ և երկու ամբողջ տարի համբերեց: Նա ձանձրանում էր, զայրանում էր, և օր չէր անցնում, որ շկրկնէր.

— Այս արտադրութիւնները ինձ վերջ ի վերջոյ բոլորովին կը բժացնեն!

Մի օրինակ, տաղակալի կեանքը ձգեց նորան գինեսուն:
Բայց ամեն անգամ, երբ հարբում էր, հանում էր մահւան գուռը և ետ գտնում: Թուլացած կազմածքը խմիչք չէր վերցնում, և այդ ինարկէ, նորա բախտիցն էր: Մարմնի տկարութիւնը ազատեց նորան գինեմոլութիւնից: Գրականական պարապունքների համար այլ ևս սիրո չէր մնացել, ճիշտ է, փորձում էր գրել յանգեր էր շինում, վէսկերի և զրամաների ծրագիրներ էր կազմում, բայց շնորհիւ ոգեսորութեան բայցակայութեան, ամեն ինչ դուրս էր գալիս բանազրօսիկ, շինծու, անկենդանն Մէկը շաւարտած սկսում էր միւսը, և բոլորը կիսատ էր մնում:

Նա կամենում էր ուժով վերադարձնել այն, ինչ որ կեանքը անդառնալի կերպով յափշակել էր նորանից: Նորա մէջ ապրում էր անցած երազների, մարած սիրոյ և ոգեսորութեան կարօտը, և նոցա մասին նա մտածում էր այնպիսի վշտով, ինչպէս մերժած հրեշտակը իւր նախկին երանութեան մասին:

Նա սկսեց մտածել, որ գուցէ վեռ ուշ է, և կարելի է սթափ-էլ նոր կեանքի համար:

Նա ձգեց իւր պաշտօնը և զնաց Բաքու, որը այդ ժամանակ օրի վրայ աճում, հարստանում էր և, ինչպէս մի վիթիարի

մագնիս, դէպի ինքն էր քարշում Կովկասի բոլոր ծայրերից ամեն գասակարգի, սեռի և հասակի մարդկանց։ Սկզբումը նա նպատակ էր դրել իւր համար գտնել մի բարերար, որը համաձայնէր ուղարկել նորան Ռուսաստան կամ արտասահման բարձրագոյն ուսում ստանալու Եղաւ հարուստներից մէկի, միւսի մօտ Բայց մէկը մերժեց, որովհետև Ոսկերչեանի դէմքը դուր չեկաւ, իսկ միւսը, որովհետև ազատ տեղերը արդէն բռնւած են։ Դա նշանակում էր, որ, եթէ մի հատ աւելի լինի թոշակաւոր ուսանողների թիւը, նա կը քանդւի։

Մերժում ստանալուց յետոց, Ոսկերչեանը սաստիկ ամօթահար, թէև ինքն էլ չէր հասկանում, թէ ինչ մի ամաչելու բան կայ իւր խնդիրքի մէջ, շուապում էր անհետանալ այն հոյակապ դահլիճներից, որոնց փարթամ կահաւորութեան գնի մի տասերորդ մասով տասը Ոսկերչեան կարող էր բարձրագոյն ուսում ստանալ... Երբ նա դուրս էր գալիս փողոց, ինքն իրան ժամում էր և քթի տակից արտասահմում։

— Ես գիտէի, որ այսպէս էլ կը լինի։

Այնուհետև նա սկսեց մի որևէ «համապատասխան գործ» փընտուել։ Գիմեց ծանօթների, զիմեց և այնպիսի անձանց, որոնք ծանօթների ծանօթներն էին։ Ամենքը ասում էին։

— Եթէ պատահի, ուրախութեամբ։

Հետեւեալ օրը կամ մինչև անգամ հէնց միենոյն օրը ամենքը մոռանում էին իրանց տած խոստումը (այս քաղաքում ամենքի գլուխը խառն է) և բնաւ մտքներովն էլ չէին անցկացնում։ որ Պարապետի վրաց շլնքը կուացրած, պատառուտած շորով, քաղցած փորով շրջում է մի երիտասարդ, որի աղքատիկ զգեստի տակ հազարդիւտ-մաքուր սիրո է բարխում։ որը աւելի լաւ վիճուկի է արժանի, որը «մի գործ» է փնտում։

Իսկ երբ Ոսկերչեանը կրկին զիմում էր, նորան պատասխանում էին։

— Զի պատահել։ Ապա թէ ոչ, ուրախութեամբ։

Կամ։

— Մի երկու օր առաջ մեր գրասենեակում տեղ էր բացւել, բայց ձեր հասցէն մոռացել էի, ստիպւած էինք ուրիշ մարդ վարձել։

Զնայած այս բոլորին, Ոսկերչեանը այնուամենացնիւ մի տեղ գտաւ: Թէև ուշ, բայց գտաւ:

Նախթային ծուխ ու միի, վիշկաների ու անտառումն էր այդ տեղը: Առանց դէս ու դէն լնկնելու, նա աճապարեց կալա- բանը և առաջիկաց դնացքով խենթի պէս թռաւ. դէպի Բալախանաւ:

—Ահա պօցէզիացի խական աշխարհը! հեգնօրէն արտասանեց նա, երբ գնացքը մօտենում էր կացարանին:

Ոսկերչեանին տւին մի ընդարձակ սենեակ ներքին յարկում:

Մի գրասեղան, մի քանի ամֆոռ, մահճակալ—ահա նորա կա- ցարանի բոլոր կահ-կարասիքը: Առօճիկը քառասուն մանէթ էր: Նո- րա գլխաւոր գործն էր—վարել հում նաւթի ելումուտի հաջիւրք Պաշտօնը նորա սրտովը չէր: Թւեր, թւեր և շարունակ թւեր. ինչ կարող էր լինել աւելի տաղաւոլի մի մարդու համար, որ բոլորովին ուրիշ ասպարէզ էր երազում?...

Բայց և այնպէս նա ցանկանում էր մոռանալ իւր անցեալը և նմանւել ուրիներին, որոնք կլանւել են տենդացին աշխատանքով: Աշխատում էր լնոտելանալ իւր նոր կենցաղին և իւր պաշտօնից գուրս ուրիշ ոչնչով չզբաղեցնել միտքը: Մի անդամ ընդ միշտ նա շեղւել էր ձանապարհից, թռող ուրեմն գնայ ացն շաւզով, որով նորան տանում էր ձակասագիրը: Դա, անտարակոյս, մի բռնու- թիւն էր, որ յուսահատուածը կամենում էր կատարել իւր հոգեկան ձգումների վրայ, բայց մի բռնութիւն, որին չպիտի կարողանացին զիմանալ նորա խախտած առողջութիւնը և թուլացած ջղերը:

Արհեստանոցներում մեքենաների դզրդոցը և գեհեն-հնոցների դրնդիւնը, սեւցած փայտեաց բուրգերի վրայ անիւների ճլլոցը, որ չէ գաղարում ոչ գիշեր, ոչ ցերեկ, հսկայ շնչառութիւնը իտղո- վակների, որոնք թքում են անցորդների երեսին և երկնքի վրայ, օդի մէջ լցւած ծուխը, մուրը և նախթային հոտը, որոնցով ծծւում են մարդկանց թոքերը, ոտի տակ և ամենուրեք թափթթվ- ած նախթային կեղուր, գարշելի տիզմը և գեղնազոյն փրփուրը— ահա երկրի ացն սարասփելի անկիւնը, ուր ձգեց Ոսկերչեանին կեանքի ալիքը:

Նա վճռել էր տոկալ և համբերել, թէկուզ մահը հէնց այն- տեղ վրայ հասնէր:

Բայց մի ձմելային գիշեր, երբ կասպեան ծովը մրմռում էր ափերի մօտ, և հիւսիսային քամին (Նորդը) իւր գառը շնչով մարդու մարմին էր ճաքեցնում, Ասկերշեանը, մինչ որ կայարանից իւր աենեակը կ'հասնէր, սասաիկ մրսեց, ստացաւ թռքերի բորբոքում և երկար ժամանակ ծառացում էր անկողնին:

Նորա կեանքը մազից էր կախւած, բայց և այնպէս վտանգն անցաւ: Երբ դուրս եկաւ հիւանդանոցից, նա այլ ևս ոչ ոյժ, ոչ ցանկութիւն ունէր իւր նախին պաշտօնը շարունակելու: Աննպատակ և անդործ նա սկսեց թափառել փողոցներում և, աւելի յաճախ, շրջել ծովափին, որտեղ ալիքների չափածոյ ծողփիւնը օրորում էր նորա մոռածմունքը...

Նա տեսնում էր, որ իսկապէս ցոգնած է, ջախջախւած է և հանգստանալ է ուզում: Բայց ուրիշ տեսակի հանգստութիւն էր նորա ցանկացած հանգիստը: Նա փափակում էր մի տարի, գոնէ մի հաստ ամառ, ապրել քաղաքային աղմուկից հեռու, իւր ծննդավայրում: Հայրենական տան յարկի տակ, այնաեղ, ուր նա այնքան երջանիկ օրեր էր տեսել: Այս, վերածնել կարելի էր միայն այնակ, գիւղական անդորրութեան մէջ, մացը բնութեան ծոցումը, որտեղ անմահական ջուրը, օդը, ստերաշատ ազդիները և թաւիշիոտը կեանք են խոստանում, կեանքի են կոչում:

Բայց աւաղ. գա մի ցնորք էր: Նորա հայրենական տան հետքն էլ չէր մնում և նորա աեղը հպարտ բարձրացել էր այժմ իւր քարի դրացու և երկարկեաց շինութիւնը երկյարկեաց սպիտակ սպատգամբով: Այնաեղ նա գլուխը թեքելու անկիւն չըւնէր: Նոյն իսկ ծնողների գերեզմանները ինչ գլութեան միջ կը լինէին այժմ? Առանց տապանաքարի, անձրեկից և ձիւնից մաշւած, հողի հետ հաւասարւած...

Նորա սիրու փուլ էր գալիս, երբ մոածում էր, և իւր երեսը սառը պատին կողցնելով, արտասուքի միջից մրմնջում էր.

— Հայրիկ ջան!... Մայրիկ ջան!...

Վերջին ամրող տարին նա պարապ էր, ոտի վրաց հիւանդ, հոգեպէս և ֆիզիկապէս ջարդ ու փշուր եղած: Նա կատարելապէս գիտակցում էր իւր անակնքութիւնը: Նա բոլորովին դրկւած էր կամքից: Այլ ևս ոչինչ նորան չէր հետաքրքրում: Նա անտարբեր էր

դարձել դէպի կեանքը և դէպի մահը Նա նման էր մի նաւի, որի առագաստները պատառուել էին փոթորիկների ժամանակ, կայմերը կոտրատւել և ընկել և ալիքների խաղալիք դարձած՝ տարուբերում էր այս և այն կողմ, առանց մի որոշ ուղղութեան, առանց մի նպատակի: Նա մինչև անգամ չէր կարող ասել, թէ ինչու եկաւ Թիֆլիս: Գուցէ դա մի բնազդական դրդում էր, որ մղեց նորան դէպի Կովկասի մտաւոր կենդրոնը: Զէ որ նա ծնւած էր մտաւոր աշխատանքի համար?

Պատմութեան վերջումը Զառիկեանը չէր լսում Արտաշէսին նա տարւած էր մոքերով, և աւելի մռայլ լրջութիւն չէր կարող արտայայտել նորա դէքը: Նորա աչքի առջեւ երևում էր թշւառների մի բազմութիւն, որտեղ իւրաքանչիւրը, իսկ և իսկ նման Ոսկերչեանին, կոծում է բախտաւոր մարդկանց առաջ և իւր անօգուտ թաղած ոյժերի և խորտակւած յոյժերի պատմութիւնը անում: Ոսկերչեանը նորան թւում էր, իրբե մեկը այն հազարաւոր բեկորներից, որոնք ցատկառում են այս ու այն կողմ, ինչպէս շիկնած երկաթի կառորտանքը կանի տակին, մի կործանիչ և սոսկալի ոյժի հարւածներից:

Գարեգինը այն աստիճան խորասուգւած էր մտածմունքի մէջ, որ նա մացրիկին չլսեց, երբ սա եկաւ ճաշի կանչելու, այնպէս որ վերջինս երկրորդ անգամ և բարձր ձայնով կրկնեց:

— Գարեգին, եկէք ճաշ անենք:

Ճաշը լուս անցաւ: Գարեգինը լսածների տպաւորութեան տակ էր: Մարիամը երեխաներին էր նացում: Մացրիկը յանախ վեր էր կենում սեղանից: Երւանդը, որ այժմ երրորդ դասարանի գիմնազիստ էր և շնորհքով նկարում էր, իւր մտախոհ աչքերով շարունակ ամաչկոտ հիւրին էր նացում: Սորա դիտողութիւնից նրի պեց այն, թէ ինչպէս էր գողում նորա ձեռքին գինու բաժակը, երբ խմում էին նորա կենացը, և նա վեր էր կացել շնորհակալութիւն յացանելու:

Զարմանալի բան: Ոչ ճաշից առաջ և ոչ յետոց Ոսկերչեանը շկանչեց իւր մօտ սիրուն մանուկներից մէկնումէկին՝ կատակ անելու հետը և գլուխը փայտայելու: Միթէ նորա սրտի մէջ մի փոքրիկ անկիւն չէր մնացել նոյն իսկ մանկական սիրոց համար? Կամ

գուցէ նա չեր համարձակում իւր ծեռքը գնել այն յատակ մազերի վրայ? Բայց աւելի զարմանալին այն է, որ նա մի անդամ էլ է Հարցրեց.

— Ինչպէս է Աշխէնի առողջութիւնը և որտեղ է այժմ?

V

Գարեգինի դրդմամբ, Ոսկերչեանը փոխեց իւր կացարանը, և նոր վարձած սենեակը բաւական տանելի էր: Զառիկեանը նորա համար շուտով մի ժամանակաւոր պարապմունք էլ գտաւ: «Թօքը և գործիս աշխատակիցներից մէկը, որ լսել էր մժշւառ երիտասարդին մասին և մօտ ծանօթ էր Գարեգինի հետ, սորա միջոցով յանձնեց Ոսկերչեանին արտագրելու իւր մի ընդարձակ շարադրութիւնը, որ պատրաստում էր տպագրութեան համար, և խոստացաւ թերթին 20 կոպէկ վարձատրութիւն, թուղթը, թանաքը, գրիչն էլ իւր կողմից:

Առաջին օրը, գլխացաւի և մարմնի ընդհանուր թուլութեան պատճառով, նա մի հատ տող էլ չգրեց: Հետևեալ օրը միայն նա նստեց սեղանի մօտ և կտաւ գործի: Սկզբում ձեռքը դոզում էր, թանաքը էր կաթում, և մինչև որ կը պարժաւէր, երեք թերթ փացրեց: Իսկ երբ վրայ ընկաւ, երկու ժամ, առանց դադար առնելու, արտագրում էր: Բանը հասաւ այնուեղ, որ նա այնքան յոդնեց, որ ձեռքը թուլացաւ, գրիչը վայր ընկաւ, և թանաքը ապականեց մաքուր և խնամքով արտագրած թերթը: Մէջքը, կրացած պահելուց, սաստիկ ցաւում էր, և, երբ կամեցաւ ուղիղ նստել, նորան թւաց, թէ ողնաշարը մէջ տեղից կորուել է:

Դորանից յետոց մի ամերող ժամ պառկած մնաց մահճակալի վրայ: (Անկողինը ուղարկել էին Զառիկեանները):

Հանգստացաւ և կրիին սկսեց Սկզիթի աշխատանքը: Այս անգամ բարկութիւնն էր շարժում նորա ձեռքը, և նա կը դով արտասանում էր:

— Դու ինձ չես կամենում հպատակւել՞... Հպատակւիր:

Աւ դժւար է ասել, թէ ինչ առարկայի էին ուղղւած այս խօսքերը:

Այսպէս երկար ժամանակ նա արտագրում էր: Յետոց նա սկսեց

իրան վաս դգալ: Գրիչը մի կողմ դրեց և, շնչարգել եղածի պէս, ձեռքը կրծքին՝ ոյժ էր դործ զնում շունչ քաշել: Սիրտը ուզում էր խառնել: Ականջների մէջ անախորժ սուլոց սկսեց: Աչքերը սւացան: Գլուխը պտոյս եկաւ, և այն բոպէին, երբ նա երերւելով քայլում էր դէպի անկողնակալը, վայր ընկաւ ուշաթափ և երիւն. իվեր տարածւեց յառակի վրայ:

Նորա բախտիցը, լաւ ժամանակին հասաւ Սադաթեանը, որ արդէն իմացել էր նորա տեղը և եկել էր նոր կացարանը տեսնելու: — Վահ! Գոչեց նա սարսափած և, մի քայլ ետ գնալով, տեղումը քարացաւ:

Նորան թւաց, որ իւր առջև ընկած է մի անշնչացած դիակ, և մտածեց, թէ յուսահառւած երիտասարդը անձնասպանութիւն է գործել: Բայց սորտ մօտ առրճանակ չկար, և սեղանի վրայ եղած առարկաները ցոյց էին տալիս, որ նա մի քիչ առաջ գրաւոր աշխատանքով է եղել զբաղւած: Ազցելուն սրտապնդւեց և առաջ եկաւ: Կուացած նայեց ուշիւշով—Արտաշէսի կուրծքը հազիւ նկատելի կերպով բարձր ու ցած էր լինում: Այն ժամանակ նա գլխի ընկաւ որ «խեղճը» ուշաթափւել է: Սկսեց նորան թափահարել, ջուր սրկեց երևին և ճակատին, և անհանգիստ ձայնով գոյում էր.

— Արտաշէս!... Ար-տան-շէս!...

Հեշտ է երևակայել Սադաթեանի ուրախութիւնը, երբ սա նկատեց, որ նորա աչքերի կոսկերի տակ բիբերը շարժւեցին, և ուշաթափւածը կամաց կամաց ուշքի է գալիս: Սորա օգնութեամբ, Ասկերչեանը վեր կացաւ և, որովհետեւ շատ թոյլ էր, սրտոկեց անկողնում:

Տեղեկանալով գործի հանգամանքներին, բարի այցելուն նկատեց: — Ես խորհուրդ կըտամ առայժմ չծանրացնէք ձեզ և ոչ մի աշխատանքով:

— Հասկա ում աշխատանքով պահպանեմ՝ այս անպէտք գոյութիւնսի գոչեց հիւանդը սրտնեղութեամբ և ձեռքը ճակատին տալով: — Փողի մասին մենք կըհոգանք, մինչեւ որ դուք փոքր ինչ կըկազդուրէք:

Սադաթեանը առաջ էլ մտածել էր Ասկերչեանի համար ժո-

զովարարութիւն անելու մասին, բայց միայն այժմ՝ հաստատապէս վճռեց, առանց այլ և այլի, ձեռնամուխ լինել գործին:

Այսօրւաց դէսքը նա հանգամանօրէն պատմեց Զառիկեանին, որը, ինչ ասել կ'ուզէ, մեծ անհանգստութիւն կրեց, քանի որ ինքն էր աշխատանք յանձնել Ոսկերչեանին և թոյլ էր տոել մի անհեռատեսութիւն հիւանդ մարդու վերաբերմամբ։ Ոխալլ սկզբ էր ուղղել, և նա շատապեց Արտաշէսի մօռ։ Բայց ո'րքան մեծ եղաւ նորա զարմանքը և բարկութիւնը, երբ տեսու գերջինիս սեղանի մօռ նսոած, զրիչը ձեռին, արտագրութեան թերթի վրաց կուտցած։

— Դու զեռ գրում ես, Արտաշէս? զոչեց նա պրան շէմքից և, մօռենալով, ձեռքը գրեց թղթի վրաց ու շարունակեց։

— Բաւական է, զագարիր! Այսօրւաց ուշաթափութիւնից յետոց դեռ խելքի չես եկել? Դու քեզ սպանել ես ուղում?...

— Ես քիչ քիչ կ'արտագրեմ...

— Եւ ո՛չ մի տող! Ամենից առաջ զու սկզբ է բժշկւես։

Գարեգինը խոստացաւ գնալ նորա հետ ծանօթ բժշկի մօռ, նշանակեց մինչև անգամ օրը և ժամը և, երբ ուղում՝ էր հեռանալ, յիշեց ձեռագրի մասին և ասաց։

— Իսկ այս ես կըվերազարձնեմ տիրոջը։

Հստ իւր խոստման, որոշած ժամանակին Զառիկեանը վերցրեց «հիւանդ մարդուն» և տարաւ բժշկի մօռ։ Սա մի քսան և ուժտարեկան երիտասարդ էր, որ աւարտել էր համալսարանը երեք տարի առաջ, առաջին յաջողութիւնն երից յետոյ անուն էր հանել քաղաքում և այսպիսով զարձել էր անօժիտ և մանաւանդ օժիտաւոր հարսնացուների համար ցանկալի փեսացու։

Երբ Գարեգինը և Արտաշէսը մտան նորա բնակարանը, որը մի շիկ կահաւորութիւն ունէր, վերջինս այնքան փոքրիկ և չնչին զգաց իրան, այնպէս կուչ եկաւ, որ կարծես ուրախ կըլինէր, և թէ այդ բոսէին ցնդէր և անհետանար օդի մէջ։

Իժիշկը ընդունեց իւր կարինէտում՝ նստած en face դէպի այցելուները։

Բանից երևաց, որ նա Ոսկերչեանին ճանաչում է գեռ։ Ես գիմնազիոնից, երէկ նորան տեսել է փաղոցում և «մի քանի բաներ» է լսել նորա մասին։

Նա քննեց հիւանդին, բաղխեց նորա կուրծքը, լսեց մինչեւ անգամ մէջքի կողմից, հարցեր տւեց, յետոյ վառեց սիզարը, մտածո՞ն դիրք ընդունեց և բոլէական լոռութիւնից յետոյ ասաց.

— Զեզ բժիշկ կարելի է, միայն մի պաշմանով:

Ացելուները խորին լոռութեամբ սպասում էին, թէ ինչ պայմանի մասին է խօսքը:

— Դուք պիտի թողնէք ձեր վատ սովորութիւնը, — շարունակեց բժիշկը, դիմելով հիւանդին:

— Այսինքն? զարմացած հարցրեց Գարեգինը, մտածելով, թէ մի նոր բան պիտի իմանայ:

— Դուք պիտի թողնէք խմելը:

— Ինչպէս? բացականչեց Զառիկեանը: Արտաշէս, դու ուրեմն...

— Սարսափելի ալկոհոլիկ է, — կամացուկ նկատեց բժիշկը, նայելով Զառիկեանին: Ինձ ասել էին, որ սա խմում է, և ես այժմ համոզւեցի: Ուզեղը ամբողջապէս ծծւած է ալկոհոլի թոցնով: Սորա վերջը կըլինի խելագարութիւն կամ...

— Բայց, պարո՞ն բժիշկ, որքան ինձ յացնի է, սա գործ չէ ածում ոգելից լուղբելիք...

— Ո՞չ, դուք չգիտէք: Նոյն իսկ երէկ սորան տեսայ փողոցումը, ոտի վրայ հազիւ էր կանգնում:

— Երէկ?... Որ ժամին? Մօտաւորապէս?

— Ինչպէս ասեմ? կըլինէր մէկը:

— Ասում էք, հարբած էր?

— Ման գալ չէր կարողանում, տմբումբում էր: Վասս եկաւ, երբ տեսայ: «Խեղճ մարդ, մտածեցի ինքս ինձ. Ի՞նչ օրի է հասել. չգիտէ, որ ինքն իրան կամաց կամաց թունաւորում է»:

Զառիկեանին թւում էր, որ բժիշկը սխալում է, և յայտնեց իւր առանձին կարծիքը:

— Ոչ, ոչ, — ձեռքով արաւ վերջինը, — դուք նեղը գցեցէք, նա կըխոստովանի:

Ասկերչեանը չէր աշխատում լսել այս խօսակցութիւնը: Զաշխատեց մինչև անգամ արդարանալ:

— Ես չեմ խմում, — ասաց նա և լռեց:

Իսկ բժիշկը դիւրահաւառներից չէր:

— Դուք ուրեմն կըթողնէք? Այո՞ Խօսք էք տալիս? Հակառակ դէպօւմ, ևս կըհրաժարւեմ ձեզ բժշկելուց, իմացէք:

— Ես չեմ խմում, — կրկնեց հիւանդը անհամբերութեամբ և այնպիսի եղանակով, որ բժիշկը վիրաւորական համարեց:

— Ես ուրեմն ձեզ չեմ կարող բժշկել, — եղբափակեց նա և սկսեց մատներով թմբկահարել սեղանը:

Զառիկեանը վեր կացաւ, ներողութիւն խնդրեց և գուրս եկաւ: Նորան հետևեց Ռակերչեանը, առանց ներողութիւն խնդրելու: Ճանապարհին Գարեգինը ազնիւ խօսքով երդեցըրեց նորան, որ խոստովանւի, խմում է թէ ոչ: Նա պատասխանեց, որ չէ խմում:

Գարեգինը կատարելապէս հաւատաց նորա խօսքին, որովհետեւ նա նոյն իւր անկման մէջ պահպանել էր ազնւութիւն, որը, տարիներ առաջ, նորա բնաւորութեան ամենալուսաւոր կէտն էր կազմում: Այդ հոգեկան գանձը նորա մէջ մնացել էր անարատ, այն ինչ նա կորցրել էր բոլորը, ինչ ուներ:

Հարկաւոր էր նորան ցոյց տալ մի ուրիշ բժշկի: Զառիկեանը մտածեց և կանգ առաւ այնպիսի մէկի վրայ, որը յացտնի էր իւր փորձառութեամբ, թեթև ձեռք ուներ և անշահանք էր: Երբ նա իւր հիւանդի հետ գնացին բժշկի մօտ, վերջինս սիրալիր ընդունելութիւն ցոյց տւեց երկուսին, փակեց իւր առանձնասենեակի դուռը և խնդրեց նատել: Յետոց նա սկսեց մանրամասն հարց ու փորձը, ծանօթացաւ հիւանդի անցկացրած կեանքին, լու քննեց և, ըստ երևութին, եկաւ տիսուր եղբակացութեան: Լուս նայում էր Ռակերչեանին, որը կծկւածի պէս անշարժացել էր իւր տեղումը, և նորա դէմքը այդ ժամանակ արտայացտում էր կարեկցութիւն: Իւր եղբակացութիւնները նա խորհրդաբար յաշանեց Զառիկեանին:

— Դուք տեսած կըլինիք, — ասաց նա, — մի այնպիսի բարդ մեքենա, որը ամբողջապէս խանգարւած լինի՝ սկսած ամենամեծ անիւց մինչև ամենամանը ճախարակները: Իսկ և իսկ մի այդպիսի դրութեան մէջ է և այս թշւառ մարդու կազմւածքը: Կատարեալ նէւրասթենիա իւր բոլոր հետեանքներով: Մի կողմից՝ ուղեղի չորացում, միացած բութ գլխացաւի հետ, յետոց սրտի թրթռոց, շնչարգելութիւն և թոքախտի նշաններ. միւս կողմից՝ ամնէզիա միացած բառամուսացման հետ, լսողութեան և տեսողութեան պատ-

րանք, կամքի բաղակացութիւն և ապաթիա։ Սորա կեանքը հիւքից փորվորւած է։

— Աւրեմն ինչ խորհուրդ կլամք անել, պարո՞ն բժիշկ? հարց-րեց Գարեգինը։

Բժիշկը տասց բոլորը, ինչ որ հարկաւոր էր ասել, զեղատոմ՝ սերը զրեց և յայտնեց իւր պատրաստականութիւնը ամեն կերպ օդնել թշւառին։

VI

Քնած չեր և Սագաթեանը։ Դրդւած ջերմ համակրութեամբ զեպի ընկած մարզը և վերջինիս ոտի կանգնեցնելու վափագով լց ած, ևս անդով աշխատում էր նորա համար։ Առաջ նա փորձեց մի թատրոնական ներկայացում կազմակերպել նորա օգտին, բայց, տեսնելով, որ այդ չէ յաջողւում, քանի որ Ասկերչեանի նախկին արւեստակից ընկերները ուրանալով ուրացան նորան, վճռեց հանգանակութիւն բանալ։

Պատրաստեց ասորագրութեան թերթը, որի ճակատին գրւած էր մարդասիրական մի կոչ, և գնաց ամենից առաջ իւր նախկին ուսուցիչներից մէկի մօտ։ Սա համալստրանաւարտ էր, մի չոր ու ցամաք բնաւորութիւն, որը երեք տարւաց մէջ հասարակական գործերից յոզնել էր, կորցրել էր ամեն մի հարցասիրութիւն, և նորան այլ ևս ոչինչ չեր հետաքրլ բում շրջապատղ կեանքի մէջ, որովհետեւ այդ կեանքի մէջ ամեն բան ձանձրալի է, մանրացած է։ միակ բանը, որ քիչ թէ շատ կարողանում էր նորա հետաքրլ բութիւնը շարժել, նոյն իսկ ժամկիտ յարուցանել դէմքին, դա քաղաքական կեանքի նորութիւններն էին, որոնց նա հետևում էր գլխաւորաբար լրագրական հեռագիրների միջոցով։ Այդպիսի խնդիրների մասին նորա հետ կարելի էր մինչև անդամ տաք-տաք վիճել։ Դորանից զուրս, նա ոչ միայն տարէցարի, այլ և օրէցօր ետ էր մնում իւր ժամանակից։ Կեանքը իւր քայլով առաջ էր գնում։ Գիտութիւնը ծաղկում էր։ Գրականական նորիզոնի վրայ մինը միւսի ետևից երեսում էին նորանոր աստղեր։ Նա ճանաչել չեր ու զում և ոչ մէկին։ Նա թքել է ամեն բանի վրայ։ Նա գոհ էր իւր գիտցածով։

Քայց պահմանավագածքներ, իրը լաւ դասաւու։ Սաղաթեանը վեցաբերում էր նորան ամենացն յարդանքով, բայց չզիտէր, թէ, իրեւ մարդ, որպիսի անձնաւորութիւն է։ Նորան յայտնի էր, որ սա Ասկերչեանի նախկին դասընկերներից մէկն է։ Հասկանալի է, թէ ինչպիսի վստահութեամբ և ինչ յօյսերով ներկայացաւ նա իւր ուսուցին։

Մի քանի խօսքով բացառրեց իւր ացցելութեան նպատակը և սոորագրութեան թերթը դրեց նորա առջև։

Ի պատասխան այս առաջարկութեան, սլարոնը ժպտալով ասաց։

—Գիտես, ինչ կայ, սիրելիս (նա շարունակում էր գունզ խօսել իւր նախկին աշակերտի հետ)։ Դու, երեսում է, բարի սիրտ ունիս և կամենում ես բարի գործ կատարել։ Բայց դեռ անփորձ ես ներկայ դէպքում բարութիւնը բանի տեղ չի անցնիլ։ Այդ մորդուն, որի մասին գու յափշտակած խօսում էիր, ես լաւ ճանածում եմ։ Դա իմ դասընկերս է եղել, ընդունակ էր, ազնիւ էր, բայց իրան չկարօգացաւ պահել և փնտաւ։ Առաջին անյաջողութիւնից յուսահատուել է, երկրորդ անյաջողութիւնը նորան ձգել է զինետուն, և այժմ իմ աշքին դա նոյնքան է արժանի կարեկցութեան, որքան եալն արբեցողը, որը քնում է փողոցներում իւր թափած փախուկի վրայ... Խօսողը իւր բերանը ազնպէս ծռեց, որ կարծես նողկանքից սիրալ պիտի խառնէր։

Սաղաթեանը կամեցաւ խօսել յօդուազ զրալարտած և անարկած մարդուն, բայց նա մի այնպիսի սպանիչ հեգնութեամբ սկսեց լսել, որ ջանէլ երիտասարդը շփոխւեց և, խօսքը փախելով, ասաց։

Սակայն դուք զիտէք։ Ես չեմ սովորում։ Կըներէք, որ ձեզ անհմանդսութիւն պատճառեցի։

Մնում էր միայն գլխարկը վերցնել և հեռանալ։

Սաղաթեանը գնաց մի ալլ պարզնի մօս, որի աշակերտը նոյնուկս եղած էր։ Նա ընդունեց սիրով, բաղցը ժպտաց, հարցրեց առողջութիւնը։ Թիտէր, որ գրում է Շխօսք և Գործ պարբերական հրատարակութեան մէջ, և հարցրեց, թէ ինչ նոր բան ունի դրած։ Յետոյ խորհուրդ տւեց, որ դասական հեղինակութիւններ շատ կարգայ, դրական ճաշակը զարգացնի։

— Իսկ ձեր ուսումը պիտի շարունակեք թէ ոչ? ցանկացաւ իմանալ նախկին ուսուցիչը:

— Անպատճառ, — ամառախանեց Սադաթեանը և, առանց հերթ տալու, որ նա կրկին սկսի շառախօսել, ցոյց տւեց ստորագրութեան թերթը:

— Այդ ի՞նչ թուղթ է?

— Փող եմ հաւաքում:

— Ում համար?

Ուսուցիչը կարդաց ստորագրութեան թերթի վրայ գրածը և ասաց:

— Իայց ես ձեզ պէտք է ասեմ, որ ինքս անձամբ դէմ եմ այդ ձեի օգնութեան... Ես սկզբունքով դէմ եմ...

— Ինչպէս? Ուրեմն հաց չտալ մէկին, երբ նա քաղցած է և միջոց չունի? Շոր չտալ, երբ մերկ է? Զբժշկել, երբ հիւանդ է?...

— Ո՞չ, ո՞չ, զուք ինձ լաւ չհասկացաք: Ես հակառակ եմ այդպիսի մանր նւիրատութիւնների: Առաջիկանոց օգնութիւնը վէրքին դարձն չի անիլ: Խոշոր օգնութիւն է պէտք: Եթէ ես միշտոց ունենալի, ես չեմ խնայիլ ոչինչ:

Սադաթեանը կարծեց, որ այս խօսքերը ուրիշ բան չեն, եթէ ոչ քաղաքավարի «հրաժարիմք», և կամենցաւ վեր կենալ գնալ: Իայց ուսուցիչը նոյն այդ բուպէին շարունակեց:

— Իայց այդ երիտասարդը ինքը չէ կամենում աշխատել?

— Այժմ նա անընդունակ է աշխատելու:

— Անընդունակ? Անդամալոյն է?

— Ոչ, անդամալոյն չէ, — պատասխանեց աշակերտը, պահպանելով իւր նախկին ուսուցչի կիսահեգնական եղանակը, — կան անդամալոյներ, որոնք առողջներից աւելի շատ գործ են կատարում: Իայց Ակերչեանը անդամալոյնից աւելի վատթար է:

Սադաթեանը ձեռք տւեց, որ գնայ Իայց ուսուցիչը թօթւեց նորա ձեռքը և ասաց:

— Սպասեցէք, սպասեցէք: Ես միքիչ կարող եմ տալ:

— Որքան ձեր սիրտը կլտայ:

— Երեք սուրբին:

— Շնորհակալ եմ:

—Ազգանունս հարկաւոր չէ: Դրեցէք մի պարոնից...

Երբ այցելուն ուզում էր հեռանալ, լսեց իւր ետևից հետեւալ խօսքերը.

—Ես տւի, որովհետև ձեզ չկամեցայ մերժել: Բայց ես դարձեալ կրկնում եմ, որ այդպիսի ժողովարարութիւնով նպատակի չէք հասնիլ: Այն օգնութիւնն է միայն իսկական օգնութիւն, որ հստատուն հիմքի վրայ է դրւած:

Խօսքի և գործի այս փառաւոր հակասութիւնը զարմացրեց շահէլ երիտասարդին, բայց այդ մասին սա երկար չմտածեց: Նա ուրախ էր, որ հանգանակութեան սկիզբը դրւեց, և, երբ դուրս եկաւ փողոց, ինքն իրան ասաց.

—Ուրեմն արդէն երեք ուռբլի կայ:

Եռանդով աշխատեց Սադաթեանը, և մի շաբաթից յետոյ նորա ձեռքին եղած գումարը հաօնում էր մօտ երեսնի:

Ասկերչեանին ոչինչ յացնի չէր այս ժողովարարութեան մասին: Երբ Սադաթեանը յանձնեց նորան գումարը, նա դժգոհութեամբ ասաց.

—Ով էր խնդրել ձեզնից?

Երիտասարդը նկատեց, որ, եթէ չընդունի, ինքը սաստիկ վիրաւորւած կրզզայ իրան:

Արտաշէսը աչքի անցրեց ստորագրողների անունները: Արհամարոտ հեգնութիւն երևաց դէմքին. մատիտ խնդրեց, սկսեց ջընջուտել «ասելի» անունները և վերջումը աւելացրեց.

—Երբ ինձ տեսնում են փողոցում, երեսները դարձնում են ինձնից: Արանց օգնութեան ես կարօտ չեմ:

Այս խօսքերը վերաբերում էին այնպիսի անձանց, որոնց մօտ ծանօթը և լնկերը եղած էր նա տարիներ առաջ ուսումնարանում, բեմի վրայ, գրական ասպարիզի վրայ և առօրեայ կեանքում:

Սեփական արժանապատռութեան այս հպարտ զգացմունքը, որ գեռ կենդանի էր մնացել ջախջախւած մարդու հոգում, հիացրեց Սադաթեանին, և սորա աչքում Ասկերչեանը մի աստիճան բարձրացաւ:

VII

Վերջին օրերը Զասիկեանի գլուխը խստն էր, և ոչ մի կերպ չկր յաջողւում Արտաշէսին տեսնել: Նա զբաղւած էր դպրոցական քննութիւններով, թէ իր ընթերակոյ թէ իր հարցաքննող, և այն ոչ միայն ցերեկները, այլ և երեկոները մինչև ժամը 11-ը, դեռ աշելի:

Բայց ահա հազիր աշք բաց արեց մանկավարժական պարագ-մունքներից, սմարտնոց գնալու հոգսերը վրայ հասան, քոյքը եկա-Քաքւից՝ հօրանց հետ միասին ամսութ անց կացնելու:

Աշխէնը, ինչպէս յիշում է լնիթերցոցը, ամուսնանալուց յետոյ, մուգիր էր շարունակել իւր վարժուհութիւնը և երբէք չժողնել մանկավարժական սիրած սասպարէզը: Նա իւր իզձը կատարեց: Բայց ուսումնական տարւայ վերջը նորա պատկելու ժամանակին էր —անախո՛րժ գուգագիմութիւն: Ազատւեց, և այն սէրը, որ նա տածում էր գէպի մանուկները, վերափախւեց մի մազրական սիրոյ. նորա բոլոր գորովը կենարոնացաւ մի թզաշափ, ճշուն, քաղցր էակի վրայ, որպիսին էր նորա անդրանիկը:

Աշխուհեան —զարմանալի բան —նորա մէջ եղած սէրը գէպի մանկավարժական պարապմոնքը մինոցնն է թէ կացինով կարէին: Խնդին էլ չիմացաւ, թէ ինչպէս սասեց գէպի գորոցը: Սուանց վա-րանելու նա ձգեց ուսումնարանը, երեխ, ետ չմնալու համար այն պաշտօնակիցներից, որոնք, մայր դառնալուց յետոյ, ձգում էին ամենը, ինչի կպած էին իրանց կանացի բոլոր ոյժերով, և ոստրէի պէս խօրասուզւում ընսամնեկան հօգսերի մէջ:

Գալով ամուսնական կեանքին, պէսք է ասել, որ նորա և ամուսնու յարաբերութիւնները գնալով լարւում և լարւում էին: Աշխէնը կարծում էր, որ չէ գտել իւր ակնկալածը: Ազատեանի խօսքի և գործի մէջ նա տեսնում էր մի ամբողջ վիճ: Նա ծացրայեղ էզօյիզմ էր նշմարում նորա իւրաքանչիւր արարքի մէջ, մինչև ան-գամ առօրեայ ամենամանը գէպքերում: Նա ատեց նոցն իսկ այն գաղափարը, որով ամուսինը չժող էր վիշտը մարդկանց աշքին: (Չակերտների մէջ Աշխէնի խօսքերն են):

Ազատեանը իւր կողմից չէր սիրում իւր կնոջ անհաշո և կո-ւարար բնաւորութիւնը:

Ահա աշապիսի պայմանների մէջ սկսւեց վերջինիս մտաւ որ անկման շրջանը։ Սառեց գէպի հասարակական գործերը, կարդում էր սակաւ, թողեց և մանկական գրքերի թարգմանութիւնը։ Երբ բեմն միայն այն էլ ուրիշների գրքմամբ, նա մասնակցութիւն էր ցոյց տալիս բարեգործական ձեռնարկութիւնների մէջ։

Դժւար է ասել, թէ ինչով կըվերջանացին ամուսինների անընդհատ կրիւները, եթէ նախախնամութիւնը նոցա մէջտեղը չդնէր մի հաշտեցնող էակ, յանձին մի սիրուն զաւակի, որի ծնւելուց յետոյ միայն մարդ ու կին իրար սկսեցին հանդուրժել։

Նոյն այս ժամանակ Ազատեանի կեանքում տեղի ունեցաւ մի խոշոր գէպք, որ հիմնովին փոխեց նորա վիճակը։ «Ճառագայթը» դադարեց ընդ միշա, և, որովհետեւ նորա առջև փակ էին միւս խմբագրութիւնների դռները, նա ստիպւած էր թողնել լրագրական ասպարէզը, կամ, ինչպէս ինքն էր ասում, իւր հրապարակախօսական գործունէութիւնը։

Ել զլուխը ցաւեցնել պէտք չէր։ Մի գեղեցիկ օր նա վերցրեց ընտանիքը և ուղիղ՝ դէպի նաւթացին աշխարհը։ Այս, ուղիղ դէպի Բաքու, չնայած, որ «Ճառագայթի» մէջ նա զայրացկուս վիլիուպիկաններ էր յզում այն ինտելիգենտ պարոնների դէմ, որոնք, — Ազատեանի խօսքը բանեցնենք, — ուստի տակ էին տալիս իրանց սուրբ իդէալները և զնում էին ծառացելու Ասկի Հորթին։ Նա ճարպիկ էր և կիանքի դամարը գիտէր. շատ շուտ տեղ գտաւ և արագ բարձրացաւ ոլաշառնի մէջ։ Ինչպէս շատերին, նորան ևս գիշեր ցերեկ հանգիստ չէր տալիս. այն միտքը, թէ ինչպէս անի, որ շատ էժան գնով։ հոգեր առնի և շատ թանկ գնով ծախի, որպէս զի ինքն էլ հարստանայ։ Եւ նա իրօք սպասածից աւելի շուտ կըհարստանար, եթէ կինը այնքան ըլհոգար անմիջապէս տեղ անել ամուսնու աշխատածը, որովհետեւ, թողի հաւատայ իմ ընթերցաղը, Սշխէնը սաստիկ փոխւել էր՝ շատերի իդէալը դարձել էր և նորա իդէալը. իսկ այդ իդէալը ուրիշ բան չէր, եթէ ոչ մի սնոտի, մի անխորհուրդ փարթամութիւն, սկսած բնակարանի կահաւորութիւնից, մինչև իւր հաղի զգեստները, մի անլուր փարթամութիւն, որի նմանը առաջին անգամն է տեսնում Կովկասը։

Բայց հերիք է Շարունակենք մեր պատմութիւնը։

Աշխէնը բերել էր հետը իւր երկու երեխին, որոնք եկած օրը մտերմացան Զառիկեանների մանուկների հետ. իսկ հետեւեալ օրը չարաձմի մանուկների բանակը մի այնպիսի աղմուկ բարձրացրեց, որ Գարեգինը ծալեց իւր առջեւը դրած գիրքը և, ականջները խցելով, գոչեց.

— Օհօ, այս չեղաւ։ Սրանց բոլորին պէտք է հաւաքել տանելու անոտառը ձգել. թող այնտեղ դժութիւններ անեն, ինչքան սիրտները կլտայ։

Զառիկեանը վերջին անգամ գնաց այցելելու իւր հիւանդ բարեկամին. հետեւեալ օրը ընտանիքով պիտի մեկնէր զէպի ամարանոց։

Դեռ սենեակը չմոտած նորա ականջին դիսաւ կանացի բարձր ձայն։ Բանից երեաց, որ ներսը Արտաշէսի տանտիկինն էր բարկացած խօսում։

— Ինչ է պատահել? Հարցրեց Գարեգինը, բարեւելով Սադաթեանին, որը նոյնպէս այնտեղ էր։

— Պահանջում է, որ զուրս զայ, — պատասխանեց երիտասարդը։ Գիշերները, ասում է, քնած տեղը այնպէս է ճշում, որ երեխաները վախից վեր են թռչում։

— Իայց արդեօք այդ յաճախ է պատահում? ցանկացաւ իմանալ Զառիկեանը։

Տանտիկինը ասաց, որ երկու անգամ նա վախեցրել է երեխաներին։

— Իսկ այս գիշեր, — աւելացրեց նա, — մի այն տեսակ ձայն հանեց, որ ամենքս կարծեցինք, թէ խեղտում են։

Երիտասարդները միտսին խորհուրդ արին և վճռեցին ուրիշ տեղ սենեակ վարձել Արտաշէսի համար։ Տանոիկինը միամուեց այդ մասին և հեռացաւ։

Ասկերչեանի տւած բացատրութիւնից երեաց, որ նա ենթակայ է նաև կաշմարի, այն սոսկալի տեսիլներին, որոնք թունաւորում են մարդու հանգիստը նոյն իսկ այն ժամանակ, երբ մենք կորցնում ենք մեր գիտակցութիւնը։

Զառիկեանը չայտնեց, որ ինքը վաղը առաւօտեան կանուխ մեկնում է քաղաքից։ Ներողութիւն խնդրեց, որ իւր հիւանդ բարեկամի մասին հարկաւոր եղած բոլոր հողսն ու խնամքը Սադա-

Թեանին է թողնում, որի բարութեանը և ազնւութեանը անպայման հաւատում է. սեղմեց նորա երկու ձեռքը և աղաչելով աղացեց, որ անսահման թշւառութեան հասած մարդուն նա աչքից չժողնի:

Բարի Սաղաթեանը ամեն մի հոգս յանձն առաւ՝ նոր սենեակ վարձել, բժշկի մօտ տանել, կրկին ժողովարարութիւն անել և այլն և այլն:

— Բայց այս բոլորը, — աւելացրեց նա, — ես կ'անեմ մինչեւ այն ժամանակ, երբ իմ արտասահման գնալը կը յաջողւի: Այնուհետեւ ես էլ ճանապարհորդ եմ:

— Սրտանց յաջողութիւն եմ ցանկանում: Իսկ քեզ, Արտաշէս, առողջութիւն, և առայժմ միայն առողջութիւն: Դու պիտի վերածնւես նոր կեանքի համար:

Երբ Գարեգինը հեռացաւ, Ասկերչեանը մի երկու անհաստատ քայլ արաւ դէպի դուռը, կարծես բան էր ուզում յայտնել, բայց էլ իսկոյն ետ դարձաւ և, զգալով, որ գլուխը պտտւում է և աչքերը սեւանում, նատեց մահճակալի վրայ: Մի անգամ հազար, և Սաղաթեանը սարսափով տեսաւ, որ հիւանդը մի կում արիւն թքեց, և յետոյ արեան շիթը սկսեց ծորալ բերանից յատակի վրայ:

VIII

Ամարանոցում Գարեգինը սկսեց իւր մի կարեսոր աշխատութիւնը, որի համար նա մի քանի տարի է նիւթեր էր ժողովում, ուսումնասիրում և դասաւորում ըստ ծրագրի: Նոր հեղինակութիւնը պիտի լնդգրէի մեր մաքի զարգացման մի ամբողջ կէս դարի պատմութիւնը, որի մի ծացը կորչում էր քառասնական թւականների մէջ, իսկ միւս ծացը հասնելու էր մինչեւ իւր ժամանակը Գործին ձեւնարկելու րոպէին՝ նա մի տեսակ երկիւղածութիւն զգաց, ինչպէս միջնադարեան բարեպաշտ մատենագիրը, որը, ջերմ հաւատով լցւած, խաչ էր հանում երեսին, ծիրոջ անունը տալիս և ապա միայն սկսում իւր տարեգրութիւնը կամ ուղարք սրբոցը:

Նորան թւում էր, որ արդէն գտել է բանալին՝ ըմբռնելու համար այն ժողովրդի հոգեբանութիւնը, որի մտաւոր զարգացման պատկերը կամենում էր ներկայացնել: Երկու զաղափար պիտի

առաջնորդէի նորան ամբողջ երկասիրութեան մէջ՝ երկու կարմիր գիծ, որ պիտի անցնէր հեղինակութեան՝ սկզբից մինչև վերջը։ Մի կողմից կույսուրական ոյժերի մի ամագին սրաշար, որով կարելի էր նոյն խոկ ոգեսրւել, և միւս կողմից՝ խաւարի և տգիտութեան գարերից ժառանգած մի բազմանուն չարիք, մին և արիւն գարձած, որը զանդաղեցնում էր բազմբակիթութեան կանոնաւոր ընթացքը և քաջալերւելու և յուսահատւելու երկու աղբիւր։

Զատիկեանը զերազանց տրամադրութեան մէջ էր։ Գրիչը թեթև սահում էր, ոչք չէր խանդարում, որովհետեւ առնեցիք մեծ մասամբ ժամանակը անց էին կազնում անտառում։

Քայց երբեմն, և այդ զլխաւորապէս այն բոպէներին, երբ նա իրան չափազանց բախտաւոր էր զգում, բոլորովին անակնկալ կերպով, նորա աչքի առջև ներկացանում էր հիւանդ բարեկամի պատկերը՝ անժպիտ, կորագլուխ, աչքերը գետնին յասած։ Նորան թւում էր, որ գա մի լուռ կշամբանք է, որ յզում էր հեռւից Անկերչեանը՝ իւր խիղճը շարժելու համար։ Այսպէս էր պատահում, որ Գարեգինը, գեռ ևս նախագասութիւնը չաւարտած, ձգում էր գրիչը, մէջքը կրթնում նստարանի թիկունքին և, ձեռքերը կրծքին ծալած, խորատնզւում իւր սեփական անձի դատավետութեան մէջ։

«Ես լաւ չարի մոռածում էր նա, — որ նորան ձգեցի։ Եթէ ես միջոց տացի նորան այս երեք ամիսը այսաեղ ապրելու, որ նա ծծէր այստեղի մաքուր օգը, խմէր այստեղի անխարդախ կաթն ու ջուրը, վայելէր այստեղի անկորիսւթիւնը, նա, եթէ չառողջանար, գնէ փոքր ինչ կրկազդուրէր։ Ինչ պիտի աւելացնի նա քաղաքի փոշու, կեզտուութեան և աղմուկի մէջ։ Քայքացւած ջղերին և արեան պահանութեան ուրիշ ինչ էր հարկաւոր? .. Մանր զոհաբերութիւններ՝ անելլ հեշտ է, և շատերն են անում։ Բայց երբ պահանջւում է սովորականից դուրս զոհաբերութիւն, մենք աշկարայ ենք դարձնում մեր կատարեալ ոչնչութիւնը, մեր բարոյական շնանկութիւնը։ Ես գեաւ զաւերից մէկն եմ։ Հա, հա, հա։»

Ութօրւայ մէջ նա երկու նամակ ստացաւ Անդամանից։ Առաջինի մէջ ստաւած էր, թէ Զառիկեանների գնալուց պէս՝ ամեն օր անձրիւ է գալիս, եղանակը ցուրտ է և խոնաւ, չնայած, որ յունիսի 19:ն է արդէն, խոկ Սրում շէսը ակար պառելած է։ Երկրորդ գրութիւնը մեծ անհանգստութիւն պատճառեց Գարեգինին։

Ահա վերջինի բովանդակութիւնը:

«Մեծապատիւ պարոն Գարեգին, հիւանդի գրութիւնը գնալով վատթարանում է: Անցած օրը թժիշկը յայտնեց, որ նա ծածուկ թոքախս է ունեցել, որը այժմ տուր և վտանգաւոր կերպարանք է սասցել: Առաջ հօ մի զիակ էր, հիմա մնացել է կաշին ու ոսկորը: Աշըերը խորացել են, քիթը սրւել, ականջները կիսում ափանցիկ են դարձել: Գիշերները, իւր ասելով, այնքան քրափնք է վրայ տալիս, որ ինքը լողանում է իւր սեփական քրափինքի մէջ: Բայց մի բան ինձ սաստիկ զարմացնում է: Նարունակ ուշքը վրան է և երբէք գիտակցութիւնը չէ կորցնում: Կասեմ աւելին: Յնութիւնն էլ փոխւել է: Երէկ, օրինակ, նա շատ ուրախ էր, ժամում էր, խօսում էր ողևորւած, և աչքերը կայծելում էին, ինչպէս սաթը ճրագի լուսով: Նա հաւատացած է, որ պիտի լաւանաց, և ապազի ծրագիրներից էր պատմում: «Կեր կննամ թէ չէ, ասում էր նա, — պիտի շարունակեմ գրականական պարապմունքներս. Համեմոի դերը պիտի կատարեմ և վատահ եմ, որ մեծ յաջողութիւն կունենամք... Հին ծանօթներից և ընկերներից էր հարցնում, որոնցից շատերը այժմ յաշտի զիրք են ստեղծել իրանց համար զանազան ասպարէզներում: Միայն մի քանիսը ինձ համար անծանօթ անուններ էին: «Եռքա բոլորը ողորմելի միջակութիւններ էին, բայց ապրել իմացան և իմ առաջը տեինք! բաղականչում էր Արտաշէսը: Խնդրեց, որ իւր կողմից Զեղ բարե գրեմ և հետևեալ ինուքերը աւելացրեց. «Եթէ չինէին Գարեգինի նման մարդիկ, շարժէր ապրել աշխարհումք: Այսպէս էր նա երէկ: Բայց այսօր այնքան վատ էր, որ երկիւղ էր: ազգում էթիշկը պահանջեց, որ անպատճառ տանենք հիւանդանոց Այսօր չեղաւ, մնաց վաղը: Զեր գալը, պարոն Գարեգին, անհրաժեշտ է: Ես մենակ եմ և իմ ձեռքը ամեն բանի չի հասնում: Իմ արտասահման գնալու խնդիրն էլ վճռւած է, և ես սպասում եմ միայն անցագիրը ստանալուն: Ստացայ, պիտի ճանապարհեմք: Յարգանօք Գ. Աղդաթեան:

Երբ Գարեգինը նամակը կարդում էր, գէմքը այն ասովիճան այլացլւած էր, որ մայրիկը, Մարիամը և Աշխէնը իսկոյն նկատեցին և անհանդստութեամբ համարեա միաբերան հարցրին.

— Աւմնից է նամակը?... Ինչ են գրել?...

Գարեգինը նամակը տւեց նոցա կարդալսւ և ինքը սկսեց հազնւել:

—Այդ ինչ ես անում? հարցրեց մայրիկը:

—Թիֆլիս եմ գնում, —եղաւ որդու կտրուկ պատասխանը:

—Մենակ?... Գիշերով?... Անկարելի է!... լսւեցին բացական-չութիւններ այս ու այն կողմից:

Եւ արդարեւ օրը տարաժամ էր, ճանապարհը երկիւղալի, որով-հետև լուր էր շրջում աւագակալին խմբի մասին, որը իբր թէ մոռաղիր էր ամարանոցի վրայ յարձակում գործելու:

Գարեգինը սկզբումը պինդ էր կանգնած իւր վճռի վրայ, բայց յետոց, զիջանելով կանանց թախանձանքին, գնալը յետաձգեց հե-տեւալ առաւոտը:

Օրը լուսացաւ, և այն ժամին, երբ Զառիկեանը շտապում էր պըստառան կայսարանը, ծառան վազեվազ ետևիցը հասցրեց մի հեռաղիր, որի բովանդակութիւնը նա գուշակեց դեռ չկարդացած:

«Ոսկերչեանը վախճանեց:—Սադաթեան!»

Գարեգինը անմիջապէս կառք նստեց և թռաւ դէպի Թիֆլիս:

Տեղ հասաւ երեկոյեան: Սադաթեանը նորան տարաւ նոր կացարանը, որտեղ կենում էր հանգուցեալը: Արդէն վարձւած էին մարդիկ, որոնք պիտի հոգացին թազման պատրաստութիւնները: Այդ նպատակով եռանդու երիտասարդը կրկին ժողովարարութիւն էր արել, պակասը խոստացաւ լրացնել Գարեգինը: Միւս օրը թա-ղումն էր, որի մասին յացտարարւած էր լրագրում:

Յուղարկաւորութեան օրը եկեղեցու դրան առջև փողոցում կանգնած էր մի անշուք դիակառք, որի ձիաները իրանց ցիցցից ոսկորներով և հնաւաշ սգաշորով արժանի էին դիակառքին:

Եկեղեցում սակաւ մարդիկ կալին: Դագաղը մի շատ հասարակ բան էր: Մեռելի զլսի մօտ դրւած էր բնական ծաղիկներից հիւ-ւած մի պսակ՝ Զառիկեանի և Սադաթեանի կողմից:

Վերջինը շապիկ հագաւ և արտասանեց ճառ, որի համար վա-զօրօք պատրաստել էր: Զահիլութեան յատուկ յափշտակութեամբ նա դրւատեց հանգուցեալի մօրդկացին արժանիքը և տւեց նորա կեանքի հակիրճ պատիերը:

Զգացմունքով արտասանեցին մանաւանդ հետևեալ խօսքերը:

— «Ոսկերչեանը անպայման ազնիւ մարդ էր և անպայման տաղանդաւոր։ Ես հաստատ ասում եմ, որ բարեխաջող հանգամանքների մէջ սա կարող էր դառնալ մի ընտիր գործիչ մի որև է ասպարիզում։ Բայց ահաւասիկ, հազիւ 32 տարեկան, այն հասակում, երբ մարդու ստեղծագործող ոչժերը մօտենում են իրանց գագաթնակետին, խեղճ մեռաւ ամենաանփառունակ կերպով։ Ո՛չ, թէ եմ ասում, սա չմեռաւ։ Սորան ջախջախնեց, խորտակեց, սպանեց կեանքը! Ես սորան չեմ ասիլ բնական մահով մեռնել, երբ մարդ, իւր կենդանութեան օրով հասնում է աւելի վատթար դրութեան, քան անդամանցը! Հիւանդութիւնը սորա վազաժամ մահւան բազմաթիւ պատճառներից մէկն էր։ Նա միայն վերջին ցնցումը գործեց։ Ես սարսուռ եմ զգում, երբ մտածում եմ, թէ սորա նման քանի քանի սղնիւ և ընդունակ երիտասարդներ անանուն և անհետ կորչում են ժամանակից շատ և շատ աւատ! ...»

Երբ բոլոր ծիսակատարութիւնները վերջացան, Գարեգինը և Սաղաթեանը ուրիշների օգնութեամբ վեր բարձրացրին դագաղը և դուրս բերին եկեղեցուց։

Դիակառքը շարժւեց։ Ծանօթ երիտասարդների մի փոքրիկ խումբ գնաց մեռելի ետևից։

Հանգստարանում անձրե սկսեց մաղել։ Դերեզմանը փորւած էր մի հեռաւոր անկիւնում, կողքին թափուած հողակոյտը բոլորովին խոնաւ էր։

Գարեգինը շիրիմի մօտ կանգնած՝ տխուր հայեացքը չէր շեղում մեռելի երեսից։ սորա աչքերը լիշեցնում էին մորթւած ոչխարի աչքերը՝ սառած, անփայլ, բիբերը վերև թռած։

Երբ մարմինը կամենում էին ամփոփել գերեզմանի մէջ, անյարմար շարժողութիւնից դագաղը ծռւեց, մեռելի զլուխը դիպաւ դագաղի պատին և էլ ետ ընկաւ, և այդ այնքան խղճալի տպաւորութիւն գործեց նոյնողների վրայ, որ կարծես հանգուցեալը, եթէ լեզու ունենար, պիտի ասէր։

— «Այս ինչ էք անում ինձ հետ?

Զատ իկեանը, որը մինչև այդ բուգին լուռ հանդիսաւես էր իւր բարեկամի թազման, վերջին սրտաճմլիկ տեսարանի առաջ անկարող եղաւ զսպել արտասուքը։

Նոյնպէս և Սաղաթեանը հանեց թաշկինակը և աչքերը սրբեց։

Մի-մի բուռն հող ես, և գերեզմանափորի թիակը բանեց։

Ամեն ինչ վերջացաւ։ Անձրել շարունակ մաղում էր։

*
* *

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Խոժոռ նայում է աշնան գիշերը...
Քամին դուռերդիկ ծեծում է, ծեծկում.
Անձրև է շաչում, հետն էլ իմ սիրող
Վիրաւոր, տխոնր՝ բաղիսում է, զարկում...

Դուռն էին ծեծում.—այդ մվ է ծեծում:
Կորած թռչնիկ է, արի, ներս արի...
Քամին էր ծեծում... ալս սիրոս է ծեծում.
Այդ սէրս է, սէրս է. նա է քուն չունի...

*
* *

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Մի հաւատա դու շատ նրանց,
Մի հաւատա, սիրունս,
Որ իմ սէրը ջերմ ու անանց
Վառ ու խոնը չէ սրտումս...

Եարդիկ այնքան սովորել են
Երար խորել դաւելու,
Որ հաւատն էլ կորցրել են
Ջերմ ու անանց սիրելու...

Ի՞նչ է ՀԱՇԽԱՊԱՀՅՈՒԹԻՒՆԸ

ՖՐԻԴՐԻԿ ՄԱՐԴԱՆԵԼՅԱ

Մեր նախորդ լողւածում առաջ բերելով զանազան հոչակաւոր հեղինակների վկացութիւնները հաշապահութեան մասին, թւում է մեզ կարողացանք համոզել մեր ընթերցողներին, թէ հաշապահութիւնը ամենակարենոր գիտութիւններից մէկն է և նրան խմանալը անհրաժեշտ է մեզ ամենքիս առանց բացառութեան։

Հաշւապահական դիմութեան նշանակութիւնը աւելի հասկանալի կըդառնաչ մեզ համար, եթէ մենք պարզենք թէ ինչ է հասկացւում հաշւապահութիւն ասելով։ Միակ ճանապարհը, որ մեզ համար կարող է լուսաբանել այդ հասկացողութիւնը, — այդ այն է, որ մենք պարզենք մեզ համար հաշւապահութեան կատարելիք պաշտօնները մեր կեանքի մէջ ընդհանրապէս և իւրաքանչիւր ձեռնարկութեան մէջ մասնաւորապէս։ Վերջապէս այն գործոնը, որ ծնեցնում է հաշվի զաղափարը։

Թէ ինչ դեր է կատարում հաշւապահութիւնը մեր կեանքի մէջ ընդհանրապէս և իւրաքանչիւր արդիւնաբերական ձեռնարկութեան մէջ մասնաւորապէս, այդ հարցին որպէս պատասխան կարող է ծառալել մեր նախորդ լողւածը։ Խոկ ինչ վերաբերում է այն ֆակտորին, որը ծնեցնում է հաշվի գաղափարը, անա այդ հարցի լուծումը կըկազմի մեր ներկայ լողւածի բուն նպատակը։

Իւրաքանչիւր մարդ, որպէս հասարակութեան մի ատոմ, բազկացած է երեք տարրից։ Նիւթից, բանականութիւնից և զգացմունքից, որոնք մարդու գոյութիւնը պահպանելու համար պահանջում են անընդհատ կազդուրումն և վերանորոգութիւնն, հետեապէս իւրաքանչիւր մարդ ունի պահանջներ, որոնք լինում են երեք տեսակի։ Փիզիկական, մտաւոր և բարովական, Ծնտեսական գաղափարը մարդկալին բնածին լատկութիւններից, կարելի է ասել, առաջինն է։ Նա անբաժան է նրանից օրօրոցից մինչեւ գերեզմանը։ Իրա իսկական պատճառներն են վարը չիշած պահանջները, որոնց լիութիւն պէտք է տրւի։ Այդ պահանջներից ամենաախտաբ Փիզի-

կականն է, ուտելեղէնը, բնակարանը, հագուստեղէնը, առասսարակ ալն ամէնը, որոնք մարդուս օրգանիզմը պաշտպանում են քայլալումից։ Սական մարդ՝ բաւականութիւն տալով միմիան իւր ֆիզիկական պահանջներին, կատարեալ կեանքով չէ ապրում։ Որ աստիճանի զարգացման վրաց կանգնած էլ լինի մարդ, նրան միւս արարածներից զանազանողն է մտաւոր և բարուական բնութիւնը, որը ունի առանձին տեսակի պահանջներ, որոնց լիութիւն տալու համար, հարիկաւոր են նոր և ալ տեսակի միջոցներ։ Մատակարարելով մարդուն ալդ աստիճանի բազմաթիւ պահանջներ, բնութիւնը չէ զլացել տալ նրան և նրանց լիութիւն տալու միջոցները։ Արտաքին աշխարհը, շրջապատող կեանքը և մարդկացին հոգու ուժը, առա այն բոլոր գործօնները, որոնք միջոց են տալիս մարդուն բաւականութիւն տալու ալդ բաղմաթիւ պահանջներին։ Հարմարացումն ալդ գործոնների՝ բազմաթիւ մարդկացին պահանջներին լիութիւն տալու նպատակով, ծնեցնում է մի ալ տեսակի գործունեութիւն, —որը ընդունւած է անւանել աշխատանք։ Միան աշխատանքի միջոցով, որպէս վարձատրութիւն իւր կրած նեղութիւնների, մարդ ձեռք է բերո մ իւր գոլութեան համար անհրաժեշտ բարիքներ։

Ալդպէս ուրեմն, խօսելով հաշւապահների լեզւով, առաջին պասպիր մարդու կեանքում նրա բնածին պահանջները և կարիքներն են, իոկ առաջին ակտիւը շրջապատող հարուստ բնութիւնը և մարդուս սեպհական ուժերը, որոնք աշխատանքի չնորհիւ տալիս են նրան միջոց ծածկել իւր պասսիւր։ Պահանջների բնածին լինելը և անխուսափելի կարերութիւնը աշխատանքի միջոցով հաջթայթել ամեն ինչ նրանց լիութիւն տալու համար—ահա առաջ է բերում տնտեսութեան գաղափարը

Սովորեցնելով մարդուն աշխատանքի, ալդ գաղափարը զօրացնում է նաև հակումը զէպի եսականութիւնը։ Սական ալս անխուսափելի վաս կողմը նւազում և թուլանում է մի ալ գաղափարով, որ է իրաւաբանական վարչութիւն (ԱՃՄԱԿԻՏՐԱՎԱՅ-ՊՐԱՎՈՎԱՅ ԱՇԵՅ), որը սերտ կապով կապւած լինելով տնտեսական գաղափարի հետ, աճում և ամրանում է ընդհանուր մարդկացին զարգացողութեան հետ։

Որքան էլ որ մարդ լինի ընդունակ և աշխատասէր, սական նրա առանձնական աշխատանքը չէ կարող բաւարարութիւն տալ բազմաթիւ և բազմատեսակ պահանջներին և կարիքներին։ Ալդ առաջ է գալիս նախ նորանից, որ ոչ ոք օժաւած չէ այն բոլոր ընդունակութիւններով, որ մենակ կարողանաց ամեն ինչ անել և երկրորդ ոչ մի երկիր չէ պարունակում իւր մեջ այն բոլոր էլեմենտները, որոնցով բաւարարութիւն է տրում մարդկացին պահանջներին։ Նմէ բաժանւած լինէինք, մնաք կարող էինք բաւարարութիւն տալ չափազանց քիչ պահանջների։ Իրականութեան մէջ գոլութիւն չունի ալդ տեսակի բաժանւածութիւն։ Դեռ նահա-

պետական ժամանակից մարդիկ մի կողմից համագումարել են իրանց գործունեութիւնը ընդհանուրի նպատակին ծառալելու համար, իսկ միւս կողմից իրար մէջ աշխատանքը բաժանել են համաձայն տեսակների և անհատների ընդունակութեան. Համագումարումն ուժերի և աշխատանքի բաժանմունքը ընթանում են ձեռք ձեռքի տւած աստիճանաբար զարգանալով. Աշխատանքի բաժանման բնական հասեանքը և անհրաժեշտ լրացուցիչն և փոխարինութիւն արդիւնքների և ծառալութեան, որի չնորհիւ մենք միջոց ենք ունենում բաւականութիւն տալ մեր բազմատեսակ և բազմաթիւ պահանջներին, իւրաքանչիւր փոխարինութիւն ենթադրում է երկու կողմ. ստացող և տւող Ոհաւասիկ այդ երկու կողմի մէջ է ծագում կոիւ. իւրաքանչիւրը առաջնորդւելով իւր սեպհական շահադիտական նպատակներով և պահանջներով, աշխատում է ըստ կարելոյն թանգ զնահատել իւր առաջարկութիւնը և էժան կերպով ուրիշներ. Տնտեսական գաղափարից առաջացող ազանութիւնը և եսականութիւնը այդ դէպքում ուժեղ կերպով ծառալում են որպէս շարժող ստիմուլներ.

Ակնեալոնի է, որ ծառալութիւնների փոխագարձ հատուցումը, որ կազմում է մարդկացին կեանքի ամենալաւ կողմնորից մէկը, կարող էր վերին աստիճանի դժւար դրութիւն ստեղծել, եթէ տնտեսական գաղափարի նես զուգընթացարար զգարգանար նաև վարչական-իրաւաբանական գաղափարը. Այդ վերջինը սահմանում է համաձայնութիւն զանազան տարբեր շահների մէջ և ներդաշնակ կերպով հաշտեցնում նրանց. Նա ոչնչով չէ խանգարում մեզ անընդահատ գործադրել մեր ուժերը միջոցներ ձեռք բերելու և որքան կարելի է աւելի բաւարար կերպով լրութիւն տալու մեր կարիքներին և պահանջներին,—սակայն իրաւունքի և բարուչականութեան միջոցով, որը զեկավարում է մեզ, լիովին և բազմակողմանի կերպով բաւարարութիւն տալիս է թէ մեր և թէ ուրիշների շահներին.

Բայց միթէ մարդու կատարեալ և երջանիկ գոլութեան համար բաւական է մի կողմից ձգտել կարելոյն չափ լի բաւարարութիւն տալ մեր պահանջներին և միւս կողմից այդ ձգտումը սահմանափակել իրաւունքի և բարուչականութեան օրէնքներով. Ի հարկէ ոչ Ոչ անհատապէս և ոչ հաւաքարար մարդիկ չեն կարող իրանց գործունէութեան մէջ առաջնորդւել միմիակն տնտեսական և իրաւաբանական օրէնքներով ու գաղափարով. Հարկաւոր է նաև լաւ զիտէնալ և ճիշտ գնահատել արդիւնաբերութեան միջոցները, նոյնպէս իմանալ թէ ինչը ում տալ և ինչ ում ից սասանալ. Ահա մարդու այդ տեսակի գործունէութեան հիմքն է կազմում հաշւի գաղափարը. Ամենապերճախօս ապացուցը, թէ իրօք գոլութիւն ունի այդ գաղափարը, կարող է ծառալել այն հանգամանքը, որ մարդ նախ և առաջ սովորում է կարդալ, գրել և հաշվել. Բարձրացնել հաշվի գաղափարը իրեն պատշաճ աստիճանին, վերածել նրան որոշ կանոնաւոր սիստեմի, ահա-

արդ է կազմում ուսումնասիրութեան առարկայ այն գիտութեան, որը չակտնի է հաշւագիտութիւն անտեսվի:

Սեղ թւում է, որ կարելոյն չափ կարողացանք պարզել հաշվի գաղափարի ծագումը այժմ փորձենք պարզել նրա գործադրութեան ձևը և միջոցները:

Հաւաքումն պահանջների, միջոցների և աշխատանքի կազմում է ձևանարկութիւն: Պահանջները և միջոցները այն բեւեռներն են, որոնց շուրջը շրջան է անում ձեռնարկութիւնը: Աշխատանքը այն շարժիչ աւտոն է, որ կենդանութիւն է ներշնչում ձեռնարկութեան: Փորձեցիք այդ տարրերից որ և է մէկը բաժանել և մեքենան կանգ կառնէ: Թւերը ձեռնարկութեան ընթացքում անազին զեր են կատարում: Այսէ քիչ լուրջ հետազոտենք, մինք կը տեսնենք որ իւրաքանչիւր անտեսական գործողութիւն հետեւանք է բերանացի և գրաւոր հաշիւների, որը ծնունդ է ստացել մարդու խելքի մէջ, պահպանել և ստուգել է թւերով և տպա արտակարուել գործողութեան մէջ: Քոլոր տնտեսական մաքերը, ծրագիրները որքան էլ որ նրանք մնեն և բարդ լինին, — նրանք երեսկալութեան աշխարհումն են մնում, ինէ չեն ստուգւած թւերով: Այնէ այդ մաքերը, ծրագիրները իւրաքորհն էլ զարձեալ զրա վաւերիչը պիտի լինին հաշիւները և թւերը: Ազգպէս ուրեմն հաշվուը և թւերը կազմում են ատենակարենոր առարերից մէկը տնտեսական գործունեութեան: Հաշվի գաղափարը յատուկ է և բնածին բոլոր մարդկանց: Արաքանչիւրը հաշումն է, արդիքը ինչ միջոցներ ունի նաև և ինչ է նրան հարկաւոր իւր կենսական պահանջները կատարելու համար: Հեռատեսները առնատաւական միջուկ համեմատում են իրանց ելամուտները ծախքերի հետ և մասամում ինչպէս լրացնել պակասը կամ տեղաւորել աւելի շահաւետ կերպով աւելը: Ճիշտ է, կան շատ վաճառականներ, որոնք պնում են, թէ երկար տարիների ընթացքում իրանց գործերը տարել են չաջող կերպով առանց որ և է հաշվի բաւց այդ մեզ համար օրինակ չէ կարող լինել հաւանական է որ այդ թիւրիմացութիւն լինի, նրանց թւում է միմիւան որ գործները առանց հաշվի են տարել, իսկապէս նոքա ամեն մի բան մինչ ձևանարկելը տասը անգամ առնւազն հաշել են: իսկ եթէ եղել են առեւտրական բարդ կամբինացիաներ, որոնց այդ տեսակի վաճառականները իրանց սահմանավակ հասկացողութեան և զարգացողութեան տէր լինելու պատճառաւ չեն կարողացել նկատել: և ժամանակին օգտելը: Աս համոզւած եմ, որ պատահած կը լինի և աճնպիտի դէպքեր, ուր փեխօք, զարգացած և հաշեգէտ վաճառականը կարող էր ահազին շահ ստանալ, իսկ մեր ինքնահաւանամեծամիաը վնասւել է: Թւաբանական չոլա գործողութեան չնորդիւ արել են

այն, ինչ կարող էին, ինչ թուլ է տևել նրանց սահմանափակ հասկացողոթիւնը։ Եթէ թղթի վրայ չեն հաշւած կամ տեսրակների մէջ զրած, սական համրիչը առաջներին դրած հաշւել են ըստ իրանց հասկացողութեան ձեռնարկութեան շահավետութիւնը կամ վնասաբեր լինելը։ Մի խօսքով մենք ուզում ենք ասած լինել, թէ ինչ տեսած էլ ձեռնարկութիւն լինի, առանց հաշւի անկարելի է շարունակել նրա գորութիւնը։ Ազգիս տրեմն ուր տնտեսական գաղափար գորութիւն ունի այնտեղ անբաժան է նրա հետ հաշւի գաղափարը։

Այժմ տեսնենք ինչպէս է նա կատարում իւր ֆունկցիան, ինչ մոմենտների և ինչ մասների է բաժանւում գործադրութեան ժամանակ։ Զեռնարկութիւնների շրջանը անսահման լան է և բազմատեսակ՝ ինչպէս նրանց առաջացնող և ծնող մարդկալն պահանջները։ Զեռնարկութիւնների բազմատեսակութիւնը առաջացնում է աւելի բազմատեսակ գործողութիւններ և պրոցեսներ՝ կատարող ձեռնարկութեան ներքին կետնքի մէջ։ Կարելի չէ արդեօք այդ բազմատեսակ ձեռնարկութիւնների բազմաթիւ եղելութիւնները մի որոշ կարգով դասաւորել, կամ վերածել ընդհանուր տիպերի, գտնել նրանց արտադրող ֆունկցիաները։ Վերը լիշած տնտեսական, աղմինիտարատիւ-գարչական և հաշւի գաղափարները, այդպէս ասած, իրբ կարմիր թել ձգւելով անցնում են մարդու կեանքով։ Զեան արդեօք և ձեռնարկութիւնների կեանքում աշնազիսի ընդհանուր սկզբունքներ՝ որոնք լատուկ լինին բոլոր ձեռնարկութիւններին։ Զեռնարկութիւնների բնութիւնը վկացնում է, որ իրօք ազգային սկզբունքներ կան, զուրութիւն ունին, և թէ բոլոր ձեռնարկութիւնները չնակած նոցա արտաքին բազմատեսակութեան, իրանց զարգացման ընթացքում կատարում են համարեան նունանման ֆունկցիաներ։ Խոալացի լազոնի հաշւագէտ, մեր ժամանակակից Զերբոնի, շատ լածող կերպով վերածել է այդ բոլորը երեք կատակորիփակի։ Հիմնարկող, կատարուզ և եզրափակող։

Որքան էլ բազմատեսակ լինին ձեռնարկութիւնները, սական նախ և առաջ պէտք է ամենամիշտ և որոշ կերպով արտազատած լինի նրա իրաւաբանական և տնտեսական դիրքը, այսինքն ինչ տեսակի գործողութիւններ կատարելու իրաւունք ունի, ինչ նպատակով է ձեռնարկւած և ինչ դրամագլխով է կարգադրում։ Ուրիմն զործի սկզբում անհրաժեշտ հարկաւոր է ունենալ նախ ցուցակ ձեռնարկութեան կալքի՝ որը իւր մէջ պէտք է պարունակի ընդարձակ կերպով արձանագրած ձեռնարկութեան ակտիւ և պատասիւ կարգադրութիւնը, և ապա նախահաշիւ, այսինքն ծրագիր ապագակ գործողութիւնների և ծախսերին իրա մէջ իսկապէս կաշանուամ է հիմնարկող գունկցիան։

Մարդու լիշողութիւնը կարող է շատ անպամ դաւաճան հանդիսանալ, ուստի կարենորութիւն կաւ խրոնոլոգիաբար արձանագրել այն բոլոր

եղելութիւնները առանց բացառութեան, որոնք կը կատարւին ձեռնարկութեան մէջ մի որոշ ժամանակամիջոցի ընթացքում, և որոնք արսպէտ կամ այնպէս ազգում են մեր ունեցածի վրայ՝ մեր պարտքի և պահանջի, որպէսզի աւելի պարզ լինի թէ մեր չարաբերութիւնները ուրիշների հետ, թէ զործի զրութիւնը և թէ նախահաշիւը զանցառութեան տւած շինինք։ Այդ էլ կազմում է կատարող փունկցիայի գործը, Ական այդ անելու համար անհրաժեշտ է ունենալ հաշւադանական մատեաններ, Ազգիս ուրիշն հաշւապահական մատեանները պարունակում են իրանց մէջ՝ խրոնոլզիաբար արձանագրած, ձեռնարկութեան մէջ բոլոր կատարւած եղելութիւնները, պարզում են նրանցից առաջացած հետեանքները։ Ահա ազգակը է հաշւապահութեան հաշւապահութեան հշանակութիւնը ձեռնարկութեան համար ծառալութեան տեսակէտից։ Այդ եղելութիւնները արձանագրուում են որոշ օրէնքների համաձայն, այնպէս որ ամեն մի բոլոր զործի իսկական գրութիւնը կարելի լինի տեսնել։

Վերջապէս եղբափակող փունկցիայի կատարելիքն է. նախ՝ կազմել այդ արձանագրութիւնների հիման վերայ մի ընդհանուր հաշիւ մեր զործողութեան, արդեօք ինչ ենք արել այդ որոշ ժամանակամիջոցին, այսինքն մնանակ ենք, թէ օգտենի և երկրորդ վերաբուգել այդ արձանագրութիւնները քննութեամբ։

Այդ բոլոր ասածներից ևսում մենք կատարեալ իրաւունք ենք համարում մի արսպիսի բացատրութիւն տալ հաշւապահութեան. հաշւապահութիւնն է գիտութիւն, նախանշանակող այն տնտեսական ուղին, որով պէտք է տանել մի որ նէ ձեռնարկութիւն, համաձայն տնտեսական և իրաւաբանական պահանջներին, և որը հաշիւների միջոցով ցոլց է. տալիս ամէն մի բոլոր ձեռնարկութեան իսկական զրութիւնը, կատարւած առետրական օպերացիաների փոխադարձ կապը և հետեանքները, և վերջապէս պարզում, լուսաբանում ան պատճառները, որոնցից առաջացել են նոքաւ

Վերջացնելով մեր լոգւածը՝ աւելորդ չենք համարում առաջ բերել իտալացի պրոֆեսոր բոնալումիի կարծիքը հաշւապահութեան մասին, որը չափութեան մէջ չունի առևտրական ուսումնարանի տարեղարձին. «հաշւապահութեան մէջ նոյն կապը կար, ինչ մարդուս կամքի և բանականութեան մէջ»։ Մեր կամքը արտաւաբուում է զործողութիւնն մէջ, իսկ այդ զործողութիւնները նախապէս լուսաբանում և թելադրուում են բանականութիւնից. նոյնանման կերպով ձեռնարկութիւնը նպատակ է զնում մի որոշ զործունէութիւն, համեմ որոշ հետեանքների, սական ճանապարհը դէպի այդ հետեանքները, լուսաբանութիւնը և գիտակցական կենտրոնացումը ձեռնարկութեան ողղութեանը տալիս է հաշւապահութիւնը»։

Մեր լաջորդ լոգւածում կաշխատենք պարզել թէ այժմ զործագրուող հաշւապահական սխալներից որն է աւելի լարմարագունը.

ԳԻՒՂԱԿԱՆ ԲԱԼԼԱԴԱ

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Օռնում էր Յողար, ողբում էր Յողար, մերթ թաւալւելով
Եւ այնպէս ահեղ, սիրով քրքրող ելեէջներով,
Որ ասես ահա ողջ երկրագունդը միջից կ'աղալիթի,
Կամ նեռը իշած համայն աշխարհը պիտի խորտակի:

Օռնում է Յողար զառամեալ ու խուլ մղկան ձայնով,
Սրտաճըմիկ յուսահատական ելեէջներով,
Դերեզմանալին սարսուռ է ազգում հարեւաններին,
Դիւզական խաղաղ, համը գիշերւաց հանգստեան ժամին:

Եւ Օհան-ապին այդ օւնումից նախապաշարւած,
Զգում է կարծես մահւան ժանիքներ գլխիվեր շարւած,
— Շամթուն, ասում է, այս վատ նշան է, մօտ եմ օրհասին,
Չարագուժ ձայնից սիրոս է դողում; անդին ամուսին:

— «Երբ շունը օռնայ
Կասէր իմ հերը,
Պիտի մահանայ
Քիւլֆաթի տէրը»:

Օռնում էր Յողար ամենայն գիշեր բօթաբեր ձայնով
Եւ Օհան-ապուն օրէցօր մաշում մաստանչելով...
Ել չը վերկացու թշւառը տեղից, այն էր որ պառկեց,
Նւ մի քանի օր... ու մի երեկոց հոգին աւանդեց...
Խոկ պառաւ Յողար անառամ լնդերն առաջ ցցելով,
Մինչե այսօր էլ օռնում է օռնում...

Եւր շրջակալքը սարսափ ազգելով...

ՀԱՐԿԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

ԳՅՐԵԳՈՒՐ, ԽԱԺԱԿՆԵՍՆՅԻ

I

Կառավարութեան սալմային ձեւերը, — Տոհմ, Ցեղ, Նպայրութիւն, — Ցեղերի գաշնակցութիւն, — Մասնաւոր սեփականութեան ծագումը եւ սկզբնական կազմի բարյացումը, — Պէտութեան ծագումը, — Հարկերի նպատակը, — Նրանց տևակները,

Ամեն պետութիւն հարկ է առնում իր ժողովրդից կայ իր հպատակներից, Զկայ պետութիւն, որ հարկ չվերցնի:

Մարդկացին սկզբնական հասարակութիւնների մէջ պետութիւն էտա, Տօստ, յօսութեան չկայ. զրա համար նրանց մէջ հարկ էլ չկայ: Այդ սկզբնական մարդկութիւնը ապրում էր և այժմ էլ ապրում է փոքրիկ տոհմերով (գենո, կլան), կամ մի քիչ աւելի մեծ ցեղերով (tribus, աշիրէթ), կամ այդ երկուսի մէջ տեղը կազմող եղուայրութիւններով (fratrie): Սկզբնական այս միութիւնները արիւական ու անտեսական կոմմունիստական համայնքներ էին, որոնք ունեին և' իրենց ներքին ու արտաքին գործերը, և' իրենց համայնական հողատիրութիւնը, համայնական որսորդութիւնը, համայնական անվերջ պատերազմները, և' համայնական ժողովը — կազմւած համայնքի թէ այր և թէ կին բոլոր անդամներից՝ հաւասար ձայնի իրաւունքով (ինչպէս այսօր Ամերիկայի կարմրամորթների մէջ է), թէ իրենց ընտրւած պետը (սախէմ, թէ, աղասիկալ և այլն): Մի խօսքով՝ նրանք ամեն տեսակ համայնական սկզբնական ինստիտուտներ ունեին, բայց պետութիւնն զեռ չէին կազմում:

Բնութեան մէջ անշարժութիւն չկայ: Ամեն ինչ շարժում է: Մի տեղ այդ շարժումը դանդաղ, աստիճանական զարգացում է (էւոլիցիա), իսկ մի ուրիշ տեղ նա նոյն դանդաղ, նոյն աստիճանական շարժումն է դէպի չետ, դէպի քայլքայում (dissolution):

Ցեղերի (տրիբու) թէ թիւը, թէ ծաւալը մեծանում է այն ժամանակ միայն, երբ անտեսական կեանքի զարգուցումը, արդիւնագործութեան միջոցների կատարելագործութիւնը թոյլ է տալիս Թւի շատանալու հետ միասին՝ գոյութեան անողորմ կոիւը սովորում է նրանց կազմէլ ցեղերի դաշնակցութիւններ (fédérations des tribus): Առ արդէն կազմում է մարդկացին սկզբնական հասարակութիւնների կառավարութեան ամենաբարձր և ամենազարգացած ձևը: Մարդկացին ընկերազիտութիւնը (sociologie humaine) զրանից բարձր վարչական ձև չի ճանաչում սկզբնական մարդկութեան համար:

Հասարակութեան էւոլիցիան արեց իր գործը՝ հասցնելով կառավարութեան ձևը մինչև ցեղերի դաշնակցութիւնը: Բայց մի ուրիշ էւոլիցիա կազմում էր նրա հիմքը, նրա սկզբնակատմառը: Դա արդինազործութեան միջոցների զարգացումն էր: Քանի դեռ այդ միջոցները կոսիտ, պարզ ու սկզբնական էին, մարդիկ սովորած էին խմբովին աշխատել, խմբովին սպասել. նրանք ստիլած էին կոմմունիստական կեանքով ապրել: Երբ սկսեց գործիքը զարգանալ այնքան, որ հնարաւորութիւն ունեց ամեն անհամբ կամ միայն փոքր թւով մի քանի անհատների անկախ ուրիշների ընկերակցութիւնից՝ իր գոյութիւնը պաշտպանել իր ուժերով՝ այն ժամանակ երեաց մասնաւոր սեփականութիւնը, քանդւեց նախկին սկզբնական կոմմունիզմը և նրա հետ էլ կառավարութեան այն ձևերը, որոնք ճշտութեամբ չափւած ու ձևած էին սեփականութեան այդ տեսակի վրայ:

Աշխատանքի բաժանումը խստացաւ, կուտակւեց: Հասարակութեան թէ ներքին, թէ արտաքին գործերը բազմացան: Արդիւնքների փոխանակութիւնը կամ վաճառականութիւնը դարձաւ մի տեսակ անհրաժեշտութիւն: Երեացին բաւական պարզօրէն որոշող արհեստաւորների, վաճառականների, հոգևորականների, հողագործների, որսորդների և այլ դասակարգեր:

Մասնաւոր սեփականութեան զարգացումը ծնեցրեց մի երեւովթ, որ առաջ գոյութիւն չունէր սկզբնական կոմմունիստական համայնքերի մէջ. դա հարուստ և աղքատ, ունեոր և չունեոր խօսքերի հասկացողութիւն էր: Այնտեղ, ուր կայ հարուստ և աղքատ, անպատճառ կը ծաղի և աղքատի մէջ ձգտում խլել հարստի ունեցածը: Այդ ձգտումը մի տեղ կը ծնեցնէ գողութիւն (որը գոյութիւն չունէր սկզբնական համայնքի շրջանի ներսում), մի ուրիշ տեղ մարդասպանութիւն, թալան, գաւաղրութիւն աղքատների ընդգէմ հարուստների և այն: Ներքին ցաւերն այսպէս աճում են և հասարակութիւնն ստիպւում է կազմել մի ինստիտուտ, մի հիմնարկութիւն, որ կարողանայ կարգ պահել և հասարակութիւնն ներսում (գլխաւորապէս) և զրում—ուրիշ հակառակորդ հասարակութիւնների հետ:

Ստեղծւում է ստիկանութիւն՝ այսինքն մի գասակարդ մարդիկ, որոնք պէտք է կարգ պահպանեն ներսում, թողնեն, որ ուրիշի սեփականութիւնը, նրա կեանքը (դրանից և պատիւլ!?) ենթարկվի վտանգի: Հին Ամէնքում և Սպարտացում առաջին ստիկանները միան ստրուկներն էին, որովհեաւ մի ազատ (եւ պատրիդ) անպատճութիւն էր համարում բռնի ուժ գործ դնել իր նման մի ազատի վրայ:

Ստիկանութեան հիմնարկութեան հետ միասին առաջանում են և գասարանները կամ արդարութեան առեանները:

Սկզբնական համայնքի մէջ ամեն մարդ, յաճախ և ամեն կին, կուող էր. յատուկ զինւորներ, արհեստով զինւորական կամ պատերազմներ չկացին: Դուրս էր գալիս մի անւանի քաջ անհատ, որի վրայ մեծ համարում ունեին համայնքի անդամները, գիւղի առաջը եղած բաց դաշտում զինւորական պար էր սկսում մենակ: Բոլոր գիւղացիք հասկանում էին, որ այդ անձը մտադիր է մի կուիւ, մի արշաւանք սարքել: Ով ցանկանում էր այդ կուիւը, իսկոյն գալիս միանում էր նրա պարին: Երբ պարն սկսողը տեսնում էր, որ բաւական թւով մարդիկ միացած են իր հետ, իսկոյն զէնքերն առնում, առաջ էր ընկնուի, ունենալով իր ետիւց պարին մասնակցող բոլոր ընկերները: Պարն սկսողը դաւնում է և զին որական պետ կամ սախէմ: Պատերազմը վերջանալուց յետոյ նրանք վերա-

դառնում և նոյն համայնքի խաղաղ, մշտական անդամներն էին գառնում։ Համայնքի ներսում, բոլոր արիւնակիցները բացարձակ հաւասար էին։ Միակ նախապատութիւն տրւում էր ծերերին և փորձառու քաջերին։

Ցեղի կամ համայնքի մեծանալու հետ միասին աճում ու զարգանում էր սորկատիրութիւնը և ստրուկների թիւը։ Սիժէնքի ծաղկած ժամանակը ստրուկները կազմում էին ազատներից (եւ պատրիդ) և անդամ աւելի մեծ թիւ։ Համայնքի արիւնակից բնակիչները զիտում էին ստրուկներին իբր ստորներ, իբր աշխատաւոր անասուններ։ Նրանց վզին էին բարգում բոլոր տնային ու գաշտային աշխատանքները, իսկ իրենց իրենց վերապահում էին զէնք կրելու իրաւունքը, կամ վարելը, հասարակական դործերը և այլն։

Այդ հաւասարասէր դրու թիւնը երկար չէր կարող շարունակել։ Մասնաւոր սեփականութեան երևալու հետ միասին, երևային և հարստան ու աղքատը կամաց կամաց նիւթական հարստութիւնը մի խոր վիճ փորեց այդ երկու դասակարգերի մէջ։ Հարստատները սկսեցին նախ ստրուկներին իբր ստրիկան և իբր զինուոր գործածել իրենց ներքին թշնամիների՝ աղքատների դէմ և ասպա՝ երբ չունեորների թիւն ածեց և ազատ չունեորներն սկսեցին անել նոյն աշխատանքներն, ինչ որ ստրուկներն էին անում, — աղքատների մի մասն էլ, նիւթական կարիքից ստիպւած՝ զինուոր դարձաւ և իր զէնքն սկսեց գործ ածել իր վիճակից աղքատ ազնւականի դէմ, պաշտպանելով հարստատի շահը։

Այսպիսով՝ աստիճան առ աստիճան ծնունդ առան և ամբապընդեցան բոլոր այն ինստիտուտները, որոնք կազմում են պետութիւնը (éstat, Staat) իր ամբողջ բարդ կազմակերպութեամբ, իր վարչական մեքենայի բոլոր մասերով, որոնք նախ շատ պարզ ու միատեսակ էին։

Այսպէս ուրիմն պետութիւնը ծնունդ առաւ։ առաջացան քաղմաթիւ ուստիկաններ, դատաստանական պաշտօնեաներ, զինուորներ, աստիճանաւորներ և այլն... Բայց սրանց համար ապրուստի միջոց էր հարկաւոր, որովհետեւ աստիճանաբար սրանք սկսեցին մասնագիտանալ, բաժանել իրենց աշխատանքը միւս առօրեայ աշխատանքներից և դառնալ զուտ մասնագիտական զբաղմունք, որ պահանջում էր անհատի բոլոր ժամանակը։

Սհա այս պետութեան կարիքն է, որ ծնունդ է ուել հարկերին։ Հարկերը մի տեսակ տուբքեր են, որ տալիս են պետութեան անդամները՝ վարչական մարմնի կամ պետութեան բոլոր ծախքերը հոգալու համար։

Պետութեան նոր ծնած ժամանակը հասարակական լու պաշտօնները վարում էին հարուստ ազւականները (Պատրիցինները՝ Հոռվամում, Եւ պատրիդները՝ Յունաստանում, փարաւոնի ցեղը՝ Եգիպտոսում, Ինկաները՝ Պերույում և այլն և այլն): Խսկ ազնւականները զլիսաւորապէս պատկանում էին տիրող սկզբնական տոհմին կամ ցեղին։ Դրանք սկզբներում վարում էին հասարակական պաշտօնները անվարձ, որովհետեւ միջոց ունին։ Բայց հասարակական զարգացումը նրանց մէջ էլ առաջ սցրեց աղքատներ և այն ժամանակ հարկերը դարձան անհրաժեշտութիւն։

Սկզբներում հասարակական պաշտօննեալին արուում էր որոշ չափի հող, որոշ թիւ սորուկներ և կենդանիներ այդ հողը մշակելու և ապրելու համար։ Եթոյց հարկը վերածւեց որոշ քանակութեան բերքերի, որ առնելում էր ամեն մշակողից կամ սեփականատէրերից։ Եւ վերջապէս, երբ միջին դարի վերջերում երեան եկաւ ապրանքային արդիւնագործութիւնը, երբ փողը դարձաւ բոլոր առարկաների փոխանակութեան ընդհանուր միաւորը, այն ժամանակ և հարկերը սկսեցան կամնց-կամաց վերածւիլ փողացին ձևին։ Ապրանքներով կամ բերքերով (in natura) վերցող հարկերը դարձան փողացին հարկեր։

Բոլոր առաջաւոր աղդերի մէջ մէնք այսօր տեսնում ենք միայն ու միայն փողացին հարկեր։ Խսկ բոլոր վայրենի ու բարբարոս հասարակութիւնների մէջ հարկն առնելում է զեռ ևս բերքերով։ Բայց որովհետեւ կան նաև բազմաթիւ հասարակութիւններ և նոյն իսկ խոշոր պետութիւններ, որ գտնելում են բարբարոսութեան և քաղաքակրթութեան մէջ տեղը՝ զրա համար էլ կան երկիրներ, ուր հարկի մի մասը վերցւում է բերքերով, միւս մասը փողով։ Այդպիսի երկիրներից են օրինակ՝ Զինաստանը, Հարէշտանը և այլն, զրանց շաբքում էր և Տաճկաստանը սրանից մի քանի տասնեակ տարիներ առաջ։

*

* *

Մեր նպատակը չէ ոչ հարկերի զարգացման պատմութիւնը, ոչ էլ նրանց ներկաց սիստեմները պարզելը։ Վերևի ընդհանուր համառօտ տեսութիւնը մեզ համար անհրաժեշտ էր, որպէս զի Տաճկահայաստանի հարկացին սիստեմը (որ մենք կը տանք Շուրջառում մի ընդարձակ յօդւածով) պարզեցր այնքան, որքան կարելի է։

Նոյն նպատակով յիշենք և այն, որ այս օր բոլոր քաղաքակիրթ պետութիւնների մէջ երկու տեսակ հարկեր կան. ուղղակի և անուղղակի։

Ուղղակի հարկ առում են այն հարկերին, որ առնում է պետութիւնը իւրաքանչիւր համացնքից, իւրաքանչիւր ընուանիքից և անհատից (որոշ բացառութիւններով) կամ ամեն մէկից հաւասար չափով կամ համեմատ իր վճարելու կարողութեան։ Ուղղակի հարկերը լինում են շէնքերի, հողերի, արտերի և այգիների համար։ Նրանք լինում են պատուիների, գիւղատնաւեսական և անասնագահական բոլոր արդիւնքների համար. արհեստաւորների վրայ, ամեն անձի գլխի համար (գլխահարկ), ճանապարհների համար և ացն, և ացն։ Իսկ անուղղակի հարկերը տրում են գործածելիք աղբանքների, նրանց պատրաստող գործարանների, նրանց ծախող վաճառականների, ուրիշ երկրից ներմուծւող ապրանքների վրայ և ացն։

Քանի գեռ մի պետութիւն յստամեաց է, հարկերն առհասարակ լինում են աւղղակի։ Որքան նրա ինդուստրիան, ներքին արդիւնագործութիւնը, նոր գործարանները զարգանում և աճում են, այնքան աւելի սկսում է աճել և անուղղակի հարկը, որ վերջ ի վերջոյ ծանրանում է միայն սպառող մեծամասնութեան վրայ։

Քանի քաղաքակրթութիւնը հասնում է աւելի բարձր աստիճանների, այնքան աւելի մարդիկ ձգում են հարկերը ծանրացնել եկամուտների վրայ. շատ եկամուտ ունեցողից շատ վերցնել, քչից՝ քիչ։ Աւելի ևս. մարդիկ աշխատում են հարկերը վերածել առաջառական ձեր (impost progressif), այսինքն՝ առաջին հազարից վերցնել, օրինակ 5, երկրորդ հազարից ոչ թէ 2×5 , այլ, օրինակ $2 \times 5 + 2 = 12$ և այլն։ Դրա հետ միասին օր օրի վրայ շատանում են ձաշներն ընդգէմ անուղղակի հարկերի, նամանաւանդ սպառող մեծամասնութեան գործածած անհրաժեշտ իրերի վրայ դրւած անուղղակի հարկերի դէմ։

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐԻՑԵԱՆՅ, Ալէքսանդր. — Պատմութիւն 75. ամեայ գոյութեան ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի որ ի Թիֆլիզ (1824—1899թ.); Համար Ա. (1824—1850թ.) վեց պատկերով։ Հրատարակութիւն Հոգաբարձութեան դպրոցի։ Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի։ 1898թ. 494էջ. գինը ?։

1899թւականի վերջը լրանալու է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի գոյութեան 75-ամեակը, և ազդ առիթով դպրոցի հոգաբարձութիւնը չաղողակ միաք է լրացել հրատարակելու դպրոցի պատմութիւնը. որպէս երեսում է, ազդ գործը նա լանձնել է պ. Ալ. Երիցեանին, որը, նաև անկախ գորանից, հիմնաւորապէս ուսումնասիրել է Հայոց Ներկայ դպրուս պատմութիւնը, որքանով որ նա կապւած է Հայոց կաթողիկոս Ների և երկրիս կառավարչապետ Ների ու նոցա ունեցած փոխադարձ գարաբելութիւնների հետ. Բացի ազդ, պ. Երիցեանը մասնաւորապէս Թիֆլիսի և մանաւանդ նորա հայ հասարակութեան անցեալի վերաբերմամբ տեղեակ անձի համբաւ ունի. Այս բոլորը պ. Երիցեանին ապահովում են առանձին դիրք՝ ալսովիսի աշխատասիրութիւններ պատրաստե-

լու համար, և միայն չնորհաւորել կարելի է զպրոցի հոգաբարձութեան, որ նա իւր տեսողութիւնից օգտւել է առանց կեղծ ակնօցի իսկական մարդը որոնելու և գործը նորան լանձնելու համար։

Բայց ներկաւ գործի համար աշխատասիրովը պէտք է զգացել զիմելու թէ դպրոցի և թէ էջմիածնի արխիւները, որ և արել է նա, քըրքը լույսով ամեն դրաւոր գոկումէնտ, որ կաէ պահպանւած ցալսօր. Եւ այս աշխատասիրութեան մի գերազանց արժանիքը կալանում է հէնց նրանում, որ դպրոցի կեանքի հետ առնչութիւն ունեցող եղելութիւնները պատմած են զրաւոր գոկումէնտ Ների վկանութեան հիման վրաւ, թէն զրաւոր վկանութիւնները հարկ է եղել երբեմն ստուգել ու բացատրել Որքան և ստւար է այս հատորը, բայց մենք այն կարդացինք ոչ

միան պարզ հետաքրքրութեամբ, համար, իւր ընդհարումներով երկրիս այլ և լավիշտակութեամբ. դորա պատ- զօրեղների հետ. պարտութիւն և ճառը մասամբ աշխատասիրողի ա- լաղթութիւն է այն բանի համար, թէ կարդում ես իսկապէս մի տեղեակ անձի գործ. բայց մի աւելի գլխա- ւոր պատճառը այն է, որ Ներսի- սեան դպրոցը մի բացառիկ զիրք է բռնել մեր Կովկասեան Հայոց գըպ- րոցների շարքում. մինչի Դէորդեան Շեմարանի Հիմնելը Եջմիածնում՝ Ներսիսեան դպրոցը անվիճելի կեր- պով ամենաշանաւոր հայոց դպրոցն է եղել Կովկասում, թէն նա չի ե- ղած միակ հայոց թեմական դպրոցը արա երկրում. Եւ ապա՝ Թիֆլիսի հայ հասարակութիւնը անշուշա մի ա- ռանձին կարևորութիւն է Ներկայա- ցնում Կովկասի հայոց կեանքի հա- մար, լինելով թէ ամենաբազմամարդը և՛ թէ կարեռազո՞նը իւր այն գերի նկատմամբ, որ նորան վիճակել է շնորհիւ Թիֆլիսի կենարոն լինելուն Կովկասում. Խոկ Ներսիսեան դպրոցի պատմութեան հետ կապւած է մա- սմամբ նաև Թիֆլիսի ինտելիգէն- ցիայի պատմութիւնը, թէ չնորհիւ հոգաբարձական հաստատութեան և թէ չնորհիւ այն ձգողական ոչժի, որ ունեցել է ալդ զպրոցը ուսուցչական գործին նկրեռողների համար.

Պր. Երիցնանի պատմութիւնը մի չոր ու ցամաք պատմութիւն է. մի կտոր կուլաւուրական և քաղաքական կեանք է աւստեղ պատկերացրած. Ներսէս Վ-ը ալսուեղ է իւր ծրա- գիրներով ազգագին կրթութեան և չառաջդիմութեան համար, իւր զօ- րեղ կամքով խոչնդաներ լարմելու համար. իւր ընդհարումների հերկրիս զաղթութիւն իրար լաջորդում են— բայց միշտ զգացւում է արծւի զօ- րութիւնը, որը ահա ահա պիտի զայ իւր թեմերը նորից տարածելու իւր ստեղծագործած դպրոցի վրաէ:

Ներսիսեան դպրոցի պատմու- թիւնը տրւած է աւստեղ կից երկ- րիս կրթական գործի հետ առհասա- րակ. հարկաւ, վերջինս շատ ման- րամանն չէ, այլ պատկերացնուում է իւր խոչոր գծերով, առանց զանց առնելու կառավարչական կարևոր Կարգադրութիւններն ու դպրոցական վիճակագրութիւնը. Ալդպէս էլ հար- կաւոր էր, և սխալ պատկեր կ'ստաց- էր եթէ աշխատասիրողը սահմանա- փակէր միմիան Ներսիսեան դպր- ոցի սեփական կեանքով, քանի որ նորա կացութիւնը մեծ կապ է ու- նեցել երկրու թէ քաղաքական և թէ ընդհանուր կրթական հանդա- մանքների հետ, և նոցն իսկ այդ դպրոցի զնահատութիւնը դժւար է անել առանց ուշք զարձնելու նորան ժամանակակիցից այլ դպրոցների վրաէ:

Տրւած սեղեկութիւններից Ներ- սէսի կեանքի մասին դուրս է զա- լիս, որ Ներսիսեան դպրոցը նշանակ- ւած չի եղել թեմական դպրոց լի- նելու անպէս ինչպէս մենք այժմ հասկանում ենք ալդ տերմինը. Թե- մական դպրոցները իսկապէս ծնունդ են 1836 թ. պոլոսենիելի, մինչդեռ Ներս. դպրոցը հիմնելու դադարաց լրացաւ. Ներսէսը հետ որ վերջինս Թիֆլիսի վիճակաւոր առաջնորդ նշանակւոց (1814 թ.), իսկ պաշտօ-

նապէս բացւեց ալդ դպրոցը 1-ն դեկտ. 1824 թ., ուրեմն Պոլոժենիեցի հրատարակումից 12 տարի առաջ. Եւ նույն խոկ երբ Յովհաննէս Կար բեցին, Թիֆլիսի թեմի առաջնորդ եղած ժամանակ, երևի թելագրւած Կովկասի կառավարչակետից, պահանջում էր որ Ներսէսի շինած դպրոցը թեմական դպրոց նկատի ու ըստ այնմ ծրագիրը փոխի, Ներսէսը, Քեսարաքիալից, բողոքեց դորա զէմ, ասելով որ Յովհաննէս արք եպիսկոպոսը իրաւունք ցունի ժեռք տալիւր Ներսէսի հիմնած դպրոցին ու կառուցած շինութեան, և որ թող նա առանձին հիմնէ թեմական դպրոց, եթէ կամենում է: Ուս մի հանգամանք է, որ նոր լուս է սփռում հալոց նախկին հոգեորական վարչական-իրաւուրանական կացութեան վրայ և մի մուկնտ է, ուր հին հակական իրաւական հայեացքը գալիս ընդհարւում է նոր ժամանակի պետական վարչական հայեացքների ու կանոնների հետ: Ներսէսը պնդում է որ ինքը, ալդիսի պահանջ անհիլի, հիմնում է մինչև իւր ժամանակը եղած սովորութեան վրայ նախկին վրձակաւոր առաջնորդների իրաւունքների նըկատմամբ:

Մենք բաւականանում ենք միայն մատնանիշ լինելով Ներսէսի ալդ հետաքրքրական տողերի վրայ, որ մի կառոն է կազ ում այն մեծ բողոքագրի, որ չինելու ենք Ներքի (տես գրքի էջ 344):

Թիֆլիսում հալոց դպրոց ունենալու կարեսութիւնը, որպէս երեսում է, ազգի առաջարոր մասը զգացած էր գեռ ևս Դերսէսի Թիֆլիս

գալուց առաջ, ալդ կէտը պ. Երիցեանը չի նկատել և կամ չի շեշտել. ալլ կերպ ինչպէս մեկնել որ Լազարեան Յովհաննէս ազան, որը վախճանւեց 1801 թւականին, կտակել էր 3000 ոռուլի թղթագրամ, եթէ Թիֆլիսում հալոց դպրոց հիմնեելու լինի (ա. Երից. էջ 40): Թիֆլիսում հալոց դպրոց ունենալու կարևորութիւնը ապացուցանում էր Ներսէսին Սերովէ վարդապետը (Կախովին կաթոլիկ, որ շուրջ 1±10-ին էջմիածին էր եկել լուսաւորչականութիւն ընդունելու, իմուս Աստրախանի հալոց առաջնորդ, Ներսէսի լաւտնի հակառակողը, Յովհաննէս կարքեցու մտերիմներից, տես նորա կարծիքները հալոց դպրոցը ուր հիմնելու մասին գրքի մէջ 26 27): Այս երկու իրուգութիւնները կարծում ենք արգէն ինքնին ցուց են տալիս, որ Թիֆլիսում հալոց բարձր դպրոց հիմնելը մի տեսակ ժամանակի պտհանջ էր գտնուած, և ալդ էլ ինկատի ունէր Ներսէսը, երբ նա կամեցաւ Թիֆլիսի թեմակալ առաջնորդ լինել:

Ներսէսը դպրոցաշէն մարդ էր առհատարակ. 1:07-ին երբ նա նոր Նախկինանի առաջնորդական լաւորդ էր, դրեւ ալդ քաղաքացոց խնդրելու Լազարեան Յովհանիմ ազալից, որ սորա եղբայր Յովհաննէս ազալի կտակած 200.000 թղթագրամ ոռուլին գրծածւէր Նոր-Նախկինանում բանալու այն դպրոցը, որ ապա բացւեց Մոսկվակում, և գորա համար Ներսէսը գրեց կանոնադրութեան մանրամասն նախուզիծ. (ա. Երից. էջ 11-24): Լինելով էջմիածնում և իրեն զգալով ամենաազգեցիկ մարդը,

նա 1833-ին, Արմեոս կաթողիկոսի ժառանգաւորաց խափանւած ուսումնաբանի տեղ շինել է տալիս մի փոքրիկ զպրոց 50 աշակերտի համար, բայց միայն որպէս առառեւր իմ վիճում խորհրդական նախառավառեռեալ ուսումնաբանի վայելչուկան այնմը ընդհանրական Պատրիարքական Աթոռու ամենամյա Հայոցոց այնպիս որ նա մտադիր էր Էջմիածնում հիմնել մի բարձր զպրոց, որին նա համարսարան անունն էր տալիս Աներասմին այդ միտքը չի թողնում նաև Ներսիսեան զպրոցը Թիֆլիսում հիմնելիս, Բանից դուրս է զայլիս, որ շնուրվ իւր զպրոցի պահպանութեան համար 30-32 կրպակները (զպրոցի հին մեծ չի նութեան դիմոց) ժողովրդական արդիւնքներով և ոչ եկեղեցապատկան գետնի վրայ, Ներսիսը կամենում էր այդ մի շարք կրպակների ետեր ձգուղ եկեղեցապատկան զետնի վրայ մի մեծ քարտանուար կառուցանել, որի արդիւնքով պիտի պահպանէր Էջմիածնում կառուցանելք անմալսարանը: (Ցիս Ներսէսի առ մինիստր Բլուզովը ուղղած թղթի տողերը գրքի էջ 328). — Ներսէսի համալսարանը ապա մենք տեսնում ենք «Ակադեմիան անւանւած», և ալդ անունով արդէն Էջմիածնում բարձր զպրոց հիմնը ըստ տեսնուելը օդուակար համարած ենք տեսնում երկրիս կառավարչապես բարոն Ռոզենի կողմից (առ բարոն Ա. զ. նի առաջարկութիւնը մինիստր Բլուզովին, գրքի էջ 289): Ներսէսի ալդ կղձը, թէև զուց բոլորովին անկախ նորանից, քանից զայտնւած ենք տեսնում նաև զորա-

նից շատ տարիներ լիտով (օրինակ՝ Կոռնվակ ամսագրում) ՅՈ ական թւականներին, մինչև որ կաթողիկոս Գէորգ IV այն իրադործից 1872 թւին: — Մոր այս մատեցումները անլիակատար կըլինէին, եթէ չը լիշենք նաև այն, որ Ներսէսը, գեռ ևս իւր քան տարեկան հասուկից ի վեր, մեր ազդի մէջ շատ սակաւ գիտուն մարդիկ տեսնելով և լսած լինելով Միսիթար Սերաստացու մասին, որը Վենետիկում հայոց ուսումնարան կանգնացրեց, որով այս լսած օրէ լառաջացան և լառաջանան մինչև հայսօր ազգական ուսումնականութիւնքը (այս խօսքերը նա գրում է 1837-ին), ինքը միշտ ունեցած էր Միսիթար Անքաստացու գործը պինակատակ մացաց:

Այս մատեցումները անում ենք մենք ինքներս, բայց պ. Երիցեանի զըրքում բերած են բոլոր իրոզութիւնները, որ հարգաւոր են զորա համար: — Այսպիս, ուրեմն, Ներսէսի հիմնած զպրոցը մի թիմական սահմանափակ զպրոց չպիտի լիներ, և ոչ միայն տասնական, ալլ և երեսնական թւականներին թևմական զպրոց (սեմինարիա) անունով հասկացւում էր մի շափաւոր զպրոց միտիման հոգեորականները պատրաստելու համար, ուր պիտի ընդունէին զինաւորապէս հոգեորականների որպիք, որովհետեւ, մի տարօրինակ հասկացողութեամբ, հոգեորականութիւնը մի տեսակ ժառանգական էր ընդունւում: Ալդպիսի մի սեմինարիալի էր ուզում վերածել Ներսէսական զպրոցը կաթողիկոս Յովհաննէս Կարբեցին, և այդ առիթով է

որ Ներաէսը 1838 թ. ապրիլի 23-ին Քիշնեից գրեց ներքին գործոց մինիստր Դիմիարի Նիկ. Բլուղավին այն արտասազոր մեծ բաց և բաժանդակալի թուղթը, որ բանում է պ. Ներիցեանի գրքում 325-ից սկսած մինչեւ 363-րդ էջը Ազգ թղթի մէջ Ներսէսը զետեղել է իւր զպրոցի հիմնադրութեան և առաջին աւարիների պատմութեան զիմանար նիւթական հանգամանքները, և գորանից մեծապէս օգտւել է նաև պ. Ներիցեանը իւր գրքի զանազան տեղերում:

Մինչև Ներս. զպրոցի հիմնելը (շինութիւնը սկսւեց 1821-ին, աւարտւեց 1825-ին) Թիֆլիսում գորութիւնն է ունեցել միմիակն մի ուսումնարան (խալֆաչականները չհաշւած). զա էր 1802-ին առսաց կառավարութեան հիմնած զպրոցը վրաց ազնւականների որդոց համար, որը 1830-ին փոխւեց և վերակաշեց զիմնազ (Թիֆլիսի ալճմեան առաջին արական զիմնազը). Բայց ազգ ազնւականաց զպրոցը որպէս նաև օսմաններն էլ վկաչել են, շատ ստոր էր Ներսիսեան զպրոցից Հետաքրքրական է շատ, որ Ներսիսեան զպրոցի առաջին առաջին արական զիմնազների ուսումնականացների հետ ընդունել են նաև մի քանի վրացիք, նոցաթւում բարձր ազնւականներին որդիք, և նուն Ներս. զպրոցն է եղել այն վայրը, ուր հայ ազգիկը առաջին առաջին առաջին առաջին արական զպրոցն ուսում առնելու համար. Դոցանից մէկը զանձակեցի է եղել, ալ արվառէ Յակոբեան Առէշէֆեանց (Արէշեան), միւսը «Մարգիառ Արծրունաց», որոնք լատկապէս նահան

Զրպետի ֆրանսերէն դասերին են հնատեում եղել.

Լինելով իւր ժամանակի լաւագործ զպրոցը, ուր սական չեն եղել այժմեան դասարանական ամեն կարգկանոնները և մանկավարժական մեթոդ զասաւանդութիւնը, Ներս. զպրոցը, Ներսէսի Բեսարաբիա գնաւուց (յաւ է ասել աքսորեւուց) լետու ընկնում է տարտամ վիճակի մէջ Յունաննէս Կարեցու Նախ Թիֆլիսի առաջնորդութեան ու ապա կաթողեկանութեան օրոք, երբ լինում են ժամանակներ, որ զպրոցը ժամանակաւորապէս վակւում է, իսկ աշակերսները խմբով անցնում են Թիֆլիսը դիմնազը. Մինչև 1850 թւականը, ու կանգ է առնում ներկայ հասորը, մենք այլ ես չենք տեսնում զպրոցը իւր առաջին տարիների վայլի ու խանդավառութեան մէջ, զորա հակառակը՝ պետական զպրոցները զգալապէս առաջդիմում են, չորհիւ զպրոցական-վարչական բարեփոխութիւնների. 1802-ին հիմնած Թիֆլիսի ազնւականաց զպրոցը, որը 1814-ին ենթարկւեց Կազանի, 1823-ին Խարկովի համալուրանի տեսչութեան, 1826-ին ունեցաւ մի մանկավարժ վեր ստեսուչ Սանասէլին, որին 1828-ին չաջորդեց Գրուբէր. Նոյն ազդ թւականին արևեց Ալանունագրութիւն Անդրկովկասեան զպրոցների մասին, հաստատւեց կովկասիան զպրոցների դիրեկցիա. 1830-ին ազնւականաց զպրոցը զարձաւ գրադաւ գրադաւ նազ, ուր 1831-ին հալոց ազնւականների խնդրանոք մտցւեց նաև հալոց.

լեզւի դասառութիւնը. 1835-ին տրեց բարձրագույն հրաման կովկասիանի արքունի ուսումնարանների մասին, գաւառական և քաղաքներում բացուցին երկդասարաննեսն գաւառական դպրոցներ, որոնք 1834-ին դարձան երեք դասարաննեան, մինչդեռ 1834-ին կառավարչապետի կարգադրութեամբ փակւեցին Անդըրսկի պլիասի բոլոր հաջոց, մահմեդականների, վրացաց, հրէանների մասնաւոր (խալֆաւական) դպրոցները, ի բաց առած Ներսիսեան դպրոցը, Հոռոհիւ սորա հոգեոր լինելուն և, թերեւ, նորա մեծ համբաւին ոչ միայն Հայերի, այլ և օտարների ու կառավարութեան աչքում Բայց փակւածների տեղ չբացւեցին հաջոց կանոնաւոր ծխական դպրոցներ, և եթէ Ներսիսում բացւեց պալուժինելի համաձայն թեմական դպրոցոց, բայց դպրոցական գործի կանոնաւոր զարգացման համար հարկաւոր էին բազմաթիւ հաջոց դպրոցներ և դոցա համար մի ընդհանուր զեկավարութիւն. Պր. Ներսիսանի գրքում մենք հանդիպում ենք մի տեղ մի հետաքրքրական փաքտի, որին հեղինակի կողմից ոչ մի կարեւորութիւն չի արւած. այդ այն է, որ Էջմիածնաւ նորարաց Արևոտը մարտ 10, 1837 թւի օրադրութեամբ որոշեց՝ Ներսիսեան դըպրոցի նախկին տեսուչ Յակով Արդանաւանցին նշանակել «Ընդհանուր վերատեսուչ ամենայն հոգեոր և նեմարանաց (սեմինարիաների) լամբնախն վիճակս Հայոց Խուսաստանի» տարեկան 800 ռ. ունիթիով. և նուն Արդանաւանցը պիտի ուսւուրեն դասեր աւանդէր «ի վերին դասարան հոգե-

ւոր ձեմարանին Աթոռութիւն. և վիշեալ 800 ռուբլի ունձիկը պիտի վճարէին Ռուսիակի վեց հակոց թեմերը, գոյաթւում և Թիֆլիսի թեմը 150 ռ. Խնչակէս երեսում է, այդ որոշումը հետամնք չի ունեցել ապա թէ ոչ այդ կընչանալիէր հաստատել հաջոց դպրոցների մի ընդհանուուր վերատեսչութիւն, որի գոյութեան մասին չետագալ տարիներում մենք չենք լրած: Եւ վարչական կողմից թիչ հաստատութիւն է կարողացել դարդանալ, երբ նա կապւած է եղել Էջմիածնի հետ: Եւ շատ պարզ է, որ երբ 1892-ին Մուրճը առաջարկում էր ձեռնհասանձերից բարդացած մը ուսումնական-հոգաբարձրութիւն հաջոց բոլոր դպրոցների համար, այդ հրաւէրը մնաց ձայն բարրառող լանսապատի:

Ներսէսը դպրոցաշն լինելով հանգերձ՝ գրաւած էր մի-մի մեծ դպրոցներ հիմնելու զաղափարով, և թւում է մեզ, որ նա չէր ըմբցունել տարբական բայց կանոնաւոր դպրոցների կարեւորութիւնը. զոնէ ազգպէս է երեսում այն բոլորից, թիչ մենք կարողացանք դտնել պերիցեանի այս առաջին հատորուն: Ոինչդեռ միաժամանակ զարգանում էր պետական դպրոցների ցանցը Անդրկովկասում, հաջոց կողմից՝ և Ներսէսի, և՝ քաղաքացի հաստատելութեամբ կանոնաւութիւնը. էր Ներսիսան դպրոցով: Ծխական դպրոցների կարեւորութիւնը զդացւեց միախն լիտոյ, Ծատթէսս և մանաւանդ Գէորգ կաթողիկոսի ժամանակ: Եւ եթէ հաշեւլու էլ չընենք Յովհաննէս կարբեցու, տարիները, դարձեալ տեսնում ենք, որ Ներսիս-

ուեան դպրոցը՝ Ներսէսի կաթողիկոս սութեան օրերով, գոնէ մինչև 1850-ը, պարտքերի մէջ էին շնորհիւ երեց-շատ հեռու էր մի բարեկարգ դպրոց փոխների անպիտանութեան. քա-լինելու վիճակից, Դեռ ևս չկար հա-լոց ուսուցիչների դաստիարդ, քանի որ ազգափախն կարող էր կազմւել միայն երբ բարեկարգ թէ-կուզ միայն ծխական դպրոցներ բաց-էին. իսկ դորա վրայ մտածող չկար, թէ ըստ Պոլումենի կարող էին ոչ միայն թեմական ալ և ծխական դպրոցներ բացւել. Անդրկովկասի հայութեան աշքը տնկւել էր միայն Ներսիսեան դպրոցի վրայ, որը ասո-մարէզ էր դարձած ամեն անսակ լա-ւակնութիւնների թէ հոգաբարձու անձերի և թէ շատ թէ քիչ պատա-հական ուսուցիչների կողմից. Աւ մենք չենք տեսնում որ Ներսէսը, այդ զարեղ ու ազգասէր անձը, հաս-կացած լինէր դարւու ողուն համա-պատասխան դպրոցական սխատէմը. նա իւր անունը կապել էր մի հատ դպրոցի հետ, բայց կարծես չէր զգում որ Նորա բարեկարգութիւնը կախ-ւած էր ընդհանուր դպրոցական հա-մակարգութիւնից, որի մէջ իւրանու-նով կոչւող դպրոցը միայն մի որոշ զեր ունէր կատարելու և ոչ թէ ազդ մի դպրոցը պիտի ամեն ինչ փոխա-րինէր.

Դպրոցի սկզբնաւորութիւնը սա-կայն վառւոր էր. Ներսէսը իւր ամբողջ մատաւր ու ոգեկան կարո-զութիւնը գործ զրեց ազդ սկիզբը վառւոր դարձնելու համար. Թեմը ոչ մի միջոց չունէր Ներսէսի մտա-զրած գործին օգնելու համար. եկե-ղեցիները չունէին ոչ մի կոպէկ սուզ միջոցները. «Ներսէսը տեսաւ,

որ իւր զիճակում երկու էլ ուրիշ առաջնորդներ՝ կամ՝ Հաղբատի և Սահաննի արքեպիսկոպոսները, որոնք բաժանած ունեին իւրեանց մէջ երկրիս ժողովուրդի նշանաւոր մասը և նոյանից առաջտղ հասովթները, Ներսէսը շուտով վերացրեց Հաղբատի եւ Առաննի առաջնորդութիւնները և, դոցա արքեպիսկոպոսներին թողնելով լոկ վանահայր կոչմամբ, նոցա ժողովուրդն ու եկա հուտները մտցրեց իւր իրաւաստթան տակից, (Ստորագծումները մերն են):

Ստորագծած տողերում կարծում ենք որ պ. Երիցեանը, թէ և անքան հմուտ տեղական մօտիկ ամեցեալին, սխալում է, զոնէ մի այլ ազբիւրից, Թիֆլիսի հանգամանքներին անքան տեղեակ անձից, ինչպիսին է հանգ, փէորդ Հայովերդեանը, մենք գիտենք, որ Հաղպատի (և ոչ նաև Սահաննի) պիճակը, երբ նորա առաջնորդն էր Սարգիս արքեպիսկոպոսը, 1802-ին կամ 1803 ին ընկաւ էջմիածնի միաբանութեան Թիֆլիսի առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոսի իշխանութեան տակ¹ու Ռուբեն Թիֆլիսի հայոց թեմը Գանձակից սկսած մինչև Սև ծովը, գեւս ոս Ներսէսի Թիֆլիս առաջնորդ դալուց (1814 թ.) առաջ ենթարկւած էր

^{1.} Տես Սալեաթ-Նովաչ, հրատ. Գէորգ Հայովերդեանի, Մոսկա, 1852 թ., առաջաբան էջ Ժ. Ժ. Ժ. Վ. Ալեքսեևից էլ զիտենք, որ էջմիածնի միաբանութեան Թիֆլիսի առաջնորդութեան էնթակալ էին մինչև 1808—9 թւականնը՝ վանքի Ս. Աստածածածին և Զիգրաչէն եկեղեցիները միան:

էջմիածնի միաբանութեան առաջնորդին, և ոչ թէ այդ կատարեց Ներսէսի առաջնորդութեան ժամանակ:

Բայց պ. Երիցեանի այդ անձը տուրթիւնը շտկելու դրդող գլխաւոր հանգամանքը այն է, որ Վրաստանին ենթարկւած Հաղպատի միաբանութեան հետ էր կապւած հայոց գլուխթիւնը Թիֆլիսում, ինչպէս այդ մասին ըստ երևութիւն շատ միշտ հայեացք է զարմանում Գէորգ Հայովերդեանը «Սալեաթ-Նովաչ»ի հրաւարակութեան լառաջաբանում (էջ Փթ), և որից պ. Երիցեանը, գմբախտաբար, չի օգտւել, մինչդեռ այդ շատ տեղին կըլինէր իւր աշխատասիրած գրքում, Թիֆլիսեցոց մտաւոր կրթութիւնը նկարագրի համար:

Մեր այս գրախօսականը շատ է երկարում, պ. Երիցեանի աշխատասիրութիւնը սական անքան բազմաբախողակ է, որ մեր գրութիւնը շատ աւելի կ'երկարէր, եթէ կամենակինք նորա բովանդակութիւնը նոյն իսկ ընդհանուր զենքով սպառել: Բայց մեզ հարկաւոր է նաև մի քանի մուժ մնացած կէտեր ևս շօշափել: Դոցանից մէկը այն վէճն է որ մղում էր Ներսէսը Յովհաննէս Կարբեցու դէմ, որը կամենում էր Ներս: գպրոցը վերածել թևմական դպրոցի (սեմինարիա): Յովհաննէս Կարբեցին այնքան ուս գոյներով է լաւանի մեզ, որ նրա և ոչ մի դատը չի կարող գրաւել մեր համակրութիւնը. բայց հարց է թէ որքան արդար էր Ներսէսը պահանջովի, որ Կարբեցին Թիֆլիսը պահանջովի, որ Կարբեցին Թիֆլիսի սեմինարիան առանձին շինէր,

իսկ Ներս. դպրոցը մնար զատ զըպ-
րոց, բոլորովին անկախ էջմիածնի
իրաւասութիւնից և կառավարւէր
իւր՝ Ներսէսի՝ հսկողութեան ներքո՝
իւր ընտրած անձերի ձեռքով. (Խօսքը
այն ժամանակամիջոցի մասին է, երբ
Ներսէսը Բեսարաբիակի առաջնորդ
էր): — Պէտք, Երիցեանը ալզ թաղնում
է չլուծւած, և, ըստ երեսութիւն,
նա ըստ ամենայնի հակում է
դէպի Ներսէսի պահանջները:
Երկրորդը այն կառարեալ լուեկան
համաձայնութիւնն է, որ տալիս է
պ. Երիցեանը ի դիմաց այն մերժու-
մին, որով Ներս. դպրոցը կառավար-
ող տառնից կոմիտաց հրաժարու-
աց որ և է հաշիւ տալ իւր վեց-
ամեակ զրամական կառավարութեան
մասին և ոչ էլ որ և է կոպէկ
վերադարձրեց հոգեոր կառավարու-
թեանը. թէ զուցէ նա ալզ հաշիւն
ու զրամը տւեց այն ժամանակ Բե-
սարաբիալում նստած Ներսէսին,
նորան միակ իրաւատէր ճանաչելով.
զրքի մէջ ալզ մասին լիշտակու-
թիւն չգտանք:

Ալժմ տևանենք պ. Երիցեանի հա-
կակութեամբ լի վերաբերմունքը
դէպի զործող անձերից մանաւանդ
Շահան Զրպետը. Այս անձը մա-
նաւանդ բազմաթիւ էջներ է դրաւում
պ. Երիցեանի ալզ հատորի մէջ. պէտք
է չնորհակալ լինել ալզ բոլոր տե-
ղեկութիւնների համար, բայց պ.
Երիցեանը թւում է մեզ թէ չի կա-
րողացել անաշառութիւն սպահանել
նորա վերաբերմամբ. Զրպետը, որը
Պարիղի, Արմելազիտութեան զպրո-
ցում առաջին անգամ ալնտեղ հաս-

տասւած հայերէնի ամբիոնի ուսուց-
չապետն էր, բայց որի գրութիւնը
արդէն խախտած էր իւր գէմ զըր-
ւած քննադատական չօրածնիբով,
թողնում է Պարզ զը և 1826-ին Ներ-
սէսի հրաւէրքով գալիս թիֆլիս
դպրոցում ուսուցիչ լինելու, որ և
մնամ և նա մրնչե 1829 թ. սկիզբը,
հեռանալով զպրոցից իւր ստանա-
լիքների մասին եղած մեծ տարա-
ձանութիւններից կատու, որոնց պատ-
ճառով հարկ եղաւ նուն խկ երկրիս
կառավարութեան միջամտութիւնը:
Ժմարտութիւնը սա է, որ Շահան
Զրպետի ուղեսորութիւնը Պարիզից
թիֆլիս թանկ նստեց Ներսէսին.
բայց այդ, որպէս և այն, որ Զըր-
պետի իւր հայկաբանի անունը Պա-
րիզում խախտած էր, վեր նական
պատճառ չպիտի լինէր պ. Երիցեա-
նի համար՝ անսպառ ատելութեամբ
բարերեկու դէպի մի անձն, որը թէ
գիտութիւնով և թէ ալլ շատ հան-
գաման քններով բարձր էր. Ներսէսի
հրաւէրք բոլոր ալլ ուսուցիչներից,
մանաւանդ որ տրած տեղեկութիւն-
ներից էլ երեսմ է որ Ներսիսեան
դպրոցը իւր բարձր անւան համար
ոչ աննշան չափով պարտական էր
նուն Շահան Զրպետին. Պր. Երի-
ցեանը մեծ սիրով հաշում է բոլոր
ուորլիները, որ հասել են նորսնե
միծ խնամքավ առաջ է բերում Դէորգ
աղա Արծրունու նամակները՝ գրւած
Ներսէսին Զրպետի ուոճիկների մա-
սին (ա. զրքի էջ 156), բայց միան
այն տպաւորութիւնը անելու համար,
թէ տեսէք-տեսէք որքան չատ փող
է տոանում Զրպետը. Եւ մենք ալզ
տոլաւորութեան աւակ էլ կը մնակինք:

եթէ միայն չլինէր Յարութիւն վարդ. Ալամդարեանի գրութիւնը՝ Ներսէսին 1823 թւականից (գրքի Էջ 211-223). այդ գրութեան մէջ է որ երեսում է թէ ինչ ասխական վաճառականի սակարկութեանն ձևերով է արուելիս եղել առօնիկ Զրադեանին. Ահա այդ տողուր, որոնցից պ. Երիցեանը սս կայն չի կամնեցէ ոչ մի օգտառ քաղել չո գուշտ Զրադեանի.

ԱՅԱՀ Ե՛ թէ լեռ ելից Զերի Վրաստանէ 1828 օգոստ. 8 վիշեալ Զրադեան ուրսաւ ասխուանոյ ստանալ զոտմէկի իւր՝ տակաւին անբացարոշ (ռասրագծումները մերն են) լազնուականէ Արծրունչուզ, թէ որպիսի կաջք և շոյնդն վեր երեէին 'ի զլուխս իւրաքանչւր ամսո՞ զայդ վշատակել ատազուակէ է. երբեմն 100 մտնէթ տակր նմա լամփոն, երբեմն 80 և 60. Այսպիսի յանելածովք եւ կրծառմամբ զոյրացուցեալ զնա՝ բռնադատեաց բողոքագիր մասուցանել զկառաւիվարութենէ Ն. Դպրոցին առ կոմմն Երևանաւը (=կոմս Պատկիհչ, Կոմիկասի կառավարչապետ):

Եւ ասպա՝

«Զալս զգացեալ Արծրունո՞ արժան զատեցաւ դիմել առ Զըրպիկան և խնդրել խնակել 'ի նախնդակ բարեկամութիւն իւրենաց և լիմ վերալ զարձուցանել զբողոքագիրն, իբր թէ ես էի զրկող նորա և նեղիչ և հատանող վարձուց մշակութեան նորա, որ էր ստութիւն ստութեանց, զի բացակատ է

Զեզ, Զրադեանի և ոչ ալլոց չատից՝ զի չիք իս տուեալ նմա երբեք զնաքարակիտ կամ բնիոն մի ուրիմն և ոչ բնաւ բարձեալ զայլ ի նմանու կամ խնակեալու (անս ուս երկու քաղւածքների համար Էջ 216):

Եւ ոչ միայն Գլորդ աղա Արծրունին էր ադդակէս վարւում, այլ և Ներսէսը ինքը, երբ Փիրջինս Միքլիսի առաջնորդ էր. նուն Ալամդարեանն է որ իւր վիշեալ գրութեան մէջուզզակի իրեն Ներսէսին ասումէ է՝ «պարոն Զրադեան չկարաց զորոց պատասխանի կամ վճիռինչ լսել ի Զենջ 'ի մասին վիճակի իւրոց և ոռնկի, թէպէտ ցայդ ու ցերեկ զեզերէր յԱռաջնորդաբանին» (Տես Էջ 221):

Կարծում ենք որ Ներսէսի աջ թե Ալամդարեանի ալլիքաքտավիճպկայութիւններում մի բան պիտի արժենան. Ներսէսը մեծ էր, զօրեղ էր, բայց արդարութիւնը? Ինչ է նշանակում 60-ից անց ծերունի գիտնականին, կնոջ ու քարտուղարի հոգսերով ծանրաբեռնըւած, բերել տալ Պարիզից ու անորոշութեան մէջ թողնել նորան ապրուստի միջոցների մասին և ոռնկի իսնդրի մասին ստիպել «ցայդ ու ցերեկ զեզերէր» առաջնորդաբանում, ու լսույ էլ նորան տալ երբեմն 100, երբեմն 80, երբեմն 60 սուբլի ամսական, չնայած որ ալդպէս վարւողը (Գ. Արծրունին) հէնց ինքն էր սկզբնապատճառ Զրադեանին Պարիզից հրաւիրելուն:

Մեզ լաւոնի չէ թէ որքան մեծ է եղել Զրադեանի մասնակցութիւնը և ուսաւորչական Հայոց Եկեղեցու Կանո-

Նադրութեան (==պոլսենին) գործում, բաց բանի է նաև պ. Երեցեանի այս զբքից, որ Զրպեաը, երկրիս կառավարչապետ կոմս Պասկեւիչի հրաշիրանօք, ազդ կանոնադրութեան մշակման վրայ էր պարապած, որի համար և պիտի ստացած լինէր կենսաթոշակ տարեկան 500 ռ. արծաթ և ոչ թէ ազդ թոշակը կասրած էր Զրպեալն՝ սորա հակառակութիւնների համար Ներսէսին, ինչպէս տենգենցիաբար ասում էր Ալամդարեանը և նորան հետեւլով՝ նաև պ. Երեցեանը, որը առանց ազդ և ալլութեան կրկնում է Ալամդարեանի խօսքը. Բաց ևթէ Զրպեատի մասնակցութիւնը ու նշանակութիւնը ազդ զործում մնձ է եղած,—ասպա, ի նկատի առնելով ազդ կանոնադրութեան մէջ հակաց եկեղեցու պահպանած շահները և նորա յաւագում կարգերից շատերի արտացոլումը, կարծում ենք որ Զրպեաը արժանի է ազգի երախտափիտութեան և ոչ վրիժառութեան նոյն իսկ նորա մահւանից (1837) վաթաւուն տարի մետով:

Մենք ի դէպ լիշեցինք Ալամդարեանին. բաց Ներսիսեան զալլոցի պատմութեան այս հասորի մէջ Ներսէսից չետու նա է ամենավազուն անունը, որին և նւիրած են ջերմ էջներ. Երբ Ներսէսը հիմնեց իւր զբարոցը՝ Լազարեան ճեմարանում կրօնի զասատու ազդ երիտասարդ քահանային միան վաստանացաւ նա իւր դպրոցի վերակացութիւնը (==վերատեսչութիւնը) լանձնել. Անկասկած է որ Ներսէսը իւր ընտրութիւնն արել էր ի նկատի ունենալով ազդ

քահանայի (ասպա վարդապետի) համեստ՝ պահանջները, նւիրւածութիւնը իւր՝ Ներսէսի անձին, և նորա տոկուն բնաւորութիւնը) ազդ և այն հանդամանքը որ իրեն ուսուցիչ Լազարեան ճեմարանի, նաև տեղեակ պիտի լինէր մի լաւ զբարոցի կարգ ու կանոններին: Բարձր ուսում չունէր նա և, 1825—27, ամեն ինչ կատարում էր Ներսէսի համաձանութիւնը ուսանալուց վեաով, իսկ հիմնադրի բացակալութեամբ՝ շարունակ հացիւ էր ներկացնուամ նորան դպրոցի տմին պարագաների մասին: Կա կառավարեց զբարոցը սորա զուութեան առաջին մօավեց սարիները (1825-30) մինչև որ զպրոցը գուրական կազմութիւնից¹. ասպա տեսուչներ եղան Յակոբ Արդանիեանց մենչև 1835 ի կէսը, ասպա մի ռուու և ողմա Ապաստիկ-Աւտոնոմով մինչև 1838-ը, Յովսէփ քահ. Օրբելի մինչև 1847-ի կէսը, Գևորգ Շանչեանց 1849-ին բաց

¹. Ներսէսը աւելորդ էր համարել նորան որ և է ռոճիկ կապելը, չնայած որ նա պիտի թէ իրեն պահէր և թէ իւր երկու աղջիկներին. Անոռնիկ դրութեան մէջ կացաւ նա մինչև վերջ, ալսինքն իւր աւեսչութեան մօավեց սարիները. բայց ամենայն խասութեամբ Ներսէսը նորանից հացիւ պահանջնեց, և երբ, զոնացուցիչ հաշիւ չստացաւ նորան զցեց իւր աչքից, ամբողջ 14 ամիս անգործ ժողաւ նորան իւր մօավ Քիշնեում, ուր Ալամդարեան քչեց Ոիֆլիսից Պատկելիչի կամքով, և միան Ալամդարեանի դասնազին զանզատազրից մատու Ներսէսը նորան նշանակեց Նոր Նախիջնանի. Ս. Խաչի վաճառակար, այն էլ «ժամանակաւոր» կերպով:

միայն 40—50 օրով, ապա Գաբրիէլ քահ. Պատկանեանց, առանց սակայն Ներէս կաթողիկոսի դրաւոր հաստատութեան:

Քայզ զպրոցի տեսուչների անունները զրեթէ ոչինչ չեն ասում, որովհետեւ զպրոցի խեկախան կառավարութիւնը միշտ գտնւել է հոգաբարձուների ձևոքում: Ակզրում Ներէսը ինքն էր միակ տէր և հոգաբարձու: ապա, եբբ, 1827-ին նա գնաց պատերազմի երեանեան նուհանցը ու լեսոտ Բեսարաբիա աքսորեց՝ մինչև 1830-ը զպրոցը կառավարում էր Ներէսի նշանակած Վորդ-ազա Արծըրունու, Յարութիւն Շերմազանեանցի ու տեսուչ Յարութ: Վ. Ալամդարեանի ձեռքով բաց Ներօսի հրահանգներով, և այն երեքից ամենից հարուստը նաև ամենից ազդեցին էր Յամիաննէս Կարբեցին կազմեց նախ միխորհրդարան 1830-ին ապա տասը հոգու «Ալմանտէար» (Առմիակա բարեկարգութեան: Առումնարանի Հայոց Տիմիսուակ), որի անդամները Ներակոի կողմնակիցներ եղան: ապա նոյն պաշտօնի մէջ ենք տեսնում ազնւականներից, քաղաքացիներից ու երիս հոդեսրականներից բազկացոծ սփորհուրդով կամ «խորհրդարանը», որը, Ներէս կաթողիկոսի հետ առաջաձնութեան մէջ զանունով՝ լուծեց, և նորատեղ կազմեց սփորհրդարանու ալլ անձեռից: Միջանկեալ կառավարել է նաև տեղական կոնսիստորը: Աջակէս մինչև 1850 թւականը, Ուրեմն այս մեծանուն զպրոցը կառավարել է առանց տառմենական ձեռնհաս մըշտական մարմնի, ալլ միայն չառ թէ:

Քիչ բարի դիտաւորութիւններ ունեցող վաճառական, զրամատէր և կամ առհասարակ դիրք ունեցող անձերի և առաջնորդների ձեռքով: Մէջէ-մէջ խառնել են դեկալարութեան գործին նաև հատհատ ազգեցիկ կամ ճարպիկ ուսուցիչներ ես: Հոգաբարձական անձեռնասութեան պակսուը պիտի լրացնէր զէթ զպրոցի մանկավարժական իորհուրդը, որի նման մի բան ստեղծում է 30-ական թւուկանների վերջում «Խորհուրդ» կամ Ռայուավարութիւն զպրոցին անունով, բաղկացած կառավարչից, վերատեսչից, և վարժապետներից: բաց զորա զործունէութիւնը երեխ ոչինչ եղաւ, ու նորա զարգացման մասին ալլ ես ոչինչ չենք գտնում ալս հասուրի մէջ:

Մի կարձատե պաէծառ երեսթ է ներկացնում Պետրոս Շանչեանի երեալը դրլրոցի տեսչի պաշտօնում 1849-ին, բայց նա պահանջում էր որ ուսումնական մասը միան իրեն լանձնւի և մերժում ստացաւ: ու 40-50 օր մնալով նա թողաւ գնաց, չկամեն ւլով ալրպիսի շփոթ հանգամանքներում գործել: Եւ լաւ արաւ!

Դպրոցի ներքին խառնակ զրութեան մասին պ. Երիցեանը առաջ է քերում շատ իրողութիւններ, մասնաւող կարնեցի զաղթական կարապետ արքեպիսկոպոսի թիֆլուի առաջնորդ եղած ժամանակից: խառնակութեան կատարեալ ներոս է զուրս բերւած մանաւանդ կարնեցի զաղթական Յակոբ Կարենեանցը, որ համարանութեան ուսուցիչ էր Յովանէփ Օրբելու տասնամեալ (1838—47) տեսչութեան միջոցին զպրո-

ցում գասաւանդել նն 31 հոգի, որոնցից 8-ը ռուս և վրացի, 6-ը Կարնուց գաղթականներ, 10-ը Ներսիսեան դպրոցում աւարտածներ, 5 ը արքունի ուսումնաբաններից (տ. էջ 425). Աւելցնենք, որ զպրոցը միերկու անգամ հնմտարկել է ժակեման վտանգի, զլխաւորապես ջողի. Կարբեցու ծայրակեղ նախանձից, անունը փոխել է մի քանի անգամ, ունեցել է մի առանձին դասատուն չափահան հոգենորականների համար» (1838 լուսարից ց1839 ապրիլ), իսկ 1842-ին հարց եղաւ զըպրոցում վաճառականներն զասատուն բաց անելու»

Վերջացնենք մեր այս նկատողութիւնները ցանկանալով որ նրբցեանի ոկան աշխատասիրութեան չաջող աւարտը, իսու բազմուրովանդպակութեամբ նա ո՛ ձահօթացնում է մեզ մօտաւոր ճանանակի եղիլութիւնների հետ, և ուսիթ տալիս լուրջ խորհրդածութիւնների, Գիրքը, չնուկած իւր ստարութեան, կարգայիւում է մուժ հետաքրքրութեամբ, Զինք կարող զսպել մեղս սական, ու մատնածիչ չը լինել պ. նրիցեանի շատ տեղերում հնացած բայց մանաւանդ, սիրալ քերականական ձերի վրայ, սրոնցից լուս ունինք թէ լարգելի աշխատասիրովը կ'աշխատի զերծ պահել իւր երկրորդ հատորը, Զի կարելի ասել աբէպի նորան (էջ 30 և ամեն տեղ) ալ՝ զէպի նա, «զէպի Հալոց» (էջ 372=զէպի Հակնը), «Ալամդարեան..., որ բացի ուսուցչունան,... քարտուղարութիւն էր ա ցած է, ալ մարդն է, ընտելանում նում» (էջ 75). պասատետրերից մի

քանիսը, որոնցից քանի մի նմաւչներ ենք լառաջ բնրում դասաւութեան եղանակի մասին զաղափար կաղմելու համար» (էջ 112. պէտք է լինէր՝ զաղափար տալու համար... կարեւոր էր տարեկան(աւարան) ռուր.» (էջ 160. ուզում է ասել՝ հարկաւոր էր, և պարեսոր բառը, որ Եթիկանը է նշանակում, պ. Երիցեանը ամեն տեղ մխալմամբ հարկաւոր, անհրաժեշտ բառերի տեղ է գործ ածում, տես նաև էջ 165, 262, 443 և ալլք). առանց մի զժւարութեանց (էջ 180). «Պատկիիչը... ծածկաբար զբութիւններով առ՝ կ սթուզիկոսուր...» (էջ 203, պիտի ասել՝ ծածուկ զբութիւններով) պիտումնաբանիս (=Ներսոգորոցի) և Տոկալանի... ծախքերը... շատ համեստ էին և օրինակելի, մանագ քաղաքումս եղած «Աղնուականաց» անանեալ արքունի զպրոցի համար (էջ 230. ուզում է ասել՝ մանանդ եթէ համենատելու լինենք նոյն ժամանակիս Աղնուականացու անւանեալ արքունի զպրոցի ծախքերի հետ), «Ցիցիանսովից լետու երկրիս կուռակալ կամս Գուղովիչը զպրոցի (=Աղնուականաց զպրոցի) մէջ մայրեց մաթեմատիկաի և բարուական զիտութեանց զասատութիւնը.» (էջ 231. ուզում է ասել՝ Ցիցիանովից լետու երկրիս կուռակալ նշանակած կոմս Գուղովիչը, և ապա՝ պէտք է զրիւ մաթեմատիկա), «...հեշտ չէր բաժանել զարերով ընտելացած մի լեզուի հետ» (էջ 271.=բաժանւել մի լեզու վից, և ապա՝ լեզուն չե որ ընտելացած է, ալ մարդն է, ընտելանում որ և է լեզուին, ուրիմն՝ ժողովրդի

Համար հեշտ չէր բաժանւել մի լեզ-
վից, որին բնաելացել էր). «ուսուց-
չութեամբ պարապողները գրեթէ
ամէն էլ հոգևորական կոչումն ունի»
(չջ 276). «անկարողանում էին
մեմբնարիաներ բանալու» (365.—
անկարող էին). «Աալաթնեանց տէր-
Մովսէսը որին... փոխարից Շահնա-
զարեանց Կարապետ վարդապետը
(433=վոյսարինեց). «Երեխ թէ վե-
րոյիշեալ հանդիսաւոր բացուելոց յետոյ
սկսուց և կանոնաւոր ուսումն (453).
«Դպրոցի ապակիներէ ջարդելու ու-

վորութիւնը...» (457=դպրոցի ապա-
կիները ջարդելու սովորութիւնը. ապա
թէ ոչ զուրս կը գալ որ ապակի-
ները իրենք սովորութիւն ունին
ջարդելու!):

Դրբի վրայ նշանակւած չէ դինը.
Դարուս Հալոց ալ և Կովկասի պատ-
մութեան հանգամանքներին հեռա-
քրքիր ընթերցողներին ջերմագին
լանձնարարում ենք այս բազմաբո-
վանդակ զիրքը ձեռք բերել ու կար-
դալ:

Ա. Ա.

ՀՅՖՄԱՆ. — Զինուը Յակով — 1897 թ. Թիֆլիս. 24 էջ. գինը 7 կ.,
«Նոր մատենադարան» զբքերի շարքից. Պ. — Թարգմ. գերմաներէնից:
ՀՅՖՄԱՆ. — Կեանքի դպրոց. — 1897 թ. Թիֆլ., 32 էջ. գինը 10 կ.

«Նոր մատենադարան» Փ. — Թարգմ. գերմաներէնից:

ԳԻՒՄՄ. — Աստղէ դրամ, Հարուստը եւ աղքատը, Սպիտակ օձ. —

1897 թ. Թիֆլիս, 24 էջ, գինը 7 կ. թարգմ. Գերմաներէնից:

ԳԻՒՄՄ. — Օնիկը եւ Մարգարիտը, Նապաստակը եւ ոզնին, Գայլն

ու մարդը. — 1897 թ. 28 էջ. գինը 10 կ. թարգմ. գերմ.:

ՊԱՌԻ, ԱՅՆԴՏ. — Մատանի, Թոշնիկ, Զար Մոռով չէ. — 1898 թ.

38 էջ. գինը 7 կ. թարգմ. գերմաներէնից:

? . — Զինական առասպելներ. — 1895 թ. 104 էջ, գինը 15 կոպ.

? . — Յունաց ուսուցիչ Սոկրատէսը. — 1898 թ. 80 էջ, գինը 20 կ.

թարգման. սուսերէնից:

Բոլոր գրքովները թարգմանել է. Տիկ. Տիրու՞նի Կոստանեանը և
ապւած են Մ. Շարածէի ապարանում:

Կինը մեր ընթացիկ հասարա-
կական կեանքին քիչ է մասնակցում,
թէս մասնակցում է. Նուն իսկ «կա-
ռանց խնդիրը», թէս մեզանում ամեն
տեղ, ուր ընտանեկան հաւաքում է
լինում, խօսակցութեան խօսք ու
զրուցի նիւթ է դառնում, բայց մին-
չև ալսօր նա ալդ նեղ շրջանումն էլ
մնացել է և ասպարեզ չի դուրս հա-
նել մի կինութ իր պաշտպանու-

թեան համար։ Մինչև ալսօր այդ խնդիրը չի կարողացել շարունակւող գրական արտաքազութիւն ստանալ մի կին գրողի չնորհիւ դեռ նա կանանց միջից մի երգինալ պաշտպան և աւտոմետիրող չի դուրս հանել¹⁾։

Թէս ապագէս է եղել նրա վերաբերմունքը զեպի իր սեփական խընդիրը, աջուամենանիւ, ինչպես վերծ էլ ասինք, նա մասնակցել է մեր հասարակական լութացիկ կեանքին, Մի կողմից նա եղել է վարժունի և բարեկործ, միւս կողմից իր ուժերը տւել է գրականութեան։ Մեզ հետաքըրքում է, այն էլ ամենաարնգհանուր զծերով, կնոջ զրական մասնակցութիւնը՝ որքան նա արտազակտւել է մանկական զրականութեան մէջ։

Անք ունինք մանկական զրականութիւն, որ ընդհանրապէս առաջ թէ որակով և թէ քանակով ունինք է, ունինք նաև չատկապէս մասնուկների համար մի ամսագիր՝ «Աղքիւրը»։ Բայց թերթելով թէ այդ զրականութիւնը և թէ այդ միակ ամսագիրը, մենք չենք տեսնում ինքնուրուն կին ուժեր, որոնք իրանց անունը կապած լինին այդ զրականութեան հետո Ըստ երկութիւն ինչ աւելի լաւ ասպարէզ «Ճարերի» համար, բայց ինչ էլ որ լինի, իրողութիւնն ան է, որ թէս այդ ասպարէզը նրանց համար շատ չարմար է

¹⁾ Այս ուղղութեամբ մի երկութուլ փորձ է եղել կանանց կողմից. օրինակ Աօֆիա նրկանարազուկ. Արդութեանի «Հաւատան» ինձ կը վրկիու Սուրճ, 1897 թ., № 5—6.

և միշտ էլ բաց է եղել նրանց առաջ բաց և ալնպէս մանկական գրականութիւնը չունի մի ինքնուրուն կին գրող, որ անուն հանած լինի և ձանաչւած, ինքնուրուն ներկալացուցիչ նա ունի վիպական գրականութեան մէջ մեծերի համար (Տիկ. Մ. Մարիսեան=Խատիսեան)։

Որքան անուխիթար է դրութիւնը ինքնուրուն կին-ուժեր արտազրելու կողմից, որը մասնական է՝ երբ նայում ենք նրա թարգմանիչ ուժերին, ձիչտ է մինչև արօր խիստ առաջ ինչպէս ինքնուրուն նոյնական մարդմանական նկատելի կին ուժեր համարեա չունինք, ուժեր որոնք խոշոր երկերի թարգմանութիւններով հոչակւած լինին, ծիչտ է, որ նրանք մեծ մասամբ զրական զրազմունքի սիրողներ են եղել, բաց այս էլ կատ, որ այդ սկզբողների թիւը ստար է և նկատելի, նրանցից մի քանիքը նոյն խոկ քափոքը է, ունինք նաև չատկապէս մասնուկների համար մի ամսագիր՝ «Աղքիւրը»։ Այդ իւղութիւնը մեր աչքում մեծ զին ունի, որովհետեւ կին-թարգմանիչների շատութիւնը մենք մի քալ ենք համարում դէպի ինքնուրուն ուժերի երեան զալու հնարաւորութիւնը, կնոջ զրիշը փորձում է թարգմանութիւնների մէջ, զրանով ամրանում է նրա վստահութիւնը, զրանով նա վարժում է զրական աշխատանքին, և ուշ չէ գալու գուցէ այն ժամանակը, երբ մենք ինքնուրուն կին-զրադներ կ'ունենանք։

Այս է մեր կարծիքով այս մեծ

սպասաւորութիւնը, որ կին թարգմանիչները իրանց գրական վաստակներ արած անմիջական ծառալութիւնից դուրս, անում ևն մեր բաւաջդիմութեան դործին, անկասկած սա մի նշանաւոր ծառալութիւն է, նրանք լետազայ կին-ուժերի համար ճանապարհ են հարթում:

Այս գործին նալաստղներիցն է նաև տիկի, Տիրուհի Կոստանհանը, որ ահա քանի տարի է իրան տեղ է թարգմանական գրականութեան և վերջերս մանուկների համար դրժեր թարգմանիկով է զբաղւած: Նախքան նրա թարգմանած գրքովների մասին խօսելը, մենք աւելորդ չենք համարում պարզել մի քանի տեսակէտներ, որոնցով մենք զեկավարւում ենք մանկական գրքովների մասին կարծիք էաւտնելլաւ:

Հեքիաթները մանուկների սիրած բանն է և մեծ չափութեամբ կարգում ու լուսմ ևն մինչի մի լայտնի հասակ՝ քանի զեռ խելքը զգալի չափով չլ զարթնել և չլ զեւալարում նրանց: Հսկանելը, հրաշքները, սքանչելի արկածներն ու վաստերները ակալիութեան մարդուցումները գրաւում են նրանց: Բայց մանուկների ազդ հակումը պէտք է լուրջ ուշադրութեան նիւթ դառնալ և լայտնի ընտրութեամբ պիտի նրա ձեռքը հէքիաթներ տալ. որ նշանակում է հէքիաթներ ընտրելիս պիտի

զեկավարւել լայտնի սկզբունքներով:
Որո՞նք են ալդ սկզբունքները¹⁾:

Ահա մի քանիսը գոնէ, Նախպէտք է աշխատել որքան կարելի է հայ մանուկի ձևուքը հաւ-ժողովրդական հէքիաթ տալ՝ լաւ հայերէնով գրած: Մինչդեռ մհծ մասամբ (երկու բացառութեամբ) մեր մանկական զրողներն աշխատում են շարունակ թարգմանական հէքիաթներով և թարգմանական լեզուվ կերպել հայ մանուկին: թող ամեն մէկը մտածի, թէ ինչ մնծ վեաս է հասցնում այդ հանգամանքը մեր մանուկ սերտանդի կրթութեանը... Ազդուզութեամբ փարձեր շատ քիչ է լինում մեր գրականութեան մէջ և մենք կարծում ենք թէ այդ առաջ է զարիս խնդիրը բաւականաշատ խորն ու խելացի ըմբռնել չկայողանալուց... Կոր սերունդին, մանուկանդ ալսուածի կոչուած պատկես կոչւած պինակելիքնատ դասի նոր սերունդին պէտք է աշխատել մանկութիւնից կապել իր հարազատ ժողովուրդի հէքիաթների հետ, որոնք աւանդաբար՝ դարերի ընթացքում մեր ողին աղանդապանող ժողովուրդը հասցըել է մինչև մեր օրերը: Յետու, այդ առողջ հիմքի վրայ կարելի է և կարեուր է աւելացնել օտար աղգերի հէքիաթները: Այս մէկ:

Հէքիաթները ահազին նշանակութիւն ունին մի աղզի մտալին:

¹⁾ Ալստեղ չօշափան հարցերի մասին նաև նաև ու համեմատեցէք «Դաստիարակչական մոլորութիւններ» և. Պազարեանցի, Մուրճ, 1890, № 9, «Մանկական ընթերցանութիւն» նոյն մարդու, Մուրճ, 1890, № 3: և «Գեռահամանների ընթերցանութիւն» թ. Տէր-Միքաքեանի, Մուրճ, 1898, № 9, 10—11:

կուլտուրան ուսումնասիրողի համար,
անդիշատակ ժամանակներում կորած
շատ բաներ կարելի է դուրս կան-
չել հեքիաթների միջից. մի ազգի
վիճակը իր դրօշմը զնում է նրա ո-
գեկան արտադրութիւնների վրա.
Նրա ոգին արտացոլում է նրանց
մէջ, լինին ազդ արտադրութիւնները
բանաւոր թէ առարկալական, իրա-
ւական լարաբերութիւններ թէ բա-
րուական աշխարհակացք. Հեքիաթ-
ների չնորհին խաւարում կորած ան-
ցեալը իր աշխարհայնացքը կոտակում
է լետագայ սերունդին և ազդպիսով
իր ողովկրթում է նրան. Բայց օրինակ
հէնց մի ազգի՝ թէկուզ մեր ազգի՝ դա-
րելով մշակած բարուական հասկացո-
ղութիւնները անպարհան ուսանելի
չեն մեզ համար, որպէս գործնական
կեանքի խթաններ. Նրանք հետաքըր-
քրական կարող են լինել և են ազգի
մոտիին կուլտուրան ուսումնասիրողի
համար, բայց կարող են գործնական
հետաքըրքութիւն չունենալ, որպէս
հնացած և վնասակար սկզբանքներ և
հասկացողութիւններ. Օրինակ մի
հեքիաթ, ուր խորթ մայրը մի հրէշ
է դուրս բերած շատ հետաքըրքա-
կան է այն տեսակետից թէ ինչ
կարծիք ունի մողովուրդը խորթ
մօր մասին, բայց բնաւ ուսանելի և
խրատական չէ ազդ մեր մանուկների
համար¹⁾. Մինչեւ մարդատիք և
ոլորմած վերաբերմունքը գէպի աղ-
քատը նունքան թանկ է մեզ համար և
նունքան մանուկի որտում պատաս-

հելու արժանի, որքան մեր ծերունի
ապուպապերի համար է եղել Պարզ է
ուրեմն որ ամեն հեքիաթը չի կարելի
մանուկի ձեռքը տալ. Նա լու է և
խրատական ոչ թէ նրա համար, որ
հեքիաթ է, աչ որ ուսանելի և կրթի
հեքիաթ է. այս գէպքում բանը լատ-
կութիւնն է և ոչ էութիւնը. Անհրա-
մեշ է ուրեմն հեքիաթները մեծ
զգուշութեամբ ընտրել, մօտենալով
նրանց որոշ գնահատութեան չափով:
Մեզ համար ազդ չափը այն իդեալ-
ներն են, որոնց ձգտել ու ձգտում է
մարդկութիւնը. և ազդ տեսակէտից
էլ նալում ենք հեքիաթների ընտ-
րութեան վրայ: Սա մի շատ կարևոր
հանգամանք է, և մենք մտնկական
զրականութեամբ պարապողների ու-
շազրութիւնն ենք դարձնում սրա
վրայ, մենք չետել ուղեցինք այս հան-
գամանքը, որովհետեւ չենք նկատում
թէ նրա կարեւորութիւնը լուրջ կեր-
պով զիտակցւելիս լինի: Այս երկու
խոկ երրորդը հետեւածն է, Նախ-
նական ստեղծագործութիւնը բնու-
թեան մէջ բարի և չար ուժեր է
նկատում և նրանց անձնաւորում է
բարի և չար ոգիների բանաստեղ-
ծական պատկերներով. բարիները
երեսում են լուսաշղ, հրաշալի, սի-
րող, խոկ չարերը՝ հրէշաւոր և ալ-
լանդակ, սարսափ ազգող պատկեր-
ներով: Մեր ժամանակի մանուկի հո-
գին, որ նրացել ու քնքացել է
դարերի ընթացքում և Որցը ին հի-
մարդու հոգու ամրութիւնն ու դի-
մացկունութիւնը, անկարող է տա-
նել հրէշաւոր ու սարսափելի պատ-
կերներ. Նրանք ահ են ազդում միայն
և զրգում երեակալութիւնը՝ դարձ-

¹⁾ Մենք վեր առանք պ. Տէք-
Միրաքեանի բերած օրինակը աւելի
լաւը չունենալու համար.

Նելով այդ երեակացւթիւնը հիւանդուս Ալս հանգամանքը նոյնպէս պիտի աչքի առաջ ունենալ և հէքիաթներ ընտրելոս վերցնել իրականի շափաղանցութիւններ ունեցող հէքիաթներ. օրինակ՝ հսկալական հասակ, աներեակակելի ուժ—լինչպէս Ազակեանցի «Ճորքը», միշտ հեռու մնալ սոոկալի տեսարաններից, արիւարբու և վրիժառու հակումներից, անոիրա զործերից և ազն.

Ինչ վերաբերում է կիսա-իրական փոքրիկ պատմւած բաերին ու լիւպիկներին, դրանց մասին կ'ասենք հետեալը: Ժամանակ է վերջապէս, որ մանկական զրականութիւնը դառնաւ գնդարւեստական և թողնի իր տեսդեհնցիականութիւնը. թէ մեծերը և թէ մանուկները անչուշտ լոգինել են աչդ տիմար ու անօգուտ ուղղութիւնից. մանուկների ձեռքը պէտք է տալ ստեղծագործութիւններ և ոչ հնարովի ու սուս պատկերներ. Յարզենք մեր տասար Ամինքը կարդացած էը լինին այն «Տօնածառ» առակները, որ ամեն լունարի հեղեղում է մարդու առնդուզներու մարմար և ամեն լունարի հեղեղում է մանկական զրականութիւնն ու հրատարակութիւնները. Լունը կամ Արշակը նոր տարուն տօնածառ ուներ և ուրախանում էր իր ընկերների հետ. պատուհանից նալում էր մի խեղճ ու ցնցոտիներով փոքրիկ տղակ. կամ թէ դունը սըրթորթում էր մի փոքրիկ ազջիկ Լունը կամ նրա մալրը տեսակը տեսակը մարմար և ամեն լունը կամ իր երեխակի մատ (շորերը կը կեղտոտին) և ալդպէս չի վերաբերուի դէպի մի խեղճ երեխակ: Ուզ որ միան անպարմար դրութեան մէջ կ'ընկնի փոքրիկ թշւառը, ինչպէս ընկնում են պատանի և հասակաւոր թշւառները. աղքատ աշակերտները լաւ զիտեն՝ թէ Բնչ է նշանակում տաները հարուստների հետ անցկացը-նելը. հարուստների որոնք ի պաշտօն առնել միա մատ անմար են նրանց և քին ալտակը. կամ՝ նոյն պատմու-

թեան մի ուրիշ վարիացիա: Եւ այսպիսի զրւածներով են կերակրում մանուկներին կարելի է ասել համարեա բոլոր մանկական դրքովները ամեն տեղ: Ըսթերցողը կարդացած էը լինի նոյն ուղղութեամբ ու ոգով և ուրիշ զրւածներ, ուրիշ նիւթերի մասին: Խնչու համար է այս բոլորը. Բնչ են ուղղում սրանով ասեն. կարծուել են թէ սա կրթում է մանուկի ողին, կամ աղղում է նրա վրաց Ալդպէս մարդիկ աշխարհում չկան. կամ կան մի երկու հատ, բաց ոի Ֆաղկով զարուն չի գուց, ասած է: «Իրանք բեռներ են զնում երեխալի վրաչ, որ նա չի կարող տանել, և մանուկը բնագրաբար այդ լաւ է զգում, նա զգում է, որ ալդպէս վարւելն իր բանը չէ. որ մակրիկը կամ հարփիկը կը չարանալ, որ ալդպատ երեխաների հետ ընկնելը վատ է և հազար ու մի բան, որ ցանցւոծ ու տարածւած է այդ ձեր բարի ու մարդասերու պարտների տներում ու գլուխներում: Հաւ իմացէք, որ ոչ մի հարուստ չի թողնի իր մարմարէ սանդուզներով բարձրանալ «մի ինչ որ» ցիտս կօշիկներով երեխաւ. ալդպիսի մէկին չի նատացնի իր երեխակի մատ (շորերը կը կեղտոտին) և ալդպէս չի վերաբերուի դէպի մի խեղճ երեխակ: Ուզ որ միան անպարմար դրութեան մէջ կ'ընկնի փոքրիկ թշւառը, ինչպէս ընկնում են պատանի և հասակաւոր թշւառները. աղքատ աշակերտները լաւ զիտեն՝ թէ Բնչ է նշանակում տաները հարուստների հետ անցկացը-նելը. հարուստների որոնք ի պաշտօն առնել միա մատ անմար են նրանց և քին ալտակը. կամ՝ նոյն պատմու-

մտնում...

Մինչդեռ կեանքում կայ իրական բարիք ու չարիք, իրական լաւութիւն ու վասութիւն, մտաշելի, սովորական և կարելի ամենքի համար, այդ լաւութիւնը պիտի տուրացնել ու սովորական դարձնել, և դա արդիւնաւոր է ու կը լինի, որովհետեւ մարզու գործող բարոյականութիւնը բարում կան սովորութիւնների հաստատուն շղթաէ է, և բարոյական կարելի զառնալ սովորելով ու վարժելով, Մենք այն կարծիքին ենք, որ իդէաները պիտի իրականութեան մէջ որոնել, աշխատելով լատինի կազմով տեսակետից գնահատել կեանքի լաւ ու վասկողմերը։ Կեանքի, իրական կեանքի մէջ շատ լաւ ու վաստ վարմունքներ են լինում և այդ թէ մանուկների, թէ հասակաւորների կեանքում, մանկական գրողը կարսող է զրանց հակաղրել իրար և գրողը պիտի այդ հակաղրութիւնը որպէս բանաստեղծ երեակատի և որպէս բանաստեղծ վերաբառի, Ապա թէ ոչ եղած պատկերների նման որքան ուզէք՝ կարելի է շուլալել, առանց բանաստեղջ՝ լինելու, ամեն խելքը զլխին մարդ կարող է ալդ անելի Աւսպէս ուրեմն մանկական գրականութիւնն էլ իր բանաստեղծները պիտի ունինայ որոնք գեղարւեսորէն պիտի վերաբարեն մանուկների և ծնողների իրական կեանքը։ Մանկական գրականութիւնը մանուկների և ծնողների (այն կապով որ ունին մանուկների հետ) կեանքի գեղարւեստական վերաբարեպարութիւնը պիտի լինի, և ոչ շնորփի ու որւտ բան։

Մեր կարենոր համարած մի քանի

տեսակէտները պարզելուց հետով, այժմ կարող ենք անցնել տիկ. Կոստանդնուպոլիսի թարգմանած գրքերի գնահատութեան, ովքեր համաձայն չեն մեր ունեցած կարծիքների հետ, նրանց համար ի հարկէ արդիւնքն էլ սխալ կը լինի և ոչ ընդունելի։ Մենք կարծ կ'անենք մեր զնահատութիւնը, որ փոքր ինչ երկար կարողանանք կանգ առնել մանկական գրականութեան լեզուի վրայ

Մեր պարզած տեսակէտներից նայելով՝ տիկ, կոստանդնուպոլիսի թարգմանած գրքուկների մէջ մեզ զուր եկան և չարմար ենք դատում մանուկների համար, Գրիմմ'ի «Հարուսան ու ազգաւոր»¹⁾, «Սպիտակօձը», Պաուլ Առնդարի «Ֆունդիկուր» և «Զինական առասպելները», Մնացածները մեր վերը առած սովորական սովոր են գրւած և կը կարդացւին, ինչպէս կարգացւում են նոնանման հէքիաթներն ու պատմւածքները։

Մեր մանկական գրականութեան լեզուն ոչ միան օրինակելի հակերէն չէ, այլ և շատ վառ հակերէն է. ամելի ճիշտն առած հազիւ հակերէն է. Այդ երեսովմը շատ պատճառների արդիւնք է, որոնցից մի քանի կարենքները մեր կարծիքով որանք են, թարգմանիչներն ու գրական հետաքըրքութիւն ունեցողները սնւում են օտար գրականութեան արտա-

¹⁾ Նո՞ն հէքիաթի մի վարիանտը կատ նաև «Հիւսիսափակում» 1858 թ. № 3

զրութիւններով, և որովհետեւ ալդ սնունդը փախուկ հասակից է մկրուս և շարունակում է կարելի է ասել անընդհատ, ուստի նրանք կորցնում են սրաի ու մտքի հարազատութիւնը և թէ զգում թէ մտածում են օտարի նման, պարզ է՝ որ արդ զգալիս ու մտածելը իր արտակալութիւնների վրայ չառ է ազդում և զրանք էլ անհարազատ են զուրս զալիս: Այս հանգամանքը չառ աւելի լայն ծաւալ ունի և չառ աւելի երեսներ է ընդդրվում, քանի թէ սկզբից թում է, բայց մեր խօսքը նրա՝ մանկական զրականութեան համար ունեցած նշան: ակութեան մասին է: Ակապէս ուրեմն առաջին պատճառը աղդում ու դեր է խաղում անկախ նրան ենթարկւածների ցանկութիւնը:

Մանկութիւնից օտարացածը լեռու միան խելքով գալիս է հայրենի խօսքին ու մտքին կրչելու և զիմուս է մեր զրականութեան ու մամուլին, որ ինքն ես իր կողմից հարազատութիւն քիչ ունի: Այսպիսով մատաղ հասակի արածը շարունակում է գլխակցութեան շրջանը: Վեհավարի պակասութիւնը գալիս բարդում է եղած զրութիւնը և հեռու տաճում հարազատութեան մօտենալու հարաւորութիւնը:

Եւ մետու ալդ պակամներում աձած գործիչների արտազրութիւններին հակոգները լուրջ ուշազրութեան և զբաղեցների նիւթ չեն զարձնում մեր ակնարկած հանգամանքը. լեզուի մասին խօսելիս ողին ու կազմը մի կողմ է մնում և քերականական ձեերն են հրամարակ զա-

լիս ու գնահատութիւն սատանում: Ահա պատճառներ, որոնք այնքան անհարազատ ու խորթ են զարձրել մեր զրական լեզուն և քամում են նրա կենդանութեան հիւթերը, որանք այն պատճառներն են, որոնք պէտք է կարուի է կարող են ուշազրութեան նիւթ զառնալ, որոնց պէտք է և կարելի է վերացնել ևթէ մած չանք ու աշխատանք զործ աղբուի. մեր խօսքը ընդհանուր պատճառների մասին չէ, որոնք չառ աւելի ուժ ու ջանք են պահանջում և չառ աւելի պարզ զիտակցութեան կարիք ունեն...

Մեր կողմից խորհուրդ ենք տալիս թարգմանիչներին, եթէ նրանք ցանկանում են հարազատ, մայրենի լեզուի ու ողով զրքեր տալ մանուկի ձեռքը, որ ուշազիր լինեն դէպի մեր լեզուն: Եթէ իրանց ստացած գաստիարակութիւնն ու կրթութիւնը խորթացրել է նրանց միբան ու զգացմունքը, ալդ գեռ չի նշանանակում՝ որ իրողութիւնը պիտի սկզբունք գառնալ, ալդ դեռ չի նշանակում՝ քանի որ այլպէս է, ուրիմն աղպահու և պիտի լինի: Մենք ունենք «Հալ ժողովրդական հեքիաթները» Տիգ, Նաւասարդեանի, ունենք «Վերք Հայաստանի», «Սոս և վարդիթեր», Ազատեանցի և Քամալ, գրւածները, ալդ զրքերը պիտի կարդալ ու կարգալ, անգիրանել ականչը վարժեցնել մայրենի լեզուն, ուղեղը վարժեցնել հայերէն մատածելուն և ձեռքը՝ հայերէն արտախալելոն: Ով զբաղել է մեր կենդանի ժողովրդական լեզուի, ով լսել է ալդ լեզուն, ով լաւ ծանօթ է մեր առած երկերի հետ, նաև նկատած կը լինի, որ մենք ուրուն

ազգ լինելով՝ ուրոշն մտածելու և
զգալու եղանակ ունենք և ուրոշն ար-
տակալութիւնան ձեւը Յաւը դարմա-
նելու համար մեր առաջարկածը մի
սպեղանի կարող է լինել, նա պա-
հանջուս է միտին բժշկւելու անկիղծ
ցանկութիւնն և նրան հասնելու ջանք
ու տոկ։ Հակառակ դէպքում ծանր
պատախանաւութիւնն են վերցնուա
իրանց վրայ մանկական դրականու-
թեան գործիչները, որովհետ սեփա-
կան ժողովրդի ոգին չոճենալով
չեն էլ կարող այդ ոգին ներշնչել
մատագ ուերունդին և կրթել նրան
հարազատ կաթով. և պատճառ են
զարնում կրթուող ուերունդի բաժան-
ւելուն, կրտելուն իր սեփական ժո-
ղովրդից, որ նշանակում է թէ կզզիաց
նում և անարժատ են դարձնում նրան
Ով լսելու ականջ ունի՝ թող լսի...

Տ. Տիրունի հաստանեանի լնզուն
ալդ տեսակ անհարազատ լնզու է։
Զգիտենք կարգացողները նկատել են,
բայց մենք կը բերենք մի քանի օրի-
նակ՝ աւելին թողնելով նրան, ով
հնտաքրքրուում է։ Այսուղ գրւած էր,
որ (թէ) ինքն ալժմ աւագ զինւորի
աստիճան է ստացել։ Իսկ այն օրից,
ինչպէս (ինչ) ես հնոացել եմ մեր
տանից։ Յակորը ոչ մի կերպ չէր
կարող մոռանալ զետնախնձորի մա-
սին։ Արտանի էլ որ նա լինէր, ինչ
որ էլ որ նա անէր ամեն տեղ ու
միշտ պատկերանում էր իւր հօր
դէմքը (Ուրաեղ էլ լինէր, ինչ էլ
անէր՝ միշտ ու ամեն տեղ երեւում
էր հօր դէմքը)։ Ես կարծեմ մենք
շուտով կը գտնենք քո հօրը։ Մնա-
ջանքով լցնում էր երկու թուչն էլ հա-
մով կերակութիւներով։ Ալդպէս հայր

ու որդի իրար փարւելով երկար ժա-
մանակ մնացին։ Աներեակակելի
դրութիւն է սա Ալու «Զինւոր Յա-
կորից»։

Այս էլ՝ «Ականքի զպրոցից».
—Նա բնական շատ բարի սիրա
ունէր։ Ռւզում է ասել՝ «օրուց»։
Դուք երեխալին իշացնում էք ձեր
անմիտ սիրելով։ Ֆերդինանդը չու-
նէր ոչ մի ընկեր, որովհետեւ ոչ ոք
չէր ուզում ննազանդուել հաճովներին
(ում հաճովներին)։ Ֆերդինանդն
իրան սզալ էր կարծում, իսկ Պիտ-
րոսը (ին) զերի։ Բազզաւորապէս
Գետրոսը չար սիրու չունէր. և դէպի
իւր առատ ընկերը սրտով կալած էր։
—Աէ, թէ սազում են մէկը միւսին
(մէկ-մէկո)։ Իմաց տւեց բոլոր պա-
տահածի մասին։ Ցուց տւեց նրա
(այսինքն հօր) բոլոր սիրաները Ֆեր-
դինանդի կրթութիւն մէջ։ Ժամը
եօթին Ալբիւ անունով նաւր զազ-
թականների համար, ալէտք է ձա-
նապարհ ընկնէր։ Դուք ինչպէս ես
քիզ զգում։ Ինձ շատ դժւար էր բա-
ժանել նրանից։ Կառապանը ուլր-
ուում էր ծիաններին (երեխ՝ թիմարում
էր)։ Բերանը, չարժւածքը... նրա
ամբողջ կազմւածքին տալիս էին մի
առանձին տեսակ զեղեցկութիւն և
մեծ նմանութիւն հօր հետ։ Եւ ալն։
Բայց այս օրինակներավ արնքան չի
պարզուում գուցէ մեր ասածք. պիտի
կարգալ ու տեսնել.

Մանկական գրքեր թարգմանո-
ղից իսկի չենք պահանջում, որ նա
բնագրին չլու հպատակ լինի։ Նա
կարող է արտաշալառութիւնները փո-
խել, կոկել, գարմարեցնել մեր երե-
խաների հասկացողութեան ու մտա-

ծողութեան։ Աչդ շրջանում ամեն բան պիտի հիմնել մեր մանուկների ունեցած մտաւոր պաշարի և հոգեքանութեան վրայ. մեր մանուկն ու զերմանացի մանուկը մէկ չեն, ինչ կարիք կալ օրինակ ասելու. «Ֆիզիքական ցաւս առժամանակ ինձ մոռացնել տմց հոգեկան տանջանքս», այս արտազատութիւնը շատ դժւար կը հասկանալ նոյն իսկ մեր 13-14 տարեկան պատանին. և ուրիշ շատ ամս տեսակ արտազատութիւններ...

Սոկրատէսի մասին այս կ'ասենք, որ դա մի շատ լաւ գիրք է¹⁾, և եթէ լաւ լեզով ու մատչելի ոճով լինի թարգմանած՝ մեր ժողովրդի սիրած գրքերից մէկը կը դառնալ իր կենսական խրատներով, իր առողջ մտքերով, իր ըմբռնելի բովանդակութեամբ և վերջապէս իր հերոսի բարձր, իդէալական անձնաւորութեամբ։ Այս թարգմանութիւնը սակայն չի կարող այդ գերը լաւ կատարել:

Ն. Աղբալեանց

¹⁾ Սա երկրորդ թարգմանութիւնն է. առաջինը Հրատ. Ընկերութեան հրատարակութիւնն է և սպառւած է։

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Վարդացի «Նոր-Դարի» այս տարւակ 222 համարը, ուր պ. Յ. Շահնազարեանը ուշագրաւթեան էր առել իմ մի երկու դրւածքը¹⁾: Նորհակալ ենք: Ասկալն՝ մի նկատողութիւն: Մեկի սխալները ցուց տալու համար պիտի փաստերով երեան զալ և ոչ խօսքերով: Մեդանում մանաւանդ ազդ չառ կարեոր է, սրովին մենք զեռ չունենք հետեւող ընթերցողների մ առւար խումբ, որ ինքը նոյնալիս հետեւ լիջորէն եղած բանակուիներին: Մեր ընթերցողները շատ են սովոր ընդունել ու լսելուն, բայց դատիլ ու կարծիք կազմելուն դեռ նոր են սովորում: Նոր-հոր լուրջ վերաբերանք է մտնում դէպի հրապարակում լառդ խօսքերն ու բացականչութիւնները: Խակ երբ քննազատն է իր ընթերցողի նման, ան ժամանակ ուսանելի բան չի մնում այլ եռ:

Ամենաթարմ օրինակ:

Ա. Խսահակեանի մասին «Յուրձում» խօսելիս ես ասում եմ, այլրգերն ու վերքերը նոյն խոկ հարեանցի թերթելիս, դուք ընկնում էք ինչ որ նոր աշխարհ, ուր չեք եղել բն ու: Ալսոնկ ամեն բան նոր է լեզւց ու ձեից սկսած մինչև զգացմունքներն ու նրանց արտաւագութիւնը: Ալսոկս ոչ ոք չի դրում և չի դրել, ալսոկս ոչ ոք չի զգացել ու արտավագեն: Տպաւորութիւնն այն է, որ կարգում էք մի ինքնարոյն զրոդի երկեր, որ իր նմանը չունի մեր զրականութեան մէջ, որի զգացմունքները, մտքերն ու խոհերը իրանն են և ուրիշ ոչ ոքի չին սրականումն:

Ի՞նչ է առարկում մեզ պ. Յ. Շահնազարեանը այդ տողերը մէջ բիրելուց լիտող:

«Իս կարծում եմ այլ ես առաջ գնալն աւելորդ է: Ել ինչ էք ուզում, խսհակեանը մեր զրականութեան համար մի չուսնուած երեսքթ է: Նա իր նմանը չունի: Նրա պէս ոչ զրւել է, ոչ էլ զրւում է:»

Պարզ է պ. Աղբալեանի մոլորութիւնը: - Աս—հեղանքը:

1) Յօդւածից երեւում է, որ թէ Կուաիկեանը, թէ Աղբալեանը օդումն են զրում: «Մուրճի» ահունը չէր տած, ժամանակ է վերջ դնել այդ զգւելի սովորութեանը:

Այս էլ-հերքումը՝ «Բաւական է ցիշել մի շարք բանաստեղծներ, որոնք խահակեանից առաջ են երեացել մեր գրականութեան հորիզոննի պատճ, բաւական է հարեանցի կերպով աչքի անցնել դրանց գրւածները համոզնելու, թէ ինչ ծանր մեղք է գործում քննադատը մեր բոլոր պահանջման մեջ է առաջական տեսնդենցիալի, գաղափարների մասին, որոնք եթէ ուշի ուշով քննենք, միևնուն է ինչ որ նրա սախորդ եղբայրներն ու հայրերն են երդեւ, — միթէ ցիրաւի այդ նախորդներից ոչ մէկի լեզուն չունի նոր բանաստեղծի լեզւի «հարստութիւնը...»

Ի՞նչն է մեր լանցանքը. որ ասել ենք թէ խահակեանը ինքնուրուն զրոյ է և եղածներից ոչ ոքի նման չէ: Այն ժամանակ թող մեղ առարկուն ապացուցի թէ նա մեր ամի շարք բանաստեղծներից» ալս ինչի նման է, Եւ հեգնելու ինչ կայ ալսուել կամ ինչ մեղք կայ գործած. ասել թէ միրա պէս ոչ գրւել է և ոչ էլ գրւում է», չի նշանակում ասել թէ նրա պէս լու ոչ ոք չէ գրում. մէկը կարող է լիովին ինքնուրուն լինել, բայց եղածներից իսկի լաւ չլինել (օրինակի համար ենք ասում), Մեր խօսքը սակաին այդ հատածի մասին չէ. մեր խօսքը այդ տեսակ հատած գրելու մասին է: Կարդացինք: Ար ինչ. հերքմեց մեր պնդումը թէ Աւ. խահակեանը ինքնուրուն գրող է. ամենելին, Խօսքեր ասեցին և հեգնափառն զարմանք արտակալուեց. բայց խօսքերն ու զարմանքն ապացուց չէ. Արդպէս առարկելն ու հերքելը շատ հեշտ է ու շատ էլ առվորական. բայց և անօգուտ է և ուսանելի չէ: Մենք գոնէ ոչինչ չսովորեցինք պ. Շահնազարեանի քննադատութիւնից:

Այսպէս կարելի էր վիր լուծել և պ. Շահնազարեանի լոգւածի միւս մասերը, բայց ամելորդ է դառնում այդ աշխատանքը, որովհետեւ մեր ուղարձը ոչ թէ պատասխանելն էր, այլ գրելու ալս անպառուղ ձեփի վրաց մատնացուց լինելն ու անցնելը:

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՏԱՐ ԿԱՊԻՏԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

II

Ամսագրիս անցեալ համարում մենք՝ զբազւեցանք մեր երկիրը, և մասնաւորապէս Բաքու, տուր մեծ կապիտալներ թափւելու երեւլով, և աշխատեցինք պատասխան տալ այն հարցին, թէ որքան այդ հոսանքը օգտակար կամ վնասակար է։ Այդ հարցը յեղյեղուում է Ռուսիայի աժրողջ մամուլի մէջ, և նորան անմասը չէ նաև հայկական մամուլը։ Կառավարութիւնը լուրջ ուշադրութեան է առել խնդիրը։ Փննելով մենք հասանք այն եզրակացութեան, որ օտար կապիտալների մուտքը մեր երկիրը—առ այժմ մեր խօսքը վերաբերում է Բաքւայ նաւթին—մինչև մի որոշ սահմանը անպայման օգտակար է, իսկ մի որոշ սահմանից գէնը՝ մեզ համար անպայման վնասակար է։ Մենք ստորագծեցինք մեզ համար խօսքը։ և այդ խօսքի գործածութիւնը չպիտի կարօտ լինի ընդարձակ բացարութեան։ Կոյր բնութեան համար կատարելապէս միենոյն է թէ ովքեր են ոչ միայն Կովկասից շահողները, այլ և աշխարհի տէրերը։ բայց երբ, իրերի բնական ընթացքը բերել ու աշխարհոս զանտգան պետութիւնների է բաժանել, երբ իրերի բնական ընթացքը այդ պետութիւններից էլ աւելի մեծ թւով ազգեր է առաջացրել, երբ, վերջապէս, բնութեան պահանջին հաւասար կերպով, այդ ազգերի գոյութիւնը յառաջդիմութեան մէջ՝ կախման մէջ է գրւել այս և ոչ այն հողի տեղի հարսոութիւնները շահագործելուց, —ապա բնական է որ վնասակար և օգտակար հասկացողութիւնները կարող են վերաբերւել մարդկութեան այս ու այն խմբին, այս անհրաժեշտ պայմանով, սակայն, որ մարդկութեան այդ խուժը

ընդհանուրին՝ վերաբերեալը կատարէ այնպէս, ինչպէս հարկն է:

Արդ, նաւթի խնդրի մէջ ընդհանուրին վերաբերեալը սա է, որ նաւթը կարելիին չափ առատովթեամք սոտցւի, որպէս զի նորանից սոտցւի կարելիին չափ շատ մազութ—իբր քարածուխից աւելի էժան վառելիք աշխարհքիս գործարանների համար. ապա որ կարելիին չափ շատ, մասքուր և էժան այլ իւղեր պատրաստւեն, որպիսիք են կերոսին, բենզին և այլ իւղեր։ Այդ է ահա ընդհանուրին վերաբերեալը։ Լինեն Բաքրայ հանքատէրերը տեղացիք թէ անդլիացիք—զրսի աշխարհը նոցանից կատարելապէս նոյնն է պահանջելու։ Եւ երբ, ահա, մենք հարց ենք զնում, թէ կարող են արդեօք տեղացիք զրսի աշխարհի այդ պահանջին կատարելապէս բաւարարութիւն տալ,—ապա մենք զնում ենք դորա զրական պատասխանը, աւելացնելով, որ տեղացիների այդ բաւարար գործոններն էնեան համար հարկաւոր են մի-մի նորէլի կամ նորա նման օտարների նախաձեռնող և յնդափոխիչ օրինակները։

Մեզ կ'ասեն. բաւական չէ օրինակը, այլ պէտք է նաև դրամ՝ օրինակից օգտւելու համար։ Խակ այդ զրամը ամենից շատ ունին օտարները. հետեւապէս որքան շատ օտար կապիտալիստներ լինին՝ այնքան լաւ։

Ոխալ ենք զնում այդ եզրակացութիւնը։ Նաւթը այն հանգերից է, որոնք չափազանց քիչ զրամ՝ են պահանջում՝ մեծ կապիտալ-ներ արտադրելու համար. և գուցէ չկայ մի այլ տեսակի հանք, որը կարողանար իւր քի։ Պահանջներովը համեմատել նաւթահանքի հետ։ Մի որ և է քսանուհինդ տարի առաջ միվ էր լսել մեր երկրացի միլիոնատէրերի մասին. ամբողջ Կովկասում՝ այդպիսիներ կարելի էր համրել մի-երկու հատ անձ. խակ ացժմ՝ ամենքին յայտնի է, որ Բաքրում ոչ միայն հարիւր հազարին փող չեն ասում, այլ և հարիւր հազար ոռուրլի տարեկան զուտ արդիւնք ունեցողը դեռ և խոշոր մարդ չէ, և խոշոր ճանաշւելու համար պէտք է արդէն տարեկան զուտ արդիւնք ունենալ գէթ մի քանի հարիւր հազար, որ ասել է զրամագլուխ ունենալ ոչ թէ մի, այլ մի քանի միլիոն ոռուբլի։

Մենք զիտմամբ խօսեցինք տարեկան գուտ արդիւնքների և ոչ զրամագլուխների կամ հանգերի զրամական արժեքի մասին, որով-

հետեւ տարեկան զուտ արդիւնքները կային առաջ. Կը, առանց որ նոցա տէրերը գիտենային թէ իրենց հանքերի համար անդլիացիք ինչ, դին են պատրաստ նուածարկելու: Քայց չէ որ, բոլորովին անհամա անդլիացոց ապագայ առաջնարկներից, հանքերի տէրերը գիշում էին իրենց տարեկան եկամուտները, որի շնորհիւ իրենց նկղբնական հազարները այժմ միլիոնների են հասցրել: Սա արգեն յայտնի ըղաղոնիք է, որ մի ամենախոշոր հանքատէր, որի գործերի համար մի քանի տասնեակ միլիոն ոռութիւն են առաջարկում՝ անդլիացիք, սկսել է իւր գործը Բաքւում 40 հազար ոռութիով միայն, և ապա բոլորը ինչ աւելացել է, սոսացւած նաւթի և ոչ գրսից առելցրած կապիտալի շնորհիւն է եղել: Մի հորի արդիւնքով փորձել են մի քանի այլ հորեր, վերջիններիս արդիւնքով փորւել են առաննակ այլ հորեր և այլն—և ահա այժմն առ 60-70 արդիւնաւէտ հորերի տէրն է, սոսանալով տարեկան յիսուն միլիոնի շափ փութ նաւթ:

Այս բոլորը ինչ է ապացուցանում՝ այն, որ Բաքւայ նաւթի արդիւնաբերութեան առատութիւնը (դրսի աշխարհի շահը) կարօտ չէ եկոզի մեծ կապիտալների, լինեն սոքա օտարներինը թէ հէնց մեր երկրի սեփականը:

Մեզ կասեն թերես, որ քանի գնում՝ այնքան նաւթը սպառ-առւմ է գետնի տակ և որ այդ պատճառով աւելի ու աւելի խորը պիտի փորել հորերը. իսկ այդ առաջւանից աւելի մեծ կապիտալ է պահանջում: Ճիշդ է դիտողութիւնը, բայց մենք գորան կ'ողատաս-իսաննք որ եթէ նոր հորեր փորելը կրկնապատիկ է թանգացել, նաւթից գոյացած կապիտալները ոչ թէ կրկնապատիկ, այլ հարիւ-րապատիկ և հազարապատիկ են ճիսացել: Հետեւապէս նոր հորերի համար Բաքուն կարօտ չէ անդլիական կապիտալների: Շնորհիւ ատացւող մեծ արդիւնքին և գործի արտակարգ շահաւետութեան՝ հորերի թիւը տարեցտարի աւելացել է նաև անցեալում, և, հէնց Փրինակի համար, մինչդեռ 1889 թ-ին Բաքւայ շրջանում 278 հոր կար, 1895-ին արգեն դոցա թիւը աճել էր 604-ի, արտա-գրելով մոտ 377 ու կէս միլիոն փութ հում նաւթ: Ուր էին այն ժամանակ արգի անդլիացիք?

Այսքանը թող բաւ լինի ապացուցած լինելու համար, որ 1)

նաւթի արդիւնաբերութիւնը իւր արդիւնքի համեմատ քիչ կապի-
տալ է պահանջում, 2) որ նաւթի արդիւնքը այնքան մեծ է, որ նա
գոյացը է արդէն հարիւրաւոր միլիոններ, այնպէս որ նա իւր
զարգացման համար ներկայում չի պահանջում դրսի կապի-
տալներ:

Աւմ համար համոզիչ են անհերքելի թւերն ու ֆաքտերը, որ
մենք առաջ բերինք, նա չի կարող չհամաձայնել մեզ հետ, որ
անգլիական կապիտալները Բաքում ոչ թէ նաւթագործութեան
կատարելագործութիւնն են ունենալու իբր հետեանք, այլ պարզ
ի պարզոց այդ հարստութիւնների գրաւումը էժան գնով։ Այս,
էժան գնով. յարո՞նի է, օրինակ, որ տեղացի մեծահարուստ թուրք
Թաղիեւը վաճառեց իւր նաւթահողերն ու նաւթահորերը հինգ մի-
լիոն սուրլով. բայց գնողները—անգլիացիք—առանց որ և է կա-
տարելագործութեան, առանց մի նոր, բաքուցիներին անյայտ
ոյժի—այս երկու տարու Թաղիեւի նախկին հողերից ու հորերից
ստացել են արդէն իրենց վճարած գումարի շափ զոտ արդիւնք,
և, կարծեօք, դեռ աւելի։ Եինիչ օրինակ, որը ինքնին, կարծում
ենք, բաւական սիրտի լիներ համոզելու ամենքին, որ օտար կապի-
տալների հոսանքի համար գէսպի Բաքու ոգեսորեւու մի բան չկայ։

Բայց չէ որ, առարկում են մեզ, գնելով մերսցիններից նաւ-
թահորերը, մերոնց ձեռքը ազատ գումար է գոյանում, և այդ
ազատ գումարը նոքա պիտի աշխատեն գործադրել մեր երկրի հա-
մար օգտակար գործերի համար, ինչպէս օրինակ, զանազան գոր-
ծարաններ հիմնելու, մեծ հողեր գնելու ու մեծ գիւղատնակ-
ութիւններ հաստատելու համար։ Մենք այդ առարկութեանը
արդէն ստատախանեցինք անցեալ անգամ, հաստատելով, որ այդ-
պիսով գոյացած աղառ դրամազլուխները մեծագոյն մասով դար-
ձեալ գնուում են նաւթաշէն գործի մէջ, որ ներկայում ամենա-
շահաւեան է թւում ամենքին. երկրորդ, որ նաւթատէրերը այնքան
միլիոններ են զիզում, որ որ և է այլ գործարան հիմնելու համար
նոքա թնառ կարօտութիւն չեն զգում դրամի։ Ահա ներկայում
Գերասիմ Թումանյան այլ երկու լնկերներով ձեռնարկում են թղթի
մեծ գործարան հիմնելու—առանց կարօտելու անգլիացոց դրամին.
Պահթաշեան ձեռնարկում է արցիոննէրական լնկերութեամբ չմի

գործարանի — առանց իւր հորերը վաճառած լինելու. Առաքել Մատուրեան Թաղիեւի հետ զնեց Եւլսխի աճազին կալածքը — երբ դեռ ևս ոչ մէկը և ոչ միւսը բան չունէին վաճառած անգլիացիներին. Նոյն և Մանթաշեան՝ նորչալուի մեծ կալածքի համար Նորերս Համբ. Մելիքեանը կազմակերպել է բաքւում ելեքտրականութեան մեծ աքցիոներական գործարան կարծեօք մի ու կէս միլիոն գրամագլխով — ոյնակէս առանց անգլիական զրամագլուխների զիմելու, այլ տեղական կապիտալներով։ Եւ աւելորդ է աղացուցանելն անգամ, որ այն հարիւր միլիոնտէրերից, որ կան Բաքւում, ամենքը կարող են կապիտալ պահանջող այլ ձեռնարկութիւնների զիմել, անհատներով կամ ընկերաբար, կամ աքցիոներական ընկերութիւններ կազմելով, եթէ միայն իրենք ձեռնարկ համարէին, և դրա համար նոքա հարկ չեն ունենալ վաճառելու և ոչ մէկը իրենց հորերից, այլ միայն օգտականով իրենց տարեկան զուտ արդիւնքներով գոյացրած կապիտալներից։

Միթէ սա կարող է զարձեալ վիճելի լինել։ Բայց որպէս անցեալ անգամ, այժմ ևս օտար գրամագլուխների մուտքը Բաքու մինչեւ մի յայտնի աստիճան օգտակար ենք համարում. արդէն ասացինք թէ այդ սահմանը ուր է սկսում և ուր վերջանում, և թէ ինչ սահմանից գէնը սկսում է արդէն միմիշայն վնասը։ Ընդհանուր խօսքով կարող ենք կրկնել, որ օգտակար է օտար կապիտալը, որքանով որ նա տեխնիկական կատարելագործութեան, լաւ վարչութեան և տեղացիների բարքերի վրայ գէպի լաւը ազդող օրինակ է հանդիսանում. վարչութիւն ու բարքեր խօսքերի ներքոյ հասկացէք նաև գործառերերի, գործակատարների ու բանւորների միջև եղած յարաբերութիւնները։ Երբ որ մի որոշ թւով օտարների ազգեցութեամբ տեղական բիրտ ասիական հասկացողութիւնները ստիպւած են լինում տեղի տալ աւելի լաւին, ապա օտարների օգտակարութեան չափը կարելի է լրացած համարել։ Դորանից զէնը՝ սկսում է արդէն հարստահարութիւնը այժման, զօրեղի՝ աւելի թուլի վրայ, թէև այդ թոյլը կարող կ'լինէր վաղը իւր արժանիքներով հաւասարւել այժմեան զօրեղին, եթէ միայն օտար զրամագլխի ծնշումը չզբկե տեղացուն սորա ինքնուրոյն զարգացումից։

Բայց թուչպէս իմանալ թէ ուր է վերջանում օգտակարութիւնը, և ուր՝ հարստահարութիւնը՝ կամ մնասակարութիւնը՝ ԶԵ որ դա ինքնըստինքեան դժւար որոշելու բան է, եթէ կրիտերիում՝ շունենանք մեր դատողութեան համար։ Մենք այդ կրիտերիումը ցոյց էինք տւել անցեալ յօդւածում և կ'կրկնենք. բացարձակ մնասը մեր երկրի համար կ'սկսվի, եթէ օտար կապիտալիստները իրենց ձեռքը գցեն նաւթի առուտուրը, այսինքն օտարները, միաբան ոյժերով, միաբանութիւն (սինդիկատ) կազմելով կանգնեն արդիւնաբերողների ու սպառողների (նաւթի արդիւնքները ոչ վաճառելու այլ գործածելու համար գնողների, այսինքն ժողովրդի) մէջ տեղը։ Այն ժամանակ տեղացի նաւթահորերի տէրերը ստիպւած կ'լինեն իրենց նաւթը վաճառել միմիայն օտար կապիտալիստներին և չեն կարող օգտաել այն բարձր գներից, որ օտար կապիտալիստները կը հաստատեն դրսի շուկաներում։ Դորանով տեղացիք կատարելապէս կ'ընկնեն հապատակութեան դիրքի մէջ և տեղացի կապիտալիստները կ'դառնան օտարների մի տեսակ վարձկանները։

Բաքւալ նաւթի առուտուրը համեմատապէս փոքրիկ մասով արտասահմանի հետ է կատարւում (կերոսին), բայց մեծ մասով նա կատարւում է Ռուսիայի սահմաններում (մազուտ, որ գնում է գործարանների, երկաթուղիների վառարանների համար փոխարինելով քարածուխը, և կերոսին ու այլ իւղեր). ամենազլիսաւորը Բաքւալ համար, ի հարկէ, Ռուսիայի շուկան է. բայց այն ինչ անգլիացիք ամենից շուտով իրենց ձեռքը կը գցէին, դա կը լինէր Բաքւալ կերոսինի արտասահմաննեան շուկան։ Մենք այդ մաքով է, որ անցեալ յօդւածում գրեցինք այդ կետի վերաբերմամբ, թէև խստապահանջ ընթերցողը մեր խօսքերից (զգէթ արտասահմանի նաւթի առուտուրը) և այլն, Մուրճ № 10—11, էջ 1557) կարող էր մեր մտադրութեան հակառակ եղբակացութիւն դուրս բերել, իբր թէ մեր կարծիքով բաւական կը լինէր Բաքւալ կերոսինի արտասահմաննեան շուկան գրաւել՝ Բաքւալ ամբողջ նաւթարդիւնքների գների վրայ վերջնական կերպով իշխելու հասար:

Այդպիսի եղբակացութիւն դուրս էր բերել մեր մի յարգելի գործութեան պ. Գ. Խաժակը (Տարագի գելտեմբերի վերջին համարում) և այդ առիթով նա մեր ասածը հերքելու համար առաջ էր

բերում այն, որ ամբողջ մօս 350 միլիոն փութ նաւթից արտասահման գնացել է 1897 թ-ին միայն մի վեցերորդը կերև կերոսին. բայց այդ իրողութիւնը յուսով ենք մեր օպազոնէնուը չի կառկածիլ որ մենք ևս զիտէինք զեթ մօտաւորական չափով։ Բայց օրքան էլ նւազ է նաքւայ կերոսինի արտահանումը արտասահման, դորա նշանակութիւնը ամեն էլ փոքր չպէտք է լինի նաքւայ գների համար, ինչպէս այդ կարծում է ապ. Խաժակը. նաև որոշ հետեւ 57 միլիոն փութը բնու արհամարելի քանակ չէ ինքն ըստ ինքեան¹⁾. երկրորդ որ Առուսիային շատ է գրաղեցնում իւր կերոսինի համար նոր շուկաներ գտնելը, և հենց օրինակի համար՝ որքանո՞րքան գրւել է ոռոսաց կերոսինը Գերմանիա արտահանելու մասին, և ինչքան աշխատում է ոռոսաց կառավարութիւնը գերմանական շուկան ձեռք բերելու համար! Եթէ ոռոսաց կերոսինը արտասահման գնում է միայն 50—60 միլիոն փութ, այդ ոչ թէ նրանից է որ անձեռնոու է, այլ որովհետեւ նաքուն չի կալողանում մրցել ամերիկական Աստանդարդ ընկերութեան հետ. իսկ եթէ Բաքուն կարողանաց կազմակերպւել Ստանդարդի դէմ կուելու համար—կերոսինի արտահանումը այժմ անից շատ աւելի մեծ Փաքտոր կ'դառնաց Բաքւայ նաւթի գների վրայ ազդելու համար։

Բայց ամ ինչ է նշանակում. ճներքին հասպարակում գները պայմանաւորում են արգիւնագործութեան ծախքերով և աղտական աքցիզի չափերով (սորորագծումը մերն է) և ոչ էքսորատի համեմատաբար շատ քիչ քանակով։ Աքցիզը վերցուում է թէ արտասահման և թէ Առուսիայի ներքին նահանգները և այլ ուր տանելու համար. բայց չէ որ աքցիզի չափը կառավարութիւնը որոշում է ոչ թէ կատարելապէս կամացաբար, այլ համաձայն այն գներ-

1) Ամերիկան արտահանում է 150 միլիոն փութ կերոսին. — 2) Տարիփակին կոմիտէն ալս գեկտ. 2-ին վճռեց պահպանել 12 կոտէկ արտօնական սակագինը Անդրկոմիլասեան երկաթուղու համար՝ կերոսինը Բաթում և այս երկիրները հասցնելու համար, ուր որոշւած է կերոսինի բռնկման աստիճանը 28⁰ Ց. և ծանր իւղերի քանակը 15⁰/₀. այդ արւած է Գերմանիայի շուկան ի նկատի ունենալով, որը զործ է ածում տարեկան 55 միլիոն փութ կերոսին, որից 50-ը ամերիկական Standard Oil Trust հզորագուն ընկերութիւնն է տալիս։

րին, որ ունի կերոսինը արտասահմանում կերոսինի արգիւնագործութեան ծախքերը համեմատապէս շատ չնչին լինելով, հաքւաչ կերոսինի զնի ամենամեծ տոկոսը զրսի շրւկաներում կազմում է աքցիզը. և կառավարութիւնն էլ աքցիզ վերցնում է մօտպուորապէս այն չափով, որ Բաքւաչ կերոսինը, գործարանական ծախքի վրայ տւելանալով տեղափոխման (Երկաթուղով, նաւերով) ծախքը, մօտպուորապէս աշնքան նստի, ինչ գնով որ վաճառում է ամերիկական կերոսինը Արոպացում (օրինակ Լոնդոնում). մեր հասկացողութեամբ, ուրեմն, կերոսինի աքցիզ ասելով՝ կերոսինի եւրոպական զին ասել է, այն մաքով, ինչպէս այս բուլէին բացատրեցինք:

Սակայն, որպէս ասացինք վերը, մենք մեր խօսքի ծանրութիւնը չենք զնում արտասահմանեան արտածութեան վրայ. անգլիացիք, եթէ միայն կատարելապէս ազատ զգան, նոյն ձեռվ կարող կլինէին, իրենց մեծ զրամաղլուիների ոյժով, ձեռք զցել նաև Ռուսիացի ներքին հրապարակը, և գորանով իրենց բռան մէջ ողա՛նել տեղացի նաւթատէրերին:

Խնդիրը այժմ սա է, թէ արգեօք իրօք վասնգ կայ որ այդ ձեռվ ամրող հաքւաչ նութացին հրապարակը կ'ընկնի անգլիացոց ձեռքը¹: Դորա համար ակոք էր որ անգլիական կապիտալների հոսանքը այժմեան եղանակով գէթ մի քանի տարի շարունակէի Դորա զէմը սակայն մասամբ առնուում է նրանով, որ անգլիական միլիոնները արգեն շատ ազգել են նութահորերի ու հողերի զների վրայ, այնպէս որ ոչ մի կերպ անցեալի զներով օտարներին չեն տրւիլ կարեոր նաւթահողերն ու հորերը: Հողերի չափազանց բարձրացած զները մի կարեոր արգելք կը զնեն անգլիական տիրապետութեան, իսկ դորա տեղ՝ զարկ կ'տրւի աքցիոներական ընկերութիւնների կենքին տեղացիների ձեռքով: Այդ նկատում՝ է նաև այսօր²) և նկատում՝ է նաև այն, որ տեղական հանքառերերը,

1. Մինչև այժմ անգլիացոց վաճառւած են Հաջի Զեյնալ Թաղիեւի, Շիրաեւի, Առափելեանի, Քուղաղեանների, Գերութի, Քհնկինզորֆի, Ծառտուրեանի և մի քանի ալլոց նաւթափին գործերը. ամենավերջին վաճառքը եղել է Շովիաննեանների կողմից, որտեղ իրենց չորս խումբ հանքերից մի խումբը վաճառել են շուրջ ութհարիւր հազար ռուբլով:

2. Բայց աւելցնենք որ այժմ կազմող ընկերութիւնները մնծ մա-

արդէն իսկ զգուշացած, նոյն իսկ երբ շահաւետ են տեսնում անդիմական ոսկին շմերժելու, անպայման կերպով չեն վաճառում իրենց հանքերը, այլ միայն ընկերացնում են նոցա իրենց հետ որոշ մասով¹⁾: Տեղացին, և գլխաւորապէս ի հարկէ հայը, որպէս երեսում է, չի ընկնելու Անգլիական դրամից, և ոչ էլ թոյլ է տալու որ անգլիացին անվերջ հոսեցնէ իւր ոսկիները գէպի Բաքու և սորա հրապարակի տէրը դառնայ:

Իսկ զորա համար դեռ բաւական չէ շարունակել մնալ նաւոթահորերի տէրը կամ շահագործողը. պէտք է դրսի շուկաները (արտասահմանի և թէ Առուսիացի) չհպատակեցնել ոչ միայն օտարին, այլ և այս ու այն մասնաւոր բացց զօրեղ մասնաւոր մարգուկամ սինդիկատի. պէտք է որ բոլոր նաւոթարդիւնաբերողները իրենք լինեն նաև տէրերը դրսի շուկաների, այլապէս նաև թէրը կ'գառնայ հպատակ վաճառականին, այսինքն այն մասնաւոր կազմակերպութեան, որը գնում է ամրող նաւոթը և վաճառում Առուսիայում և արտասահմանում: Դորան կը ձգտի անգլիացին: Բայց այն դրութիւնը, ուր նաւոթի տէրը ինքը չէ դրսի ժողովրդին վաճառողը, այլ միայն ստիպւած է լինում վաճառել միջնորդ-վաճառականին, այդ դրութիւնը վտանգաւոր է թէնաւոթատիրոջը և թէ բանւոր դասակարգին. այն բանւորը, որը աշխատում է մի նաւոթահանքում, որի տէրը ինքը չի կարող օգտաել դրսի շուկաներում հաստատած գներից, միշտ կ'աստանաց աւելի քիչ վարձ, քան երբ հանքի տէրը ինքն է վաճառում սպասողին և շահուում հաստատած գներից: Իսկ որպէս զի բոլոր հանքատէրերը կարողանան նաև իրենք վաճառել դրսի շուկաներում, պէտք է միուլթիմ կազմեն (Սոկրե), որովհետև նաև թի վաճառումը

սամբ (Քարահունջ և ապն) բուն աքցիոնէրական չեն այլ փակաւոր ընկերութիւններ են, ուր հիմնադիրներին խիստ մեծ իրաւունքներ են արւած առանց որ այդ հիմնադիրները ընկերութեան փակերի արժեքի չափով պատասխանատու լինին կորուստների գէպքում: Դոցա կանոնադրութիւնները խիստ պակասաւոր են:

1. Արդէն իսկ լսում է որ Մասնթաշեան, որի նաւոթային գործերը 22—24 միլիոն ռուբլիով անգլիացիներին վաճառելու մասին ներկաց 1895-ի սկզբներում խօսք կար, բայց չիրագործեց, աչքմ կազմակերպում է մի մեծ բաժննոր ընկերութիւն:

պահանջում է զօրեղ կազմակերպութիւն, որի համար հատ-հառ
հանքատէրերի ոյժը չի պատիլ։ Պէտք է վերականգնել նախկին տա-
րիներում եղած Սոհիզը («օյօզъ=միութիւն»), բայց ոչ թէ մինչեւ
Բաթում կերոսին հասցնելու համար, որպէս առաջ էր, այլ Ռու-
սիայի եւ թէ արտասահմանի շուկաներում կանոնաւոր առևտրա-
կան կազմակերպութիւն ստեղծելու համար։ Բաքւում վազուց գոր-
ծող նաւթարդիւնաբերողների համաժողովը (Ծենձն), որը մշտա-
կան կազմակերպութիւն ունի, միակ կարող է այդ կազմակերպու-
թիւնը գլուխ բերել։ Նորա այդ կարողութիւնը կ'նպաստի այժմ
նաև նորա նոր հիմնած երկշաբաթաթերթը («Հեֆտյոյ ճելո»):

Ա. ԱՐԱՍԻՂՆԵԱՆՑ

ՀԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵԲ

ՄՈՒՐՃԻ ՆԻԹԱՍՅ ՀԱՄԱՐԸ մենք լուս ենք ընծառւմ իւր ժամանակից ուշ
միմիակն նորան համար, որ սկսւած երկու վէպերը վերջացած տաճք
տարւալ ալս վերջին համարում և որ նոքա չանցնեն գալ տարւալ առա-
ջին համարը:

ՆԻԿԻՆԵԲ ՄՈՒՐՃԻ ՊԱՐՏՔԵՐԸ ՀԱՆԳՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, Ա. Պետերոս րդի
հայ ուսանողների մի խմբի կողմից ուսանող պ. Մամուռեան զրկել է
խմբադրութեանս 75 ո. 50 կոպէկ, գնելով ալդ գումարը մեր լիա-
կատար իրաւունքի ներքեւ Մենք ալդ գումարից 50 ո. շատկացրինք
Մուրճի պարտքերը հանգցնելու գործին, 20 ռուբլի 50 կ. անց-
կացրինք «Մուրճ» նէլիրողների բաժինը:—Արմաւիր գիւղի (Հիւա-
նովկաս) մի խումբ համակրողների կողմից պ. Հմակեակ Մաժի-
նեանցի ձեռքով ստացանք 25 ո. ամսադրիս պարտքերը հանգցնե-
լու համար:—Պր. Համբարձում խօջակեանից երկրորդ նւագ 1½ ո.՝
Անովկասի Մուրճի պարտքերը հանցնելու համար ստացած ենք
մինչեւ ալժմ 1.653 ռուբլի, որով մինչեւ Հն լունւարի 1898 թ. մնա-
ցած 5.500 ռուբլի պարտքից մնում է 3.847 ռուբլի:

«ՄՈՒՐՃ» ՆԻԹԻՌԴՆԵԲԻ: (Տես սկիզբը Մուրճ Նո 10—11), Պետերուրդի
հայ ուսանողներից ստացւած 75 ո. 50 կ. գումարից խմբագրութիւնս,
20 ռուբլին շատկացնելով Մուրճը նէքր զրկելուն, որոշեց ալդ գու-
մարով երեք օրինակ նէքր զրկել ա) Արգարիլի հաղոց ընթերցարա-
նին, բ) Նոր-Նախիչևանի Միծ Սալա զիւղի զպրոցին և 3 Ղազախի
զաւասի Ռւզուն թալա զիւղի համայնքին:—Պր. բժշկ. Գերասիմ
Մելիք-Բէկլարիսն մի օրինակ նիրեանեան գնդի հայ զինուրներին
Մանգլիսում (խմբ. ընտրութեամբ):—Եզր. Ժամհարեան (Մոսկաչից)
զրկելով մեզ 5 բաժնեզին, նէլիրում են մի օրինակ Շնչւալ ժեմակ:
զպրոցին, և 2·ը թագնում մեր ընտրութեամը, որոնցից մէկով կ'ուզարկի
Գորւալ երկրորդ հրաձիգ գնդի հայ զինուրներին, միւսով՝ Լադողէ-
խում բանակող գնդի հայ զինուրներին:—Պր. Առաքել Շատուրեան,
զրկելով մեզ 10 բաժնեզին, հինգ օրինակ թողնում է մեր ընտրու-
թեանը. զորանից մէկը կը զրկւի Քարահունչ զիւղի հասարակու-

թեանը (Զանգեզուրի գաւառ), տանուանէրի հայցէով, մի օրինակ Դէօրիսի ընթերցողներին (Զանգ. գաւ.), մի օրինակ Քարհատ գիւղը (Գանձակի գաւ.) և մի օրինակ Թելափ ընկերց. զրադարանին—Պր. Մնացական Խունուց մի օրինակ Բարեգ. ընկ. Շոշակ ճիւղի ընթերցարան-զրադարանին—Պր. Ալէքսանդր Մելիք-Ազարիան մի օրինակ Ռաշտի հայոց ընթերցարանին:

Ա. ԵՐԶԱՑՈՂ. Վ. ԷՊԵՏԻ. Մուրճի ներկայ համարաւմ վերջանում է պ. Էլոն Մանուէլեանի «Խորտակած կեանքը» մեծ վէպը, որ շտառվ պիտի լուս տեսնի նաև առանձին զրքով, զինը և ռուբլի Վերջանում է նաև Շանթի «Գարձ»-ը, որը նոչեակս պիտի շտառվ լուս տեսնի առանձին զրքով, զինը 40 կոսկէկ. Լիսն Մանուէլեանի վէսպում զւերս է բերւած մատամարակւայ հայոց զրադէաների և զեզարեստագէաների կեանքը, Շանթը արծարծում է հոգեորականի ու աշխարհականի համեմատական արժէքը հասարակաց զործունվութեան ասպարէզում:

Պր. Մանուէլեանը իւր ալս մեծ վէպից տարիներ առաջ իրեն արձակ զրւածք տուց Մուրճուու «Զալարիների արշաւանքը» խորագրով մի պատկեր, ուր շատ լաջող դուրս են բերւած գիւղական տիպարներ, զրւած զուտ զեզարեստագէտի զրքով. այդ պատկերը թարգմանւած է ռուսերէն և պիտի լուս տեսնի „Կաեկազէկօ յա-
տօպիսօ օօօզքնիօ“ հրատարակութեան մէջ. Դրւածքը լիքն է առողջ հումորով. Ապա նոյն հեղինակը փորձեց պատկերներ տալ զպրցական կեանքից, որոնք մեծ սիրով կարդացւում էին. և այժմ ահա նա միծ վէպի առաջին փորձն է անում:

Օգտում ենք դէպքից հաղորդելու, որ անւանի հեղինակը պատ-
րաստում է հրատարակելու իւր այն ոտանաւորները, որոնք իւր ժողովածուից շատ առաջ արդէն տարածել են հայ ընթերցողների ինտելիգէնսա մասի մէջ Մուրճի միջոցով. մենք ոչ մի կասկած չու-
նինք որ այդ ժողովածուն սպառւած հիւրն է լինելու հայ ընթերցող
հասարակութեան սեղմանի վրայ ժողովածուի մէջն են լինելու. նաև «Գիազորոս Միլոսացին» և «Գալիէկ» և Միլտոն պոէմաները, որոնք իրենց տեսակում նմանը չունին մեր զրականութեան մէջ:

Միր մեծարդող աշխատակիցը ի միջի ալլոց զրադւած է «Շւրիէլէ Ակտատառ-ի» թարգմանութիւնով, ոտանաւորով, որպէս բնագիրն է. դորանից մի զլուխ ասիթ ենք ունեցել կարդալու, որով համոզւել ենք որ դա լինելու է մի կլասիկական թարգմանութիւն:

Գալով պ. Շանթին՝ «Գարձ»-ով նա իւր չորրորդ վէպն է նախ-
րում մեր զրականութեանը. Հազիւ թէ մեղնում զանուի մէկը որը
իւր երիտասարդ և ուսանող հասակում գրչի բարձր կատարելութեամբ
ալաքան աչքի ընկնող և ուշք զրաւող երկեր արտազրած լինի.

ՄՈՒՐՃԻ 10 ՏԱՐԻԱՅՑ ԵՐԵՍՆԵՐԻ ԹԻՒՔ:

1889	թ.	2020
1890	"	1804
1891	"	1634
1892	"	1900
1793	"	1972
1894	"	1764
1895	"	1728
1396	"	1664
1897	"	1704
1898	"	1828

ԳԱԼԱՄԱՐ 18.018

Միջին հաշւով տարին . . 1802 էլ.

ՄՈՒՐՃԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ. Տասը տարւակ ընթացքում Մուրճից արտատպւած են 45 գիրք, որոնց ցանկը դրւած է չափարարութիւնների բաժնում: Այդ 45 գրքերը, մի քանի մանրերի բացառութեամբ, գրքովներ են 15-ական կոպէկ արժողութեամբ, կամ միջակ հատորներ են 40—50—60 կոպէկի, կամ աւելի ստւար հատորներ մինչև 1 ռ. 50 կոպէկ արժողութեամբ: Բոլոր գրքերի գինը մոտ 20 ռուբլի է (ճիշդը՝ 19 ռ. 10 կ): Տպւած են նոքա, գրեթէ առանց բացառութեան, Մուրճի խմբագրութեան միջոցներով:

ՄՈՒՐՃԻ 1899-ի № 1-ի մէջ տեղ են գտնելու ինտերմէցցօ՝ Աւետիք Խաչակեանի: — Պուշկինի «Պոլտաւա» սոէմագլ երկրորդ երգը, թարգմ. Յ. Տէր-Գէորգեանի: Սոցիալական Էւլիւցիա, II — Միք. Յովհաննիսեանի: — Առողջապահութիւն, գոկտ. Փաշակեանի: — Հարկերը ծածկաստանում՝ Գալեզին Խաժակնեանի, — և այլն:

№ 1-ը պիտի աշխատենք հասցնել մինչև լուսւարի վերջը կամ փետրւարի 10-ը, Խմբագրութիւնը տպա ջանագիր պիտի լինի №-ները հասցնել ամեն ամսի վերջը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՄՈՒՆ:

Մասիս'ը ակտմ սկսել է հրատարակւել իբր «Արամսեակ հանդէս ազգային, քաղաքական, գեղարվեստական և գիտական», 47-րդ տարի, որի առաջին թիւը ստացանք: Արտօնատէրը մնում է նոյն կ. Ս. Խւթիւնեան, իսկ Տնօրէն-խմբագրապետն է՝ Միքայէլ Շամտանձեան: Թերթը բազկացած է 32 մեծադիր երկսիւն էջերից: Այս առաջին №-ի մէջ մասնակցել են՝ Մ. Շամտանձեան, Յ. Գ. Մ., Լոռն Մելքոնեան (=Շանթ), Սիսիլ, Ռուբէն Զարդարեան, և զե-

տեղւած են երկվեցեակ լողւածներ՝ հրապարակախօսական, վէպ, սոսանաւոր, քաղաքական, ունի մի բաժին լատկապէս կանանց վերաբերեալ, ապա նաև մանուկների զաստիարակութեան վերաբերեալ: Դրւածներից ամեն մէկը բռնում է 2—3, ամենաերկարը 6 երես:

«Անսիրտ» ամուաթերթը, որի մասին ծանուցում տվինք քանի մի ամիս առաջ, սկսած է արգէն հրատարակւել Պարփղում, պ. Արշ. Չոպաննեանի ձեռքով, Առաջին թիւը չենք ստացած, բայց երկրորդ տեսրամիլը (գեկտեմբեր) մեզ հասաւ Թերթը բաղկացած է 32 մեծագիր երկուն էջներոց և թէ արտաքուստ և թէ ներքուստ նպաստաւոր տպաւորութիւն է անում: Այս երկրորդ համարի գրեթէ կէսը բանում է «Խաչատուր Աբովյան» խորագրով պ. Չոպաննեանի լողւածը, ուր տրւած են նշանաւոր գրողի կեանքն ու գործը՝ «Վէրք Հալաստանիո-ի քննական վերլուծումով», արւած է նաև Աբովյանի պատկերը, որ շատ մաքուր է զուրա բերւած: Վահրամ Սլամեան տւել է երկու ոտանաւոր, որոնց լաճարդում է Գիւտաւ Ֆլորէրի «Հերովդիան-ի թարգմանութիւնը»: Իոքանը Պոլոս Քոլուկան «Հայուն Ջիղբը» լողւածում, որի առաջին մասը Անահատ'ի առաջին տեսրակումն է տպւած, տալիս է մի հետաքրքրական ուսումնասիրութիւն, ուր ձգուում է ըմբռնել մանաւանդ հայերի Հղալին առանձնակատկութիւնները («Ապանդուխտին ցաւը», մելամուղջուստութիւնը, անձնամիրութիւնը և այլն): «Մատաւորական կեանքն» բաժնի մէջ են տողեր նկարիչ Պիւիս զը նաւան և գրող Ստ. Մալառմէ հանգուցեալների և նոր ակադիմիկոս Լէոն Դիեռքսի մասին, ու վերջինիս մի բանաստեղծութեան արձակ թարգմանութիւնը: Պալլու է ապա «Ազգային քրոնիկը», որի նիւթն են կազմում Հայերն ի Պարիզ, Հայրաբերաներ, Մուրճի Տառնամնակը, Բաֆֆիի Տահարձանը: Վերջանում է մի բաւականին ընդարձակ Քաղաքական տեսութիւնով: Բայց Աբովյանի պատկերից տրւած են նաև Պիւիս զը Շաւանի ու Դիէրքսի պատկերները:

Չենք կարող գուշակել թէ ինչ վիճակ է սպասում Պարփղում հրատարակւող մի հայկական հանդիսի, բայց որ պ. Չոպաննեան ամեն պատրաստութիւններով օժտած մի կարող զրականագէտ է: — սէդ դեռ ամենից առաջ պիտի շեշտու: Արբ մի քանի տեսրակներ հրատարակւած կ'լինեն՝ կը վերադառնաք աց նոր հանդէսի մասին աւելի ընդարձակ խօսելու, թերեւ կից աչն չողւածի հետ, որ մենք մտադիր ենք նւիրելու արևմտեան հայոց պարբերական հրատարակութիւններին: Մի նկատողութիւն, սական, ավմեանից: պ. Չոպաննեան հետեւում է օտար բառերի ու անունների նկատմամբ ծայրակեղ պոլսական ուղղագրութեան: Նանիթի ոտանաւորների ու վէպերի,

Հայնեի բանաստեղծութիւնների և նոյն պ. Զօդանեանի քննազառականն մեծ չօգուածների հրատարակութիւնը «ԱՌուրճո-ի մէջ կարծում ենք որ բաւ էին ցուց տալու, որ արևմտեան հալերէնը արեւելեան հալոց սովորագրութեամբ ոչ մի բան չի կորցնում նոյն խոկ իւր պիքանտութիւնից. Բաղմուիչպը, Հանդէս Ամսօրեան և ա. Պոլսի Բիւրակնը թէև դեռ եռ ոչ կատարեալ սիստեմատիկանութեամբ, բայց և այնպէս ջանադիր են հետեւլու Մուրճի տւած օրինակին. և հալոց գրականուրան միութեան բարձր շահները ստիլովական կերպով պահանջում են ուղղագրութեան ազդ միանալսակութիւնը. Անտեսիսը, ճակատը հալոց հին աստուածունուն վարել ծաղկանկարներով զարդարուն՝ չպիտի գար իւր ողղագրութիւնը թիւրք բրականին զարմարցնելու, ալլ զուտ հաջկականին:

ՆԻՔԱՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ

Մնացական Տէր Յակոբեան (Յաւրիդ). Կտակով թողել է 5.000 ռ. Քաւրիզի երկսնու դպրոցներին, և Թաւրիզի Հայուհեաց ու Ատըրպատականի Հայունեաց բարեզդ. Ընկերութիւնների Վահի որբանոցին, Հանգուցեալի ալիքին Պարադազի Խանագեան գլուզում շինել է տւած մի քարաչն ուսումնարան և միարում է ուսուցչի ուժիկը, և աղքատ աշակերտներին՝ զառական պիտուկը.

Պողոս Կարապետնան (Կահնիրէ, Խղիպու.) 2.000 ոսկուց աւելի արժեքով կտակածներ է յատկացրել, որով ԱՅրարկիրի աղքատիկ տղաք, Խրուսաղէմի վանքը ու Վահիրէի զպրոցը պիտի այրունական ազդ 2000 ոսկիր գումարին, կտակակատարին կամքին համաձայնու:

ԱՅթենիս ԶՄՇՈՒԵԱՆ ՅՕԲԵԼԼԱՆԵՐ: Հալոց թատրոնը իւր սկզբնական տարիներում, որ ընկնում են վաթուունական տարիները, առաջ բերու մի զերսուանունու, որը ապա պիտի պ ստեանէր հաւ դերասանական խմբի անհրաժեշտ անդամների թւեն. Կա էր Խղիսարէթը, որը ընդունեց «Սաթենիկ» բեմական անունը և ամուսնացաւ հալոց թատրոնի բայտնի հիմնադիր և վետերան պ. Գէորգ Զմշկիանի հետ. Տիկին Ապենիկ Զմշկեանը թէև արդէն բաւական տարիներ ի վեր ալլ եռ թողած է մշտական դերասանունու դործոն պաշտօնը, բայց հարկ եղած դէպքերում նաև վերջին տասնեակ տարիներս մասնակցած է հալոց ներկացացումներին, գլխաւորապէս տեղական և առանձնապէս Փարք. Առնորուկեանցի կոմեդիանների կանաց զերերում. Ներկալում լրացաւ ալլ վաստակաւոր զերասանունու. Յէ ամեալ զործունէութեան շրջանը, որը լաւերժացնելու համար վատկապէս դորա համար կազմւած մի կոմիտէ սարքել էր մի չօքելենական ներկացացում լունւարի 14-ին, չօքելեարի օգտին. Իրենց չարգանքը տիկին Զմշկեանին ցուց տալու պատրաստ տնձերի թւի համար Աղնւականաց թատրոնի սրահը շատ

փոքրիկ էր, նոյն իսկ տեղերի գրեթէ կրկնապատճիկ բարձրացրած գներով, Դալ անդամ կ'հաղորդենք ներկաչացման վերաբերեալ մանրամասները:

ՀԱՅՈՅ ԵԿԵՂ. ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ: Թիֆլիսի Մողնու եկեղեցում գտնւող նախկին Դաշիանեան դպրոցից, ըստ կաւկազ լրագրի, անցել է կըրթական մինխատրութեանը՝ շնութիւնը և 25.737 ռ. 22 կոտէկ՝ արժեթղթերով և կանխիկ դրամով: Դպրոցը փակւել էր 1896-ի սկզբին. 1897-ին դպրոցի հոգաբարձական խորհուրդը վճռեց և թեմական առաջնորդի հաստատութեամբ նւիրեց Ներսէսեան դպրոցին 535 օրինակ գիրք և 210 օրինակ դասագրքեր և պատկերներ. վաճառւեց 88 իր (սեղաններ, աթոռներ և աշն) որից գոյացաւ 250 ռ. 55 կ. արդիւնք և 79 ռ. 69 կ. ծախք. իսկ մնացած զուտ արդիւնքը 120 ռ. 86 կ. չանձնւեց Թիֆլիսի հայոց կոնսիստորիին.

Դպրոցը ներկայ սեպտեմբերից վերաբացւած է կառավարչական նոր ծրագրով:

ԽՈՒԴԱԴԵԱՆԻ ԿՏԱԿՈՎ. Հայոց Բարեգործական ընկերութեան թողած տան և շարժական կարողութիւնը հասնում է շուրջ 112.000 ռուբ. որից մինչև 1904 թւականը ընկերութիւնը կարող է սպառել մոտ 85.000 ռուբլու տոկոսներից, իսկ 1904 թւականից սկսած՝ ամբողջ գումարի տոկոսներից ու եկամուտներից, 1904-ից ուրեմն կարելի է տարեկան հասովթը ընդունել 6000 ռուբլի: Բարեգ. Ընկերութեան ընդհանուր ժողովը այդ եկամատի գործադրութեան համար մայիսին ներկայ 1898 թ. ընտրել էր մի մասնաժողով՝ այլ և այլ առաջարկները քննելու համար՝ թէ ինչ հիմնարկութիւն հաստատի Խուդագետնի կտակի համաձայն: Մասնաժողովը պիտի ներկաչացնէր իւր զեկուցումը ց1-ն 1899 թ.: Մասնաժողովը, քննելով բոլոր առաջարկները, ձայների առաւելութեամբ կանգ է առել կոմիտասեան Հայոց Որրանոցի վրա, և իւր զեկուցումը լանձնել է Բարեգ. Ընկ. Խորհրդին, որ վերջինս ներկաչացնի ընդհ. ժողովին:

ՀԱՅԿԱԿԱՆ-ԱԲԵԿԵԼԵԱՆ ՀԱՆՐԱԴԻՏԱՐԱՆ: Մի քանի ամիս առաջ «Տարագում» տպական մի լուր Մուրճի խմբագրի ձեռքով պատրաստող մի հաջկական հանրագիտարանի (=էնցիկլոպեդիա) մասին. Այդ լուրի վրայ շատերը հետաքրքրեցան իմանալու թէ ինչ բնաւորութիւն է կրում այդ կազմով հանրագիտարանը. և գործը ինքնըստինքեան կարենը լինելով, աւելորդ շենք սեպում հետեւալը հաղորդել այդ մասին: Մինչեւ եւրոպական աղերը իրենց երկրի ու պատմութեան վերաբերեալ ամեն մի հարցի մասին, որ կապւած է որ և յատուկ անւան հետ, կարող են դիմել իրենց ընդարձակ հանրագիտարաններին, մննք հայերս չունինք մի ալզուիսի հրատարակութիւն մեր երկրի ու մեր

պատմութեան վերաբերեալ։ Եւ սակայն բազմաթիւ տեղեկութիւններ կան մեր երկրի ու մեր կեանքի մասին՝ ցրւած գրքերի ու պարբերական հրատարակութիւնների մէջ, հայոց և թէ ազլ լեզուներով։ Հանրագիտարանը արդէն աւելի քան մի դարուց ի վեր ճանաչւած է իրրե անհրաժեշտութիւն թէ ինտելլիգէնս մասսավի և թէ նուն խկ գիտնականների համար։ Մարդ ամեն քայլափոխում հանդիպում է հարցերի ու անունների, որոնց մասին տեղեկութիւն որոնելը հանրագիտարանից գուրօն մնձ մասսամբ ապարդիւն է անցնաւմ, որովհետեւ գործնականապէս անհնարին է ամեն խնդրի մասին դիմել բազմաթիւ աղբիւրների և մանաւանդ հատ-հատ տեղեկութիւնները ի մի ժողովել մի ամբողջութիւն գուրս բերելու համար։ Լաւ կազմւած հանրագիտարանը մի նշանաւոր գործիք է նաև գրական ու գիտական լառաջդիմութեան համար, որպէս և զօրաւոր գործոն է լուսաւորութիւն ասրածելու համար, ամեն տեսակիտից։ Խնչ որ հեռագիրն է պոստավին հաղորդակցութեան համար, երկաթուղին՝ փոխադրութեան համար, բառարանը՝ լեզվի համար, նոյնը և գեռ աւելի մեծ չափով՝ հանրագիտարանն է աշխարհագրական, պատմական ու գիտական տեղեկութիւնների համար։

Եւ մինչդեռ եւրոպական հանրագիտարանները հաջերիս համար թարգմանելու գործեր են, հայոց վերաբերեալը—կազմելու գործ է։ և մի հայոց հանրագիտարան, փոխադրածապէս, թէ և լինի նա հայոց լեզուով, բայց մի գանձ է բոլոր ազգերի համար։

Ազգային գործին մի մեթե սկիզբ մենք դրինք դեռ ևս 1օջախ թւին։ բայց նա մնաց։ 1893-ին վերակացինք, ու գործը գնալով աւելի արագացաւ, և կարծում ենք որ ձեռք բերածը կարող էր արդէն մի շնորհով հասոր կազմել Բայց մեր ծրագրած հանրագիտարանի համար աղջ մի հասորը կարող է դարձեալ միայն սկիզբ նկատւել—նիւթը շատ ու շատ է ընդարձակ։

Եւ նախ՝ թէ ինչպէս ենք կազմել ծրագիրը։ Մեր հանրագիտարանը նախ անհրաժեշտորէն պիտի պարունակէ իւր մէջ անունները այն բոլոր վայրերի (նահանգ, գաւառ, գիւղ, քաղաք) ուր հայ ազգաբնակութիւն կազ, որ պետութեան մէջ էլ նոքա լինեն՝ աշխարհագրական, պատմական, տնտեսական, պատմական, վիճակագրական և այլ տեղեկութիւններով, կարծ կամ ընդարձակ՝ նախած կարսորութեան և ձեռքի տակ եղած նիւթերին։ Ապա հայոց երկրի աշխարհագրութեան ու պատմութեան վերաբերեալ ամեն մի անուն (կարեսորութիւն ներկացնալ լեռ, գետ, լիճ և ազն) կարելիին չափ ընդարձակ տեղեկութիւններով։ պետական, հասարակական, զրական, արևեսաւ գիտական և այլ հայ գործիչներ անցնալից և ներկացից։

անուններ օտար հեղինակների, որոնք գրած են հայոց լեզվի, պատմութեան մասին, օտար գործիչների, որոնք որ և է նկատումով կարերութիւն են ներկայացնում հայոց համար, Բացի այդ՝ առանձին լոգւածների նիւթ են կազմելու հայերի հետ միասին ապրուղ առաջարակ փաքը Ասիով, Կովկասի ու Պարսկաստանի բոլոր ազգութիւնները. ապա անունները այն բոլոր պետական, զինւորական, գրական, հասարակական, եկեղեցական և այլ գործիչների, որոնց գործունէաւթիւնը ընդհանուր նշանակութիւն է ունեցել թէ հայերի և թէ նոյց գրացիների համար. (օրինակ՝ Պարսից, Տաճկաց, Ռուսաց գահականներ, Կուսակներ, նահանգապետներ և այլն. նոյնը և այլ հայաբնակ աեղերի համար);

Ալոքան ընդարձակ ծրագիր մը հանրագիտարան պատրաստելու համար, անշուշտ, մի մարդու ոլժ բաւական չէ նուն խոկ երմու տասնեակ տարում Միւս կողմից մի ալդպիսի գործ եթէ չետաձգւի մի քանի տասնեակ տարի—նիւթերից շատերը կարող են հնանալ և լամենաչն զեսս կ'իսրցնեն իրենց շահեկանութիւնը ժամանակակից սերունդների համար. Մի աղստիսի գործի վրայ սէտք և աշխատեր կարող գրիների մի մեծ խումք մի ընդհանուր զեկավարութեամբ մի քանի տարի. բայց աղստիսի մի կաղմակերպութիւն ստեղծելը ամեն ցանկացած րոպէի գործ չէ, մանաւանդ դա կը պահանջէր զրամական բաւականին խոչըր նեցուկ թէ որ մեր այս տողերը կարողացան մի դրամուտիրոջ կամ մի քանիսին դրդել գործի դրամական կողմի վլուխ կանգնելու ապա լաւ, (մեր կարծիքով գործը կ'պահանջէր 50 հազար ռուբլուց ոչ պակաս ծախոք՝ տասը հողով հինգ տարում ալդ ծաւալով մի հանրագիտարան որքան և իցէ բաւարար վախճանի հացնելու համար),—թէ ոչ՝ մենք պիտի մտածենք գործին այն ընթացքը տալու, որ աւելի համապատասխանէ մեր առանձնակի ուժին:

ՊՐ. ՅՈՒԿՈԲ ՄԵԳԱՄԻՈՒԵԱՆ, (Բաթումում), որը ազգագրագէտ է և լաւանի իւր մի ֆրանսիերէն ուսումնախրութիւնով հայ ընտանիքի մասին, զրացւած է ներկալումն երկու աշխատութիւններով, որոնցից մինը նա նշանակել է 1900 թւականին Պարիզում կայսարակիք ազգագրական համաժողովի համար, միւսը՝ մի էտիւդ է Առաւահալոց ինտելլիգենցիալի մասին և կրում է «Փրական չափանիք» խորագիրը: Առաջնի մասին կարող ենք հաղորդել հետևալը, նա վերցրել է երեք մահմեդականացած համայնքներ Սև ծովի հարաւային-արևելեան ափերից՝ հայ, լուս և վրացի ծագում ունեցող, և դիտել է թէ մահմեդականութիւն ընդունելով հանդերձ ալդ համայնքներից իւրաքանչիւրը ինչ լատկութիւններ է պահպանել հարութիւնից, չունութիւնից ու վրացիութիւնից. և այն լատկութիւննորը, որոնցով

տցի իուլամացած ժողովուրդները տարբերում են բուն թրբական ժողովրդից, պ. Մեղաւորեանը ընդունում է իբրև հավի, չունի ու վրացու արմատացած ազգային լատկութիւններ։ Այդ եղանակով պ. Մեղաւորեանը դուրս է ըսրել իբրև հայի ազգային լատկութիւններ՝ սեփական աշխատանքով իւր ապրուստն հայնալիթելը երկրադործութեամբ, արհեստով և վաճառականութիւնով, և դորա հետևանք՝ պահպատութեան դիմելը (շուրջ 4000 հոգի ալդ մահմեդականացած հակերից, հաղորդում է մեզ պ. Մեղաւորեանը, ներկազումն հացադործ են և այլ արհեստներով նուսիալում)։ լոնի ազգային լատկութիւնն է՝ կրօնական մոլեռանդութիւնը (մահմեդականացած չուների կենացրոն Սփի աւանում մեծամասնութիւնը սաստիկ մոլեռանդ մոլլաներ են և զինուրագրութիւնից ազատ), իսկ իբրև վրացու լատկութիւնն մահմեդականացած վրացիք պահպանել են իրենց նախնիների ծալքակաղը ծուլութիւնը։

Հասկանալի է թէ ինչ շահեկանութիւն պիտի ներկայացնի պ. Մեղաւորեանի աշխատասիրութիւնը, որի մէջ անշուշտ առաջ բերած կ'լինեն լաւ դիտած և ստուգւած ֆաքտեր իւր ուսումնասիրած համապների կեանքից։

«ՀԱՅ ԳՈՐԾԱԿՈՒՆՆԵՐԻ ՆԻ ՈՒՍՏԱԽԱՐԱԿԱՆ ՆԵՐԻ ՄԻՌԻԹԻՒՆ,» անունով Լոնդոնում կազմում է մի ընկերութիւն, որի կանոնադրութիւնը զրկւած է մեզ (Ասւած է՝ ծրագիր, որ երեխ պիտի նշանակի կանոնագիր, ծրագիրը այն է որ զեռ ևս կանոն ու օրէնք չէ դառած, այլ միան առաջարկ է՝ պրոտէկտութիւնը նախատակն է՝ 1. Հայ գործաւորների և ուսանողների մէջ (Լոնդոնում) միացնող սերտ կապեր հաստատել. 2. Նոցա համար կրթական և ինքնազարգացման միջավայր առաջացնել միասին խորհրդակցելու և ազգային ու ընկերական նիւթերի վրակ մտքեր փոխանակելու. 3. միանգաման նոցա (Լոնդոնի) զագութիւն միւս անդամների հետ չարաբերութեան մէջ դնել. 4. Ընկերութեան անդամներից կարօտութիւն զգացողներին օգնութեան գալը—

Անգամները վճարում են ամիսը առնւազն մի շիլինգ, Վարչութեան անդամների (սրոնց թիւը = 5) միժամասնութիւնը բաղկանալու է գործաւորներից և ուսանողներից, վարչութիւնը բնարուում է վեց ամսով, Ընկերութիւնը ունենալու է զրագարան և տալու է գրական երեկոներ, երեկոթներ, հանդեմներ, կազմելու է ընկերական գումարումներ, դասախոսութիւններ և ալն, այլ և զաստութիւններ անդլիներէնի, հայոց լեզւի և ալն։

Ընկերութիւնը կազմում է ի նկատի ունենալով ուր Լոնդոնի մէջ գտնելող բազմաթիւ հայ գործաւորների և ուսանողների մէջ կը

պակսին աչճպիսի պարագաներ, որ նոցա ընկերական շրջանի բարեմասնութիւններից օգտվելու լարմարութիւնները տալինուն ՔԱԿԻՐԴԻ ՀԱՅՈՒՀԵՈՅ ԲՈ. ՄԵԴ. ԸՆկերութեած է մեղ իւր տպագրած տեղեկագիրը 1987—98 ուսումնական տարեցրջանի համար (1898 թ. մարտին հրատարակւած էր ընկերութեած վեցամեալ զործունէութեան տեղեկագիրը): Ընկերութիւնը 1897—8 ուսումն, տարում ունեցել է մուտք 26.041 դռան 20 կոպ., ծախք 19.758 դռան 60 կ., ընկերութիւնը ունի այժմ գրամագրուխ 47.863 դռան 5 կոպէկ։ Ծախքի մէջ են (կոպէկները չհաշւած)՝ կար ու ձեի արհեստանոցի համար 3165 դռ., մանկապարուէզի համար 3096 դռ., գաղթականներին նպաստ 9.742 դռ., զանազան ծախք և քարոզուղարի ռոճիկ 1934, Վլաւացի օրիորդ զարոցի 33 սանուհիների համար 1085 դռ., գորգագործութեան համար 661 դռան։

ԳԱԼՖԱՆԵԱՆ, Կարապետ «Ալուրձի» անցեալ համարի մէջ մեր աշխատակից պ. Սիեանը թերիս հիմք ունէր սկիզբանիկաբար վերաբերւելու գէտի ան կարծիքները, որ չամոնում են ուսանողզերասան կարապետ Դալֆանի մասին, բայց մեզ հաւատում են, որ Եւրոպացի նշանաւոր թերթերի ու ցեղենպէնտները իրօք վկանում են նորա մասին սրբէս ապագայ բեմական աստղ։

ՏԱՆԱՐ-ԱՐՁԱՆ ՍԱՆ-ԱՏԵՖԱՆ ՕՅՈՒՄ: Կ. Պոլսի հօտերքում Սան-Ատեփանուուր բացւեց և ուռաց եկեղեցին, իբր արձան 1877—78 թ. ուսումնական պատերազմի ժամանակ Թրակիալում և Առումելիակում ընկած ուռաց զինուորների, որոնք թաղւած են 90 ազլ և ազլ տեղերում բացման հանդէսը եղաւ մի պատզամատրութեան ներկայութեամբ, որը զրկւած էր Խուսաց կառավարութիւնից և որի գլուխն էր Մեծ Խիսան Նիկոլայ Նիկոլայիւչի Մեծ իշխանին կ. Պոլսում տրւեցին զինուորական պատիւներ. Մեծ Խիսանը ալցելեց Սուլթանին և ընդունեց փոխ-այցելութիւնը։ Թագաւոր-կալսել կողմից Մեծ Խիսանը ընծակ տևեց Սուլթանին չորս նմուշ։ Սուլթանը պարզեց Մեծ Խիսանին Խմբիազլի չողակեալ նշանները, Դեկա, Շ-ին կատարեց եկեղեցու օծումը. ներկալին նաև կ. Պոլսի ուսւմնական գետպանը և Երտուաղէմի նախկին պատրիարք Նիկոլիմոսը, Վերադարձին կ. Պոլս Սուլթանը ձաշ տևեց ի պատիւ Մեծ Խիսանի, որը ապա վերպարձաւ Փետերբուրգ։

ԱՐՁԱՆ ՍԻՑԱԿԻՒԻՉԻՉԻ: Լեհացի մեծ բանաստեղծ Միքայելիցի արձանի բացումը Վարչաւում եղաւ գեկտ. 12-ին։ Հիմքը մոխրագուն գրանիտից է, բանաստեղծը ներկալացրած է ամբողջ զիրքով։

ՄՇԱԿՈ, բեղարած իւր սիստեմատիկական բացաւութիւններով Մուրօնի գէմեն տեսնելով որ իւր բռնած ալդ դիրքովը ինքը միաւն կորուստ-

ներ ունի հասարակաց կարծիքի մէջ, մի քանի տարիներից ի վեր գիմել է մ պոլիտիկայի, որի ստոր խորամանկութիւնը նա կարծել է թէ զաղտնիք կ'մնայ ու չի բացւի. զաղտնիքը այն է որ այդ «քաջ» թերթը սկսել է ետ ետ քաշել բայց մի աշխափոխ ձևով, որ չինի թէ նկատեն թէ ինչպէս է նա իւր թքածները ետ լիզում: Եւ անա կ'տեսնէք որ մի անգամ նա առշաղրութեան է առնում: ու կիսատապատ խօսքերով գովում Մուրճի մի աշխատակցին, մի ալ անգամ՝ երկրորդին, երրորդ անգամ՝ մեր մի ալ աշխատակցին, և այսպէս շարունակ. Մէկ կ'տեսնէք (1896-ին) գովեցին մեր աշխատակիցներից ալ պ. Ագէլեանին ու Գ. Մնացականեանցին՝ բացասելով բոլոր միւսներին. մի ալ անգամ (1897-ին!) դոզպոզալով մի բան կ'խոստավանեն Շանթի վերաբերմամբ, երրորդ տարին (1898-ին!) «ուշաղրութեան կ'առնեն» Բարեկենցին, չորրորդ տարին (1899 լունարի 11!) խոստավանութիւններ կ'առնեն պ. Ալ. Նատուրեանի ու պ. Յակ. Տէր-Գէորգեանի համար, նոյն իսկ առանց վերջինի անունը լիշելու, որովհետեւ դէն վերջապէս արդ անունը շնոր է բացառապէս «մուրճական», ու Մուրճի աշխատակիցներից յանկարծ երկուսին միաժամանակ գովելու վախր անգան մեծ է Մշակում, որ ալս անգամ այն ձեռվ են իրենց գովելը կարկատել, որ շատերը նոյն իսկ մոածեն որ «Պալտաւա»՝ պոէմայի թարգմանութիւնն էլ պ. Նատուրեանինն է: Այսպէս ուրիշն Մշակ'ը ամեն տարի միամի խոստավանութիւններ կ'առի, հասարակաց կարծիքին էլ տուրք աւած լինելու համար: Դրութեան Կոմիկականութիւնը աշկարա է: 1900 թւականին Մշակ'ի խոստավանութիւնների հերթը հատնելու է Մուրճի մի չորրորդ կամ հինգերորդ աշխատակցին, 1901-ին մի վեցերորդին, և այսպէս շարունակ: Համաձանեցէք որ այտոն խոստավանքների էւուլիցիան» Մշակ'ում թէ կատարում է, բայց արգէն իւր բարեմիտ ընթերցողներին լուսահատեցնելու չափ դանդաղ կերպով: Ազգ դանդաղութիւնը թւարանական ձիշդ հաշւի արդիւնք է ուսկան: դանդաղութիւնը հարկաւոր է որ հերթը շատ ուշ հասնի... Մուրճին իրեն: Ասինքն անգան ուշ, որ Մշակ'ի ներկայիւ: ու անցեալի բռլոր անզգամնութիւնները մոռացւած լինեն...

ԳԵՐՄԱՆԻԱ: Կալմերական հրամանով սկսեցին գուրս քշել Շևցւիզից մի քանի հազար դանիացի հպատակներ, Սիլեզիայից՝ մի քանի հարիւր առոտրիացի հպատակներ:

ԳԵՐՄԱՆԻԱ: ՖրԱԽՏԸ Բաքւից-Բաթում փետրւար ամսից 1899 թ. բարձրացնում է 12 կոպէկից մինչեւ 19 կոպէկ փութը, ինչպէս որ առաջ կար:

ԿԱՅՈՒՐ ՖՐԱԽՏԸ ՅՈՎՈՒՓ Ա-Ի Թաղուորտ Մեան յիստանուկը առնւեց Աւարո-

Ունդարիալում գեկտ. 2-ին. Հաշում են որ այդ առթիւ նոր հաստատութիւնների չատկացրած գումարները հասնում են 30 միլիոն ֆրանկի։ Դա ամենասերճախօս ապացուցն է այն ժողովրդականութեան, որ վակելում է ծերացած և իւր կեանքում շատ չար ու բարի տեսած կալսը։

ՅՐԱՆՆՍԻԱ. և ԱՆԳԼԻԱ. ՖԱԾՈՒ. Կապիտան Մարչան 9 դեկտ. իւր զինարների խմբով զուրս եկաւ Ֆաշոդ քաղաքից (Սուզանում)։ Ամրոցի վրալից Փրանսիական դրօշակը վար առնեց և տեղը կանգնեցրին բրիտանական և եգիպտական դրօշակները։

Երկու պետութիւնների մէջ չարաբերութիւնները կարելի է լարւած համարել և մինչև իսկ պատերազմական պատրաստութիւնների ձախներ են լուսմ։

ԱԻՍՏՐՈ-ՌԻՆԳԱՐԻԱ. Բանֆի՛ն արձակւեց ունդարական մինիստր-նախագահի պաշտօնից և նորա տեղ նշանակւեց պետական-քարտուղար կոմս Անդրեասի Տասնամենակը լրացած համաձայնութիւնը Աւստրիակի և Անգարիակի միջև պետութեան աղ երկու մասերի մասնակցութեան մասին պետութեան ընդհանուր ծախքերի մէջ՝ չափողւեց նորոգել, և կաջսեր հրամանով 1899-ին սիփահ շարունակւի մինչ այժմ եղածը, մինչև նոր համաձայնութեան գալը։

ԿՐԵՏԵ. Յունաց թագաւորացն Վէորգ դեկտեմբ. 9-ին Ամֆիդրիդէս նաւի վրա եկաւ Կրետէ, դեկտ. 10-ին կտարաւեց հանդիսաւոր մուտքը կանէա քաղաքում, որից և սկսաւեց նորա կառավարութիւնը։ Այդ ժամանակից ի վեր վերջացաւ չորս պետութիւնների ծովակալների խորհրդի պաշտօնավարութիւնը։ Ցախմ գործող կրէտական գործադիր կոմիտէն (որի նախագահն էր Սփակիանակիս) լուծւեց։ Ապոկորոնի բրիտանիաները լանձնեցին 3.000 հրացան։ Ագդակին ժողովը կոչւելու է նշանակւած ժամանակից աւելի ուշ։

ԴԻԵՅՖՈՒՍԻ. ԳՈՐԾԸ. Պատերազմ. մինիստր Ֆրէսինէ լարտնեց դեկտ. 8-ին պատգամաւ, ժողովում, որ գաղտնի գործի (դոսիէ) մէջ կան թղթեր, որոնք շօշափում են պետական ապահովութիւնը, բաց որ այդ թղթերը նա ցուց կը տաէ վճռաբեկ ատեանին, երբ վերջինս կ'ներկայացնի բոլոր երաշխաւորութիւնները թղթերի բովանդակութեան հրատարակութեան շտալու համար։ Այդպիսով պաշտօնապէս հատատւեց որ կան պաղտնի թղթերս Դեկտ. 16-ին կալացաւ աղ համաձայնութիւնը վճռաբեկ ատեանի և կառավարութեան միջև, որով առաջինը ծանօթացաւ բոլոր գաղտնի գործի թղթերի հետ։ Ատեանը լսեց Բարոուի և Կազիմիր-Պերիէի ցուցմունքները, (Միջանկեալ հազրութեան բուլանմէի ժամանակից ի վեր լուծածած անակենասէրների լիգը (=միութիւնը) նորից վերակազմեց և 16 դեկտ. նախադան ընտրւեց

Դիրուլէդ'ը, որը հակադրէվուսեան է և առաջ էլ լիդի նախագահն էր)։ 26-ն դեկտ. վճռաբեկ ատեանի նախագահ Թէնէ զը Բոռըպէս լանձոնեց արդարադատութեան մինիստրին իւր հրաժարականը այն քըննութեան առիթով, որ վճռաբեկ ատեանը սկսել է։ Բոռըպէսի այդ քայլը կարեսոր ֆաղիսներից մէկն է Դրէփուսի գործի մէջ։ Նա լաւանեց որ հրաժարական տւեց այն պատճառով որ մինիստր Լերէ միախն ձև ցուց տւեց թէ քննում է Բարդի գէպքը։ (անդել էին թէ Բոռըպէսը լանկարծակի է բռնած եղել քննիչ Բարդ'ին Պիքարի հետ բարեկամաբար զրուցելիս)։ Բոռըպէսը լաւանեց որ վճռեց բողոքել վճռաբեկ ատեանի կալանավիք վճռի գէմ, որը նա գուշակում է թէ Դրէփուսի օգտին է լինելու։ Մագո՞ն, որ վճռաբեկ ատեանի առաջին նախադահն է, համաձայնից նախագահող լինել վճռաբեկ ատեանի քրէական պալատակում հէնց որ Դրէփուսի գործի վերաքննութեան մասին քննութիւնը կ'աւարտւի։ Բոռըպէսը պահանջեց որ վերաքննութեան գործի մասին վճիռ տայ ոչ թէ վճռաբեկ դատարանի քրէական ատեանը միաւն, ալլ ամբողջ վճռաբեկ դատարանը իւր բոլոր դատաւորներով։ Միախն ալզպիտով առում է նա, կարելի է ամեն բողոքի գէմն առնել։ Այդ նոյնը ալժմ պահանջում է նաև նոր կազմւած «Փրանսիական հայրենիքի միութիւնը», որի մէջ են շատ նշանաւոր մարդիկ, որը ձգտում է Փրանսիացիների մէջ խախտած միաբանութիւնը վերահաստատել։

ՖՐԱՆՍԻԱՑԻ ԴԵՍՊԱՆ Կ. ՊՈԼԱՊԻՄ նշանակւած է Կոնստանտ, որը լաւանի է իրրն շատ գործունեալ և ազդեցիկ քաղաքագէտ։ Նա եղել է մինիստր, ասպա կառավարիչ Փրանսիական Տոնկինի և Անամի։

